463 λ կամաւ փխ կամ

464 PRV$\alpha_1$abcefhiklnqtux հեշտութեանցն h աւղաճոնաւ

465 UV ձայնատրականս Ux զարկուածս

466 L չունի մղնարհեստ բառից մինչև տ. 491-ի անտի բառը ներառյալ Γ_1 խորխտակնչականութեան փխ խորխտահնչական STYημωΣ_1 կազմուածոյ Γ_1 չիք կազմածոյ Vcfh թմբկի Y թմպկիս a թմբի սրբ. թմբկի

467 U գիջութեան Z գիջութեամբ սրբ. գինութեամբ λfqx գինութեամբ Γ գինութեան λ անվայելուչ

467—468 N թուղազաշնակեալ U թոյլազաշնակեալ

468 N ստորեաւս x կորստեանն NSY մերոյ

468—469 U մեր սգայութեան կայլ իմն փխ մերս զոյութեան կայլիմք

469 x ըստ փխ ընդ σx խորհրդոց

470 Tηϑμτφω մկրտեալք FQRSWXYZα_1γλσω$\Gamma_1$bcefghikl կենդանոյդ g անվաղճան Vλ կենացն

471 h չիք իսկ Γ_1 համայնեւ

473 SY իւղս դրոշեալն Γ_1 զդրաւշեալ N կառակուսեն փխ քառակուսեան h քառակուսեանն λcqt Քրիստոս փխ Յիսուս E նըշան ի

474 x չիք հաւասար σ չունի [հա]ւասար բառից մինչև տ. 510-ի տարածումն բառը ներառյալ FNQWα_1 հաստատէ փխ հաստէ U հաստեալ, նոր փխ շնորհ t ընձեռել SY չիք եւ N նման փխ նմանատիպ SY զնմանատիպ

475 O անուանելի փխ անվանելի SY մեծացուցանի

476 α_1 անւանէ NU առհնութիւն

476—477 ω չիք ըստ մարգարէին կանխաձայնութեան JTγμϑτ նախաձայնութեան փխ կանխաձայնութեան

477 s զի ի փխ զ'ի A բուսոյ սրբ. բուսոց Ex բուսոյց փխ բուսոց N բուսուց

478 S ուղեալ s ուղղեալ սրբ. իւղեալ N կարծեաց (փխ արկածից) սրբ. կարկածից u չիք ի[2]

479 V վերաբերեալ J նիւթս սրբ. նիւթ Nμωh չիք եւ

480 N չիք ի V պատուհանից Wγη պատուհանացն W թափանցութիւնդ փխ թափանցանցութիւնք W ի յանուն

481 S զօրութիւն W և փխ ի F խորհրդական փխ խոհական A հաւաստութիւն սրբ. համեստութիւն hx համեստութեան

482 C յղձակերտ սրբ. յղձակեր Vλ ըղձակերտ FKα_1λbftu աւթեան NUV աւթեվան α_1 հոգոցդ

483 a պատրանաց սրբ. ի պատրանաց Γ_1 ի պատրանաց FNQRSWYt խաւարահողմն Γ_1 ճաւարահողմ N խարդաւողին փխ խարդախողին h խարդաճողին f սպասեալ փխ զսպեալ

484 V ամփոփեմք U գոհութեան CMPRg երեկորնեան E երեկորնեացն սրբվ. երեկորեան NVλabikqtux երեկորեան U երեկոյին W$\Gamma_1$cfh երեկոյեան α_1 երեկօրնեացն d երեկորնեայն e երեկոյան n երեկորնայն s երեկորեայն A և այս տողն ունեցող մնացած օրինակները, բացի TηϑμτωΣ_1 ձեռագրերից, ունեն երեկորնեացն PU պաշտամանն

484—485 JKd երկնայնոցն W երկնայնոցդ Γ_1 երկնայնոց a երկնայնոցն

485 Ms զամպարաց NPRW$\alpha_1$abcdfhlntux զամբարացս λeik զամբարացն Γ_1 զամբարեաց h չիք առ

486 h փրկութեանն, չիք սովաւ... ընթրեացն U չիք եւ Vμ պտղաւէտ փխ ծաղկաւէտ

487 λ ելեալ փխ եղեալ N յնթրեացն J պատրաստութեանն NSUVλax յետնումն

487—488 h գիշերիդ ux գիշերին

488 NPRUVWλ$\Gamma_1$abcefgiknqx ի մեծիդ Y (զայս) ի լոյս

490 C գրածացն սրբվ. գծագրածացն K գրածեացն OT գծագրացն (φ գրացն) փխ գըրածացն Γ_1 գրածեացն J գումարութեանն γΓ_1 չորից

490—491 MTηϑμτφΣ_1 շարագրութեան (γ նըշանագրութեան Γ_1h շարագրութեանց) փխ շարագրութեան N շարագրութիւն

491 AEO յաղփավետաց C յալփավետաց սրբվ. յալֆաբետացն Fb յալփաբետացն JKQn յաղփաբետաց M յալֆաբետաց N յաղփաբետ Pα_1μ յալփապետաց RSTUWYγηϑφikstu յալփափետաց X յաղփաբետաց սրբ. յալփաբետաց Z յալփավիտաց ωΣ_1 յալֆաբետաց c յալփաբետաց սրբ. յալփաֆետաց f յալփաբէտաց սրբ. յալփափէտաց h յալփաբփետաց Q անտի ի սրբ. անտի NSY մինչ Q կարգին

492 h խորութեամբ

493 N հաղորդի ջամեալ QRUa ջամբեալ s ջամբել սրբ. ջամբեալ

494 N յարմարեալութեամբ (Y յարմութեամբ) փխ յարմարութեամբ γΓ_1 յարմարութեան W յութններորդեան ω յութններորդ h յութսուններորդէ k չիք ի

494—495 CM չորեքարիւրն սրբ. (M սրբվ.) չորեքհարիւրն u չորեքարեւրն A և այս տողն ունեցող մնացած օրինակները, բացի FQRSTUWXYγϑμτω$\Sigma_1$abcehs ձեռագրերից, ունեն չորեքարիւրն

495 WΓ_1 քննութեան SY ըստ փխ ընդ A ձիթեւոյ սրբ. ձիթեւոյն P ձիթենոյն փխ ձիթոյն Γ_1f ձիթեւոյն

496 M անուն K ճշմարտագիր փխ ճշմարտագրի SY ազգման փխ արդեան

497 γ բերող ի VWα_1γλhqx զանգուածն N սակաւ A և այս տողն ունեցող բոլոր օրինակները, բացի JMNTVWγηθλμτφω$\Sigma_1$acfh ձեռագրերից, չունեն ի M յոլովէ t յոլովն U պատարագի փխ պարագայի

498 b իրին h ամտարանականն

499 SUY չիք առ F չիք առ ինքն L բերեալ փխ վերաբերեալ SY անեցումն փխ անեցուն NηθτφωΣ_1 անեցուցանէ փխ անեցուն առնէ

500 L համարձման (S համարձակման V ամբարձման) փխ համբարձման h համբարձմանն λ խոնարհութեանն

501 U չիք եւ Nh նմանութեան α_1 առումն փխ առ ումն U պատաւ փխ պատառաւ N ջամբն h ջամբ

502 UW բարի յարմար փխ բարեյարմար

502—503 U յուծականանաց

503 N սորուածորելի x գիւրանորելի փխ սորուածորելի N նիւթ SZΓ_1s նիւթոց x վերաչրական փխ վերաշրջական ik չիք վերաշրջական

504 ik հրաշափառ α_1 խորհրդոյս Sik չիք եւ τ յամայն փխ յաման Γ_1 չիք ինչ a մորթոյ

505 V որ փխ ոչ A և այս տողն ունեցող բոլոր օրինակները, բացի CEJTUVZα_1ηθμτφ$\Sigma_1$adinqst ձեռագրերից, ունեն գինոյ V ձիթոյ փխ ձեւոյ O մեղէ փխ մեղկէ q մեղկի

506 V պահի V ի բոյոցդ M զբոցդ urp. զբոոհրդ Z բարեացդ

506—507 V անհաս առեղութիւն փխ անհասաւ սար առաւելութիւն

507 U առաւելութեան NQRSWXYγλω$\Gamma_1$bcfghiklt կենդանոյ FKQSY զարբանուէրս FPQU ամժուքիւն փխ ամծելութիւն

508 V գիմաց t արեամբ urp. անուամբդ արեամբ A և այս տողն ունեցող մնացած օրինակները, բացի JTα_1γηθμτφωΣ_1u ձեռագրերից, ունեն արեամբդ N չիք եւ, շնչոյս U շնչոյն MPSUVYλ$\Gamma_1$bcdx հոգւովդ N հոգիովդ RWωefhkltu հոգովդ α_1 հոգով s հոգւով urp. հոգւովդ L հոգւովքս փխ հոգւով քո V քով Γ_1 չիք քո²... խորհրդով

509 C եթէ urp. թէ LU թէ

510 V ճաճանչ փխ բազմաճաճանչ u բազմաճաճանց

511 SY ընդյարձակութեամբ α_1 ընդարձակութեամբ h ընդարձակութեանն ik ընդարձակութիւն K խզով ω խզոց

511—512 AWZbcg ընձայել (ընծայել) s ընծայել urp. ընծայեալ

512 N ապառնեաց J հանդերձելոցն urp. հանդերձելոց A և այս տողն ունեցող մնացած օրինակները, բացի FQSTVγθτa ձեռագրերից, ունեն հանդերձելոցն

513 A վերանշոյլ urp. վերնանշոյլ CNSVWYα_1λσcdfqstux վերանշոյլ hi վերայնշոյլ ZωΓ_1s երեսացս Zhs քոյդ

513—514 tu չիք քումդ նշանաւ ջահաւորեալի

515 α_1 ի բերանս հաս փխ իրր անհաս V չիք այս մեծ զաւրութիւն N ընդ մեծ զաւրութեան

516 W և ի P թեթև h պամանի Jα_1d ուշւոյ Lσ ուղւոյ (φ ուղոյ) փխ ուշոյ

517 N յիմաստից N հետևմանց S փափառեան α_1 լայնին փխ լայն իմն

518 Pθ ի սպառ N ոչ աւրինակեցաւ կցորդաւ կրկնված Z չիք ոչ աւրինակեցաւ կցորդաւ

519—520 V չիք ձեւակերպութեամբ ոչ կշռեցաւ

520 U ընդ ընկերին F նշանիդ խաչի S չիք նշանի

521 AFOQ հաւասարութիւն CE հաւասարութիւն urp. (E urpվ.) հաւասարութեամբ N կեցուցիչ N հոգւայէս a հոգւէպէս b հոգէպես e հոգեպես qx հոգեպէս tu հոգէպէս

522 L չիք արդ W չիք եւ[1] U և ես փխ ես եւ Q անուանդ s յանունդ

523 τ չիք երկնաւոր

524 JMNQWYθστφ$\Gamma_1$abcefik բուրուառաւ ω բուրվառ h բուրվառաւ tu բուրառաւ W սուրբ փխ սուրբ սուրբ

525 FJKLMRSUVWYZα_1γθστωbcfikqstux բարձրացեալ e բարձրեցեալ U վերացրեալ փխ վերերգեալ Z չիք բարեբար

526 V դրժչկութիւն

526—527 CJ հանդերձեա urpվ. (J urp.) հանդերձաւորեա γ հանդերձաւորեա

527 V շնորհս λ շնորհք V երանութիւնս η յաւձումն urp. յաւծումն ik յաւծումնս b չիք այս

528 ALOZα_1s երկնաձև (FKRXdgikln երկնաձրև PW երկնաձրիև Ubcefqtux երկնաձրեաւ) փխ երկնանձրեւ C երկնաձև urpվ. երկնաձրիւ E երկնաձև urpվ. երկնաձրեօ M երկնաձրև urpվ. երկնանձրև Q երկնանձրև urp. երկնաձրեւ θ երկնանձրև urp. երկնաձև a երկնաձրև urp. երկնաձրեաւ h երկնաձրաւ (փխ երկնանձրեւ) urp. երկնաձրեաւ U գոյից լուսոյ Y գտայց urp. մտայց R յիղեալս gu խղեալս W յայս Mkt թէզան

528—529 Y բանբաւորական h բանաւորականն

529 Γ_1 մտցի ω գրաւեսցի h գրաւորեսցէ փխ գրաւեսցէ JTγηθμστφωΣ_1 աղտոց SY ախտոյ փխ աղտոյ LPX մեղաց փխ մեղանաց

530 AENSWY$\Gamma_1$hn շաղախեալ C շաղախեալ urp. շաղախել S զհոգւոյս Y զհոգոյս Γ կերպարան բառով ընդհատվում է ձեռագիրը (շարունակությունը չի պահպանվել) bcefh ի սոյն N մատչեին h մատնչին փխ մատչին

531 U աւծանել N հարսանպաճոյճ ω պարծանաւք փխ պանծանաւք ACEFLMNOQUVZλμωΣ_1s պճնեալ b պճնել urp. աճել AEFQWZηθλμτφωΣ_1s գեղաւրէն C գեղօրէն urp. գեղաօրէն O գերաւրէն փխ գեղայաւրէն

532 N վայելչութեամբ λ վայելջութեամբ V չիք յոգի σ հոգի h ոգի

533 h լուսափայլ փխ լուսափառ ALNRVφΣbcix սատրւածածիր փխ սատուածածիր ω մերձացելոցն

533—534 btu և մուխ կրկնեաց և W չունի մուխ բառից մինչև տ. 537-ի աններկմտելի բառը ներառյալ

534 Z կրկեոաց N ինև փխ եւ U գերափափագ փխ բարեփափագ C ջերմութեան urp. ջերմութիւն σ ջերմութեամբ C յայլ

534—535 U ամենայն պատրաստ փխ ամենապատրաստ

535 k պնդութեան Ub կարծրականումնդ φ կարծրականումբդ u կարծրականումք

536 Jθμστφωx յարակայլեցեալ MSVYt յարակայացեալ R յար հայեցեալ (iks յարակցեալ) փխ յարակայեցեալ F արձանացայց urpվ. արձանացին $\alpha_1$bcqtu արձանացին a արձանացին urp. արձանացին Ux հաստատել

537 N չիք աններկմտելի α_1 լից փխ Լիցի, նաշանակ W վերամրցանակ Zabqstux վերնամրցական փխ վերնամրցանակ Z այրս փխ այսր a այժմ α_1 ի պարգևի

537—538 K վառեցելոցն MPUWα_1λacdfhiklnq վառելոց N վառելոցս Vbtu վառեցելոց e վառեցեալ

538 W և ոչ այրել

539 Ps շիջանել OW աղտեղի փխ աղտեղել Z յարուական փխ յուրուական h յուրականին փխ յուրուական ինչ

540 NVλ մատնեալ U մատնիլ h չիք ի Vλ սորեաւ f սաուեր փխ սորեւ Rθτ ելից fh զմթերսն

541 R զանձուց U զանձուցն Z արտաքս հանել յիմարաբար h արաքս փխ արտաքս A մնալի փխ մնալ ի E մնալի urp. մնալ

542 CE աւգնութենէ urp. (E urpվ.) աւգնականութենէ KMNRUVZα_1λacdegiklnqstux աւգնականութենէ h աւգնականութենէն N զեացեալսն

543 U նոյն փխ սոյն SY հրաշացեալ (h հիացեալք) փխ հրացեալ Ubf հրացեալք

543—544 α_1t արարեալ փխ պարարեալ

544 O չիք սովաւ լուսաւորեալ k լուսաւորեալք FQW աղատեալ f աղատեցեալ s աղատեցեալ urp. աղատացեալ

544—545 u թագաւորեալ և պսակեալ C պսակեալ urp. պսակեցեալ

545 V չիք եւ² J միոյ urp. միայնոյ A և այս տողն ունեցող մնացած օրինակները, բացի TUγηθμστφωΣ_1 ձեռագրերից, ունեն միոյ փխ միայնոյ W միայնոյ փխ միայն h ամենեցունց

546 A աղեղուք $\alpha_1$qtux աղէղուք η աղէղուղք ek ալելուք n աղելուք

546—547 C յաղթականութիւնք urpվ. յաղթական օրհներգութիւնք JTUθημστωΣ_1 յաղ-

*թական արհնութիւնք (*Tησ *արհնութիւն)* փխ. *յաղթականութիւնք* MNRXγφaikn *յաղթականութիւն* SY *յաղթանակութիւնք* փխ. *յաղթականութիւնք*

547 a *գովիստից* Wλb *բարերանութիւնք* փխ. *բարերաստութիւնք* l *սրբարանութիւնք* ուղղ. *սրբաբանութիւն* A և այս տողն ունեցող մնացած օրինակները, բացի FQNUVW$\alpha_1\lambda\mu$bcfghqtux ձեռագրերից, ունեն *սրբաբանութիւն*

548 C *հոգւոյդ* ուղղ. *ընդ հոգւոյդ (սրբոյ)* U *սուրբ հոգւոյդ* ϑτ *սրբոց* Σ_1 չիք *Ամէն*

549 EWe չունեն տ. 549—550 JLNOPU$\alpha_1\varphi$fhqtux *Այս* փխ. *Այն* c *Այս* ուղղ. *Այն* Vλ *ձեռնադրութիւն* փխ. *ձեռնարկութիւն* b *ձեռնարկութեան* h *ձեռնարկութիւնք* AFJKLOQSZXY$\gamma\vartheta\mu\tau\omega\Sigma_1$s *սրբութիւնսն* φ *սրբութիւնսն* ուղղ. *սրբութիւն* n *սրբութեան* α₁ *դայս* b *արժանադրութեան*

550 U *և* փխ. *ի* h չիք *ի* M *սրբութիւնն (Բ սրբութեանց)* փխ. *սրբութեանցն* MΣ_1 չունեն *սրբութիւն* O *սրբութիւնն* C *սրբութիւն* ուղղ. *սրբութիւն ամէն* LNPRSVY$\alpha_1\sigma$bcdfhlnqtux *սրբութիւն ամէն* M այս տողից հետո ունի *ամէն ամէն ամէն*

ԲԱՆ ՂԴ

Վերնագիր.

BNδΦ_1p բան *ՂԴ* ունեն բան *ՂԱ*-ից հետո K բան *ՂԴ* ունի բան *ԾԵ*-ից հետո Z *ՂԴ* բանի փխ. ունի բան *ՂԵ* և բնդհակառակն u չունի բան *ՂԴ* (չի պահպանվել) BHδΦ_1 համարակալված *ՂԲ (*K *ԾԲ* Z *ՂԵ* βp *ՂԴ)* փխ. *ՂԴ* o չունի *Բան* նշում և համարակալում BEKNORWβλabimoqrx վերնագիրը կրճատ QZδημωn համառոտագրությամբ t *հեծութիւն* A *առ ի (նոյն)* AHLMSTUVYβσ$\Sigma_1\Phi_1$h *բան* t չիք *բան* HN չիք *ի* A *սրտի* CT *սրտէ*

2 AFGHJKNPqx *գիշերոյ* s *գիշերի*
3 t չիք *ի*[2]
4 t *Յուս* r *ակնունողացն* M *երկայնն մտութիւն* NPS *երկայնամտութիւն* r *երկայնմտութեան*
5 N *ամենայն արուեստ* փխ. *ամէնարուեստ* K *քով* ուղղ. *քո* os *քով*
6 o *ի յայգ* H *գստուեր* τ *գստերս (*Σ_1 *զարւեստս)* փխ. *գստուերս* b *ստուերս*
7 WZ$\alpha_1\gamma\delta\vartheta\lambda\mu\sigma\tau\omega\Sigma_1$ehikorx *աննուազ* փխ. *աննուաղ*
8 o *ծածկեալ* F *քում տէրութեանդ* փխ. *տէրութեան քոյ* N *տէրութիւն* V *խաւարի* ACGJKLPβs *գիշերոյ*
9 r *որումն* Sc *ծունր և* NSUbco *երկրպագութիւն* h *երկրպագութեանն* N *եղեւցս*
12 r *խոնարհեաց*
13 Y չունի տ. 13—14 γ *զխնդրօածս*
14 U չիք *եւ*
17 ikr *Քրիստոսդ* σ *յամենայնի*
18 o *հանգուցեալ ես* O *հոգի* γ *հոգիս*
19 U *վշտացելոց* փխ. *վշտաց* W *մեղաւորաց* փխ. *մեղուցելոց*
20 Uηt *զլիննլն* λ *զլիննլոցն* ուղղ. *զլինել նոցա*
21 W *զպահպանական* փխ. *զպահպանողական* Σ_1 *աջու*
22 h *ի յերկիւղէ* GNr *յերկեւղէ* O$\Phi_1$cq *յերկեղէ* Qa *յերկիղէ* U *յերկեղական* փխ. *յերկիւղէ* MUWh *գիշերոյ* kot *չարի*
23 S *զյիշատակ* ուղղ. *զյիշատակս* Ufn *յիշատակ* λ *զիշատակ* ikr *զյիշատակս* S *քո սուրբ* β *սուրբ քո* ուղղ. *սուրբ* γ չիք *քո* o *անունդ*
24 K *շրթամբ* HMOqx *ըղձութեամբ* N *ընդունողութեան* փխ. *ըղձութեան* hr *ըղձութեանն*
26 ABCEFKOQZs *որք*
27 U չիք *խաչի* Z *խաչիդ* KUWZckort *քո* V *քոյ* b *քոոյ* ուղղ. *քո* e *խաչի քոյոյ* ուղղ. *խաչի* h չիք *քոյոյ*
28 ABEFGKNOQVWZ$\Phi_1$cqstx *արեամբդ* C *արեամբդ* ուղղ. *արեամբ քո* ABEFGOQZ$\alpha_1\Phi_1$s չիք *քո* β *արեամբ քո* ուղղ. *արեամբ* σ δ *նորոգեցեր* ուղղ. *ներկեալ նորոգեցեր* չիք *նորոգեցեր*
29 o չունի տողը Vqtx *շնորհս* K *քո* *զմեզ*
30 o չիք *Եւ... նկարեալ* N *նկարել* U *նորոգեալ* փխ. *նկարեալ* h *նորոգեցեր* փխ. *յաւրինեցեր*
31 a *աստուած* ուղղ. *աստուածականաւք*
32 δ *ամաչեսցէ սատանայ* բառերից հետո լուսանցքում սրբագրել-ավելացրել է բան *ԻԸ*-ի տ. 139-ից *ի գործս չարեաց իւրոցն հրեշտակաց* o *բակտեսցի* ACFHJLQ$\alpha_1\eta\vartheta\mu\tau\varphi\Phi_1$ab *մեներնայքն* B$\Sigma_1$ *մենքենայքն* ուղղ. *մեքենայքն* KMNRλ *մեքենայք*
33 λ *բարձցի* GNPβΦ_1a *որոգայթք*
34 o *պաւսեսցին* փխ. *պակասեսցին* GβΦ_1 *զէնք* K *սայրասուր* N *սերասուրք*
35 NSb *մերժեսցին* α_1 *մերժի* γko *մէգքն* r *մէՖն* Φ_1 *մեկնեսցի խաւարն փարատեսցի մառախուղն* L *մառախուղն* M *մառախուղն*
36 r *կնկեսցէ*
37 μ չիք *զի*
38 o *չունի* տ. 38—41 H *անուան* U *քոյոց ծառայիցս* փխ. *ծառայից քոց*
39 N *(Հայր) և հոգովդ*
40 N *փ[առք]* տողի շարունակությունը չի գրել ABCEFOQUVWZϑτbst չիք *եւ* QU *իշխանութիւն և պատիւ* h չիք *յաւիտենից*
41 BNUWγσb չունեն տողը

ԲԱՆ ՂԵ

Վերնագիր.

BHs համարակալված *ՂԴ (*K *ՂԷ* Zβp *ՂԴ)* փխ. *ՂԵ* ● չունի *Բան* նշում, համարակալում և վերնագիր EKMNOVλbiqrtx վերնագիրը կրճատ QTZδωn համառոտագրությամբ W *Նորին Գրիգորի* փխ. վերնագրի AUt *հեծութիւն* P չիք *հեծութեան* LSUY$\alpha_1\beta\sigma\Sigma_1$bh *բան*

1 o չունի տ. 1—22 A *ճառայթ* փխ. *ճառագայթ* u *ճառայթ* ուղղ. *ճառագայթ* U *արհնաբանեալ* փխ. *արհնեալ*
2 Kδ *փափաք* N *անձկութիւն*
3 h *անպատումն*
4 FRSWXY$\gamma\lambda\sigma\omega\Phi_1$cfhiklrx *բարոյ* m *բերկրութեան*
5 N *գովել*
7 N *զթիւրութիւն* փխ. *զթերութիւն* d *զթերութիւն* h *վրիպականաց* փխ. *վրիպանաց* OXλ *բազմաղալ* P *բազմաղխալ* ACEGJTV$\alpha_1\eta\vartheta\tau\varphi\Sigma_1$abdps *եղկելույս*
8 FWΦ_1 *ամենազարդ* փխ. *ամենազաւրդ* Ut *ամենազաւր* t *բանիւդ* Z *լսել* փխ. *լցեալ*
9 m *հաւր* բառից սկսած մինչև գլխի վերջն ունի ուշ գրչությամբ q *քու* փխ. *քում*
10 N չիք *իմ* SY *փորձութիւն* փխ. *փորձ*
11 δ *կերպարեալ* ուղղ. *կերպարանեալ* r *զի* փխ. *զիմ* λ *նմանութիւնս*
12 δ *կենաց արհնութիւն* ուղղ. *արհնութիւն*
13 N *բարեաց խնամոց (*f *բարէխնամ)* փխ. *բարեխնամող* δ *բարէխնամող* ուղղ. *բարէխնամ* N *համենից* p *ամենից* փխ. *համայնից*
14 ABEF *եթէ* r *յանձներ* փխ. *յանձն առեր* A *առներ* x *վասն իմ մեռանիլ* B *զմեռանիլ* GHKLNSWXZβλφ$\Phi_1$acs *մեռանել* ω չիք *վասն իմ*
15 ω *աստուած իմ* Φ_1 *աստուածդ* SUYZakrs *բոլորեցունց*
16 N *նաճեսցիս* (սրբագրման նշան ունի, բայց չի սրբագրել) C *և այժմ* ուղղ. *այժմ* GHMPRUVWβλ$\Phi_1$abcdfhikm$_1$pqr չիք *եւ*
17 ABCEFOQUωΣ_1 *վտանգաւոր* g *վտանգաւորիս* ABCEFOQωΣ_1r *կրիցս* EMNSUWY$\Phi_1$bcghm$_1$p *կարեկցեալ* δ *կարէկցեալ* ուղղ. *կարէկցել*
18 Φ_1m$_1$ *աղաւթելով միշտ* Z չիք *միշտ*
19 A այս տողից մինչև գլխի վերջը չունի (պերթ է ընկած)
20 M *քո* բառից սկսած մինչև գլխի վերջն ունի ուշ գրչությամբ
21 qtux *արեանդ քո*
23 Y *բացցին (o բարձ յինէն)* փխ. *Բարձցին* L *վտակք* փխ. *վտանգք* MNZμωΣhkrx *վտանգ* T *վտանգքն* o *զվտանգ*, չիք *մեղուցեալ*
24 S *պարտիկքն* W *ապաքինասցի*
25 Q *մոռասցի* U *բարեգործեսցին*
27 FVbeh *հանդարտեսցի* Φ_1 *կրճատումն* փխ. *կրճումն* o *կրճտում* BCEFHOZ$\alpha_1\delta\eta\vartheta\mu\sigma\tau\Sigma_1$s ձեռագրերից բացի, այս տողն ունե-

ցող մնացած օրինակները ունեն *կրճատումն* SYo *ստամանց*
28 N *արտասունքն* γ *արտասուք*
29 φ *մերժեսցին* H *սուգ* O *սուքն* Z *սուքն* սրբ. *սուգն* Wφ *հալեսցի* փխ *հալածեսցի* δ *հալեսցի* սրբ. *հալածեսցի*
30 o չունի տողը N *սաստկութեանն* r *սաստկեսցէ* (փխ *սաստկութեան*) սրբ. *սաստկութեան*
31 o *հերքեսցի* Kr *տանջանարանք* o չիք *տանջանարանքն բազմաւրինակք* Z *բազմաւրինակ* h *բազմաւրինակքն*
32 h *եկեսցին* o *եկեսցէ* U *կամեցողիդ* s *կամողիդ* սրբվ. *կամեցողիդ*
33 S *կենաց* սրբ. *կենացդ*
34 NUot *ծագեսցէ* P *լոյս* W *տարագրեսցէ* փխ *արագեսցէ* e *արագեսցի* N չիք *արագեսցէ փրկութիւնդ*
35 W չիք *Հասցէ ազնութիւնդ* SY *ազնականութիւնդ* փխ *ազնութիւնդ* β *ազնութիւնն* Wω չիք *ժամանեսցէ այցելութիւնդ*
36 J *[կանխես]ցէ* բառից մինչև գլխի վերջն ունի ուշ գրչությամբ SY *ցօղն* U չիք *ցաւդ* NU *ողորմութիւնդ* h *օղորմութեանդ* o *ողորմութիւն*
37 o *և արբուսցէ* E *արբուսցէ* բառից մինչև գլխի վերջը վերանորոգման հետևանքով վնասված է և չի ընթերցվում J *զանդանտանս*
38 o չիք *Անկեալ* Z *ոսկերացս փափագեալ* U *թշուառութեան* a *թշուառութեան* սրբ. *թշուառութեամբ* No *վիհս*
39 N *ծաղկեսցուսցէ* Tγμ *ծաղկեսցէ* o *ծաղկեցուսցէ և* Z *բերցէ պտուղ* փխ *պտղաբերեսցէ*
40 b *բաժակք*
41 o *զերկիր, առողանելով* փխ *խնամեալ աւուրն լուսոյ* SY *աւուրդ* μ *աւուրս*
42 J_1SVYφabdefhikpqrtux *պատարագիս* $α_1$ *պարագի* փխ *պատարագի* β *պատարագի* սրբ. *պատարագիս*
43 J_1Vabeqtx *ի յիշատակ* EQX չիք *կենաց փրկութեան* O չիք *փրկութեան* F N $Φ_1$begklpu *փրկութիւն* h *փրկութեանն* La *կենաց* փխ *հոգւոցն* X չիք *հոգւոցն* BCEJ_1KM_1PQVγϑλστφdghiklqtux ձեռագրերից բացի, այս տողն ունեցող մնացած օրինակները ունեն *հոգւոց* (*հոգոց*) C *ննջեցելոց* սրբ. *ննջեցելոցն* FGJ_1M_1NPRβλφ$Φ_1$acdeghkl$m_1$opqr *ննջեցելոցն* O *հանգուցելոց* (W *հանգուցելոցն*) փխ *ննջեցելոց*
44 Y *մահացեալս*
45 LSXY *կամաւք* փխ *Շնորհաւք* m_1 *գթած* փխ *գթած, զօրացեալ* սրբ. *զատեալ*
46 m_1 *ի մեղաց զօրացեալ* փխ *Զատեալ ի մեղաց* h *կենանութեամբ* փխ *կենդանութեամբ* o *կենդանութեան*
47 BCOλφh *յարութեան* F *յարութիւն* HU *յարդարութեանն* (Y *յարեանն*) փխ *յարութեանն* NWo *յարութիւնն* r *յարութեամբ* O *ընդ հաւր քո* o չիք *Հաւր քում* C *քոյ* սրբ. *քոյ արհնեցեալ* Hikor *արհնեալ* O չիք *արհնեցեալ*
48 o *գրեղ ընդ հօր* փխ տողի r *ում* փխ *որում*
49 o *և ընդ* x *հոգւոյ* U *բարերանութիւն* սրբ. *բարերարութիւն* Zs *բարերանութեամբ* O չիք *բարերանութիւն*
50 o չունի տողը λ *վայելչական* FN *գոհաբանութեամբ* (W *գովութեամբ*) փխ *գոհութեամբ*
51 N *միշտ և յաւիտեանս* CFM_1PVZadefhiklnpqrstux *յաւիտենից յաւիտեանս* λ *յաւիտեան* փխ *յաւիտեանս* $Σ_1$ չիք *յաւիտեանս յաւիտենից* γλo չիք *յաւիտենից* η *յաւիտեան* փխ *յաւիտենից*
52 NRγλ$Σ_1$Φm_1s չունեն տողը FLQUWdo *ամէն* O *ամէն* կրկնված SY *ամէն և ամէն եղիցի* β *ամէն ամէն ու հազար ամէն* B *ամէն* բառից հետո ունի *Փառք ամենասուրբ երրորդութեանն յաւիտեանս յաւիտենից ամեն* J_1 *ամէն* բառից հետո ունի ընշում *վերջ է*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՄԱՏԵՆԻՍ ԴՐՈՒԹԵԱՆ

Վերնագիր.
EGHJKLNPRUWβδΦmo չունեն հիշատակարանը φbikl հիշատակարանն ունեն ոչ թե բան Դե-ից հետո, այլ Նարեկացու ներբողյաններից հետո (φik ունեն Հակոբ Մծբնացու ներբողյանից հետո b ունի Աստվածածնի ներբողյանից հետո l հիշատակարանի վերնագիրը նախապես գրել է բան Դե-ից հետո, ապա քերել և վերնագիրն ու հիշատակարանն ամբողջությամբ գրել է Նարեկացու Հակոբ Մծբնացու ներբողյանից հետո) Vlqu հիշատակարանը համարակալված ԴՁ p համարակալված ԴԵ V չունի վերնագիրը r *Յիշատակ այս* փխ *Յիշատակարան* O չիք *գրութեան* SY *ըստ գրութեան* (X *գրութեան* $Σ_1$ *գպրութեան*) փխ *գրութեան* τ *գրութեանն* CM_1SXYZγϑστωbcdefghlnpqstux *գրութեան* բառից հետո ունեն *նոյն* (C սրբ. *նորին* M_1SXYbcdefghlnpqstux *նորին*) *հեղինակի արարեալ* (M_1SXYbcdefghlnqtu չիք *արարեալ*) p *սրբոյն Գրիգորի* փխ *արարեալ*

1 F *Ընդ* փխ *Ըստ* CFγ *ամանակաց* սրբ. (Fγ սրբվ.) *ժամանակաց* OTλφik *ժամանակաց* n *ժամանակաց* սրբ. *ամանակաց*
2 c *նշաւաղագեղն* M_1 *արփիաճաճանչ* $α_1$η *լուսակիր* h *աւրինակ կշիռն* փխ *աւրակշիռն*
2—3 Fk *մշտափարատն* (ir *մշտափարատ*) փխ *մշտափարատն* φ *մղտափարատ*
3 M_1Vbcdefghnpq չիք *ակնապարար* ωx *ակնապատար* փխ *ակնապարար* kr *ակնն* Q *արուեստին* bdfklp *արուեստի*
4 τ *համարէ* սրբ. *համբարէ* g *համբուրէ* փխ *համբարէ* C *կուտէ* սրբ. *հոլովէ կուտէ* A և այս տողն ունեցող մնացած օրինակները, բացի BM_1SVXYbcdefghlnpqtux ձեռագրերից, չունեն *հոլովէ* r *յոլովմանութիւն* փխ *յոլովութիւն*
5 Vx չիք *և* b *կենդանեորդ* M_1 *ուղեկան* (φ *առուղեղական*) փխ *առուղեկան* SXYZs *առուղղեկան* ikr *առուղղական* M_1 *յաւիտենից* q չիք *ի, զաւարտումն*
6 λ *իննեբեկ* A և այս տողն ունեցող մնացած օրինակները, բացի BSTXY$α_1$γηϑμτφω$Σ_1$cdqsx ձեռագրերից, ունեն *իններորդ* AFQ *յորէղինին* C *յորէլինին* ωbcdel *յոբելենին* f *յոբելին* p *յոբեղենին* h *մտին* τ *յաբեղական*
7 SY չիք *տոհմիս* φh *տոհմին* M_1ωh *տոմարի* b *տումարիս* cdefp *տոմարի* φikr *տումարի որ է պարզաբար ՆԾԳ* (i *ՆԾԳ* սրբ. *ՆԼԲ* kr *ՆԼԲ* փխ *ՆԾԳ*) *տումարիս հայոց սուրբս այս Գրիգորիոս Նարեկացի* (ikr *Նարեկեցի*) S չիք *ամաց* h չիք *որ* Vλcdht *գալստեանն* Z *կայսր* փխ *կայս*
8 ikr չիք *և* M_1S *կողմանց* փխ *դիմաց* A *հիսիսոյ* BCγσb *հիւսիւսոյ* V$α_1$cekps *հիւսւոյ* O *իւսիսոյ* λft *հիւսսոյ* φ *հիւսիւսոյ* dl *հիւսւսոյ*
9 Α$Σ_1$ *հռովմոց* M_1 *հռոմոց* O չիք *հռոմոց* FOQλωt *Վասլի* $Σ_1$ *Բասլի* սրբ. *Վասլի* r *Բասիլի* SYfptux *ընդյարձակ* h *ի սփիռ* BQVφrt *սփիռ* u *սփիռն*
10 C *տարածէր* սրբ. *տարածանէր* dl *տարածանէր* φk *լի սահման* փխ *լիասահման* SY *անխտրոց միջոցաւ* X *անխտրոց* սրբ. *անխտրոց միջոցաւ* M_1cdl *ստուարակարկառ* (SY *ստորակարկառ*) փխ *ստուարակարկառ* ikr *կոթողակարծր* փխ *կոթողս կարծր*
11 r չունի *արձանաց* բառից մինչև տ. 13 ներառյալ φi չիք *ձեռին* h *ձեռինն*
12 φik *անթարթափելի աչաց* փխ *անթարթափ ի նոյն, ի վերասլացեալ ի* M_1ω *ի յաջ և ի* λ *յահեկ* ABSTYλφΣbcdefghlnst *սեփհականել* FOQXω *սեփականել* μ *սեպհականեալ* ik *սեփականեալ*
12—13 M_1 *յաւելութեամբ* փխ *յաւելուլ*
13 C *բաժինն* սրբ. *բաժին* ω *աշխարաց* փխ *աշխարհաց*
14 x *Աարգ* BX չիք *ի* p (նվկձ) *յայն* FZη *անդրութեան* (O *անտրութեան* γ *դրութեան* φ *ընտրութեան* ikr *անընտրութեան*) փխ *անդորրութեան* S *անդորութեան* M_1 *ի յորում* BOSYZ$α_1$γηστ *ընդոտնեցաւ* efp *ընդյոտնեցան* h *ընդոտնեցան* nx *ընդյոտնեցան*
15 M_1OSXYγλωbfghiklrt *եկեղեցոյ* Z *հիմնեղի* փխ *հիմնեցի*
15—16 φ չիք *կարգեցի կուտեցի արձանացուցի*
16 BSYZλφfhpsx *դիզեցի* O *դիզի* սրբ. *դիզեցի* ikr *դիեցի* փխ *դիզի* $α_1$ *կացուցի ցուց* սրբ. *կցուցի* V չիք *ի*
17 BFQZbchik *գրագմաստեղեան* SXY *գրագմաստեղնէն* FQ *գրումս* փխ *գրուագս* x *գրուակս* FQ *գրութեան* փխ *գրութեան*

17—18 r չունի *զբաղմատեղնեան... արգասաւորի*

18 s *այսր* ABM$_1$OTα_1ηλσΣ_1 *սոփորի* փխ *սոփերի* (T ունի սրբագրման նշան, բայց չի սրբագրել) Cμ *սոփորի* սրբ. *սոփերի* α_1 *արգաւորի* փխ *արգասաւորի* τ *սոփերի* սրբ. *սոփերի արգասաւորի* M$_1$Vbcdefghlnpqtu *ի քահանայս* x *ի քահանայսս* ikr չիք *քահանայ* u *յետինս*

19 α_1 *բանահուսաց* b *բանս հիւսաց* փխ *բանահիւսաց* FQSVXYλφbikqrstux *կրսեր* c *կրսեն* g *կրտսեր* սրբ. *կրսեր* l *իմ*

20 FQφ չիք *ընտրելոյ* x *ընտելոյ* փխ *ընտրելոյ* Y *Նորեկայ* փխ *Նարեկայ*

21 V չիք *ուխտի* γ *որ* h *բանականի ի* r *բանականին* FQ *(առ) ի մի*

22 B *լիննելոյ* փխ *շիննելոյ* T *շնչելոյ* սրբ. *շինելոյ* u *հազարատք*

23 V չիք *եւ* r *մի շունչք* փխ *միաշունչք*

24 e *ի* փխ *եւ* B *շաւեղ* ĩp *շաւիղք*

25 FQλ *ճաշակողաց* FQeíhpqx *այսմ* s *յայսր* A *յոքնարէն* B *յոքնարէն* սրբ. *յոքնարէն* FQλ *յոքնարեան*

26 AFQα_1γλμσφωΣ_1m$_1$ *հանդերձեցելոյ* OX *հանդերձելոց* g *մախթանս* O *ուղեզս* (f *ուղիս*) փխ *ուղիզս*

26—27 Bφ *պատկանաւորս*

27 φ *խնդրուած* SY *և սեռն (սիրով)*

28 Z *գրութեան* սրբ. *գպրութեան* τ *գպրութեան* (r *գրութին*) փխ *գպրութեանն* AM$_1$Tα_1ηλμω$\Sigma_1$bcdefghilp չիք *Ամէն* SY *ամէն ամէն և եղիցի ամէն* ACM$_1$φΣbcdefghlnp այս տողից հետո ունեն *Փառք ամենասուրբ* (C *սուրբ* սրբ. *ամենասուրբ*) *երրորդութեանն* (h *երրորդութեան*) *հաւր և որդւոյ և հոգւոյն սրբոյ* (ACM$_1$φΣ_1 չիք *հաւր... սրբոյ*) *յաւիտեանս յաւիտենից* (bcdefghlnp չիք *յաւիտենից*) *ամէն* (AM$_1$φΣ_1 չիք *ամէն*)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԽՈՐԱԳԻՐ

Մատյանի ընդարձակ խորագիրը գաղափար է տալիս երկի բովանդակության ու հեղինակի նպատակների մասին և տեղեկացնում, թե ո՛ւմ խնդրանքով է գրվել այն։ Նման խորագրումը հայ միջնադարյան մատենագրության մեջ, մանավանդ ծավալուն ստեղծագործությունների համար, եղել է կայուն ավանդույթ (հիշենք, թեկուզ, Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ», «Վիպասանութիւն» և այլ քերթվածների խորագրերը), երբ սկզբից ևեթ ընթերցողին տրվում է քիչ թե շատ ամփոփ պատկերացում երկի ընդգրկումների մասին՝ դրանով իսկ տրամադրելով ու նպատակամղելով նրան։

Խորագրից առաջ որոշ ձեռագրեր ունեն հետևյալ նշումները՝ «Նախապատճառ աստուածախօս աղօթից», «Նախադրութիւն աղօթիցս գրոց» (տե՛ս խորագրի տարընթերցվածները), որոնցում Մատյանն անվանված է «աստուածախօս աղօթք» կամ «աղօթից գիրք»։ Բայց թե՛ մեկ և թե՛ մյուս նշումը բնագրային լինել չեն կարող. հանդես են գալիս բավական ուշ շրջանի գրչություններում՝ XVII դարի ձեռագրերում (փstux), նաև B օրինակում (էջ 2), որը թեպետ XIII—XIV դարերի ընդօրինակություն է, սակայն մեզ հետաքրքրող նշումը նրա մեջ ավելացված է հետագա ձեռքով, XVIII դարում։ Մյուս բոլոր գրչագրերում «աղօթք» անվանումը բացակայում է։ Հիշենք նաև, որ Նարեկացու երկը XVIII դարի տպագիրներում, ինչպես և XIX դարի առաջին կեսի հրատարակությունների մեծ մասում, անվանված է «Գիրք աղօթից», որին երբեմն միացվել է «Նարեկ» բառը՝ Նարեկա վանքի և Նարեկացու անունից («Նարեկ գիրք աղօթից», «Նարեկ աղօթից» և այլն). այս անվանումը ևս ձեռագրերով չի արդարացվում։ «Մատեան ողբերգութեանց» (Վենետիկ, 1827 թ.), «Ողբերգութիւն» (Վենետիկ, 1833, 1844, 1851 թթ.) կամ «Մատեան ողբերգութեան» (Վենետիկ, 1840 թ. և այլն) անվանումները Նարեկացու երկի տպագիրների տիտղոսաթերթերի վրա առաջին անգամ երևան են գալիս վենետիկյան հրատարակություններում։ Դրանք ծագում են Մատյանի ընդարձակ խորագրից (տ. 19), իսկ նրանցից վերջինը, 1840-ական թվականներից սկսած, դառնում է ընդունված և սովորական անվանումը հետագա գրեթե բոլոր տպագիրներում։

Խորագիրն ունեն մեր օգտագործած բոլոր գրչագրերը, բացի EFHo օրինակներից և այն ձեռագրերից, որոնք սկզբից պակասավոր են (տե՛ս խորագրի տարընթերցվածները)։ Հիշյալ չորս օրինակում, որոնցից մեկը (E)՝ XV դարի, իսկ երեքը XIV դարի գրչություն են, նրա բացակայությունը հիմք չի կարող ծառայել ենթադրելու, թե այն կարող է հեղինակային չլինել. թերևս խորագիրը նրանցից դուրս է մնացել պատահաբար, այն գաղափար օրինակների պակասավորության պատճառով, որոնցից արտագրվել են նրանք։ Օրինաչափն այն է, որ խորագիրը մեզ հայտնի գրչագրերում, իբրև [illegible]ն, հանդես է գալիս։ Այն իրավացիորեն տեղ է գտել նաև բոլոր տպագիրներում, բացի Կ. Պոլսի 1726 [illegible] 1736, 1755, [illegible]33 (Պ$_3$), 1782 և 1789 թթ. հրատարակություններից։ Վերջիններում խորագիրն այսպես է. «Դրունք աղօթից՝

յոգնաթախանձ բանից ողբերգականաց, յանձնառութիւնք կամաւորականք և ցուցմունք ծածկեցելոց, հառաչանք և հեծութիւնք ի դիմաց ամենից անձանց, ասացեալ սրբոյն Գրիգորի՝ Նարեկայ վանից վանականի և ճգնասէր հսկողի»։ Այս խորագիրը որևէ գրչագրից չի վերցված. հավանաբար հորինել է Պ$_2$ տպագիրը պատրաստող ու սրբագրող, անվանի բանաստեղծ և գիտնական Պաղտասար Դպիրը՝ հետևելով բուն խորագրին, նկատի առնելով նրա որոշ տողերը, սակայն փոփոխելով ու համառոտելով և Դռունք սկզբնաբառից հետո ավելացնելով աղօթից բառը։ Պատահական չէ, որ Պ$_4$ տպագիրը մերժել է բնագրից այնքան հեռացած այդ նորահնար ձևակերպումը և վերականգնել խորագիրն այնպես, ինչպես այն կա ձեռագրերում։

Իսկ խորագիրը հեղինակայի՞ն է արդյոք. այդ հարցին դեռևս XVIII դարում անդրադարձել է Հակոբ Նալյանը (տե՛ս «Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ», Կ. Պոլիս, 1745, էջ 17. այսուհետև՝ «Գիրք մեկնութեան»)։ Նկատելով, որ այն նույն ծավալը չունի ձեռագրերում ու տպագիրներում (նա, ըստ երևույթին, օգտվել է Պ$_2$ հրատարակությունից)՝ Նալյանը կարծում է, որ խորագիրը դժվար թե Նարեկացունը լինի։ «Եւ երևի, թէ ոչ իցէ իւրն, քանզի թէ իւր ասացեալ լինիւր, ոչ աւելացուցանէին և ոչ պակասեցուցանէին գրագիրք»,— նշում է նա (նույն տեղում)։ Ապա, ի հիմնավորումն իր կասկածի, նա բերում է խորագրի ավարտն ըստ Պ$_2$ տպագրի («սրբոյն Գրիգորի՝ Նարեկայ վանից վանականի և ճգնասէր հըսկողի») և եզրակացնում, որ դա հարգանքի խոսք է, ներմուծված ուրիշներից «վասն պատուոյ վարդապետին»։ Նալյանը նաև վկայակոչում է Մատյանի խորագիրն ամբողջությամբ՝ 1367 թ. օրինակված մի ձեռագրից (ծագած մեր A օրինակից) և դարձյալ գտնում, որ նրա ավարտի «Յոգեմատեան հռետորի և հայոց փիլիսոփայի» գրվածական արտահայտությունը բոլորովին անհարիր է Նարեկացու խոնարհ բնավորությանը։ Ի վերջո նա գալիս է այն հետևության, որ խորագիրը, հավանաբար, գրիչ Գրիգոր Սկևռացու հավելումն է, որին սխալմամբ համարում է նաև Նարեկացու վարքի հեղինակ։ Ըստ Նալյանի, եթե Մատյանը նախապես ունենար ընդարձակ խորագիրը, ապա Սարգիս Շնորհալին անպայման նրա լուծումը ևս տված կլիներ, մինչդեռ խորագրի մասին խոսք չկա Մատյանի միջնադարյան մեկնության մեջ (Նալյանը սխալմամբ կարծում էր, թե մեկնության հեղինակը XII դարի մատենագիր Սարգիս Շնորհալին է)։

Միջնադարյան մեկնությունը, որը հայտնի է տարբեր խմբագրություններով, իր նախնական տեսքով (և առհասարակ) այնքան համառոտ է, որ նրանից պահանջել կամ սպասել նաև խորագրի լուծումը՝ անարդարացի կլիներ։ Մեկնաբանության ոչ հանգամանալից եղանակը նրա հեղինակին իրավունք էր տալիս, ի թիվս բազմաքանակ հատվածների, տողերի ու բառերի, շրջանցել նաև Մատյանի խորագիրը։ Այդ մեկնության հնագույն՝ 1271 թ. գրչագրում (Մաշտոցյան մատենադարանի 5518 ձեռագիր) նրա հեղինակ է համարվում Հակոբ Կլայեցին (1268—1286 թթ.՝ հայոց կաթողիկոս), հետևապես նրա մեջ խորագրի հիշատակումը կամ բացակայությունը չի կարող որևէ նշանակություն ունենալ նրա բնագրային լինելու կամ չլինելու հարցում, մանավանդ որ Նարեկացու երկի ավելի վաղ գրված ձեռագրերում (AKL և Վատիկանի հայերեն ձեռագրերի հավաքածուի № 4 գրչագիր) խորագիրը կա։ Խորագիրը, ինչպես նշեցինք, խտացված ձևով արտահայտում է երկի բովանդակությունն ու բնույթը, այն էական խնդիրները, որոնք բանաստեղծական խոսքի բազմազան եղանակներով արծարծվում-ծավալվում են Մատյանի սկզբից մինչև վերջ։ Որքա՜ն հարազատ է այն ՁԸ գլխի հետևյալ հատվածին, ուր նույնպես հեղինակը պարզում է իր գրքի բովանդակությունը, խոսում նրա ներգործուն դերի մասին.

Սոյն գիր իմովս ձայնիւ, իբր զիս, ընդ իմ աղաղակեսցէ,
Կակ... ...ածեսցէ զծածկեալսն, ճոչակեսցէ զգաղտնիսն,
Յայտնեսցէ զկատարածն, ճնչեսցէ զմոռացեալսն,
...ներեւոյթսն, բարբառեսցէ զբարուսն,

Քարոզեսցէ զխորոցն, պատմեսցէ զմեղացն,
Մերկացուսցէ զանտեսիցն, ցուցցէ զկերպարանս բաժուցելոցն...

(ա. 43—49)

Այս հատվածի և խորագրի հարազատությունը (եթե չասենք՝ նմանությունը) երկու ենթադրության առիթ կարող է տալ. առաջին՝ խորագիրը Նարեկացունը չէ, այլ հիշյալ հատվածի և ուրիշ գլուխների նմանատիպ տողերի ու հատվածների հետևությամբ կազմել է հետագա մեկը և կցել Մատյանին. երկրորդ՝ խորագիրը Նարեկացունն է, քանի որ հարազատ է նրա մտածողությանն ու ոճին։ Առաջին ենթադրությունը մեզ համար մերժելի է, ընդհակառակը, երկրորդն ընդունելի է այն տրամաբանական հիմքով, որ խորագրին ինքնին մի այնպիսի նախերգանք խտացում է, բանաստեղծական ուժի ու լարվածության այնպիսի դրսևորում, որպիսին հայ միջնադարում Նարեկացուց հետո հանդես եկած որևէ բանաստեղծի ու մատենագրի (ներառյալ նաև Արիստակես Լաստիվերտցուն ու Ներսես Լամբրոնացուն) բնութագրական չէ. դա միայն և միայն Նարեկացու մտքի ու ոճի արտահայտությունն է։ Արհեստականություն կամ նմանակում նրանում զգալի չէ։ Եվ Նալյանից հետո, որքան հայտնի է, Նարեկացիով զբաղվող որևէ այլ բանասեր կասկած չի հայտնել, թե խորագիրը կարող է բնագրային չլինել։ Նրա հեղինակային լինելու հարցում չի երկմտել նաև Նարեկացու մեծահմուտ մեկնիչ Գ. Ավետիքյանը։ Հետևելով ձեռագրերում ու տպագրերում ընդունված և, անշուշտ, Նարեկացուց եկող ավանդույթին՝ մենք ևս խորագիրը դիտում ենք իբրև բուն հեղինակային՝ գրքի համար ընդհանուր անվանում ընդունելով խորագրի 19-րդ տողը՝ «Մատեան ողբերգութեան», ինչպես իր երկը կոչել է Նարեկացին ինքը (հմմտ. նաև ՁԳ գլխի տ. 11-ի հետ)։ Ի դեպ, Մատյանի թարգմանություններից միայն Գ. Խաչատուրյանի մոտ («Նարեկ. Մատեան ողբերգութեան ս. Գրիգոր Նարեկացիի», Բուենոս Այրես, 1948. այսուհետև՝ «Նարեկ. Մատեան ողբերգութեան») է պահված խորագիրը. մյուսները (ի թիվս որոնց՝ և ֆրանսերենը) հանել են այն՝ առանց բնագրագիտական պատճառաբանության։

Խորագրի սկզբնամասի բառը միայն չորս գրչագրերում Դրուփինք (... ATγμ), իսկ մնացածներում՝ Դռունք (Σ օրինակը Դռունք գրել և սրբագրել է Դրուփինք)։ Վերջիններիս թվում նկատի չունենք այն օրինակները, որոնք խորագիրը չեն ունեցել (EFHo), նաև թվով 11 այն գրչագրերը, որոնցում խորագիրը չի պահպանվել կամ սկզբից պակասավոր է (տե՛ս տարընթերցվածները)։ Ըստ այդմ տպագիրները ևս բաժանվում են երկու խմբի. Պոլսի հնագույն հրատարակությունները (Պ$_1$ և Պ$_2$, ինչպես նաև խորագրով վերջինիս կրկնող 1736, 1755, 1763, 1782 և 1789 թթ. տպագիրները) ունեն Դռունք, իսկ Պ$_4$-ը և նրանից ծագող հետագա բոլոր տպագիրները՝ Դրուփինք։ Մատյանի՝ մեր ձեռքը չհասած ձեռագրերում եղել է նաև Դրուփինք ընթերցվածը (տե՛ս Պ$_4$ տպագրի առաջաբանը, էջ 6), սակայն դա Դրուփինք բառի աղճատումով առաջացած տարընթերցված է, հետևանք «ղ» տառը «դ»-ի հետ շփոթելու։

Արդ, Դրուփինք և Դռունք ընթերցվածներից ո՞րն է Նարեկացունը։ Այդ պարզելու համար պետք է հաշվի առնել մի կարևոր հանգամանք. մեկ կամ մյուս բառը խորագրի սկզբում ի՞նչ առումով է գործածված։ Դրուփին բառը, բացի այլևայլ իմաստներից (դիրք, կարգադրություն, դրություն, գրույթ և այլն), մատենագրության մեջ հանդիպում է նաև «դրվագ, խոսքի հորինվածք, շարադրություն (շարագրություն), խոսք» և այլ նշանակություններով (տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Ա, Վենետիկ, 1836, էջ 644), այն էլ հատկապես Նարեկացու ստեղծագործություններում։ Այդ առումով բառը հանդիպում է Մատյանի ԻԷ գլխի տ. 2-ում («զդրութիւն թուոցս յարմարեցի») և երկու անգամ՝ Նարեկացու հիշատակարանում՝ «Յիշատակարան մատենիս գրութեան» վերնագրում և «զբազմատեսնեան դրուագս գրութեան այսմ առփների արգասաւորի» կապակցության մեջ։ Այս օրինակներից առաջինում բանաստեղծն ակ-

նարկում է Իէ-ին նախորդող ԻԶ գլուխը, այսինքն՝ բառը հանդես է եկել դրվագի, գլխի նշանակությամբ, իսկ մյուսներում՝ հորինվածքի, կազմության իմաստով (հմմտ. Գ. Աւետիքեան, Նարեկ աղօթից համառօտ և զգուշաւոր լուծմամբք, Վենետիկ, 1827, էջ 541, ծնթ. 1. այսուհետև՝ «Նարեկլուծ»). «դրուագս դրութեան» կապակցության մեջ, թերևս, դրութեան-ը կարելի է ընկալել նաև իբրև դրուագս բառի սեռականով ավելադրություն, այսինքն՝ համանշանակ նրան։

Այդ բառը հորինվածքի, դրվագի, շարադրանքի նշանակությամբ գործածված ենք գտնում նաև Նարեկացու մյուս երկերում. Ապարանից խաչի պատմության վերջում՝ «զկնի գծագրութեան զումարահոլով պատմաբանութեանս՝ խառնել գուն ինչ դրութիւնս համառօտագիր դրուատից» (տե՛ս «Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատենագրութիւնք», Վենետիկ, 1840, էջ 389. այսուհետև՝ Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք), որտեղ մեզ հետաքրքրող բառով ակնարկվում են խաչի և Աստվածածնի ներբողյանները,—և խաչի ներբողյանի խորագրում՝ «Առընթեր դրութիւն սակաւ ստիեստի յարակցեալ հիւսի ճառս ներբողի...» (նույն տեղում, էջ 390), որտեղ, ընդհակառակը, ակնարկվում է նախորդ գործը՝ Ապարանից խաչի պատմությունը, որին կցված է խաչի ներբողյանը։ Այսպիսով, դրութիւն բառը (եզակի կամ հոգնակի թվով) Նարեկացու ստեղծագործության մեջ կիրառվում է իբրև գրական-տեսական հասկացություն, բավական որոշակի առումներով։ Նույնիսկ կարելի է ասել, որ այն բանաստեղծի նախասիրած բառերից մեկն է։ Դա հիմք է տալիս կարծելու, որ խորագրի սկսվածքի բուն հեղինակային բառը եղել է ոչ թե Դրուանք, այլ Դրութիւնք, չնայած ձեռագրերի ճնշող մասը (խորագիրն ունեցող 46 գրչագրերից 41-ը) ճիշտ հակառակն է վավերացնում։

ջին՝ դրութիւնք բառը ձեռագրերում համառոտագրվել է դրուի՛ք ձևով. «ի» տառի և «պատիվ»

Իսկ ինչպե՞ս է պատահել, որ Մատյանի օրինակներում երևան է եկել Դրուանք-ը և հետըզհետե դուրս մղել Դրութիւնք ընթերցվածը։ Դրան առիթ են տվել երկու հանգամանք. առակոչված նշանի պատահական անտեսումը հեշտությամբ կարող էր հանգեցնել այն բանին, որ բառի լրիվ պատկերը վերականգնելիս գրիչներն այն ընկալեին որպես դրուանք և ոչ թե դրութիւնք. երկրորդ՝ դրութիւնք բառը վերը Նարեկացուց վկայակոչված օրինակներում նրա ունեցած առումներով հայ մատենագրության մեջ այնքան էլ տարածված չի եղել. «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»-ն գործածության մի դեպք էլ բերում է «Շղթայ մեկնութեան հօթանց թղթոց կաթողիկեայց» կոչված հնագույն աշխատությունից (տե՛ս հտր. Ա, էջ 644). նաև Գոշի «Դատաստանագրքի» Ա և Բ խմբագրությունների ձեռագիր ցանկերում հոդվածներից մեկը գլխի փխ հիշատակվում է դրութիւն բառով (տե՛ս Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, աշխատասիրությամբ՝ Խ. Թորոսյանի, Երևան, 1975, էջ ԾԱ)։ Եվ, ընդհակառակը՝ դրուանք բառը միջնադարում հաճախակի կիրառվել է գլխի իմաստով. այդպես են կոչվում արաբերենից XII—XIII դդ. թարգմանված «Գիրք վաստակոց» (Վենետիկ, 1877) և Գրիգորիսի «Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց» (Երևան, 1962) աշխատությունների գլուխները։ Բավարարվենք այդ օրինակներով՝ հաշվի առնելով, սակայն, որ դրուանք բառը Նարեկացուն նախորդող և նրա ժամանակի հայ մատենագրության մեջ գլխի իմաստով չի հանդիպում. այդ առումով այն հանդես է գալիս հետագայում միայն՝ արաբերեն «բար» (դուռ, գրքի գլուխ) բառի ազդեցությամբ (տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Ա, Երևան, 1971, էջ 684)՝ ստանալով լայն կիրառություն։ Ուրեմն «գլուխ» իմաստային առումով տարածված դրուանք բառը Մատյանի ձեռագրերում խորագրից դուրս է վանել Դրութիւնք-ը և Դրուանք հոգնակի ձևով փոխարինել նրան։ Դրութիւնք սկզբնաբառն իր հերթին լրացուցիչ մի կռվան է հավաստելու, որ խորագիրը ոչ թե հետագա հավելում է, այլ պատկանում է Նարեկացուն։

Խորագիրը պարունակող բոլոր օրինակները, բացի Xγϑλ÷ ձեռագրերից, նրա վերջում, 20-րդ տողից հետո, ունեն «Հոգեմատեան հռետորի և հայոց փիլիսոփայի» հավելումը (տարբերությունները տե՛ս խորագրի տարընթերցվածների բաժնում)։ Ինչպես տեսանք, դեռևս Նալյանն իր մեկնության մեջ նկատել է, որ ինքնամեծարումը Նարեկացուն խորթ է, և այդ տողը հեղինակինը չէ։ $Պ_4$ տպագրից սկսած այդ հավելումը հանվել է հրատարակություններից, որոնց հետևում ենք և մենք։

ԲԱՆ Ա

1. Ի խորոց սրտից—լրացումը (սիրտ) ընդունել է լրացյալի (ի խորոց) թիվը՝ հանդես գալով հոգնակի ձևով, բայց ընկալվում է իբրև եզակի (սրտի խորքերից)։ Ինչպես առհասարակ գրաբարին, այնպես էլ Նարեկացու լեզվին բնորոշ քերականական առանձնահատկություն է դա, երբ հատկացուցիչ լրացումն ընդունում է հատկացյալի թելադրած հոլովը և թիվը. օրինակ՝ Եւ ոչ ընդ այսմ սահմանաւ ուխտի փակեցայ (փխ ուխտի. Ե, 65), տարեալք իրովք (փխ իրեանց. ՀԹ, 48), ուրախութեամբ սրտի (փխ սրտի. ՁԱ, 68)։ Ձեռագրերից մի քանիսը վերնագրում սրտից հոգնակիի փխ ունեն նաև սրտի (V-ն գրեթե միշտ՝ ԺԵ գլխից սկսած, γe-ն՝ հազվադեպ և այլն) կամ սրտէ (AW-ն՝ ԺԳ գլխի, TZ-ը՝ Բ գլխի վերնագրերում և այլն) եզակի ձևերը, սակայն դրանք պատահական շեղումներ են, անշուշտ գրիչների միջամտության արդյունք և ամենևին էլ իրավունք չեն տալիս սրտից ուղղել սրտի։ Ի դեպ, նույն կապակցությունը մեկ անգամ հանդիպում է նաև բնագրում՝ ՄԷ գլխի 37-րդ տողում, սակայն ի խորոց սրտի ձևով (կան ձեռագրական տարբերություններ. տե՛ս տողի տարընթերցվածները)։ Այս օրինակը ցույց է տալիս, որ Նարեկացուն հարազատ են թե՛ ի խորոց սրտից-ը (վերնագրերում) և թե՛ ի խորոց սրտի-ն։

Վերնագրի ի խորոց կապակցությունը կա սաղմոսներում՝ «ի խորոց կարդացին առ քեզ» (ԽԱ, 8) և «ի խորոց կարդացի առ քեզ (ՃԻԹ, 2) արտահայտություններում, որոնցից Նարեկացու վերնագիրը, ինչպես տեսնում ենք, բավական տարբեր է։ Որոշ ձեռագրերում Եփրեմ Ասորու «Տե՛ս, տէր, զտառապանս իմ...» սկսվածքով աղոթքը խորագրված է «Երանելւոյն Եփրեմի խորին Ասորւոյ աղերս մաղթանաց. ի խորոց սրտից խաւսք ընդ աստուծոյ» (տե՛ս մեր S=5707 ձեռ., էջ 164ա)։ Սակայն այս դեպքում ոչ թե Նարեկացին է Եփրեմին հետևել, այլ գրիչները, վերջինիս աղոթքն օրինակելով Մատյանի հետ միևնույն ձեռագրում, Նարեկացու ազդեցությամբ նրա նման են վերնագրել այն՝ նույնությամբ վերցնելով նաև աղերս մաղթանաց բառերը հաջորդ գլուխների վերնագրերի առաջին մասից։

Ա գլխի վերնագրից առաջ կամ հետո որոշ ձեռագրեր ունեն հիշատակագրություններ՝ «Աստուծոյ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ի յօգուտ ընթերցողացն» (B). «Սրբազան կաթողիկոսի Հայոց տեառն Կոստանդեայ աղաւթամատոյց ի կեանս և յիշատակ յետ վախճանի» (L). «Աւգնեա՛, Յիսուս իմ աստուած» (S). «Աւգնեա՛, կարող յամենայնի» (λ). «Տէր Յիսուս Քրիստոս, զսկսեալս իմ դո՛ւ կատարեա» (d)։ Վերջին երեք հիշատակագրությունները հիշեցնում են հին սովորությունը. որևէ աշխատանքն սկսելիս խնդրել աստծու օգնությունն ու օրհնությունը՝ այն հաջողությամբ ավարտի հասցնելու համար։ Այդ խնդրանքն արտահայտել է նաև ինքը՝ Նարեկացին, հատկապես Մատյանի առաջին գլուխներում, և d ձեռագրի գրիչն իր հիշատակագրության մեջ կրկնել է Գ գլխի 140-րդ տողը՝ «Զսկսեալս իմ դո՛ւ կատարեա»։

2. ... հեծութեան ողբոց սրտից—$Պ_4$ և հետագա բոլոր տպագրներում, բացառությամբ Կ. Պոլսի 1782 և 1789 թթ. հրատարակությունների, այդ բառերի շարադասությունը տարբեր է՝

հեծութեան սրտի ողբոց, սակայն երկու դեպքում էլ նշանակությունը նույնն է։ Տարբերությունը, շարադասության հետ միասին, սոսկ սիրտ բառի քերականական թվի մեջ է (մեկում եզակի է, մյուսում՝ հոգնակի), որն իմաստային տարբերակում առաջ չի բերում։ Մատյանում, իբրև մեկ բառակապակցություն, միասին հանդիպում են թե՛ հեծութիւն ու ողբ բառերը (զհեծութիւն ողբոց—Թ, 86. հմմտ. թախծութիւն ողբոց—ՂԶ, 1) և թե՛ հեծութիւն ու սիրտ բառերը (սրտին հեծութեան—ԼԱ, 35, հեծութեան սրտի—ԻԸ, 60)։ Ուրեմն, Նարեկացուն հարազատ են և՛ հեծութեան ողբոց, և՛ հեծութեան սրտի բառակապակցությունները։ Այս դեպքում նախընտրել ենք հնագույն ձեռագրերի հեծութեան ողբոց սրտից ընթերցվածը (A-ն ունի ողբոցս սրտի)՝ հաշվի առնելով այն, որ հեծութեան սրտի ողբոց տարբերակը տալիս են համեմատաբար ուշ շրջանի չորս ձեռագրեր, որոնցից ամենահինը՝ T-ն, 1390 թվականի գրչություն է։

3. Տե՛ս Ես., Ա, 15։

4. Տե՛ս Սաղմ., ՀԲ, 7։

5. Հմմտ. Բ Թագ., Զ, 17։

6. Հմմտ. Յովէլ, Գ, 14։

7. ... ըստ հին դիպուածոյն—նկատի ունի մովսիսական, այսինքն՝ հին հրեական, օրենքը, իսկ հաջորդ տողի Նախ քան զշնորհին ժամանելն առ իս դարձվածով Նարեկացին ակնարկում է նոր, ավետարանական օրենքը։

8. Տե՛ս Գործք, ԺԳ, 38։ Հռովմ., Ը, 2—3։

9. Հմմտ. Յովէլ, Գ, 2։

10. Հմմտ. Գ Թագ., ԺԵ, 13։ Որոշ ձեռագրեր, ի թիվս որոնց՝ և A-ն, հաջորդ տողի փոքր բառն ունեն տրականաձև՝ փոքու, համաձայնեցնելով այն ոչ թե հանդիսարանացն, այլ Կեդրոնի գոյականի հետ։ Սակայն Նարեկացու աղբյուրում՝ Գ Թագ., ԺԵ, 13-ում հեղեղատին Կեդրոնի անվանումը չունի փոքու որոշիչը. բնականաբար փոքր ածականը վերաբերում է հանդիսարանացն գոյականին։

11. Հմմտ. Ղուկ., Ժ, 9, 11։ Այս և հաջորդ տողի տրոհումը որոշ գրչագրեր այլ կերպ ունեն.

...Արքայութիւնն աստուծոյ մարմին եղելոյ մեծապէս:
Գտեալ զիս առիթ վնասուց բազմաց տոկոսեաց (զ, էջ 2ա)։

Ըստ այդմ, նախադասության միտքն ընկալվում է ոչ թե այսպես՝ «մարմնացած աստծու թագավորությունն ինձ էլ է մոտեցել՝ իբրև պատճառ (գործիք) գտնելով ինձ մեծ ու բազմատոկոս մեղանչումների համար», այլ քիչ տարբեր՝ «աստծու թագավորությունը մոտեցել է և ինձ՝ մեծապես մարմին դարձածիս, գտնելով ինձ իբրև գործիք (պատճառ) բազմատոկոս մեղանչումներիս»։

12. Տե՛ս Ես., ԻԴ, 17։ Երեմ., ԽԸ, 43։ Առակք, Ա, 27։

ԲԱՆ Բ

1. Այս գլխից սկսած, Ի խորոց սրտից խօսք ընդ աստուծոյ վերնագրից առաջ, բոլոր գլուխները, բացի ՂԲ—ՂԳ-ից, ունեն նաև Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հսկողի առ նոյն աղերս մաղթանաց բանի վերնագիրը։ Երկու վերնագիրը շատ գրիչներ գրեթե միշտ ընկալում են իբրև մեկ միահար վերնագիր՝ հաճախ կրճատելով ու համառոտագրելով։ Նրանց բնագրային լինելու հարցին դեռևս XVIII դարում անդրադարձել է Հակոբ Նալյանը՝ երկուսն էլ համարելով ոչ թե հետագա հավելում, այլ բուն հեղինակային։ Մեկնիչը նկատել է, որ չնայած «նորին հսկողի» անվանումը կարծես թե գովություն է թվում Նարեկացու հասցեին, բայց դա

հունարենից փոխառված նրա անվան հայերեն թարգմանությունն է և ոչ թե մեծարանք՝ ուրիշից ասված. «...զի Գրիգորն հսկօղ թարգմանի ի հելլենական լեզուն» (տե՛ս «Գիրք մեկնութեան», էջ 25)։

2. Ակնարկում է Մովսես մարգարեի առաջնորդությամբ Սինայի անապատը հասած հրեաներին, որոնք դժգոհում էին Եգիպտոսից հեռանալու համար (տե՛ս Ելք, ԺԱ)։

3. Իրեն համեմատում է Ղովտի կնոջ հետ, որը Սոդոմից հեռանալիս ետ է նայում և ենթարկվում պատուհասի։

4. Ակնարկում է Հովնան մարգարեին։

5. Հմմտ. Մատթ., ԺԲ, 42։ Հարավային տիկինը բարբարոսների Սաբա թագուհին է, որ Սողոմոն Իմաստունին լսելու նպատակով այցելել է նրան (տե՛ս Գ Թագ., Ժ և Բ Մնաց., Թ)։

6. Տե՛ս Ելք, ԺԷ, 8—16։

7. Նկատի ունի Բաբելոնը (հմմտ. Երեմ., ԾԱ, 9)։

8. Հմմտ. Երեմ., Գ, 11։

9. Հմմտ. Մատթ., ԺԱ, 21—23։

10. Հմմտ. Ովսէէ, Է, 9։

11. Հմմտ. Ովսէէ, Է, 11։

12. Հմմտ. Ես., Լ, 6։

13. Հմմտ. Ես., ԾԹ, 5։

14. Տե՛ս Ղուկ., ԻԱ, 20—24։ Ողբք Երեմ., Ա, 7։ Դան., Թ, 26—27։ Զաք., ԺԱ, 1։

15. Հմմտ., Ես., ԼԸ, 12։

16. Տե՛ս Ղևտ., ԺԴ, 43։ Սաղմ., ՀԷ, 62։ Երեմ., ԺԲ, 7։

17. Այս տողի համար Մատյանի միջնադարյան մեկնությունը տալիս է հետևյալ բացատրությունը. «... քահանայն ողոքանօք արտասուէր, մինչ զի արտասուօքն կաւ առնէր և այնու զորմն կաղդուրեալ օծանէր» (տե՛ս ձեռ. 5650, էջ 330բ—331ա)։ Ավետիքյանն այդ բացատրությունը համարում է «հրեական անհիմն զրույցի» արտահայտություն՝ ընդհանուր կապակցության մեջ տողի իմաստը հասկանալով այսպես. մեղքով բորոտած բանական տունս ծեփվեցի հեզ վարդապետությամբ՝ իբրև կավով, բայց անբժշկելի մնալով՝ դժոխքն եմ ընկնելու չարաչարածների հետ («Նարեկլուծ», էջ 12, ծնթ. 7)։

18. Հմմտ. Ղևտ., ԺԴ, 34—40։

19. Տե՛ս Մատթ., ԻԵ, 24—25։

20. Յովնանու—այս անվան փխ ձեռագրերի մեծ մասն ունի Յովհաննու (Յոհաննու և այլն), այսինքն՝ Հովնան մարգարեի անունը փոխարինված է Հովհաննես ավետարանիչով և առաքյալով։ Այդպես ունի նաև $Պ_2$ տպագիրը (Յոհաննու)։ Սակայն, ինչպես նկատել են Հ. Նալյանը և Գ. Ավետիքյանը, դա սովորական գրչական շփոթության արդյունք է (տե՛ս «Գիրք մեկնութեան», էջ 31, «Նարեկլուծ», էջ 13, ծնթ. 9), չնայած Մատյանի միջնադարյան մեկնիչը համապատասխան տեղում Հովհաննես անվան բնագրային լինելը փորձել է արդարացնել՝ տալով հետևյալ բացատրությունը. «Ասեն, թէ աւետարանիչն, յորժամ հանդերձեալ էր ասել զԱւետարանն, նախ աղօթեաց առ աստուած շնորհել նմա զՀոգին, զի Հոգովն ասիցէ և ըստ հաճոյիցն աստուծոյ կատարեսցէ։ Զնոյն Հոգի և սուրբս հայցէ, զի կատարումն գրոցս ըստ կամացն աստուծոյ եղիցի» (ձեռ. 5650, էջ 331ա)։ Այս բացատրությունը համոզիչ չէ, քանի որ նախորդ տողը՝ Երկայնամիտ և բազումողորմ, որի համար վկայակոչված է վիճելի անունը, անփոփոխ մեջ է բերված Հովնանու մարգարեությունից։

21. Հմմտ. Սաղմ. ՃԻԵ, 5—6։

22. Հմմտ. Ովսէէ, Թ, 14։

23. Այս տողն ունեցող բոլոր ձեռագրերը, ինչպես նաև բոլոր տպագրերը, տալիս են

Իսրայէլի (Իսրայելի) փխ Յեզրայելի (միայն W ձեռագիրն ունի յԻսրայէլի)։ Տողը բառացի համապատասխանում է աղբյուրին՝ Մարգ. Ովսեայ, Բ, 21—22, ուր վճռելի ընթերցվածը ոչ թե Իսրայելի է (չնայած, ինչպես Գ. Ավետիքյանն է նկատել, Ս. Գրքի «Յոթանասնից» խմբագրության օրինակներից մեկն ունի այդպես. տե՛ս «Նարեկլուծ», էջ 13), այլ Յեզրայելի։ Հեզրայելը Իսրայելի թագավորների արքայանիստն է եղել. այդ անունով է կոչվել նաև նրա մոտ ընկած դաշտավայրը։ Անշուշտ, այստեղ նարեկացիական ճիշտ ընթերցվածը եղել է Յեզրայելի, որը գրչագրերում համառոտագրվելով՝ հեշտությամբ կարող էր շփոթվել ու նույնացվել Իսրայէլ անվան հետ։ Այդ ենթադրության օգտին է խոսում W ձեռագրի ընթերցվածը՝ յԻսրայէլի, որի յ սկզբնատառը չի կարելի դիտել իբրև նախդիր, քանի որ նրան համադաս մյուս անդամները (ցորենոյ, գինւոյ, ձիթոյ) չունեն այդ նախդիրը. ուրեմն հավանական է կարծել, որ յ-ին հաջորդող ե և զ տառերն են դարձել իս՝ W-ում առաջացնելով յԻսրայէլի տարընթերցվածը։ Յեզրայէլ ընթերցվածի բնագրային լինելը հավաստվում է ոչ միայն Մատյանի աղբյուրով՝ Ովսեի մարգարեությամբ, այլև նրանով, որ վճռելի տեղից քիչ առաջ՝ 54-րդ տողում արդեն հանդիպում է Իսրայէլ անունը (... արգանդ սրտի անօրդի, իբր Իսրայէլի). հազիվ թե այդքան կարճ տարածության վրա, գրեթե իրար հաջորդող տողերում, բանաստեղծն օգտագործեր միևնույն բառը։ Ըստ այդմ էլ բնագրում ուղղել ենք Յեզրայելի։

24. Հմմտ. Ես., ԿԴ, 8։

25. Հմմտ. Ես., ԻԵ, 5։

26. ... ինձ ոսկի—սկսած $Պ_4$ տպագրից Մատյանի հետագա բոլոր հրատարակությունները, բացի Կ. Պոլսի 1782 և 1789 թթ. տպագիրներից, ունեն զոսկի քո, որը մեր օգտագործած ձեռագրերից ոչ մեկը չի տալիս. հավանաբար տպագրության ճանապարհին առաջացած ընթերցված է։

27. Հմմտ. Ես., Կ, 17։

28. Հմմտ. Ես., ԿԴ, 17։

29. Հմմտ. Ա Թագ., Բ, 15—16, ուր ասվում է, որ զոհը կատարյալ չի կարող լինել առանց ճարպի ճենճերման։ Եվ զոհաբերման ժամանակ սովորություն է եղել բարեմաղթել. «Ճենճերեսցի՜ զոհ քո» (Ա Թագ., ԻԶ, 19)։

30. Հմմտ. Մատթ., Ե, 7։

ԲԱՆ Գ

1. α ձեռագրի հետագա վերանորոգող Հովհաննես Կարճավանցին սույն գլխի բովանդակության համար լուսանցքում նշել է. «Մեղսաքաւիչ պաղատանք» (էջ 9բ)։

2. ... բարձր եւ խոնարհ—ակնարկում է սաղմոսում ասվածը աստծու ամենուր լինելու մասին. «Թէ ելանեմ յերկինս՝ դու անդ ես, և թէ իջանեմ ի դժոխս՝ և անդր մօտ ես» (Սաղմ., ՃԼԸ, 8)։

3. Անշեղլի կնիք—Մատյանի միջնադարյան մեկնության մեջ բացատրված է այսպես. «Անփոփոխ դէմք»։ Հիշելով, որ Գրիգոր Նազիանզացին, ելնելով Քրիստոսի մարդեղության գաղափարից, նրան «շարժեցեալ կնիք» է անվանել, բացատրում է, թե ինչու է Նարեկացին տրամագծորեն ճիշտ հակառակ բնութագրումը տալիս. «Թէպէտ և Աստուածաբանն շարժեցեալ կնիք ասէ վասն մարդոյն լինելոյ, այլ սա ըստ աստուածութեան էութեանն անշարժ մնալոյ անշեղլի կնիք ասէ» (ձեռ. 5650, էջ 333ա)։

4. ... վկայեալ անուն—Հմմտ. Գործք, ԺԴ, 16։ Ես., ԽԲ, 8։

5. Ստրկամեծար թագաւոր—միջնադարյան մեկնիչը բացատրում է այսպես. «Որպէս թագաւորն ի գահոյս բազմեալ և ի գինարբուս զաղքատն մեծարէ, առ իւր տանի և կթղայ տայ» (ձեռ. 5650, էջ 333ա)։

6. ... Նախախնամող մատն—ըստ միջնադարյան մեկնության, Նարեկացին այդպես է անվանում աստծու հոգին, որովհետև «մատն է արուեստից արարող» (ձեռ. 5650, էջ 333բ)։

7. ... չափով արբունն—բոլոր տպագիրներն անխտիր ունեն ոչ թե չափով, այլ չափու, որ տալիս է միայն մեկ ձեռագիր (X)։ Բազմաթիվ գրչագրեր չափով արբունն ընթերցվածի փխ ունեն չափավար բունն, որի բնագրային լինելու նկատմամբ կասկած է հայտնել Գ. Ավետիքյանը. «... եթէ չիցէ վրիպակ, մարթ է իմանալ ի չափն իւր վարեալ կամ հասեալ բունն...» («Նարեկլուծ», էջ 23, ծնթ. 20)։ Նա ավելի ճիշտ է համարել չափու արբունն ընթերցվածը՝ նշելով, որ ինչ-որ օրինակ տալիս է նաև չափաւ արբումն (չափով տարընթերցվածը նրան հայտնի չի եղել)։ Չափու, չափաւ, չափով տարընթերցվածները բոլորն էլ գործիական հոլովաձևեր են (չափու ձևը՝ նաև սեռական-տրական հոլով)։ Ո՞րն է դրանցից նախնականը, ուրեմն և՝ բնագրայինը։ Նախնականը, մեր կարծիքով, չափով ընթերցվածն է, ինչպես ունի հնագույն ձեռագիրը՝ A-ն։ Ուղղանկյուն երկաթագրում Ո և Ա տառերը հեշտությամբ կարող էին շփոթվել միմյանց հետ։ Այդ ճանապարհով չափով ձևը կարող էր ընթերցվել ու օրինակվել չափավ գրությամբ՝ իր հերթին հանգեցնելով երկու կարգի տարընթերցվածների առաջացման. նախ՝ վ տառը բառավերջում, ա ձայնավորից հետո, հետագա գրիչների ձեռքով բնականաբար պետք է ուղղվեր ւ, այն է՝ չափաւ, ինչպես և ունեն բազմաթիվ ձեռագրեր, իսկ չափաւ-ի փոխարեն, դարձյալ իբրև գործիական հոլովաձև, կարող էր գրչական միջամտությամբ գործածվել չափու-ն՝ X օրինակի տարընթերցվածը. այնուհետև՝ վերոհիշյալ վ-ն կարող էր և չդիտվել սխալագրություն, եթե չափավ-ը ընկալվեր ոչ թե որպես առանձին բառ, այլ հաջորդ արբունն բառի ար սկզբնատառերի հետ իբրև մեկ բարդություն՝ չափավար, իսկ բունն առնվեր որպես անկախ բառ, ինչպես ունեն բավական մեծ թվով ձեռագրեր։ Ահա թե ինչու նախապատվությունը տվել ենք չափով արբունն ընթերցվածին՝ այն համարելով բուն հեղինակայինը։

8. $Պ_4$ տպագրից սկսած Մատյանի հետագա բոլոր հրատարակությունները, բացի Պոլսի 1782 և 1789 թթ. տպագիրներից, ընկալեալ ընթերցվածի փխ ունեն կալեալ։ Մեր օգտագործած ձեռագրերից ոչ մեկը չի տալիս այդ տարընթերցվածը։ Բայց այն տպագրական վրիպակ չի կարելի համարել, քանի որ $Պ_4$ հրատարակությունը «Ցուցակ գլխաւոր տարբերութեանց...» ցանկում ընկալեալ բառի դիմաց նշում է իր բնագրի կալեալ ընթերցվածը (տե՛ս էջ 387)։

9. $Պ_4$ հրատարակությունը և Մատյանի հետագա բոլոր տպագիրները, բացի Պոլսի 1782 և 1789 թթ. տպագիրներից, ինքնագով բառի փխ ունեն հոմանիշ ինքնարգոյ ընթերցվածը, որը մեր ձեռագրերից ոչ մեկը չի տալիս։ Այդ բառն իր ինքնագոյ տարբերության հետ վկայակոչված է $Պ_4$-ի «Ցուցակ գլխաւոր տարբերութեանց...» ցանկում (էջ 388), ուրեմն՝ հավանաբար ձեռագրական հիմք է ունեցել, չնայած հայ մատենագրության մեջ մեկ այլ բնագրում չի հանդիպում (տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Ա, էջ 861—862)։ Համոզված լինելով, որ գրչական ճանապարհով ինքնարգոյ ընթերցվածից ր-ի անտեսումով ու բացթողումով հեշտությամբ կարող էր առաջանալ ինքնագոյ տարընթերցվածը, այսինքն՝ նախնականը կարող էր ինքնարգոյ-ը լինել, այնուամենայնիվ, բնագրում դնում ենք ինքնագով ընթերցվածը, քանի որ մեզ հայտնի ոչ մի ձեռագիր չունի ինքնարգոյ, իսկ գրչագրերի մեծագույն մասի ինքնագոյ ընթերցվածն իր նշանակությամբ չի հարմարվում տողին։ Ի դեպ, Պոլսի հին հրատարակությունները, ինչպես նաև 1782 և 1789 թթ. տպագիրները, ունեն ինքնագոյ։

10. Գեր ելոց—$Պ_{1-3}$ և 1782, 1789 թթ. Պոլսի տպագիրներն ունեն միացված՝ գերելոց, իսկ որոշ ձեռագրեր՝ գերեցելոց, որոնք ունեն բոլորովին այլ իմաստ՝ «գերվածներին», մինչդեռ հաջորդ Նուաստից բառը հուշում է, որ ճիշտ ընթերցվածը գեր ելոց-ն է, որն արտահայտում է

նրան հակադիր իմաստ, այն է՝ «բարձր եղածներին, գերագահներին»։ Գեր ելոց ուղղումը բնա-
գրում առաջին անգամ կատարել է $Պ_4$ տպագիրը՝ առաջարանում հատուկ ուշադրություն հրա-
վիրելով նախորդ հրատարակությունների սխալի վրա (տե՛ս էջ 9-ը)։ Ձեռագրերը նրա փխ տա-
լիս են նաև այլ ընթերցումներ՝ գիրացելոց, վերացելոց, գերացելոց, գեր ելելոց, գեր եղելոց,
գերեաց ելոց, գրեցելոց, որոնք վկայում են, որ գեր ելոց ընթերցվածն, իբրև դերբայական
հազվադեպ ձև, այնքան էլ ընտանի չի եղել գրիչների համար, և նրանք իրենց միջամտությամբ
փորձել են որոշակի դարձնել տողի իմաստային պատկերը։ Նույնիսկ նրանցից մեկը, հնարա-
վոր աղավաղումը կանխելու նպատակով, իր ձեռագրի լուսանցքում նշել է. «Գեր է, չէ գերի»
(ը. էջ 11ը)։

11. Տ. 72—76-ում համառոտակի ակնարկվում են կրոնավորները («Միայնացելոց՝ վերնա-
կանացն խաւսակցաց») և եկեղեցու դասերը՝ սարկավագները («Մաքրականաց՝ տիրանուէր
զգաստութեանց»), քահանաները («Քահանայական երջանկաւրաւն ընտրութեանց»), եպիս-
կոպոսները («Այցելութեանց՝ բարեզգեստից դիտողութեանց») և պատրիարքները («Աթոռակա-
լութեանց՝ նախագահից...»)։ Անշուշտ, Նարեկացին նպատակ չի ունեցել մեկ առ մեկ թվարկել
եկեղեցու բոլոր դասերը. կրոնավորների հետ միասին՝ նա ակնարկել է ընդամենը չորս դաս։
Իսկ Մատյանի ԼԱ գլխում կրոնավորները ներկայացվում են այսպես.

Գումարf միաննաճg, բոյլf բաճակաճաց ըճտրելոց,
ժողովf բարեկրաւճից... (տ. 48—49)։

Կրոնավորներին և եկեղեցական դասերը Նարեկացին, փոքր-ինչ տարբեր, հիշատակում է
նաև Սուրբ Հոգու գալստյանը, եկեղեցուն և խաչին նվիրած իր գանձերում. առաջինում և եր-
րորդում՝ Բ տառի տակ, իսկ երկրորդում՝ նրան հաջորդող Ի-ով սկսվող պարբերության մեջ
(տե՛ս Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, էջ 456, 460 և 462)։ Հետաքրքիր է, որ նրա
հոր՝ Խոսրով Անձևացյաց եպիսկոպոսի դեմ գրած թղթում ժամանակի կաթողիկոս Անանիա
Մոկացին թվում է ինը դաս՝ պատրիարք, արքեպիսկոպոս, մետրապոլիտ, եպիսկոպոս, քոր-
եպիսկոպոս, քահանա, սարկավագ, կիսասարկավագ և դպիր (տե՛ս ձեռ. 3662, էջ 212ա)։ Սա
հայ մատենագրության մեջ հոգևոր դասերի, իբրև եկեղեցական սանդուղքի, մասին պահպանված
ամենահին վկայություններից մեկն է։

12. Բոլոր տպագիրներն ունեն անցյալ կատարյալով՝ մատակարարեցի (ինչպես տալիս են
որոշ ձեռագրեր)։ Բայց այստեղ խոսքն այն մասին է, որ Մատյանով աղերս ու աղաչանք պետք
է ներկայացվի (մատակարարեսցի)՝ ուղղված անարատներին ու արդարներին, և խրատ՝ ուղղ-
ված մեղուցյալներին ու ադետներին։ Նարեկացին «առ դէմս աղաւթից» իր խոսքը դեռ նոր է
սկսում. ընդամենը երկու գլխից հետո, Գ բանում, հազիվ թե ասեր, որ այդ աղերս-աղաչանքը և
խրատն ինքն արդեն ներկայացրել է (մատակարարեցի)։ Հետևելով գրչագրերի լավագույն և
մեծ մասին՝ բնագրում դնում ենք մատակարարեսցի։

13. $Պ_4$ և հետագա հրատարակությունները, բացի Պոլսի 1782 և 1789 թթ. տպագիրներից,
ունեն ոչ թե կամաւf, այլ եզակի՝ կամաւ, որ հավանաբար տպագրական վրիպակ է (մեր օգ-
տագործած ձեռագրերից ոչ մեկը չի տալիս կամաւ տարընթերցվածը)։

14. ... անձին բանի—Պոլսի հնագույն տպագիրները ($Պ_{1-3}$, 1782, 1789 թթ.) ունեն արձան
բանի, որը գալիս է G_1Vx ձեռագրերից։ Հ. Նալյանը, մեկնաբանելով տողի միտքը, ավելի
ստույգ և ընդունելի է համարում մյուս գրչագրերի անձին բանի ընթերցումը («Գիրք մեկնու-
թեան», էջ 45), ինչպես և բնագիրն ուղղվել է $Պ_4$ հրատարակությունից սկսած։ Արձան ընթերց-

վածն այստեղ մերժելի է նաև այն պատճառով, որ մի փոքր հետո՝ տ. 113-ում դարձյալ
հանդիպում է այդ բառը («Այսու արձանաւք պատկանեցելովք...»), որի եռադարձ ազդեցությամբ
էլ, թերևս, անձին-ը նշված երեք գրչագրում դարձել է արձան։ Գ. Ավետիքյանը այս անձին
բանի պատարագ բառակապակցությունը բացատրել է այսպես. «...այս անձնաւոր և բանական
պատարագս» («Նարեկլուծ», էջ 25, ծնթ. 33)։

15. Երէ տազնապաւ... ողջացի՛—այս տողերի բովանդակության բացահայտմանը առանձ-
նակի ուշադրություն է դարձրել Հ. Նալյանը՝ զուգահեռ անցկացնելով հին աշխարհի երկու մեծ
փիլիսոփաների՝ Սոկրատի և Արիստոտելի վախճանի մասին պահպանված ավանդությունների
հետ. Սոկրատին մեծ տագնապ և անփարատելի ցավ պատճառեց այն, որ նա չկարողացավ
պատասխան գտնել արկադացի ձկնորսների առաջադրած խնդրին, և սրտնեղությունը նրան
հասցրեց մահվան. Արիստոտելը, ցանկանալով լուծել Ատտիկեի և Բեովտական կղզու միջև
ընկած Եվրոպե անունով տեղի առեղծվածը, որն օրվա մեջ «եօթնիցս լինանայ և նուազի»,
նեղսրտությունից իրեն գցում է «յայն տեղի ծովուն» և խեղդամահ լինում, որի համար և ըն-
տեղծվել է հին ասույթը՝ «Արիստոտելէս զԵւրոպեու ոչ ըմբռնեաց, ըմբռնեալ լիցի Արիստոտէլ
յԵւրոպէ»։ Ուրեմն, ըստ Նալյանի, Նարեկացու տողերի իմաստը հետևյալն է. եթե որևէ մեկը,
նեղություններով շրջապատված, մեծ տարակուսանքի մեջ ընկնի և չկարողանա գտնել իրերի
ելքը, ապա աստծու քաղցրությամբ և այս Մատյանով թող մահաբեր տարակուսանքներից
ազատվի ու ողջանա («Գիրք մեկնութեան», էջ 45)։

ԲԱՆ Դ

1. Հմմտ. Ժողով., Ը, 8։

2. Մեր ձեռագրերից հինգը E_1Fq(u) և տպագիրները ընդ բառից առաջ ունեն դիմաց
ընթերցվածը։ Ձեռագրերի ճնշող մեծամասնությունը, ի թիվս որոնց՝ հին և լավագույն գրչա-
գրերը, չունի այդ ընթերցվածը, առանց որի ևս տողի միտքը շատ որոշակի է։ Այդ նկատա-
ռումով էլ դիմաց բառը չենք մուծում բնագիր։

3. Սառճայիճfճ—այս բառի փխ որոշ ձեռագրեր (ACծՑ-g_1) ունեն սասաճայիճfճ ըն-
թերցվածը, որը բացահայտ գրչական վրիպակ է, առաջացած կա՛մ սառճայիճfճ բառի հա-
մառոտագրության սխալ վերականգնումից, երբ անտեսվում է ռ-ն (սառճայիճfճ—սասաճա-
յիճfճ), կա՛մ, որ ավելի հավանական է, նախորդ տողի սասաճայ բառի ազդեցությամբ
(հետաքրքիր է, որ 33-րդ տողի սասաճայիճfճ սխալ ընթերցվածի ազդեցությամբ, ընդհակա-
ռակը, E_1TZfs գրչագրերը տ. 32-ում ունեն ոչ թե սասաճայ, այլ սասաճայիճfճ)։ Սառճ-
այիճfճ ընթերցվածի բնագրային լինելն ապացուցվում է նույն տողում նրա հակադրությունը
կազմող վերճակաճ զաւrճ կապակցությամբ։ Սույն տողը նկատի ունենալով՝ α ձեռագրի
հետագա վերանորոգող Հովհաննես Կարճավանեցին Դ բանի ընդհանուր բովանդակության համար
կատարել է հետևյալ լուսանցային նշումը. «Թէ ի մեղանչել մտանիս, հրեշտակքն տրտմին, և
սատանայ ուրախանայ» (էջ 14ա)։

4. Բելիար (եբրայեցերեն՝ «կովող, ապստամբ, ժանտ, անօրեն» և այլն)—այսպես կոչված
սադայելի կամ բանսարկու սատանայի անունը (տե՛ս Բ Կորնթ., Զ, 15)։

5. Նկատի ունի Հոբի գիրքը. տե՛ս Յոբ, Գ, 23 (հմմտ. Ժողով., Դ, 3. Զ, 3—4։ Երեմ., Ի,
14)։

ԲԱՆ Ե

1. Սույն գլխի բովանդակության համար α ձեռագրի հետագա վերանորոգող Հովհաննես Կարճավանցին ունի լուսանցային նշում. «Սատանայ զմարդս հարբեցնէ ու ձգէ ի մեղք» (էջ 15բ)։

2. Հմմտ. Սաղմ., ԾԹ, 5։ Տպագիրներում այս տողն ունի հետևյալ պատկերը՝ «և ցիմարու-թեամբ պատրողականաւ գինեաւս թմբրեալ» (Պ$_1$), «և ցիմարութեամբ պատրողական գինեաւս թմրեալ» (Պ$_{2-3}$ և Պոլսի 1782, 1789 թթ. տպագիրները), «և ցիմարութեամբ պատրողա-կանաւ գինեաւս ցիմարեալ» (Պ$_4$ և հետագա մյուս բոլոր տպագիրները)։ Եթե մի կողմ թողնենք պատրողական-պատրողականաւ տարընթերցվածները, ապա տպագիրներում կմնա բառային մի կարևոր տարբերություն՝ թմբրեալ (թմրեալ) փխ ցիմարեալ։ Դրանք երկուսն էլ ձեռագրական հիմք ունեն. ընդ որում գրչագրերի մեծագույն մասը տալիս է ցիմարեալ, իսկ մեր օգտագործած ձեռագրերից միայն ութը (մեկը՝ սրբագրումով) ունեն թմբրեալ (թմրեալ)։ Ըստ երևույթին այդ հանգամանքը հաշվի առնելով էլ Պ$_4$-ի բնագիրը պատրաստողները նախապատվությունը տվել են ցիմարեալ ընթերցվածին, սակայն տարբերությունների ցուցակում չբերելով թմբրեալ կարևոր ընթերցվածը, որը նրանց, եթե ոչ ձեռագրերից, գեթ նախորդ տպագիրներից հայտնի պետք է լիներ։ Նրա մասին խոսք չկա նաև Գ. Ավետիքյանի «Նարեկլուծում»։ Արդ, վիճելի ընթերցվածներից ո՞րն է բնագրայինը։ Այդ առումով կարևորություն է ներկայացնում ցիմարութեամբ բառի առկայությունը նույն տողում. արդյո՞ք Նարեկացին ցիմարութիւն և ցիմարիմ նույնարմատ բառերը, առանց ոճական-գեղարվեստական որևէ նպատակի, միևնույն տողում իրար հետ կգոր-ծածեր՝ տեղի տալով իմաստային կրկնության։ Հազիվ թե։ Մատյանի այլևայլ գլուխներում հանդիպում են թմբրեալ, թմբրութիւն բառերը՝ որոշ դեպքերում ցիմար, ցիմարութիւն, ցիմա-րարար բառերի հարևանությամբ (ԾԵ, 37՝ ցիմարիս և թմբրելոյս, ՂԱ, 54—55՝ Ջթմբրութիւնս ընդ շարժմանցն, / Զարբեցութիւնսն ընդ ցիմարութեանցն և այլն)։ Հատկապես բնորոշ օրինակ է ԼԳ տ. 25-ը՝ «Ընդ ցիմարարար թմբրութեան գինւոյն...», որը ցույց է տալիս, թե ինչպես բանաստեղծական մեկ մակդիրի սահմանում չպարփակվող հույզը Նարեկացուն տանում է դեպի համանիշ բառերի կուտակում, և ցիմարարար բառի կողքին որոշիչ-մակդիրի դերում հանդես է գալիս նաև թմբրութիւն վերացական գոյականը (ճիմարացնող ու թմրեցնող գինու)։ Մեզ հե-տաքրքրող տողում բանաստեղծը, նկատի ունենալով սաղմոսի գինի ցիմարութեան արտահայ-տությունը, այն զարգացնում ու վերածում է ինքնատիպ փոխաբերական պատկերի՝ Եւ ցիմա-րութեամբ պատրողականաւ գինեաւս թմբրեալ։ Վերջին բառի փխ բազմաթիվ ձեռագրերում հանդես եկող ցիմարեալ ընթերցվածը, ինչպես նշեցինք, ցիմարութեամբ նույնարմատ բառի մոտ իրեն չի արդարացնում։ Հետևապես և գերադասել ենք մնացած ութ գրչագրի և հնագույն տպագիրների թմբրեալ ընթերցվածը։

3. Հմմտ. Ծննդ., Ա, 26—27։ Պ$_4$-ը և հետագա բոլոր տպագիրները (բացի Պոլսի 1782 և 1789 թթ. հրատարակություններից) Բ հատվածն սկսում են ոչ թե այս տողով, այլ տ. 14-ով։ Սակայն 12—13 տողերն իրենց բովանդակությամբ կապվում են ոչ թե Ա դրվագին, այլ Բ-ին։ Մինչ այդ, Ա հատվածում (1—11 տողեր), բանաստեղծը ծրագրում է ամբողջ գլխում իր ասե-լիքը («Ցուցից զիրաւունս քո... Եւ զանիրաւութիւնս իմ...»)։ Ապա Բ հատվածում թվում է այն շնորհները («ամենայն մասունս բարեաց»), որոնցով աստված օժտել է իրեն՝ ներելով կշտամբանքի ու պատժի արժանի իր հանդուգն քայլերը։ Այդ շնորհների թվարկումը Նարեկա-ցին սկսում է ոչ թե տ. 14-ով, այլ տ. 12-ով, հետևապես Բ դրվագի սկիզբը պետք է դիտել այս վերջին տողը։ Հնագույն տպագիրներից Պ$_3$-ում ևս մեզ հետաքրքրող տեղում պարբերության սկիզբ է կազմում տ. 12-ը։

4. ... փայլեցուցեր փչմամբ—հմմտ. Ծննդ., Բ, 14։

5. Հմմտ. Սաղմ., ՂԱ, 14։

6. Հմմտ. Յովհ., Է, 38։

7. Հմմտ. Գ Թագ., Ը, 10—12։

8. Հմմտ. Ղևտ., ԻԶ, 27—28։

9. Հմմտ. Մատթ., ԻԲ, 13։

10. Փոխատրեցի բառի փխ մի շարք ձեռագրեր տալիս են նրա համանիշը՝ փոխարկեցի, ինչ-պես ունեն Պ$_{1-3}$ և Պոլսի 1782, 1789 թթ. տպագիրները։ Հետագա հրատարակությունները, սկսած Պ$_4$-ից, դնում են փոխադրեցի, որն իմաստով նույնանում է փոխատրեցի ընթերցվածի հետ՝ ունենալով սոսկ ուղղագրական տարբերություն։ A ձեռագիրը և առհասարակ գրչագրերի ճնշող մասն այդ բառն ունեն վերջին գրությամբ, որը և պահել ենք բնագրում։ Փոխատրեմ բայի մոտ սպասելի էր, որ լրացումն ընդուներ ի նախդիրը՝ յանըրիւ և բազմարինակ անարէ-նութիւնս... (տող 50. հմմտ. ԼԵ, տ. 42—43-ի հետ՝ Դու ես, որ փոխատրես զխարեղէն սրտից կարծրութիւն / Ի լոյծ կակղութեան մարմնոյ գոյութեան...), սակայն ոչ մի ձեռագիր կամ տպագիր չունի նախդրիվ ձևը։

11. Հմմտ. Բ, Օրին., ԼԲ, 6։

12. Հմմտ. Երեմ., Զ, 9։

13. Մատյանի միջնադարյան մեկնությունը յոճն առաջին մասնայ կապակցության համար ունի բացատրություն. «...զոր օրինակ յոնածն զօնն հաննալ և դարձեալ մտեալ, և ես՝ ի մեղս, վա՛յ զիս» (ձեռ. 5650, էջ 336բ)։ Հ. Նալյանը և Գ. Ավետիքյանը ակնարկել են Նարեկացու այս տողի հեռավոր կապը Երեմ., Զ, 9-ի հետ («... և անդէն կրկնեսջիք, որպէս կթող՝ յոճ իւր»), սակայն Նալյանը, հետևելով միջնադարյան մեկնությանը, շեշտել է Նարեկացու պատկեր-փո-խաբերության հարազատությունը հայոց երկրագործական աշխատանքի ըմբռնման հետ. «... ուղիղ ակօս բացօղքն մինչ յըսկսեալ տեղւոյն ի գլխոյ արտին յեզրն հասանին և անտի յըսկիզբն դառնան՝ ոճ ասեն, որպէս և կթօղքն այգեաց ի ծայրէ գլխոյ սկսեալ և անդրէն ի նոյն ծայրն դառնան կթելով՝ ոճ ասեն...» («Գիրք մեկնութեան», էջ 56)։

14. Հմմտ. Ես., Ե, 2—4։ Երեմ., Բ, 21։

15. Հմմտ. Մատթ., Է, 26։

16. Հմմտ. Իմաստ., Ա, 16։

17. Գրաբարում անցանեմ բայի մոտ ըստ նախդրի հետ խնդիրը սովորաբար դրվում է հայցական հոլովով։ Սակայն Մատյանի գրչագրերում քերականական այդ օրինաչափությունը հետևողականորեն չի պահպանվում. ըստ կապի խնդիրը հանդես է գալիս մերթ տրական և մերթ էլ հայցական հոլովներով։ Այդպիսի դեպքերում հետևել ենք ձեռագրերի մեծամասնությա-նը, ի թիվս որոց և՝ հնագույն գրչագրերին. բնագրում դրել ենք և՛ տրականը (Ե, 93՝ անցեալ է ըստ խանակութեան, ԺԸ, 109՝ անցաւ ըստ նմանութեան), և՛ հայցականը (ԺԵ, 57՝ անցեալ է ըստ աւրինակ)։

ԲԱՆ Զ

1. Այս տողում Պոլսի հնագույն տպագիրները (Պ$_{1-3}$ և սրանց հաջող հրատարակություն-ները) ունեն ոչ թե լի, այլ լիf։ Մեր օգտագործած ձեռագրերից ոչ մեկում չի հանդիպում այդ տարընթերցվածը։

2. Հմմտ. Յոբ, Ը, 21։ Սաղմ., ՃԽԲ, 5։

3. Ի կարգն երկրորդ դիմեցից—նկատի ունի մեղավորներին, որոնցից մի քանիսին և հիշատակում է իբրև իր նմանների՝ իրեն արժանի չհամարելով փառքով պարծենալու սրբերի դասի հետ։

4. Տե՛ս Դ. Թագ., ԻԱ, 1—18։ Բ Մնաց., ԼԳ, 1—21։

5. Տե՛ս Ղուկ., ԺԸ, 9—14։

6. Տե՛ս Ղուկ., ԺԵ, 11—30։

7. Տե՛ս Բ Մնաց., ԻԶ, 16—19։ Մատյանի միջնադարյան մեկնիչը այս տողի մասին գրել է. «Ոզիայ ասէ, որ խունկ էարկ ի տաճարն և բորոտեցաւ» (տե՛ս ձեռ. 5650, էջ 337բ)։

8. Տե՛ս Ղուկ., ԻԳ, 43։

9. Տե՛ս Ղուկ., Է, 36—50։

10. Տե՛ս Ելք, Է, 13—22։

11. Մատյանի տպագիրներից ոչ մեկը չունի 26—29 տողերը։ Դրանք ծանոթ չեն եղել Հակոբ Նալյանին։ Դրանց մասին ոչ մի խոսք չի ասում նաև Գաբրիել Ավետիքյանը, չնայած նրա «Նարեկլուծի» հիմք բնագիրը՝ $Պ_4$ տպագիրը, գլխավոր տարբերությունների ցանկում վկայակոչում է այդ տողերը (էջ 388)։ Անշուշտ, $Պ_4$-ի բնագիրը պատրաստողները, ելնելով այն հանգամանքից, որ դրանք սակավաթիվ գրչագրերում են հանդիպում, կասկածել են նրանց հեղինակային լինելուն և տարել բնագրային տարբերությունների բաժին։ Բանն այն է, որ 26—29 տողերը հանդես են գալիս միայն Բ ձեռագրախմբի գրչագրերում (թվով 12), նաև Ա ձեռագրախմբի C գրչագրում՝ սրբագրում-հավելումով։ Առանց կասկածի կարելի է ասել, որ այդ տողերն ունեցել է նաև այժմ սկզբի մասով պակասավոր J գրչագիրը. դրա ապացույցն է ձեռագիրը, որն անմիջապես կամ միջնորդաբար ծագում է նրանից։

Ընդամենը չորս տողից բաղկացած այդ հատվածը Զ գլխի և առհասարակ Մատյանի շիկացման կետերից մեկն է. անկեղծ պոռթկումի ու զղջման պահին Նարեկացին բանաստեղծական անսանձ տարերքի ուժով իր անցյալն է մերկացնում՝ իրեն մեղադրելով ոչ թե սովորական հանցանքներ կատարելու, այլ արարչի դեմ ըմբոստանալու, աստվածամարտ լինելու և աստծուն ուրանալուց չխորշելու մեջ։ Բ ձեռագրախումբը բնագրի ամբողջականության առումով թերևս երկի հեղինակային ամենահարազատ պատկերն է ներկայացնում։

Բանաստեղծի կյանքի վերջալույսի և Մատյանի թվակիր ամենահին ձեռագրի (A) գրչության միջև 170 տարվա մի ժամանակահատված է ընկած։ Ձեռագրերով չվկայված այդ անհայտ ժամանակը ի՞նչ վերաբերմունք է ցույց տվել նրա երկի նկատմամբ. միջնադարյան պաշտոնական կասկածամտությունը չի՞ փորձել «մաքրել» այն որոշ տողերից ու հատվածներից, և 26—29 տողերը, Ժ գլխի 33—40 տողերի հետ միասին, արդյո՞ք նման բախտի չեն արժանացել։ Բնականաբար գրչության կենտրոններում պետք է ընդօրինակվեր, տարածվեր ու քաղաքացիություն ստանար «մաքրված» բնագիրը։ Բայց ահա դրա կողքին շարունակել է հարատևել և ձեռագրական այն խումբը, որը պահել է կորած տողեր ու հատվածներ։ Զ գլխի վիճելի 26—29 տողերն անհնարին է պատկերացնել Նարեկացու ստեղծագործությունից դուրս, իբրև մի այլ բանաստեղծի կամ մատենագրի հորինվածք։ Գրիչներից ոմանք, նկատելով, որ դրանք որոշ տիպի ձեռագրերում բացակայում են, չնայած կասկածել են ու երբեմն նշաններով անջատել (αβλ և այլն), սակայն օրինակել են կա՛մ ուղղակի բնագրի կարգում (γσ և այլն), կա՛մ էլ լուսանցքներում (Cαβλ և այլն)։

12. Այս տողից հետո Γ ձեռագիրը (ժամանակ՝ 1549 թ.) ունի մեկ ավել տող՝ Ոմն և նամունք իւր։ Դա բնագրային լինել չի կարող. ըստ երևույթին ձեռագրի գրիչը տ. 87-ի նոսմունք բառն ընկալել և օրինակել է նամունք և, 88-րդ տողը գրելուց հետո նկատելով իր սխալը, այնուհետև ավելացրել է տ. 87-ը (Ոմն և նոսմունք իւր)։ Այդպիսով նրա գրչագրում առաջացել է մեկ տողի հավելում, որ պարզ վրիպում է, և 87—88-րդ տողերի հետևառաջություն։ Այդ սխալն ուրիշ ոչ մի ձեռագրում երևան չի գալիս։

13. Այս տողն ունեն միայն որոշ ձեռագրեր (թվով 12), որոնք բոլորն էլ օրինակված են բուն Հայաստանի սահմաններում, սակայն իրարից բավական հեռու գրչօջախներում (P—Սեբաստիայի Գրո անապատ, C—Մաղարդավանք, I—Վան և այլն)։ Տողի բացակայությունն ավելի վաղ օրինակված ձեռագրերում (նաև կիլիկյան գրչագրերում) վճռական չի կարող դառնալ մերժելու նրա բնագրային լինելը։ Մատյանի միջնադարյան մեկնության մեջ նշվում է, որ Զ գլխի այս հատվածում «ԿԲ [62] իրս սուրբս յիշէ յաշխարհէս և համեմատէ ի տեսակս մեղացն, որ ի բնութիւնս մեր պատուկին» (տե՛ս ձեռ. 5650, էջ 338ա)։ Մեկնիչը նկատի ունի 41—103 տողերը, որոնց մեջ Նարեկացին հիշատակում է գլխավոր մեղքերի խավարային ծնունդները, և որոնց գումարը կազմում է 63 տող, հետևապես նրան ևս ծանոթ չի եղել այդ տողերից մեկը՝ կա՛մ սույն 92-րդ տողը, կա՛մ 103-րդը (Ապականագործն եւ նմանիք իւր), որը նույնպես ոչ բոլոր ձեռագրերն ունեն ($Պ_4$ տպագիրը 103-րդ տողի մասին նշել է. «Այս տող չգոյր յումանս». էջ 388)։ Տպագիրներում ևս 92-րդ տողը տեղ չի գտել, ընդ որում Հ. Նալյանը և Գ. Ավետիքյանը, գլուխը մեկնելիս, նրա մասին ոչ մի հիշատակություն չեն անում։ Ասենք, որ 92-րդ տողը նախորդ՝ 91-րդ տողից սոսկ համանիշային տարբերություն ունի (շաւիղք—ճանապարհք), որն այդ հատվածի համար եզակի դեպք չէ, այդպիսի թվարկումներ դարձյալ կան. օրինակ՝

Ոմն եւ վիճիք իւր,
Ոմն եւ անդունդք իւր (տ. 81—82)։

Վիճելի տողը չենք կարող բնագրային չհամարել, քանի որ, ինչպես նշեցինք, այն հանդիպում է պատմական Հայաստանի տարածքի տարբեր, հաճախ ոչ այնքան մոտ վայրերում օրինակված գրչագրերում, որոնք իրար հետ անմիջական աղերս չունեն, միմյանցից արտագրված լինել չեն կարող։ Ուրեմն այն գալիս է Մատյանի ավելի հնագույն ձեռագրերից, որոնք մեզ չեն հասել։

14. Գ. Ավետիքյանի օգտագործած ձեռագրերից մեկում («ի լաւ օրինակ») այս տողը հաջորդում է 96-րդ տողին («Նարեկլուծ», էջ 36, ծնթ. 13)։ Մեր գրչագրերում այդ տողերի կարգը կանոնավոր է։

15. Նախորդ բոլոր տպագիրները (նաև Գ. Ավետիքյանի «Նարեկլուծի» բնագիրը), բացի Բուենոս Այրեսի հրատարակությունից, խռաճանչիւռ ոք բառերն ունեն միացված, իբրև մեկ բառ՝ խռաճանչիւռոք, որը շփոթելի է խռաճանչիւռովք գործիական հոլովաձևի հետ, հետևապես և անընդունելի ընթերցում է։

ԲԱՆ Է

1. Բազմաթիվ գրչագրեր (Aσ: և այլն) այս տողից սկսած գլուխն ունեն չափածո ընդօրինակումով, ընդ որում տողերի սկզբնատառերը հաճախ գրված այլ գույնի թանաքով (ոսկեգույն, կարմիր)։

2. Մանողկուզեան բառի համար Մատյանի միջնադարյան մեկնությունը տալիս է հետևյալ բացատրությունը. «... այլ եւ՝ խաղող մահաբեր, զոր ասեն, թէ յԵկպատան, որ է Ամեդի, հայնց խաղող կայ, որ թէ մարդ ուտէ, մեռանի» (ձեռ. 5650, էջ 339ա։ Հմմտ. Յ. Նալեան, Գիրք մեկնութեան, էջ 72)։ Մանողկուզեան բառը Նարեկացու ինքնատիպ բառակերտումներից մեկն է։ Հայ մատենագրության մեջ այդ բառի գործածության միակ դեպքը Մատյանի այս տողն է։

3. Տե՛ս Եսա., Ե, 21։ Երեմ., Գ, 22։

4. Տոյլս առ Երանութիւն ընտանութեանն—որոշ ձեռագրեր ընտանութեանն ընթերցվածի փոխ ունեն ընտրութեանն (ընտրութիւն, ընտրութեան)։ Տպագրիները, սկսած 1774 թ. հրատա-
Այդ տարբերությանը ուշադրություն է դարձրել Գ. Ավետիքյանը («Նարեկյուծ», էջ 39—40, ծնթ. 8)՝ նշելով, որ Մատյանի միջնադարյան մեկնությունը ևս ունի ընտանութեանն։ Ըստ այս վեր-
ջին ընթերցվածի էլ Հ. Նալյանը տողը բացատրել է այսպես. «...ոչ ջանացող զերանութիւնն ինձ ընտանի առնել» («Գիրք մեկնութեան», էջ 75)։ Երանութիւն բառի տակ, ըստ նրա, պետք է հասկանալ այն առաքինությունները, որոնց մարդը պետք է ձգտի ու հասնի։ Նալյանի այդ բացատրության աղբյուրը Մատյանի միջնադարյան լուծմունքն է, ուր ասված է, որ Նարեկացին ինը երանությունները նկատի ունի, «որովք ի բնութենէս մերմէ ընտանենամք աստուծոյ» (տե՛ս «Նարեկյուծ», էջ 40, ծնթ. 8)։ Բնագրում նախընտրել ենք ընտանութեանն ընթերցվածը՝ հետևելով գրչագրերի մեծագույն մասին, ի թիվս որոնց՝ և A-ին։

5. Մատյանի հնագույն տպագրիներն ունեն անշնորհակալու Երախտամոռացս։ Անշնորհակալու ածականը, որը գրաբարին խորթ ձև չէ, բայց հայտնի է սակավ գործածությամբ, տարբերակն են միայն UVx ձեռագրերը, որոնցից և անցել է $Պ_{1-3}$ տպագիրներին։ Այն, իբրև ավելորդ, առաջին անգամ բնագրից հանել է $Պ_4$ հրատարակությունը, իսկ Երախտամոռացս սրբագրել Երախտամոռաց՝ վերջինս տիրադրում համադաս անդամի հետ դիտելով որպես պաշտանեայս գոյականի որոշիչ։ Այդ ճշգրտումը հավաստվում է տողն ունեցող մնացած բոլոր գրչագրերով։ Անշնորհակալու-ն մեզ չհասած որոշ ձեռագրերում հավանաբար եղել է Երախտամոռաց բառի լուսանցային բառաբացատրություն, որը հետագայում գրիչներից շփոթվել և մուծվել է բնագիր, ինչպես և հանդիպում է UVx գրչագրերում։

6. ... որդւոյս կորստեան—Համեմ. Յովհ., ԺԷ, 12։

7. $Պ_4$ տպագիրը և հետագա բոլոր հրատարակությունները (բացի Պոլսի 1782 և 1789 թթ. տպագրիներից) ճանգստարանն բառի փոխ ունեն ճանգստարարն, որի հիմքը որոշ ձեռագրեր են։ Գ. Ավետիքյանը 60—61-րդ տողերը նմանեցնում ու կապում է ավետարանում ասվածի հետ՝ «Եկա՛յք առ իս, ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ» (Մատթ., ԺԱ, 28։ Տե՛ս «Նարեկյուծ», էջ 40, ծնթ. 10)։ Թերևս այդ աղերսն այստեղ չի կարելի ժխտել։ Բայց Նարեկացին, բանաստեղծական իր թռիչքի մեջ, հաճախ հեռանում է աղբյուրից, նրա բառերը։ Եվ ահա նրա մտքի այդ հեռավոր առնչությունը նրբորեն նկատելով և իրենց գաղափար օրինակների բնագրային հարազատությունը կասկածի առնելով՝ Մատյանի գրիչները երբեմն փորձել են նարեկացիական շեղումներն «ուղղել», մոտեցնել ու հարմարեցնել Ս. Գրքին։ Արդյո՞ք այս դեպքում էլ մենք նման երևույթի հետ գործ չունենք. բեռան ծանրության տակ տնքացողը (թեկուզև դա լինեն նրա մեղքերը) հանգստանալու տեղ է ակնկալում (ճանգստարան) և ոչ թե հանգստացնող-բուժող (ճանգստարար)։ Միայն աստվածաշնչյան հեռավոր աղերսն իրավունք չի տալիս սխալ համարել ամենահին ձեռագրի (A) և գրչագրերի ճնշող մեծամասնության ճանգստարանն ընթերցվածը՝ բնագրային դիտելով ավելի սակավ ձեռագրերով վկայված ճանգստարարն բառը։

8. Համեմ. Մատթ., Ժ, 26։

9. Համեմ. Եսա., ԾԹ, 5։

10. ... որդանցն անմահից—Համեմ. Եսա., ԿԶ, 24։ Մարկ., Թ, 47։

11. Նկատի ունի հիմար և իմաստուն կույսերի մասին առակը (տե՛ս Մատթ., ԻԵ, 1—12)։ 85-րդ տողից հետո αγδφ օրինակներն ունեն հետևյալ հատվածը (բերում ենք ըստ α ձեռագրի, չափածո տողատումով).

Այդ արդ այժմ,
Որ և ժամանակ է մեղաւք գլորելոյս,
Ի մուտս և յելս արեգակնարփի կենցաղոյս,
Ըստ աստուածախաւս և փրկաւէտ անարփին ընտրութեան,
Երէ ժամանակ ընդունելոյ,
Եւ ահա իսկ աւր փրկութեան է այս յաւիտեան։
Այդ աղաչեմ զքո զբութիւնդ, առեղծիչ և տէր,
Լսաւղ պաղատանաց և ողորմած,
Որք խնդրեն ի քէն,
Քրիստոս աստուած, արարիչ և տէր,
Լոյս խաւարելոյս և դարձ մոլորելոյս,
Ճանապարհ անկելոյս,
Որք ուղիղ գնայցեն,
Եւ դուռն յաւիտենական մտին ի կեանս
Եւ բացող դրանն փառաց
Առ նորոգաւղ Հոգիդ համագոյ քո
Եւ Հաւր քոյ հզաւրի,
Ըստ քում աստուածական բարբառոյ,
Երէ՝ Ե՛ս եմ ճանապարհ և ե՛ս եմ դուռն,
Եւ ոչ ոք կարէ գալ առ Հայր, երէ ո՛չ ինև։
Եւ արդ, ի խնդրելս իմ քաւութիւն մեղաց իմոց,
Յոյս իմ Քրիստոս,
Բա՛ց ինձ զլսողութեան դուռն,
Փրկութիւն իմ Յիսուս,
Թեպէտ զարշութեամբ բոլոր
Պղծալի է զգայարանաց իմոց տիրանք,
Եւ ժահահոտով խաւարեալ է լուսաւորութիւն մտացս,
Ժանտաւէր և զարշելի են խորհուրդք իմ,
Որ և յայսազան գործոյ վարեալ կորանայ,
Եւ խորտակլի պատկեր բազատրական՝ փշաբեր եղեալ։
Այդ թեպէտ և բազմակործան եղէ
Բարդեալ իմ դաժան մեղաւքս,
Սակայն վստահ եղեալ համատիմ յուսով սրտիւ
Առ քո անյիշաչար տէրութիւնդ,
Եւ ի ձեռն քո յորջորջեալ անհասանելոյդ անուն սահմանեալ՝
Կամեցար փառաւորիլ հանութեամբ քո,
Յար անուն սահմանեցեր մեծութեան քում, մարդասէր,
Եւ դարձեալ յայտնեցեր զմարդասիրութիւնդ քո
Եւ զՀաւր քում՝ ասելով.
«Ուրախութի՛ւն եղիցի առաջի Հաւր իմոյ,
Որ յերկինս է,
Վասն միոյ մեղաւորի, որ ապաշխարիցէ»։
Արդ, հաստատամ և յուսամ
Ի հրաման քո փրկաւէտ քաղցրութեան,

Մարդասէր Քրիստոս, աստուած իմ,
Պաղատիմ առ քեզ և խնդրեմ ի քէն՝
Շնորհեա՛ ինձ զանցիւ բազմութիւն մեղաց իմոց,
Զզործս պարտեաց իմոց
Եւ զանչափութիւն չարեաց իմանալեաց զգայարանաց իմոց,
Զխորհրդոց և զմտածութեանց:
Զանդադար աւտարոտի սխալանաց իմոց
Զբերութիւն լուծեա՛, տէր իմ Յիսուս,
Եւ զանհամութիւնս իմ համեղացո՛
Աղիւ քո ճշմարտութեան,
Սրբեա՛ և բժշկեա՛ զնեխեալ վէրս հոգւոյս
Եւ խնդրե՛ա զմոլորեալ ոչխարս,
Հովիւ քաջ և արարիչ բարի.
Զգինս արեան քոյ աստուածային,
Բժշկեա՛ ի մեղաց զտառապեալ անձն ոգւոյս,
Փրկեա՛, տէր Յիսուս, յանշէջ գեհենոյն
Եւ ի խաւարային անսպառ տանջանացն,
Զվերստին քո նորոգեալս պատկեր փառաւք աստուածազարդե՛ա:
Ծագեա՛, տէր իմ Յիսուս, զիմանալի քո զաւրութիւնդ
Եւ կարողացո՛ զիս կատարել զկամս քո բարի:
Վասն զի քո է ողորմութիւն և քո է զթութիւն,
Քո է փրկութիւն և զաւրութիւն,
Եւ քո է այցելութիւն և քաղցրութիւն,
Քո է ներողութիւն և երկայնմտութիւն,
Եւ քո է կարողութիւն բժշկութեան,
Ի քէն է քաւութիւն մեղաց,
Եւ ի քէն է սրբութիւն ոգւոց,
Եւ դու ես ողորմած և մարդասէր,
Աստուած իմ Յիսուս,
Զզործս ձեռաց քոց մի՛ անտես առներ:
Եւ քեզ ընդ Հաւր քում հզաւրի
Եւ Հոգւոյդ նորոգողի և քո էակցի,
Սուրբ Երրորդութեանդ և մի աստուածութեանդ
Փա՜ռք, իշխանութի՜ւն և պատի՜ւ և երկրպագութի՜ւն
Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:
Ամէն:

Այս հատվածը Մատյանի նախորդ տպագիրներին հայտնի չի եղել։ Ծանոթ է եղել միայն Գ. Ավետիքյանին։ Զգացվում է, որ α-ի գաղափար օրինակը բավական հին ձեռագիր է եղել, որին հետևելով՝ նրա գրիչը պահպանել է այլ բառի այդ գրությունը, որը մեզ տանում է ամենուրին հետևելով՝ նրա գրիչը պահպանել է ... XIII դար։ Մյուս օրինակները α-ի համեմատությամբ ունեն որոշ բառային և քերականական կարգի տարբերություններ։ Բերենք դրանցից մի քանիսն ըստ γ ձեռագրի. զանբաւ

քո *փխ* զքո, քաղցր և հեզ *փխ* առեղծիչ և տէր (*տող 7*), խաւարեալց, մոլորեալց (*տ. 11*), առ Հայր *փխ* անկելոյս (*տ. 12*), և բովանդակ բոլոր *փխ* զարշութեամբ բոլոր պղծալի է (*տ. 25—26*), սրտի իմոյ *փխ* իմ (*տ. 28*), սրտիւ *փխ* սէրտիւ (*տ. 33*), հաստատեցեր աստուածութեան *փխ* սահմանեցեր մեծութեան (*տ. 37*), զանիմանալի *փխ* զիմանալի, շնորհացդ զաւրութիւն *փխ* զաւրութիւնդ (*տ. 63*) *և այլն։*

Հատվածը պարունակող ձեռագրերից երեքը XIV դարի գրչություն ունեն (α-ն օրինակված է 1319 թ. Կիլիկիայում, Ակների վանքում, γ-ն և δ-ն՝ 1366 թ., առաջինը՝ Երզնկայի Ավագ վանքում, իսկ երկրորդը՝ Երուսաղեմում, φ-ն 1618 թվականից է, գրված Հիզանի Ավնդաց գյուղում)։ Այդ հանգամանքը ևս իր հերթին խոսում է այն մասին, որ Մատյանի՝ ավել հատվածով ձեռագիր նախօրինակը վաղ ժամանակներից է եկել և ընդօրինակվելով՝ ձեռք բերել որոշ տարածում։ Այդ մասին են վկայում նաև α, γ, φ ձեռագրերի գրիչների հետաքրքիր նշումները հատվածի առթիվ, որոնք իրենց կասկածն են հայտնել նրա բնագրային լինելու մասին, իսկ αφ-ն միաժամանակ հիշատակել են, որ հատվածը պարունակող երկուական օրինակ են ունեցել իրենց ձեռքի տակ. «Աստի յառաջ թուի, թէ չէ ի գրոցս, զի չէ ինչ նման, այդ վասն զի հինգ են օրինակքս, և ի յերկուս կայ և ի յերիս չկայ, բայց գրեմ ի փառս աստուծոյ»,— հիշատակել է α-ի գրիչը (ձեռ. 3589, էջ 22բ)։ «Այս թուի, թէ չէ ի գրոցս, այլ վասն զի երկու օրինակս գտի՝ գրեմ»,—նշել է φ-ի գրիչը (ձեռ. 5675, էջ 20ա)։ Նույն կասկածն ավելի կտրուկ արտահայտված է γ-ում. «Աստ աւարտեցաւ բանն սրբին... սա ոչ է ...Գրի[գորի], այլ յայլմէ կցկցումն» (ձեռ. 2088, էջ 21բ. որոշ տեղեր չեն ընթերցվում)։ Հետաքրքիր է, որ գրիչների կասկածն այնքան խորն է եղել, որ բոլոր չորս ձեռագրերում էլ հատվածը նշաններով անջատված է Նարեկացու բնագրից։ Իսկ մի այլ ձեռագրի՝ -ի (XVI—XVII դդ.) գրիչը է գլխի շարունակության վրա էջն անգրել է թողել և հաջորդ գլուխն սկսել նոր էջից. երևի նրա հիմք ձեռագրում մեզ հետաքրքրող հատվածը եղել է, բայց նա, այլ օրինակներով ստուգելով ու համամսելով, այնուամենայնիվ, չի գրել՝ թողնելով ազատ տարածություն (ձեռ. 7081, էջ 23բ)։

Ուրեմն, այդ հատվածը արդեն միջնադարում իսկ խորթ է համարվել Մատյանին և կասկածվել կամ մերժվել։ Եվ, իսկապես, այն անհարիր է Նարեկացու մտածողությանը, զուրկ ներքին կապից ու քնարական շնչից. 80 տողի մեջ չի հանդիպում մի այնպիսի պատկեր կամ համեմատություն, որը հիմք տար մտածելու նրա բնագրային լինելու մասին։ Հատվածը դուրս է մնում Մատյանի ոճիմից ու բանաստեղծական համակարգից։ Նարեկացին մեծ բանաստեղծ է միայն անգամ դավանաբանական բնույթի գլուխներում ու իր ներբողներում։ Հատվածը միայն և միայն հետագա միջարկություն է՝ իր կարողություններով միջնադարի հանճարեղ բանաստեղծից շատ հեռու մի երկրորդական գրչից, որը փորձել է «ավարտի հասցնել» գլուխը։ Ահա թե ինչու նրան մեկ ձեռագիր օրինակով ծանոթ Գ. Ավետիքյանը, հիշեցնելով, որ է գլուխը, ինչպես և Զ, Ը գլուխները, Ամէն-ով չի ավարտվում, անվարան գրել է. «...ընթերցող ոք, չգիտեմ որպիսի շատախօս, կարծելով լնուլ զթերին՝ յաւելու աստանօր խօսս յերկարս զզջականս, անյարմարագիրս՝ յօրինակ ինչ, գրեալ ի թուին ՊԺԴ [1365]։ Բայց նկատել արժան է, զի ոչ այս բան միայն, այլ և Զ և Ը, առանց փառաւորութեան աւարտի՝ պատաղեալ գլխովին ի կշտամբումն մեղապարտ անձինն, մինչև ապա ի բանն Թ վճարեալ զկշտամբանսն...» («Նարեկացի», էջ 40, ծնթ. 15)։ Ուրեմն, ըստ նրա ճիշտ դիտումի, «Ամէն» ավարտաբառը չունեցող Զ—Ը գլուխները, որոնք արտահայտում են բանաստեղծի զղջումն ու ինքնակշտամբանքը, անմիջականորեն կապված են Թ գլխի հետ՝ այդտեղ ստանալով իրենց լրումը։

ԲԱՆ Ը

1. Անողորմ ածական-ստորոգելիական վերադիրը կրկնվում է և երկու տող հետո («եւ անողորմ՝ ճառուցմունքն»—տ. 8)։ Արդյո՞ք նրանցից մեկնումեկը գրչական սխալի արդյունք չէ։ Համենայն դեպս ձեռագրերն այդ բառերից մեկի կամ մյուսի փոխ ուրիշ ընթերցված չեն տալիս։

2. Ապականութեան է գուքն—Հմմտ. Սաղմ., ԾԴ, 24։

3. Հմմտ. Ես., Գ, 10—11։

ԲԱՆ Թ

1. Ի կտակ մաղթանաց մատենի—Իր Մատյանը կտակ կոչելով՝ Նարեկացին ցանկացել է ասել, որ նրա մեջ ցույց է տվել, թե ո՛վ է ինքը, ի՛նչ էր, ի՛նչ եղավ կամ ի՛նչ կարող է լինել այժմ և մահվանից հետո, որպեսզի այն, իբրև կտակ, ապագայում ևս հաստատուն մնա (տե՛ս «Նարեկյուծ», էջ 44, ծնթ. 1)։

2. Սույն գլխի 13—17 տողերը երկու տարբեր մեկնաբանություն են ստացել և, ըստ այդմ, թարգմանվել երկու կերպ։ Հ. Նալյանը մեկնել է այսպես. «Այսինքն՝ թէ զԼիբանանու մայր ծառերն լուծ և թե կշռոյ շինեցից և զմեղս իմ ի մի թաթ կշռոյ լցուցից, և կամ ի կեռ ճանկէն կախեցից, և զՄասիս լեառն ի միւս թաթ կշռոյն եդից, այնքան են յանցանքն իմ, որ նժարի միոյ չափով չկարէ Մասիս լեռն թեթևացուցանել զմեղօք լցեալ թաթ կշռոյն և կամ հաւասարիլ իւրով ծանրութեամբն իմոյս մեղաց...» («Գիրք մեկնութեան», էջ 83)։ Ուրեմն, ըստ Նալյանի բացատրության, Լիբանանի մայրիները կշեռքի թևի կամ լծի են վերածվում, և նրա մի նժարին բարձված մեղքերի հետ չափվում-կշռվում է մյուս նժարի վրա դրված Արարատը։ Այդպես են հատվածը հասկացել ու աշխարհաբար թարգմանել նաև Թ. Գուշակյանը («Նարեկ աղոթամատյան ս. Գրիգոր Նարեկացվո», Կահիրե, 1926, էջ 25. այսուհետև՝ «Նարեկ աղոթամատյան»), Մ. Խերանյանը (Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, Երևան, 1960, էջ 35) և Վ. Գևորգյանը (Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության. Տաղեր, Երևան, 1979, էջ 53)։ Նալյանը և նրան հետևողներն անտեսել են 14-րդ տողի Եւ կամ շաղկապը, որով Լիբանանի մայրիները և Արարատ լեռը դիտված են իբրև համադաս անդամներ, շարահյուսական հավասար արժեք ունեցող համեմատելիներ։ Գ. Ավետիքյանը հատվածը մեկնաբանել է՝ հաշվի առնելով այդ շաղկապի նշանակությունը։ Նա գրել է. «... եթէ, ասէ, հանդէպ մեղացս ի մի կշիռ եդից զմայրս Լիբանանու կամ զլեառն Արարատեան, այսինքն՝ զՄասիս, ոչ հաւասարին միով չափով կցորդիլ» («Նարեկյուծ», էջ 44, ծնթ. 3)։ Ուրեմն, ըստ Ավետիքյանի, Նարեկացին Լիբանանի մայրիները ոչ թե կշեռքի լուծ է դարձնում, այլ նրանցով ևս, ինչպես Արարատ լեռով, կշռում-չափում է իր մեղքերը։ Ավետիքյանի բացատրության ճշտությունը կողմնակիորեն հավաստվում է հետևյալ օրինակներով. Հոբի գրքում ասված է. «Եթէ կշռելով ոք կշռէր զբարկութիւնս իմ և զցաւս իմ միանգամայն բառնայր ի լուծ կշռոց, քան զաւազ ծովու ծանրագոյն լինէր» (Յոբ, Զ, 2—3)։ Կամ Նարեկացու անմիջական նախորդի՝ պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցու մոտ կարդում ենք. «... և ի լծակս կշռոց եդեալ զերկոսին տագնապ տարակուսանաց...» («Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 219)։ Ընդգծված բառերը ցույց են տալիս, որ գրաբարում լուծ կշռոց (կամ՝ լծակ կշռոց) ունեցել է նաև կշեռքի թաթի, նժարի իմաստ (հմմտ. «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Ա, էջ 894)։ Հետևաբար Նարեկացին ի մի լուծ կշռոց զաւդեցից ասելով հասկացել է մայրիները կշեռքի մի թաթին կապելու նշանակությամբ, իսկ տ. 15-ում գործածել նրան համիմաստ նժար բառը (Ի կէտ ամբարձման նժարի միոյ)։ Հատվածը Ավետիքյանի մեկնաբանության համաձայն է թարգմանել Գ. Խաչատուրյանը («Նարեկ. Մատեան ողբերգութեան», էջ 20), որոշ շեղումներով՝ նաև Մ. Գուլունյանը («Աշխարհաբար Նարեկ», Կ. Պոլիս, 1902, էջ 43)։

Տող 14-ում ձեռագրերի մեծ մասը Արարատեան անունն ունի Արարադեան (նաև՝ Այրարատեան, Այրայրադեան) գրությամբ, իսկ երկու գրչագիր տալիս են տարբեր ընթերցվածներ՝ Նարարադեան (Տ), Սարարադեան (Ե), ընդ որում վերջին դեպքում գրիչը նախապես գրել է Այրայրադեան և ապա սրբագրել Սարարադեան։ Նարարադեան աղճատ ընթերցվածն, անշուշտ, առաջացել է նույն տողի զլեառնն (ինչպես ունեն բազմաթիվ ձեռագրեր) բառի վերջին Ն մասնիկը նրան միացնելու և այդպիսի բառանջատումով գրելու հետևանքով, այն է՝ զլեառնն Արարադեան ընկալվել և գրվել է զլեառն Նարարադեան։

Ավելի հետաքրքիր է Ե-ի Սարարադեան սրբագրումը։ Սարարադ անունը հանդիպում է հայ մատենագրության մի քանի հուշարձաններում՝ Փավստոս Բուզանդի պատմության մեջ, Մովսես Խորենացուն վերագրվող «Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց» երկում, Գրիգորիս Աղթամարցու «Դու դրախտ եդեմայ...» սկսվածքով տաղում, 1292 թ. գրչագրված մի ավետարանի հիշատակարանում, ինչպես նաև Ծննդոց գրքի՝ Կյուրեղ Աղեքսանդրացու հեղինակություն համարվող մեկնության հայերեն թարգմանության մեջ (տե՛ս Վ. Ինգլիզյան, Հայաստան Սուրբ Գրքի մեջ, Վիեննա, 1947, էջ 47—48)։ Սարարադ լեռը ցույց է տրվել Վանա լճի հարավում, Կորդուք գավառում՝ նույնացվելով այժմյան Ջուդի-դաղ կոչվող լեռան հետ, որի վրա, «ըստ տեղական ավանդության... ջրհեղեղից հետո կանգ է առել Նոյի տապանը» (տե՛ս Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 39)։ Լեռան Սարարադ գրության ձևը հայագիտության մեջ համարվել է աղավաղում՝ առաջացած այդ անունն առաջին անգամ գործածող Փավստոս Բուզանդի պատմության մի տեղի գրչական աղճատման ճանապարհով. ենթադրվում է, որ Ի լեառնն Արարադայ կապակցության լեառնն բառի վերջին Ն-ն շփոթվել է Ս-ի հետ, իսկ սա էլ բաժանվել-միացվել հաջորդ Արարադայ բառին՝ տալով Սարարադայ (տե՛ս Վ. Ինգլիզյան, նշվ. աշխ., էջ 48—49)։ Այդպիսով, Սարարադ ձևը մի աղավաղում է, որ հայ մատենագրության մեջ ստացել է որոշ քաղաքացիություն։ Այս կարծիքի ճշմարտացիությունը հավաստվում է և՛ Սեբեոսի պատմության Անանունի հատվածով (տե՛ս նույն տեղում, էջ 49), և՛, մանավանդ, Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի Հայկի ապստամբությանը վերաբերող գլխով։ Այդտեղ Հարավային Հայաստանի այն գավառը, ուր հայոց նահապետը գաղթել է, անվանվում է ոչ թե Արարատի երկիր, որը, ինչպես նշել է Ստ. Մալխասյանը, «Այրարատյան նահանգը չէ՝ Հայաստանի կենտրոնում», այլ Կորդուքը՝ իր Արարադ լեռով (տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, թարգմ. Ստ. Մալխասյանի, Երևան, 1940, էջ 265)։ Նարեկացու Մատյանի մեր Ե ձեռագիրը, որը մինչև Երևան տեղափոխվելը պատկանել է Վանի Ս. Սահակ եկեղեցուն և, հավանաբար, օրինակված է Վասպուրականի հարավի գրչակենտրոններից մեկում, XIII դարում, Այրայրադեան ընթերցվածը, գուցե տեղական մատենագրական ավանդույթի ազդեցությամբ, սրբագրել է Սարարադեան՝ նկատի ունենալով ոչ թե Արարատ-Մասիսը, այլ Կորդուքի Արարադը։ Իսկ ի՞նչ է նկատի ունեցել ինքը՝ Գրիգոր Նարեկացին։ Անշուշտ, Այրարատ նահանգի Արարատը և ոչ թե Կորդուքի փոքր լեռը, որը «մեղքերը» չափելու համար հազիվ թե բանաստեղծին պատշաճ համեմատելի լիներ։ Նարեկացին իր Հարության տաղում ևս երկու անգամ հիշատակում է Արարատը՝ նրա Մասիս անունով. «Սայլն այն իջանէր ի լեռնէն ի Մասեաց», «ի Մասեաց յաջ կողմանէն» (տե՛ս Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք», էջ 473)։ Ահա թե ինչու Մատյանի բազմահմուտ մեկնիչներ Հ. Նալյանը և Գ. Ավետիքյանը, ինչպես տեսանք, առանց կասկածելու «զլեառն Արարատեան»-ը հասկացել ու բացա-

տըրել են որպես Մասիս լեռ։ Իսկ մեր գրչագրերի Արարատեան և Արարադեան տարընթերցվածներից գերադասել ենք առաջինը՝ հետևելով ավելի ընդունված գրությանը։

3. Համտ. Մարկ., ԺԱ, 12—14, 20—21։ Մատթ., ԻԱ, 18—20։

4. Այստեղ ևս, ինչպես տ. 20—21-ում, ակնարկվում է Քրիստոսի անեծքով չորացած թզենին (տե՛ս նաև ՁԱ գլխի 2-րդ ծնթ.)։

5. Տե՛ս Առակք, ԺԸ, 17։

6. $Պ_{1-3}$-ում և Պոլսի 1782, 1789 թթ. տպագիրներում տողն այսպես է. Եւ զյոյզս գաղտնեաց մտաց խորհրդոցս: $Պ_4$-ը և մնացած բոլոր տպագիրներն ունեն այսպես՝ Եւ զյոյզս մտաց խորհրդոցս գաղտնեաց: Երկու դեպքում էլ բառերի շարադասության խիստ նկատելի տարբերությունը ձեռագրական հիմք ունի (տե՛ս տարընթերցվածները), ընդ որում առաջին տարբերակը հանդես է գալիս փոքրաթիվ գրչագրերում, որոնք բոլորն էլ պատկանում են Ա և Բ ձեռագրախմբերին, հետևապես և բնագրում նախընտրել ենք տողի մյուս տարբերակը, որը վկայված է ձեռագրական բոլոր խմբերով։ Միակ շեղումը զյոյզ ընթերցվածն է։ Բոլոր տպագիրներում այդ բառը հանդես է գալիս հայցականի ձևով՝ զյոյզս, ինչպես պահանջում է նրա լրացյալը՝ խոստովանեալ բայը տ. 60-ում։ Սակայն դա հավանաբար Մատյանը հրատարակողների ուղղումն է՝ առանց ձեռագրական հիմքի, ըստ քերականական պահանջի։ Մեր օգտագործած բոլոր ձեռագրերը, բացի G_1-ից, ունեն զյոյզ: G_1-ը (այսինքն՝ այդ գրչագրի նորոգված մասը) ըստ երևույթին օրինակված է XVIII դարում, թերևս Մատյանի առաջին տպագիրներից որևէ մեկից և ոչ թե ձեռագրից։ Ուրեմն տպագրի ուղղումն անցել է նրան։ Որքան էլ զյոյզ տարընթերցվածն այս դեպքում ճիշտ համարվի, այդուամենայնիվ բնագրում գրել ենք ձեռագրական զյոյզ ձևը՝ նկատի ունենալով, որ նույնիսկ դասական շրջանի գրաբարում ուղղական հոլովաձևը երբեմն փոխարինել է հայցականին։ Հիշենք Սաթենիկի առևանգումը պատկերող հատվածը Խորենացու պատմությունից, ուր ևս հանդիպում են նույնպիսի անկանոն ձևեր (տե՛ս ՁԷ գլխի 6-րդ ծնթ.)։ Նարեկացին գրել է զյոյզ, բայց հասկացել հայցական հոլովի նշանակությամբ։

7. Տե՛ս Ղուկ., Է, 41—43։

ԲԱՆ Ժ

1. Այս տողից հետո γ ունի՝ իբր զՅուդաս և Աքիտոփէլ (տե՛ս տարընթերցվածները)։ Դա բնագրային լինել չի կարող. անշուշտ մեկնաբանական լուսանցագրություն է եղել և վերաբերել է 6-րդ տողին, բայց γ-ի կամ նրա նախօրինակի գրիչը շփոթել և տարել է բնագրի կարգը։ Յուդաս-ին կարելի է նույնացնել մատնիչ առաքյալ Հուդա Իսկարիովտացու հետ, որը, ըստ ավանդության, խղճի խայթից ինքնասպանություն է գործել։ Աքիտոփելը (ճիշտը՝ Աքիտոփէլ, ինչպես հանդիպում է Ս. Գրքում և հայկական աղբյուրներում. տե՛ս Բ Թագ., ԺԵ, 12 և ԺԷ, «Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս, 1912, էջ 39, Գ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, սյուն 471) եղել է Իսրայելի թագավոր Դավթի մտերիմներից մեկը։ Երբ Աբիսողոմն ապստամբել է Դավթի դեմ, անցել է առաջինի կողմը։ Սակայն Աբիսողոմը հրաժարվել է հետևել նրա իմաստուն խորհրդին, և Աքիտոփելը, կանխազգալով ապստամբության անհաջող վախճանը, ինքն իրեն կախել է։

2. Այս տողից հետո αγδηςφω բնագրի կարգում, իսկ βλ լուսանցքում ունեն՝ որպէս Սիմոնէս և Նիկողիայիս, որը հայտնի է եղել $Պ_4$ տպագրին (բերված է գլխավոր տարբերությունների ցուցակում, էջ 389)։ Դա ևս, անշուշտ, բնագրային լինել չի կարող. հետագա գրիչներից որևէ մեկի լուսանցային բացատրությունն է տ. 7—8-ի համար, որ մի շարք ձեռագրե-

րում սխալմամբ մուծվել է բնագիր։ Դրանք բոլորն էլ Բ խմբի գրչագրեր են։ Լուսանցագրության հեղինակը հանձին Սիմոնեսի, ըստ երևույթին, նկատի է ունեցել Սիմոն մոգին (Գործք, Ը, 9—24), որը հոգևոր պարգևները առևտրի գործ էր դարձրել, որից և սիմոնական այպանելի անվանումը։ Իսկ թե ո՞վ է եղել Նիկողիայիսը (կամ Նիկողայիս), մեզ չհաջողվեց պարզել. այն չի նույնանում Նիկոդեմոսի հետ, որը Քրիստոսին նվիրյալ անձ է եղել (տե՛ս Յովհ., ԺԹ, 39)։ Այդ անունը Սուրբ Գրքում բացակայում է։

Բ խմբի մի շարք ձեռագրեր՝ αγδηθμστφω

3. Այս տողից հետո դարձյալ բացառապես բնագրի կարգում ունեն՝ «Եւ կարծիք են առ այս անակնկալ երկիւղի յամենահնար և երկայնամիտ դատողէն իբր առ կրետացի լեզուն և կորնթացի տարագրելն» (տե՛ս տ. 9-ի տարընթերցվածները)։ Նույնը β ունի լուսանցքում, մի հանգամանք, որ ինքնին վկայում է, թե Մատյանի բանաստեղծական ընթացքին չհամընկնող այդ հատվածը նույնպես հետագա մեկնաբանական լուսանցագրություն է, որը գրիչներից շփոթվել ու օրինակվել է բնագրի հետ խառը։ Հետաքրքիր է, որ α-ի գրիչը թեև այն գրել է բնագրի կարգում, բայց կասկածել ու կողքին, լուսանցքում կեսեր է գրել։ Այդ հատվածը ծանոթ է եղել $Պ_4$ տպագրին, որը այն, իբրև ոչ բնագրային, բերում է գլխավոր տարբերությունների ցանկում (էջ 389)։

Bu ունեն լուսանցային բառաբացատրություն՝ «ինձն է»: Բացատրության աղբյուրը

4. Այս տողի լափլիզող գազան բառերի համար Մատյանի միջնադարյան մեկնությունն է, որտեղ ասված է. «...լափլիզօղ գազան, որ է ինձն, որ պատահեալ անասնոց ծակէ և զարիւնն ըմպէ և լիզէ և զշաղիխն, որ է լաշն, թողու և լափելով արեամբն զգծոխորովայնն պարարէ» (տե՛ս ձեռ. 5650, էջ 339բ—340ա)։ Այս բացատրությունը 10-րդ տողը մեկնելիս նկատի է ունեցել նաև Գ. Ավետիքյանը (հմմտ. «Նարեկլուծ», էջ 48, ծնթ. 1)։

5. ...զգանեալ բազմաճարուածեան ճեծանաւ—Մատյանի մեկնիչներն այս բառերին հատուկ ուշադրություն են դարձրել։ Միջնադարյան մեկնության մեջ ճեծան բացատրված է իբրև հաստ բիր կամ մահակ, «մեղաց մահակ» (տե՛ս ձեռ. 5650, էջ 340ա)։ Հ. Նալյանը բնագրի այդ բառը մեկնել է այսպես. «... զի որպէս ցորեանն, ծեծեալ ընդհանուր կապակցության մեջ հեծանաւ և հոսելեաւ, մաքրի ի յարդից և ապա թէ, իբր առ ի մխիթարութիւն, ի շտեմարանն հաւաքի, այսպէս և ես՝ զիս (ասէ), զկնի ծեծելոյս և ի դուռն մահու հասուցանելոյս, շնչաւորեցից թերևս յանկենդանական, մահահանգոյն մեղաց մահուանէ...» («Գիրք մեկնութեան», էջ 88)։ Գ. Ավետիքյանը ճեծան-ը հասկանում է ըստ միջնադարյան մեկնիչի՝ հաստ գավազան կամ բիր, իսկ զգանեալ բազմաճարուածեան բառերը բացատրում երկու տարբեր առումով՝ «ի բազում տեղիս մարմնոյն հարուածեալ» կամ «սաստիկ հարկանող» («Նարեկլուծ», էջ 48, ծնթ. 2)։

6. Տ. 25—28-ում շրջասությամբ ակնարկվում է Ենոքը (տե՛ս Ծննդ., Ե, 24։ Եբր., ԺԱ, 5)։ Այդ ակնարկը նկատել են միջնադարյան մեկնիչը (տե՛ս ձեռ. № 5650, էջ 340ա—բ) և Մատյանի գրիչները։ Sikr գրչագրերն այդ կապակցությամբ ունեն հետևյալ մեկնությունը. «Զենովք այս ի վեր ասէ, քան զայնոսն, զոր առաքեալ թուէր, որք հաւատով արդարացան, զորոց ասէ ազնուականի իմն ցանկացեալ, այսինքն է՝ երկնաւորին» (ձեռ. 5558, էջ 21բ. հմմտ. ձձ. 5707, էջ 11բ, 4938, էջ 20բ, 2083, էջ 32ա։ Վերջին ձեռագրի գրիչը մեկնաբանական այդ լուսանցագրությունը սխալմամբ տարել է բնագրի կարգը, տ. 28-ից հետո՝ նրանից առաջ դնելով լուծումն բառը)։ Ընդգծված մասը Ս. Գրքից է (տե՛ս Եբր., ԺԱ, 16)։

7. Հմմտ. Եբր., ԺԱ։

8. Տող 33—40-ը տպագիրներում, բացի $Պ_4$-ից, բացակայում են։ $Պ_4$-ը դրանք բերում է ոչ թե բնագրում, այլ գլխավոր տարբերությունների ցուցակում (էջ 389)։ Հ. Նալյանին ևս հայտնի չեն եղել։ Այդ տողերի նկատմամբ որոշակի վերաբերմունք ցույց չի տվել նաև Գ. Ավետիքյանը, որը դրանց ծանոթ պետք է լիներ գեթ $Պ_4$ տպագրից։ Այդ հատվածն ունեն բա-

ցառապես միայն Բ խմբի ձեռագրերը (Թվով 11)։ Այն, անշուշտ, եղել է նաև Ձ գրչագրում, որը, ինչպես գիտենք, սկզբի մասով թերի է։ Հատվածը β գրչագրում գրված է լուսանցքում, αγθφ ձեռագրերը նրա հեղինակային լինելու կապակցությամբ ինչ-որ կասկած են հանդես բերել, որովհետև օրինակելով բնագրի կարգում՝ նրա դիմաց, լուսանցքում, դրել են կետեր (αφ) կամ բնագրից անջատել նշանով (γθ)։ Մյուսներում (δημστω) այն կասկածի տակ չի առնվել, դիտվել է որպես բուն բնագրի մաս։ Ութ տող կազմող այդ հատվածը ոչ մի բանով չի խախտում գլխի բովանդակային զարգացման ընթացքը, բառապաշարով, շարահյուսական կառուցվածքով ու բանաստեղծական պատկերավորությամբ չափազանց հարազատ է Նարեկացու ոճին։ Նույնիսկ կարող ենք ասել, որ նրա առանձին տողեր իրենց զուգահեռ նմանակներն ունեն Մատյանի այլ գլուխներում։ Վերցնենք նրա երկու տողը.

Եւ ի մեռաղս այսոցն կրկին ընկլուզեալն,
Եւ յանդունդս չարեաց սուզեալն...

Սրանց, իբրև միևնույն հեղինակի հորինվածք, շատ են մոտ Մատյանի հետևյալ տողերը՝ առնված տարբեր գլուխներից (համընկնող բառերն ընդգծում ենք)՝ «Եթէ... յանդունդս ոք խորոց իցէ ընկլուզեալ» (Գ, 121—122), «Եթէ յանդունդս խորոց սուզեցես» (ԺԹ, 30), «Ոչ զնոսին... յանդունդս երկրի սուզեցեր» (ԼԶ, 34—35), «Պնդին ի մեռաղս ահեղ հրամանի Դ այսակաՆացն գումարք» (ՂԱ, 19)։ Միայն տասնմեկ գրչագրով վկայված հատվածի հետ ըստ երևույթին նույնն է կատարվել, ինչ Զ գլխի տ. 26—29-ի հետ. ավելի տարածում են գտել Մատյանի այն ձեռագրերը, որոնցից հատվածը դուրս է մնացել. հետագա գրիչներն էլ, Նարեկացու երկն ընդօրինակելիս, նկատելով, որ սակավ գրչագրերում է այն հանդիպում, իրենց հերթին կասկածել են ու գերադասել չպահպանել այն։

9. Գ. Ավետիքյանի «Նարեկլուծի» բնագիրն ունի ընտրականաց (էջ 47), որը հավանաբար վրիպակ է. մնացած բոլոր տպագիրները և մեզ հայտնի ձեռագրերն այդ բառն ունեն որոշիչ հոդով՝ ընտրականացն:

10. Հմմտ. Ա Կորթն., ԺԳ, 13։

11. Սերմանի բառը բառարաններում չի հանդիպում. թերևս սերմանիք (սերմեր) ձևի եզակին է, որի միակ վկայությունը Նարեկացու Մատյանն է։ Գ. Ավետիքյանն այդ բառը դիտում է սերմն գոյականի սեռական սերման ձևի վրա ի մասնիկի հավելումով կազմված ածանցավոր բառ, ինչպես՝ ամարանի, ձմերանի, գարնանի (գարնայնի) և այլն («Նարեկլուծ», էջ 49, ծնթ. 10)։

12. Հմմտ. Ղուկ., ԺԷ, 6։ Մարկ., ԺԱ, 23։

13. Միջնադարյան քրիստոնեական ըմբռնմամբ հավատը, սերը և հույսը համարվել են «աստվածարնակ» առաքինություններ։ Ինչպես գրել է Մատյանի միջնադարյան մեկնիչը, «Հաւատ է Հայր, յոյս է Որդի, սէր է Հոգին Սուրբ» (տե՛ս ձեռ. 5650, էջ 341ա)։ Նարեկացին Ժ գլխում տալիս է այդ մտքի բանաստեղծական ձևակերպումը.

Երրորդութեանն փառաւորելի անուամբն պատուեալ նուատ՝
Ընդ սիրոյն դասեալ եւ յուսոյ:
Զի թէ զերիսն նատուածս առանձնատրականս
Ի մի եւ ի նոյն խորհուրդ դիտեսցես... (տ. 69—72)։

Նարեկացին, իբրև խորհրդապաշտ, Մատյանում, հատկապես Ժ գլխում, առանձին ուշադրություն է դարձնում հավատին՝ «մեղքերով ծանրաբեռն» իր անձի փրկությունը տեսնելով ոչ

թե սոսկ ուժգին ղղջումի ու հուսահատ ինքնամերկացման, այլ լուսավոր հավատով զղջումի մեջ։ Հավատը, հույսն ու սերը նրա համար մաքրագործման ճանապարհով դեպի կատարյալը, բարձրագույն իդեալը տանող գաղափարներ են։

ԲԱՆ ԺԱ

1. Այս տողն ունեն մեր օգտագործած ձեռագրերից 12-ը և բոլոր տպագիրները։ C-ն ունի ուշ գրչությամբ։ աφ ձեռագրերի գրիչները կասկածել են տողի բնագրային լինելուն և լուսանցքում կետերով խաչանիշ են դրել՝ իբրև հանման նշան։ σ-ի գրիչը տողը գրել է լուսանցքում, ատղանիշ է դրել՝ մատնացույց անելով համապատասխան տեղը բնագրում։ Հայկազյան բառարանն ունի տողը՝ վկայակոչված նորագիտ բառահոդվածի համար. Ստորասուզեալ նորագիտ մեղօքն անչրելեօք: Բաց են թողնված 24-րդ տողի ծանրութեամբ... կործանման բառերը։ Այսպես էլ թարգմանել է Թ. Գուշակյանը (տե՛ս «Նարեկ աղոթամատյան», էջ 30)։

Տողն ունեն ավել հատվածներ ունեցող ձեռագրերը։ Կարելի է մտածել, որ այս տողը, թերևս, բնագրային չէ։ Այն կարող էր լինել լուսանցային բացատրություն և մուծվել բնագիր։ «Այս Գ. Ավետիքյանի օգտագործած ձեռագրերից մի քանիսը նույնպես չեն ունեցել տողը. Ավետիքյանը, սակայն, չի կասկածել, որ չիք յօրինակս ինչ» («Նարեկլուծ», էջ 54, ծնթ. 5)։ տողը բնագրային է։

2. Տե՛ս Բ Մակաբ., Ա, 19—20։

3. Հմմտ. Ելք, Լ, 8։

4. Տե՛ս Յովհ., ԺԱ, 17—44։

5. Ենովքի մասին՝ տե՛ս Ծննդ., Ե, 23։ Եբր., ԺԱ, 5։

6. Ահարոնի մասին՝ տե՛ս Ելք, ԼԲ, 1—6։

7. Դավթի մասին՝ տե՛ս Բ Թագ., ԺԲ, 1—13։

8. Պետրոսի մասին՝ տե՛ս Մատթ., ԻԶ, 75։

9. Փոքր Եղիազարը Մովսեսի կրտսեր որդին էր։ Նրա մասին՝ տե՛ս Ելք, ԺԸ, 4։ Ըստ Նարեկացու՝ մեղքեր գործելուց, մեղանչելուց հետո էլ մարդ կարող է արժանանալ աստվածային շնորհին՝ հավատով պայքարելու դեպքում, ինչպես երբեմն այդ շնորհին արժանացել են Ենովքը, Ահարոնը, Դավիթը, Պետրոս առաքյալը, Մովսեսի կրտսեր որդին՝ Եղիազարը և ուրիշներ։

10. ... ի մեծագունիցն վկայեցաւ—այսպես ունեն, բացի ձեռագրերից (տե՛ս տողի տարբերակներ), Պոլսի 1782 և 1789 թթ. տպագիրները, իսկ $Պ_1$-ը, $Պ_4$-ը, $Պ_{2-3}$-ը, ինչպես նաև Բուենոս Այրեսի 1948 թթ. տպագիրներն ունեն մեծագունիցն «Նարեկլուծ»-ը, Վենետիկի 1840 և թերցվածները), վկայեցաւ: Վկայեցաւ բայը պահանջում է բացառական հոլովով ներգործող խնդիր, ուստի ճիշտ ենք համարում ի մեծագունիցն ընթերցվածը։

11. Տե՛ս Ղուկ., ԺԵ, 11—32։

12. Տե՛ս Ղուկ., Է, 37—48։

13. Տե՛ս Ղուկ., ԺԸ, 9—14։

14. Տե՛ս Ղուկ., ԻԳ, 39—47։

15. Տե՛ս Ղուկ., ԻԳ, 34։

16. Տե՛ս Գործք, Ը, 1—3։

17. Իսկ որ... փոխեցաւ—70—78-րդ տողերի իմաստը միջնադարի մի մեկնիչ այսպես է մեկնաբանել. «Եռովք, որ տուժեաց ղտուգանս նախահօրն պահօքն և յերկինս փոխեցաւ» (ձեռ. 5650, էջ 342բ), մի այլ մեկնիչ այսպես՝ «Հաւատովս Ենովք և փոխեցաւ» (ձեռ. 1566, էջ 336ա)։ Այս մեկնությունն է, որ «Զենովք աստ» ձևակերպմամբ անցել է մի խումբ ձեռագրերի COPehIpx, իսկ h-ում նույնիսկ միջարկվել է 70-րդ տողին։ Հ. Նալյանը հատվածին տվել է գրեթե նույն մեկնաբանությունը. Ենովքն ամուր է պահել բնական օրենքը, «մերձաւորագոյն զոլով պատուիրանին նախահօրն», ուստի «ոչ միայն քաւեցաւ յանիծիցն, թէ՝ Հող էիր և ի հող դարձցիս, այլև չարչարելեաւն մարմնով բանական բնութեանս՝ կենաց կարապետ եղև», այսինքն՝ տեղափոխվեց երկինք՝ հաղթելով մահին («Մեկնութիւն աղօթից», էջ 96)։ Գ. Ավետիքյանը ևս հետևում է նույն մեկնությանը. Ենովքը, նախքան գրավոր օրենքը, պահել է բնական օրենքի ավանդը, հավատարիմ է եղել դավանության սկզբնահոր՝ Աբրահամի պատվիրանին և Ադամի մեղքը համարելով իրենը, մարմնի չարչարանքով կրել է նրա պատուհասը և ոչ միայն քավել է նրա մեղքը, այլև հողում թաղվելուց հետո էլ «իբրև յաղթող մահու և կարապետ կենդանութեան բնութեանս՝ փոխեցաւ կենդանւոյն» («Նարեկլուծ», էջ 55, ծնթ. 12)։

18. ...չարուբեամբն—այս բառի համար Ավետիքյանը նշել է. «Յայլ տպագիր եղեալ էր՝ չարուբեանն» («Նարեկլուծ», էջ 55, ծնթ. 13)։ Այդ տարընթերցվածը, սակայն, չեն տալիս ոչ մեր օգտագործած ձեռագրերը և ոչ էլ մեզ հայտնի տպագիրները։ Դուցե նկատի է ունեցել Ոսկան Երևանցու անավարտ տպագրությո՞ւնը։

19. Հմմտ. Ես., ԾԴ, 10։

20. Տես Հռովմ., Ը, 33—34։

21. «Նարեկլուծն» ունի՝ ըստ առաճելական բանիս: Բանիս ընթերցվածը չունեն ինչպես մեր օգտագործած ձեռագրերը, այնպես էլ մեզ հայտնի բոլոր տպագիրները։ Ավետիքյանը չի անդրադարձել տողին, չի նշել որևէ աղբյուր։ Բանիս ձևը, թվում է, տպագրական վրիպակ է։

ԲԱՆ ԺԲ

1. ...յառաջնումն զղջմանն յուսահատութեանն բանիւ լճայ.—Նկատի ունի նախորդ գլուխները. ըստ Գ. Ավետիքյանի՝ Զ, Է և Ը (տե՛ս «Նարեկլուծ», էջ 58, ծնթ. 1), իսկ ըստ Հ. Նալյանի՝ Թ և Ժ գլուխների առանձին հատվածներ (տե՛ս «Գիրք մեկնութեան», էջ 99)։ Եթե այդ գլուխներում բանաստեղծն արտահայտում է իր հուսահատությունը հոգին կորստյան դատապարտած լինելու մասին, ապա այստեղ հուսահատության այդ ողբերին հակադրում է փրկության հույսի պաղատանքները, վերստին փարվելով մեղքերից մաքրվելու և երկնային երանության արժանանալու հավատին։

2. Զմիջնորդ ազդման կափուցմանց երկակի շրթանցս.—հին լուծմունքի մեկնաբանությամբ՝ փակ շուրթերի ներգործման այդ միջնորդը միտքն է, որ ազդում է հոգու և մարմնի վրա (ձեռ. 5650, էջ 345ա)։ Հ. Նալյանը համամիտ է այս բացատրությանը. «զմիտս իմ (որ է ազդարար հոգւոյս և մարմնոյս) արարից բանալի ըստ արժանւոյն փակեցեալ և կարկեալ շրթանցս և նորոգեցեցից զերգ հառաչանաց» («Գիրք մեկնութեան», էջ 102)։ Ըստ Գ. Ավետիքյանի, ազդման փակ այդ միջնորդը աղոթելն է, «որ է միջնորդ ազդելոյ ի պապանձումն շրթանցս արժանաւէս փաայդ միջնորդը աղոթելն է, «որ է միջնորդ ազդելոյ ի պապանձումն շրթանցս արժանալէս փա-
կելոց վասն մեղաց», իսկ մեկ այլ բացատրությամբ գրիչն է, «որ է գործի ազդելոյ կամ խօ-
սելոյ պապանձեալ շրթանցս. զի գիրն է նշանակ խօսից» («Նարեկլուծ», էջ 59, ծնթ. 8)։
Թվում է՝ ավելի ճիշտ է աղոթքը։

3. «Նարեկլուծն» ունի յեղանակութեանցս—ձեռագրերը և մյուս տպագիրները չեն տալիս
այդ ընթերցվածը։ Թերևս տպագրական վրիպակ է։
4. $Պ_1$-ը այս տողից հետո ունի «Վերստին յաւելուած... խաւսք ընդ աստուծոյ» վերնագիրը՝
առանց գլխակարգի համարակալման։ β ձեռագրից բացի, այս գլուխն ունեցող բոլոր ձեռագրե-
րը և տպագիրներն ունեն ենթախորագիր. Մաղթանք զաւրաւոր առաւաւտուց գիշերայնոյ՝ լու-
սանցքում կամ բնագրի կարգում՝ աննշան տարընթերցվածներով։ Այս ենթախորագիրը կա նաև
այն ձեռագրերում, որոնք ունեն հակիրճ կամ ընդարձակ վերնագրերի ցանկ։ Կարծում ենք,
որ ենթախորագիրը հեղինակային չէ, այլ միջարկված է բնագրին։ Իր խոր քնարականության
շնորհիվ, այս հատվածը ձեռք է բերել հարաբերական ինքնուրույնություն, դիտվել որպես գի-
շերային աղոթք, ընդօրինակվել աղոթագրքերի մեջ, որի հետևանքով էլ ծագել է վերնագրի ան-
հրաժեշտությունը։ Մինչև իսկ այն արժանացել է առանձին մեկնության (տե՛ս «Պարզաբանու-
թիւն հոգենուագ սաղմոսացն Դաւթի Մարգարէին», Վենետիկ, 1687, էջ 814. «Մաղթանք գո-
բաւոր ընդդէմ գիշերայնոց, սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ», գլ. ԺԲ, մեկնաբանութեամբ
հանդերձ, տունք 16, էջ 814—819)։ Վերնագիրը կարող էր մուծվել բնագիր՝ հատվածը դյուրին
գտնելու համար։ Որ այս և մի քանի այլ գլուխների (ԻԸ, ԼԳ, ԼԴ, ՀԱ, ՀԵ) ենթախորագրերը
կարող են գրչագրական միջամտություն լինել և ոչ թե հեղինակային, նշել է նաև Գ. Ավե-
տիքյանը։ Մասնավորապես ԻԸ գլխի «Ընդդիմամարտ դիւաց այս նուագ աղաւթից և դիւա-
սարսուռ ջերմնատագնապ ախտաւորութեանց աստուծով փարատիչ» ենթավերնագրի մասին
նա գրում է. «Յաղագս մակագրիս չէ յայտ՝ արդեօ՞ք սրբոյ վարդապետին իցէ, թէ այլոյ
ուրումն» («Նարեկլուծ», էջ 139, ծնթ. 21)։ Իսկ ՀԱ գլխի «Բանք պաշտելիք հաշտեցուցիչք
աստուծոյ» ենթախորագրի մասին՝ այսպես. «Այս մակագիր ի մեր օրինակս դնի ի լուսանցսն.
նշանակեալ թէ ոչ է սրբոյն, այլ յայլոց եղեալ. զոր յետոյ գրիչքն ի ներքս մուծեալ են. և
ոչ իսկ հաւանելի է՝ թէ սուրբ վարդապետն զխոստովանողական բանս իւր կոչիցէ՝ պանծալի:
Վասն որոյ ըստ կարգի յառաջին բանսն յարելի է յաջորդն. զի յետ բարձրացուցանելով
զկրօնս սրբոցն, առ նմին զանձին իւրոյ թերութիւնն խոստովանի ասելով՝ Այլ ես անպիտանս
յամենայնի և այլն» («Նարեկլուծ», էջ 363, ծնթ. 6)։ Ենթախորագրերը հեղինակային չլինելու
կռվաններից մեկն էլ այն է, որ դրանք հիմնականում արտածված և ձևակերպված են ըստ
Նարեկացու՝ ելնելով նրա այս կամ այն արտահայտությունից։ Ահա, օրինակ, ԼԳ գլխի այս
ենթախորագիրը. «Աղաւթք, որ նախ քան զպատարագն մատուցանի»։ Ենթախորագրին նա-
խորդում է բուն բնագրի հետևյալ արտահայտությունը. «... Ի դէմս Հոգւոյն Սրբոյ՝ այս են աղա-
չանք, նախընծայ սկզբան պատարագին՝ յորում զանդ երկնաւոր զենանի, զայս աղաւթեցից»։
Ակներև է, որ ենթախորագիրը ծագել է Նարեկացու՝ մեր կողմից ընդգծված արտահայտու-
թյունից։ Հեղինակի խոսքի անցումը բնական է, ենթախորագիրը՝ ավելորդ։
C-ում ենթախորագրի տակ, լուսանցքում, ուշ գրչությամբ կա նշում. «Կարմիր գրով ի
կարգն գրեա՛»։ V-ում ենթախորագիրը համարակալված է ԺԳ, որի հետևանքով ԺԳ—ԺԴ գլ-
ուխները համարակալվել են ԺԴ և ԺԵ։ ԺԵ գլուխը համարակալված է ճիշտ՝ ԺԵ և վերա-
կանգնված է ճիշտ համարակարգը։
5. G-ում և h-ում Բ հատվածը (տ. 46—93) համարվում է «Եկեսցէ»-ի երեկոյան ժամի
կամ գիշերային աղոթք։ Հետաքրքիր է, որ այս հատվածը, իր ենթախորագրով, 1810 թ. Հովսեփ
Հովհաննիսյանը թարգմանել է ռուսերեն (տե՛ս „Молитва против нощных ужасов. Сочиненная Григорием Нарекским в лето Господия 1000 года. Тщанием Иосифа Иоанесова". Санкт-Петербург. В Морской типографии 1810 года):
6. Հետևելով A և մի քանի այլ օրինակների՝ նախընտրել ենք ի դիտի ընթերցվածը, որը
չունեն ինչպես ձեռագրերի մեծ մասը, այնպես էլ բոլոր տպագիրները։ Տարընթերցվածը, կար-

ծում ենք, առաջացել է երկաթագիր Տ և Մ տառերի շփոթությունից: Այդ տառերի շփոթության դեպքերի քննության անդրադարձել է բանասեր Նորայր Բյուզանդացին (տե՛ս Նորայր Բյուզանդացի, Հայկական բառաքննութիւն, Կոստանդնուպօլիս, 1880, էջ 14—20): **Կարգեցեր ի դիմի՝ ընդդէմ դիւացն դասու,—ի դիմի** ընթերցվածը այստեղ ավելի կրկնաբանության տպավորություն է թողնում՝ ընդդեմ բառի հարևանությամբ, մինչդեռ **Կարգեցեր ի դիտի՝ ընդդէմ դիւացն դասու,—ի դիտի** ընթերցվածը ավելի ճիշտ է, հստակ և տեղին (հմմտ. Երեմ., Զ, 17, **«Կացուցի ի վերայ ձեր դէտս»** նախադասության հետ):

7. Ի տարբերություն բոլոր տպագիրների, ձեռագրերի մեծ մասը, այդ թվում և A-ն, չունեն 89, 91—93 տողերը: Այդ տողերը, չնչին բացառությամբ, ունեն ավել հատվածներ ունեցող ձեռագրերը, ինչպես նաև B-ն՝ ուշ գրչությամբ և V-ն, որ ուշ շրջանի ձեռագիր է: Գ. Ավետիքյանը չի կասկածել այդ տողերի բնագրային լինելուն, թեև նկատել է, որ դրանք չկան որոշ ձեռագրերում. «Այլքն պակասին» («Նարեկլուծ», էջ 60, ծնթ. 13):

ԲԱՆ ԺԳ

1. **...Երրեակ անձնաւորութիւն՝ համայն անհնին**—կրոնական միստիկան Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն տալիս է աստվածության նույն և հավասար պատիվը՝ միավորելով նրանց Սուրբ Երրորդության մեջ: Նարեկացին, սակայն, նրանց դիմում է հաջորդաբար, սկսելով Հայր աստծուց, բայց դա ոչ թե այն պատճառով, որ նա նախապատվություն է տալիս մեկին և ստորադասում մյուսներին, այլ զուտ մարդկային իմացության ավելի դյուրամատչելի լինելու համար: Երեքին էլ նա համարում է հավասարազոր աստվածություն՝ թեև **տրոհեալ ի դիմաց**՝ զանազան դեմքերով, բայց **միաւորեալ համազուգութեամբ, նոյնագոյ բնութեամբ** և միևնույն էությամբ ու կամքի ներգործությամբ:

2. **...պատճառ սիրոյ երկնայնոյ անստուէր լուսոյ** —անստվեր լույս փոխաբերությամբ վերաբերում է Քրիստոսին՝ Որդի աստծուն, **երկնային սերը**՝ Սուրբ Հոգուն, **պատճառը**՝ Հայր աստծուն: Ըստ Նարեկացու՝ մարդկային ճանաչողությունն է, որ ընկալում է Հորը որպես պատճառ, մինչդեռ ուղիղ դավանությունը աստվածային երեք անձերն էլ համարում է համագոյակից և նույնաբնույթ:

3. **...երեքփառաւորեանդ դաւանութեան**—նկատի ունի Սուրբ Երրորդությունը:

4. **...զվէմն հաւատոյ Պետրոս երանեաց**—ըստ Մատթեոսի ավետարանի՝ իր աշակերտներին ուղղած Հիսուսի այն հարցին, թե ո՞վ է ինքը, Պետրոսը պատասխանում է այսպես. «Դու ես Քրիստոսն, որդի աստուծոյ կենդանւոյ» (Մատթ. ԺԶ, 16): Նրա այս պատասխանը դիտվում է որպես Սուրբ Երրորդության հավատի ամենասեղմ բանաձև: Աստված ասելով Պետրոսը հասկանում է Հորը, կենդանի ասելով՝ Սուրբ Հոգուն, որդի ասելով՝ Քրիստոսին: Այս խոստովանության համար Պետրոսն արժանացավ Հիսուսի երանությանը (տե՛ս Մատթ., ԺԶ, 17—18):

5. **...որ մաքրութեամբն պերճանային**—Գ. Ավետիքյանը մեկնաբանել է այսպես. «Ոչ միայն ի մեղանչելն ասէ՝ կարօտիմք ողորմութեանդ, այլև յարդարագործութիւնս» («Նարեկլուծ», էջ 63, ծնթ. 10): Թ. Գուշակյանն իր թարգմանության մեջ հետևել է Գ. Ավետիքյանի բացատրությունը. «Մենք ոչ միայն մեղք գործած, այլ նաև արդարութիւն ըրած ատեննիս կկարօտինք քու ողորմութեանդ» («Նարեկ աղօթամատյան», էջ 38): Մինչդեռ Նարեկացու խոսքն այն մասին է, որ թեպետ Հին օրենքը ոմանք սրբությամբ էին պահում, սակայն Քրիստոսի հայտնությամբ նրանք ևս նրա շնորհների կարիքն ունեցան:

ԲԱՆ ԺԴ

1. Ակնարկում է Երիքովի ճանապարհին ավազակների կողմից սրով վիրավորվածին, որին օգնություն ցույց տվեց անծանոթ սամարացին (տե՛ս Ղուկ., Ժ, 30—35):

2. **...զգրածից սիրտ ճմլեցոյց**—այսպես ունեն Պ$_{2-3}$-ը, Պոլսի 1782 և 1789 թթ. տպագրերը, ինչպես նաև մեր A-ն և մի խումբ այլ ձեռագրեր: Մնացած բոլոր տպագիրները և մեր ձեռագրերի մի մասն ունեն **զգրածից զսիրտ ճմլեցոյց**, ուր կրկնված է զ նախդիրը: Զ նախդիրի կրկնությունը բնորոշ է ինչպես գրաբարին առհասարակ, այնպես էլ Նարեկացու ոճին: Զ նախդիրի կրկնությունը վկայված է դեռևս Խորենացու մոտ պահպանված Գողթան երգերում. **զայլոց դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն** (տե՛ս «Մովսեսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 178, Գիրք Բ, գլ. Ծ): Նարեկացին ունի. **Որ զամենեցունց ունի զկրից պատաճմանց** (Բան Գ, տ. 49), **Զվիրաւորելոյն տեսեր զվտանգ** (Բան ԺԴ, տ. 45), **Զմարգարէին յիշեցուցանեմ զարամաթացւոյն Սամուէլի** (Բան ՁԸ, տ. 4) և այլն: Նախդրի կրկնակի գործածությունը առավել բնորոշ է ռիթմիկ խոսքին, քանի որ այն թելադրված է ոչ միայն շարահյուսական պահանջով, այլև ռիթմի կանոնավորության պահպանմամբ: Խոսքի մեջ երբ լրացումն իր լրացյալից բաժանված է այլ անդամներով, այսինքն՝ իրարից հեռանալով թուլանում է նրանց շարահյուսական կապը, նախդրի կրկնությունը զգալի է դարձնում այդ կապը: Մինչդեռ, երբ լրացումն ու լրացյալն իրար հետ են և կազմում են մի կապակցություն, կրկնությունը դառնում է ավելորդ: Նախդրի կրկնությունն այդ դեպքում ավելի շուտ խախտում, քան նպաստում է ռիթմի կանոնավորությանը: Ահա թե ինչու նախընտրեցինք **զգրածից սիրտ ճմլեցոյց** կապակցությունն այստեղ, մինչդեռ տ. 45-ում թողնում ենք **զվիրաւորելոյն տեսեր զվտանգ**, ընթերցվածը, մանավանդ որ այդպես ունեն թե՛ բոլոր ձեռագրերը և թե՛ բոլոր տպագիրները:

3. **Ոչ քահանայապէս ըստ Ահարոնեան տկար ատենին**—Նարեկացին Ահարոնի քահանայական հին օրենքը համարում է տկար՝ արդարացնելու և զորավոր՝ հանցավորին քարկոծմամբ մահվան դատապարտելու համար: Այդ օրենքին հակադրում է Քրիստոսի Նոր Օրենքը, որը հոգու փրկություն է ընձեռում մեղավորին և հավիտենական կյանք (հմմտ. Բ Կորնթ., Գ, 7—9):

4. Պ$_4$-ը և նրանից ծագող տպագիրներն ունեն **ուրպէս ղետական**: Մեր օգտագործած ձեռագրերից ոչ մեկը չունի **ուրպէս** բառը:

5. Հմմտ. Բ. Օրին., ԼԲ, 11:

ԲԱՆ ԺԵ

1. Ղուկ. ԺԵ, 3—7:

2. Հմմտ. Սաղմ., ԾԺԸ: 176: Եզեկ., ԼԴ, 11—12:

3. Պ$_1$-ն ունի **յանբանական**, Պ$_{2-3}$-ը, ինչպես նաև Պոլսի 1782 և 1789 թթ. տպագրերն ունեն **յանբեակ**, Պ$_4$-ը և նրանից ծագող տպագիրները՝ **յանբեական**: Մի շարք ձեռագրեր ունեն **յանբեակն** և **յանբեական** ընթերցվածները: Հայկազյան բառարանը այս բառը վկայակոչում է Նարեկացու տողով, զուգահեռաբար տալով երկու ընթերցված. **յանբեական**, փակագծում՝ **յանբեակ**: Նախընտրում ենք **յանբեակ** ընթերցվածը, հետևելով մեր A-ի արտագրությանը, թեև **յանբեակն** ձևը ևս հարազատ է բնագրին:

4. Պ$_4$-ը և նրանից ծագող տպագիրները ունեն կենագործել՝ հրաշագործել բառի փոխարեն: Գ. Ավետիքյանի օգտագործած ձեռագրերը ևս ունեցել են հրաշագործել (տե՛ս «Նարեկլուծ», էջ 72, ծնթ. 13): Ավետիքյանը, սակայն, անփոփոխ է թողել Պ$_4$-ի ընթերցվածը: Մեր օգտագործած ձեռագրերը ևս չունեն կենագործել ընթերցվածը: Այս ընթերցվածը, սակայն, կարող էր առաջանալ գրչագրական սխալի հետևանքով՝ հաջորդ տողի կենդանարար բառի ազդեցությամբ:

5. Տե՛ս Սաղմ., ԼԷ, 5:

6. Հմմտ. Ծննդ., Ը, 1:

7. ...զլերինս նալէ—հմմտ. «Լերինք որպէս մոմ հալեցին» (Սաղմ. ՂԶ, 5): Թերևս այս ընթերցվածի ազդեցությամբ է առաջացել նարբէ զլերինս (բան ՀԹ, տ. 44) կապակցության նալէ զլերինս տարընթերցվածը:

8. Հմմտ. Ես., ԽԴ, 26:

9. Տե՛ս Ես., Ե, 18:

10. Հմմտ. Մատթ., ԺԸ, 22:

11. ...անդուստ ի յաւուր—Պ$_{2-3}$-ը, Պոլսի 1782 և 1789 թթ. տպագիրները, ինչպես նաև մեր օգտագործած ձեռագրերի մի մասն ունեն անդուստ յաւուրն: Նախընտրել ենք ի յաւուր կրկնանախդրավոր ձևը, որը բնորոշ է Նարեկացու լեզվին և, առհասարակ, գրաբարին: Նարեկացին նախդրի կրկնությամբ առանձին երանգ է տալիս թե՛ իր ոճին և թե՛ խոսքի ռիթմին:

Յո՛յց ինձ, տէր, ի յեկիցն աւուր շնչոյս արձակման,
Մաքրութեան ոգի, լուսով ամբարձեալ ի յերկնաւորացն երջանկաց՝
Պարգևօք սիրոյ քոյ եկեալ հասանել,
Ի յարդարոցն կատարելոց կարեաց ինձ կցորդ ժամանեցուցես.
Զանակնկալն բարի՝ չարիս ի յուսահատութեանն աւուր շնորհեսցես:
(բան Բ, տ. 112—116)

Նախդրի կրկնության այս և շատ ուրիշ դեպքեր, անշուշտ, ունեն նաև իրենց չկրկնված ձևերը. Ով կեղծաւորդ յարդարոց (բան Ը, տ. 40), Ոչ յելից բարձրութենէ միոյ կանգնոյ կարկանկելոյ (Բան ՀԴ, տ. 99) և այլն, որոնք նույնքան օրինաչափ են, որքան նախդրի կրկնությամբ ձևերը: Միօրինակությունը մերժելի է, ուստի պահպանում ենք երկու ձևերն էլ՝ ելնելով թե ձեռագրերի տվյալներից և թե Նարեկացու լեզվի, ոճի և տողի ռիթմի պահանջներից: Նկատենք, սակայն, որ կրկնանախդրության հաճախականությունն ավելի մեծ է ուշ շրջանի ձեռագրերի մեջ:

ԲԱՆ ԺԶ

1. Այստեղ կա քերականական անհամաձայնություն. ծիրք հոգնակի որոշյալի հոլովաձև, որոշիչը դրված է եզակի՝ ծրի: Այսպես ունեն ոչ միայն մեր օգտագործած բոլոր ձեռագրերը, այլև բոլոր տպագիրները, բացի Բուէնոս Այրեսի 1948 թթ. հրատարակությունից: Գ. Խաչատուրյանը, թերևս ոչ առանց հիմքի, ուղղում է ծրիք: Հնարավոր է, որ դա լինի նաև իր՝ Գ. Խաչատուրյանի սրբագրությունը՝ առանց աղբյուրի: Գ. Ավետիքյանի օգտագործած երեք ձեռագրերից մեկն ունեցել է ծրից (տե՛ս «Նարեկլուծ», էջ 74, ծնթ. 1): Այդ ընթերցվածը չի տալիս մեր օգտագործած ձեռագրերից ոչ մեկը: Համաձայնությունը թեև ճիշտ է զուտ քերականորեն, սակայն պարտադիր չէ այստեղ:

2. Հմմտ. Ա. Պետ., Գ, 18—19:

3. Ճաճանչ կիզանող ընդհանրական բաժանցանցութեան—հմմտ. «Ընդմտանէ ընդ ամենայն վասն յստակութեան, քանզի ճաճանչ է աստուծոյ զօրութեանն...» (Իմաստ., Է, 24—25):

4. Տե՛ս Ղուկ., ԻԲ, 49—51: Մատնության գիշերը Հիսուսի աշակերտներից մեկը թրով հատում է ձերբակալելու եկած քահանայապետի զինվորներից մեկի աջ ականջը: Հիսուսը մոտենում և բուժում է այն:

ԲԱՆ ԺԸ

1. Այս և 14-րդ տողում Նարեկացին օգտագործել է միևնույն՝ զբեկեալս բառը.

Մի՛ խորտակեր զբեկեալս (տ. 14),
Մի՛ ջախջախեր զբեկեալս (տ. 20):

Կրկնության այսպիսի դեպքերը հարիր չեն Նարեկացու ոճին: Թվում է այստեղ կա ձեռագրական վրիպակ, որի հետևանքով նույնացել են տարբեր բառեր: Հակառակ դեպքում, պետք է ընդունել, որ Նարեկացին այդ բառերն օգտագործել է իմաստային տարբեր երանգավորմամբ: Մի դեպքում, թերևս, խոսքը հոգու խորտակվածության, սրտաբեկ լինելու, հուսալքության մասին է, մյուս դեպքում՝ մարմնի ջախջախվածության, մարմնապես փշուր-փշուր լինելու մասին:

2. Լոյսդ՝ ընդ ստուերականիս—ձեռագրերի մեծ մասը և Պ$_1$-ը, Պ$_4$-ը և նրանից ծագող տպագիրներն ունեն լոյսդ ընդ ստուերականիս, Պ$_{2-3}$-ը, ինչպես նաև Պոլսի 1782 և 1789 թթ. տպագիրներն ունեն լոյսդ ընդ խաւարիս: Մեր Ա-ն ունի խաւարս: Տպագրի այս ձևը, ուրեմն, ունեցել է ձեռագրական աղբյուր՝ խաւարիս ձևով: I-ն ունի ստուերականիս, Հ-ը՝ ստորնակիս, Roo$_1$-ը՝ ստորականիս: Հետաքրքիր է, որ միայն Բուէնոս Այրեսի հրատարակությունն ունի լոյսդ ընդ ստուերականիս, ինչ վկայված է մեր I ձեռագրի ընթերցվածով: 1926 թ. Գ. Խաչատուրյանը տողը թարգմանել է այսպես. Լոյսդ ստորինիս հետ, իսկ 1948 թ. այսպես՝ Լոյսդ ընդ ստուերիս: Նշանակում է 1948 թ. հրատարակությունը պատրաստելիս Գ. Խաչատուրյանը ոչ միայն տողատել, այլև մասնակի վերամշակման է ենթարկել իր թարգմանությունը՝ գրաբար բնագրի մեջ նաև ուղղումներ կատարելով (տե՛ս մեր ծանոթ. բան ԺԶ, տ. 4), որոնց մասին, սակայն, ոչինչ չի ասել: Հետևելով մեր I-ին և Բուէնոս Այրեսի հրատարակությանը, նախընտրում ենք ստուերականիս ընթերցվածը, որը ոչ միայն ավելի ճիշտ է արտահայտում բանաստեղծի միտքը, այլև ավելի ցայտուն է դարձնում հակադրությունը: Ստորնականիս բառը, անշուշտ, դիպուկ հակադրություն չէ լույսին: Բացի դրանից՝ այն կարող էր հեշտությամբ ծագել ստուերական բառի գրչական շփոթության հետևանքով: Ինչ վերաբերում է խաւարիս բառին, ապա այն կարող էր առաջ գալ լոյս բառի իր սովորական հականիշության շնորհիվ:

3. Ընդ աչացուացն նեղեցելոց—Պ$_{1-3}$-ը և Պոլսի 1782 և 1789 թթ. տպագիրներն ունեն ընդ աչացուացն, իսկ Պ$_4$-ը և նրանից ծագող տպագիրները, բացի Վենետիկի 1840 թ. և Բուէնոս Այրեսի 1948 թ. հրատարակություններից, ունեն աչացաւացն: Նախընտրեցինք աչացուացն ընթերցվածը, որը նշանակում է կույրերի և ոչ թե աչացաւացն, որը նշանակում է աչքի ցավով տառապողների: Խոսքը ավետարանական այն կույրերի մասին է, որոնք խնդրում էին Հիսուսին՝ լույս պարգևել իրենց աչքերին (տե՛ս Մատթ., Թ., 27): Նույն իմաստով Նարեկացու այս տողին առնչվում է միջնադարյան մի գանձի հետևյալ տողը. Ընդ աչացուին քեզ աղաղակեցից լուսատու փրկիչ (տե՛ս Հայկազյան բառարան, Ա, էջ 266):

4. Հմմտ. Մատթ., Ի, 30:

5. Տե՛ս Ղուկ., Է, 40—43:

6. Տե՛ս Ղուկ., Է, 47:

ԲԱՆ ԺԸ

1. Հմմտ. Մատթ., ԺԸ, 24։

2. Տե՛ս Ղուկ., ԺԳ, 10—17։

3. ... մեղացն կfմամբ— BGτΓ գրել են կփմամբ, սրբագրել՝ կfմամբ: Τσω, ինչպես նաև Վատիկանի ձեռագիրն ունեն կփմամբ: Բառիս ուղղականը պետք է լինի կփումն, բայց՝ կփել, որոնք սակայն վկայված չեն հայ մատենագրության մեջ։ Բառարանները ևս չունեն այդ բառը։ Կա՞ այդպիսի հայերեն բառ, թե՞ առաջացել է այլ տառերի դրափոխության կամ f և փ տառերի գրչական շփոթության հետևանքով, դժվար է ասել՝ Նարեկացին ունի. Մի՛ փչուցես զկfեալն (բան Ձէ, տ. 52)։ Գրչագրական շփոթություն լինելու դեպքում սպասելի էր, որ զկfեալն ունենար զկփեալն տարընթերցված, մինչդեռ այդպիսի տարընթերցված չկա։ Եվ, այնուամենայնիվ, թվում է, որ կփմամբ ընթերցվածը վրիպակ է և ոչ թե հեղինակի բառը՝ առաջացած բարբառային կփել, կոփ կամ կոփի տալ բառերի ազդեցությամբ, որ նշանակում է ճարվածել, խփել (հմմտ. կոփի տալ). հարված մը տալով՝ տեղեն հանել. կոփի տվի փոսի մեջ գցեցի («Էմինյան ազգագրական ժողովածու», հ. Թ., Թիֆլիս, 1913, էջ 609)։

4. Տե՛ս Եզեկ., ԺԷ, 24։

5. Հմմտ. Յովհ., Ի, 1։

6. Տե՛ս Ղուկ., Ը, 43։

7. Այս տողի դիմաց, ձախ լուսանցքում, A ունի նշում՝ «Զէ գլուխ» (էջ 57ա)։ Նարեկացու «Մատյանի» առանձին գլուխներ, խմբավորվելով համապատասխան անվանումների տակ, կարդացվել են իբրև աղոթքներ. այսպես, օրինակ՝ «Աղօթf առաւօտու», «Աղօթf գիշերայնոյ», «Աղօթf զղջման», «Մաղթանf ճաւառոյ» և այլն։ Զէ գլուխը դրվել է «Աղօթf բարեխօսութեամբ սրբոցն» խմբավորման մեջ։ A-ի գրիչը, թերևս նույն նկատառումներով, ԺԸ գլխի այս հատվածը ևս նշել է այդ խմբավորման մեջ դնելու համար։

8. Տե՛ս Ղուկ., Է, 37—38։ Յովհ., ԺԲ, 3։

9. Տե՛ս Մատթ., Թ, 32—33։ Մարկ., Է, 32—35։

10. Տե՛ս Ղուկ., Է, 11—13։

11. Տե՛ս Մատթ., Ը, 28։

12. Հմմտ. Ես., Ա, 6։

13. Հմմտ. Յովն., Բ, 3։

ԲԱՆ ԺԹ

1. Հմմտ. Յովհ., ԺԴ, 23։

2. Հմմտ. Հռովմ., ԺԲ, 17։

3. Հմմտ. Երեմ., ԻԵ, 14—37։

4. Հմմտ. Սաղմ., Ծ, 6։ Հռովմ., Գ, 4։

5. Հմմտ. Ամովս, Ը, 11։

6. Տագնապեալ սառնում—այսպես ունեն $Պ_{1-3}$-ը, Պոլսի 1782 և 1789 թթ., ինչպես նաև Բուենոս Այրեսի 1948 թ. տպագիրները։ $Պ_4$-ը և նրանից ծագող տպագիրները, այդ թվում նաև «Նարեկլուծ»-ը, ունեն տառապեալ սառնում: Ավետիքյանի օգտագործած ձեռագիրներից չորսը ևս ունեցել են տագնապեալ ընթերցվածը (տե՛ս «Նարեկլուծ», էջ 88, ծնթ. 12)։ Մեր օգտագործած ձեռագիրներից և ոչ մեկը չունի տառապեալ ընթերցվածը։ Ավետիքյանին ևս, թվում է,

այդ ընթերցվածը հայտնի է եղել միայն $Պ_4$ տպագրից։ Ուստի հակված ենք այդ ընթերցվածը համարելու վրիպակ՝ լինի գրչագրական թե տպագրական։

7. Իբր անվնասակարf—միայն «Նարեկլուծի» բնագիրն ունի իբրև անվնասակարf, սա իբրև ընթերցվածը, անկասկած, վրիպակ է։

8. Տ. 83—85, հմմտ. Ժողով., Ժ, 4։

9. Տ. 86—90, տե՛ս Նաւում, Գ, 5—6։

10. Տ. 94—97, տե՛ս Ես., ԾԲ, 1—2։

ԲԱՆ Ի

Ընտրողութիւնf: բառի փոխարեն միայն «Նարեկլուծն» ունի ընտրողութիւնf:

1. Այս տողում ընտրութիւնf բառի փոխարեն միայն «Նարեկլուծն» ունի ընտրողութիւնf: Մեր օգտագործած ձեռագրերից և ոչ մեկը չի տալիս այդ ընթերցվածը։ Ավետիքյանը չի բերել ոչ մի աղբյուր՝ ձեռագիր կամ տպագիր։ Ընտրողութիւնf ընթերցվածը, կարծում ենք, տպագրական վրիպակ է։

2. Հմմտ. Դան., Թ, 4, 19։

3. Այս է՝ ամենայնիւ ամենայն իրաւf մեղանչելն—առաջին հայացքից կարող է թվալ, թե տողը բնագիր է միջարկվել լուսանցային մեկնությունից։ Իրականում, սակայն, տողը բնագրային է։ Նախ՝ այդ տողն ունեն այս գլուխն ունեցող բոլոր ձեռագրերը, ինչպես նաև բոլոր տպագիրները և, երկրորդ, բացատրական այս ոճը բնորոշ է առհասարակ Նարեկացուն և, մասնավորապես, այս հատվածին։

4. Այս տողում $Պ_4$-ը և նրան հարող տպագիրները, ինչպես նաև «Նարեկլուծի» բնագիրն ունեն տարագրութեան անյուսալի: Այսպես ունեն նաև մեր Wt-ն, որոնք ուշ շրջանի ձեռագրեր են։ Գ. Ավետիքյանը անյուսալի բառը համարել է բնագրային, չնայած որ նրա օգտագործած չորս ձեռագրեր չեն ունեցել այդ ընթերցվածը (տե՛ս «Նարեկլուծ», էջ 92, ծնթ. 3)։ Վենետիկի 1840 թ. տպագիրը և նրա արտատպությունները չունեն այդ բառը։ Կարծում ենք, որ բառը բնագրային չէ, քանի որ, նախ՝ այն չունեն հնագույն և լավագույն ձեռագրերը և, երկրորդ, այն կարող էր բնագիր մուծվել լուսանցային մեկնությունից, մանավանդ որ բառը վկայված է ուշ շրջանի ձեռագրերում։

5. Տե՛ս Ովսէէ, Թ, 11։

6. Տե՛ս Յոբ, Խ, 21։ Գ Թագ., ԺԲ, 11։

7. Տե՛ս Երեմ., ԺԳ, 7։

8. Տե՛ս Ժողով., Զ, 3—5։

9. Տե՛ս Ես., ԿԴ, 6։

10. Տե՛ս Ես., Լ, 14։

11. Տե՛ս Ամովս, Ա, 11, 13։

12. ...վրանն իսկ դիւանուէր Մողոfայ—Մողոքն Աստվածաշնչում հիշատակված կուռքերից է, որին պաշտում էին ամոնացիները (հմմտ. Ամովս, Ե, 26։ Գործք, Է, 43)։ Մեկնիչներից ոմանք այս կուռքը նույնացնում են Մեղքոմ կուռքի հետ. «Մեղքոմ, որ և Մողոք» (տե՛ս «Նարեկլուծ», էջ 308, ծնթ. 19)։ Նրան մատուցում էին նաև մարդկային զոհեր՝ մանուկ տղաներ։ Եգիպտոսից գաղթելիս, Սինայի անապատում, հրեաները պաշտում են նաև Մողոքին՝ կուռքը շարժական վրանի կամ խորանի մեջ տանելով իրենց հետ։ Նարեկացին այստեղ զուգահեռ է տանում իր և կռամոլ հրեաների միջև։ Մերժելով ճշմարիտ աստծու խորանը, նրանք զոհ էին մատուցում

Մողոքի հրին. ինքը այդ զոհարանը, իբրև դժոխքի պատկեր, կրում է իր մեջ, իր սիրտն է դարձրել դիվանվեր խորան՝ հոգին մատնելով նրա կրակին։

13. ...նմանագիր ձեւակերպութեան—այսպես ունեն $Պ_{1-3}$-ը, Պոլսի 1782 և 1789 թթ. տպագիրները, մեր A-ն և բազմաթիվ այլ ձեռագրեր։ $Պ_4$-ը և նրանից ծագող տպագիրները, այդ թվում և «Նարեկլուծի» բնագիրն ու Վենետիկի 1840 թ. հրատարակությունները, ինչպես նաև մի խումբ ձեռագրեր ունեն նմանակիր։ Տարընթերցվածը հայտնի է եղել Գ. Ավետիքյանին. «4 օրինակ՝ նմանագիր» («Նարեկլուծ», էջ 94, ծնթ. 18)։ Հայկազյան բառարանը չունի առանձին նմանագիր բառահոդված։ Նմանակիր բառի համար բերված է նաև նմանագիր բառը՝ իբրև Նարեկացու այս տողի տարընթերցված։ Նմանակիր բառի համար տրված են նաև նրա հունարեն և լատիներեն համարժեքները։ Բառը բացատրված է այսպես. «Ունող զնոյն կիրս», «Կրող զնմանութիւն», այսինքն՝ «1. Նման կրքեր ունեցող։ 2։ Նմանություն կրող, համանման» (տե՛ս Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Երևան, 1944, էջ 467)։ Մալխասյանցը տվել է նաև նմանագիր բառը. «Գործիք, որով կարելի է փոքր դիրքով ճշտիվ գծագրել առարկան, ուղիղ կամ կոր գծերով»։ Թե՛ առաջին և թե՛ մանավանդ երկրորդ իմաստները կապ չունեն Նարեկացու արտահայտության հետ։ Խոսքը ոչ թե նման կրքեր, նույն կրքերն ունենալու մասին է, այլ կուռքերի նմանակերտ, նմանագիծ, նմանակերպ պատկերներ ստեղծելու մասին, ինչ հուշում է նաև ձեւակերպութեան բառը։ Հրեաները կուռքեր էին պատվում ու պաշտում՝ թողնելով ճշմարիտ աստծուն, ինքը տվել է իր մարմնական ցանկություններին ու ախտերին, որոնք նույն կուռքերի նմանակերտ կերպաձևությունն են խորհրդանշում։ Ըստ այդմ էլ նախընտրեցինք նմանագիր ընթերցվածը, հետևելով մեր A-ին, ձեռագրերի մեծ մասին և հնագույն տպագիրներին։

14. Որպէս առակ. պատկերի աստեղն Ռեփանայ բարեկակցի—սա ևս Աստվածաշնչում հիշատակված կուռքերից է (տե՛ս Ամովս, Ե, 26։ Գործք, Է, 43)։ Մեկնիչներից ոմանք այդ կուռքի պաշտամունքը նույնացնում են Արուսյակի՝ լուսաստղի պաշտամունքի հետ։ Նրա պատկերը եղել է աստղաձև կամ աստղ է ունեցել վրան։ Այդ կուռքի պաշտամունքը պետք է բաբելացիներից անցած լիներ հրեաներին։ Անունը վկայված է Աստվածաշնչում Հռեմփայ ձևով։ Ունի նաև Ռեմփայ տարընթերցվածը, որը համընկնում է մեր h-ի ընթերցվածին։ Գ. Ավետիքյանը գրում է, որ Նարեկացին «փոխանակ ասելոյ Հռեմփայ՝ դնէ Ռեփանայ, զի այսպէս դնեն լաւ օրինակք Եօթանասնից ի բանն Ամովսայ» («Նարեկլուծ», էջ 94, ծնթ. 17)։ Նշանակում է, Նարեկացին ունեցել է այնպիսի հայերեն աղբյուր, ուր այդ անունը տրված է եղել Ռեփանայ ձևով, ինչպես Յոթանասնից թարգմանության մեջ, կամ պետք է ենթադրել, որ կարող էր վերցնել հունարենից։

15. Որպէս զանբժշկելի մառնեցեալ. Բոլոր տպագիրները, բացի «Նարեկլուծ»-ի 1827 թ. հրատարակությունից, ունեն մանռեցեալ։ «Նարեկլուծ»-ից արտահայտությունը դուրս է մնացել պատահաբար։ Տարընթերցվածը հայտնի է եղել Գ. Ավետիքյանին («Նարեկլուծ», էջ 94, ծնթ. 20)։ Նախընտրելի համարեցինք մեր A-ի և հնագույն այլ ձեռագրերի մառնեցեալ ընթերցվածը։

ԲԱՆ ԻԱ

1. Հմմտ. Դան., Է, 4։

2. Անսաստութեան բառի համար գաղափար օրինակի ունեցած անճնազանդութեան լուսանցային բառաբացատրությունը h-ի գրիչը սխալմամբ տարել է բնագրի կարգը՝ նրանից առաջ դնելով՝ լուծումն (տե՛ս տողի տարընթերցվածները)։

3. ...ցուցս վազից—բոլոր տպագիրներն ունեն ցոյցս վազից, սակայն նույն տողի կաքաւ

կայթից կապակցությունը հուշում է, որ այդտեղ խոսքը ոչ թե ցույց-ի մասին է, որը գրաբարում գործածվել է այլևայլ իմաստներով՝ «ցուցումն, երևույթ, նշան, հանդես, օրինակ, նշավակող առակ, տեսիլ, ապացույց» և այլն, այլ հայ միջնադարի թատերական բանահյուսության հետ կապված հասկացության։ Ցուց-ը ոչ միայն իր իմաստով, այլև ձևաբանական փոխակերպումներով տարբերվում է ցոյց բառից (ցուց—ցցոյ, ցուցք, ցցոց, բայց՝ ցոյց, ցուցի, ցոյցք, ցուցից)։ Այդ բառի ամենավաղ վկայությունները մեզ տալիս են Ագաթանգեղոսը («կայթիւք վազելով՝ ցուց բարձեալ»), Մովսես Խորենացին («ի նուագս բամբռան և յերգս ցցոց և պարուց») և Հովհան Ոսկեբերանի մեկնության հայերեն թարգմանությունը («Միթէ ի ցո՞ւցս պարիցես». տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Բ, Վենետիկ, 1837, էջ 917)։ Նարեկացու տողում բառը հանդես է գալիս մի այնպիսի կապակցության մեջ, որը հիշեցնում է Ագաթանգեղոսի արտահայտությունը՝ բառերի որոշ տեղաշարժով (հմմտ. «կաքաւ կայթից եւ ցուցս վազից» և «կայթիւք վազելով՝ ցուց բարձեալ»), բայց այդ նմանությունը հիմք չի կարող լինել մտածելու, թե այս դեպքում նրա խոսքի ակունքը ոչ թե միջնադարյան իրականությունն է, այլ Ագաթանգեղոսը։

Ցուց-ը, ըստ հայ թատրոնի պատմության հետազոտող Հ. Հովհաննիսյանի կարծիքի, եղել է հայոց թատրոնի բնիկ ազգային, նախնական անվանումը, մինչև թատր կամ թէատրոն բառը կիրառություն կստանար մեր լեզվում։ Նարեկացու ցուցս վազից արտահայտությունը, Գրիգոր Մաշկևորի «Գիրք աղօթից գշչականաց» երկի ցցասաց, Հովհաննես Սարկավագի ցուցական և բարբառներում պահպանված ցուցք, ցուցանք, ցուցարանք, ցուցկի բառերը բոլորն էլ ծագում են ցուց-ից և «վաղ միջնադարյան դրամատիկական բանահյուսության ու թատրոնի հեռավոր հիշողություններ են» (տե՛ս Հ. Հովհաննիսյան, Թատրոնը միջնադարյան Հայաստանում, Երևան, 1978, հատկապես «Երգք ցցոց և պարուց» ենթագլուխը)։ Ցուց-ը, ինչպես Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու, Հովհան Ոսկեբերանի երկերում (նաև Նարեկացու Մատյանում) նրա կիրառությունններն են ցույց տալիս, իբրև թատերական երևույթ, պարունակել է պարային, խոսքային ու երգային արտահայտության տարրեր՝ ունենալով, ամենայն հավանականությամբ, «աշխարհիկ-կատակերգական բովանդակություն» և լինելով «սինկրետիկ բանահյուսության ձևերից մեկը» (նույն տեղում, էջ 127)։ Իսկ ինչո՞ւ Մատյանի ձեռագրերից միայն KH գրչագրերն ունեն ցուցս, իսկ փ օրինակը, գրելով ցուցս, այնուհետև սրբագրել է ցոյցս։ Դրա պատճառն այն է, որ գրիչները գաղափար օրինակի ճիշտ գրությունը դիտել են իբրև սխալագրություն և ուղղել գրքային բառապաշարում այնքան տարածում գտած ցոյց բառով՝ վերջինիս հետ նույնացնելով ցուց ժանրային անվանումը։

4. Հմմտ. Ես., ԾԲ, 5։ Հռովմ., Բ, 24։

5. Տե՛ս Յովէլ, Ա, 4։

6. Բողոքս բառի փխ երկու գրչագիր տալիս են ողբումն (U) և ողբս (h. տե՛ս տողի տարընթերցվածները)։ Միջնադարում ըստ երևույթին ողբ-ը համանիշ է եղել բողոք և գանգատ բառերին, այլ կերպ՝ ողբ-ը իր հիմնական իմաստի հետ արտահայտել է և «գանգատ, բողոք» իմաստները, ինչպես die Klage բառը՝ գերմաներենում։ Հօգուտ դրա է խոսում նաև հետևյալ փաստը. Ֆրիկի բանաստեղծությունները, ինչպես հայտնի է, վերնագրերում, իբրև ժանրային անվանում, ունեն հատկապես տաղ, բան, բանք, ողբ, ողբանք բառերը, իսկ խիստ սակավաթիվ ձեռագրերով հասած նրա «Աստուած արդար և յիրաւի» սկզբնատողով հանրահայտ գործը նաև անվանված է «Գանգատ»։ Արդյո՞ք ողբ-ի հետ գանգատ բառի ունեցած համանիշային աղերսն այս դեպքում դեր չի խաղացել բանաստեղծությունը կոչելու այդպես։ Նարեկացու տողում բողոքս ընթերցվածի փոխարեն երկու ձեռագրում ողբումն (ողբս) բառի առկայությունը չի կարելի գրչական պարզ շփոթության արդյունք համարել. դա կարող էր երևան գալ երկու ճանապարհով՝ կա՛մ Նարեկացին ինքը նախապես գրած է եղել այդպես և ապա ուղղել բողոքս,

այսինքն՝ Սh ձեռագրերը պահպանել են հեղինակային սևագիր նախօրինակի չվերանայված, չուղղված ընթերցվածը, և կա՛մ հետագայում բողոքս բառի ողբումն (ողբս) լուսանցային բառաբացատրությունը գրիչների ձեռքով մտցվել է բնագրի կարգը՝ դուրս վանելով բողոքս ընթերցվածը։

7. Պ$_4$ և Մատյանի հետագա բոլոր հրատարակությունները, բացի Պոլսի 1782 և 1789 թթ. տպագրերից, հատվածաբաժանումն ունեն ոչ թե այս, այլ տ. 47-ից հետո։ Դ հատվածն սկսում ենք տ. 45-ով՝ հետևելով A օրինակին, որտեղ այն սկսվում է ոսկեգույն սկզբնատառով և նոր պարբերության սկիզբ է կազմում (էջ 69ա)։ Նոր պարբերությունն այդ տողով են բակըսում նաև այլ գրչագրեր և Պ$_3$ տպագիրը։ Նման հատվածաբաժանումն արդարացվում է և գլխի բովանդակությամբ. տ. 48-ում ասվածը՝ Եւ զիա՞րդ ասացից անձին իմում մարդ… պատճառաբանվում է տ. 45-ով՝ Արդ, ես գնացի ընդ այս ճանապարհ կորստեան…։

8. Հմմտ. Երեմ., ԺԲ, 10։

9. …մտաց ընդունակսն—ինչպես նկատել է Գ. Ավետիքյանը («Նարեկյուծ», էջ 98, ծնթ. 11), Նարեկացու այս կապակցությունը հիշեցնում է հայ հին մատենագիրների՝ մարդուն տված սահմանման մի մասը. հմմտ. «…կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց և հանճարոյ ընդունակ» (տե՛ս Դաւիթ Անյաղթ, Սահմանք իմաստասիրութեան, բնագիրը, թարգմ. և ուսումն. Ս. Արևշատյանի, Երևան, 1960, էջ 4)։

10. x գրչագրի գրի՞չը, թե՞ մեկ ուրիշը այս բառը լուսանցքում բացատրել է՝ «Երագն», իսկ հաջորդ տողի անխրախուսելի բառը՝ «Ուրախալի» (էջ 53բ)։ Երկու բացատրությունն էլ չեն համընկնում բնագրի բառերի իմաստներին։

11. Տե՛ս Երեմ., Զ, 7—8։

12. Տե՛ս Սաղմ., Լ, 11։

13. Հմմտ. Առակք, ԻԵ, 20։

14. Հմմտ. Սաղմ., ԼԸ, 12։ Այս հղումը լուսանցքում կատարել է նաև σ ձեռագրի գրիչը՝ առանց տունը նշելու (էջ 46բ)։

15. Հմմտ. Ովսէէ, ԺԳ, 3։

16. Տե՛ս Երեմ., ԺԷ, 15։

17. Տե՛ս Ղուկ., ԻԳ, 34։

ԲԱՆ ԻԲ

1. Ղ ձեռագիրը 8—18 տողերն օրինակել է չափածո տողատումով՝ յուրաքանչյուր տող սկսելով մեծատառով (տե՛ս նրա 49ա—բ էջերը)։ Այս հանգավոր հատվածի բոլոր տողերն ավարտվում են ական վերջածանցով կազմված ածականներով, բացի առաջին տողից, որը նույնպես հանգավորված է մյուս տողերի հետ։ Առհասարակ Բ հատվածում գործածված բոլոր մակդիրներն ական մասնիկով են վերջավորվում, բացի կարծրերախ, սանձակոտր, արձակերասան (7-րդ տող), անճամբոյր (8-րդ տող) և ոսկի (17-րդ տող) բառերից։

2. Երինջս աւողական…—ակնարկ է այն երինջների մասին, որոնք քաշում էին ուխտի տապանակը կրող սայլը՝ ընթանալով ուղիղ և անխոտորնակ, չնայած զատված էին իրենց հորթերից (տե՛ս Ա Թագ., Զ, 12)։ Նարեկացին ուզում է ասել, որ ինքը, հակառակ նրանց։ խենթ ու խելառ (աւողական) մի երինջ է, որն իր ընթացքով անուղղա է ու անվարժ։ Աւողական բառի (տարընթերցվածներ՝ յաւողական, աւողական) գործածության միակ օրինակը Մատյանի այս տողն է։ Նարեկացու միջնադարյան մեկնության մեջ այդ բառը բացատրված

է աւողական (ածական, որ տրվում է մատաղահասակ, անփորձ ու դժվարասանձ անասունին. տե՛ս ձեռ. 5650, էջ 355բ)։ Գ. Ավետիքյանն այն կապում է աւաղ, աւաղեմ բառերի հետ՝ նրան տալով «հեծող» իմաստը («Նարեկյուծ», էջ 100, ծնթ. 2)։ Հր. Աճառյանը բառի արմատը համարում է աւ-ը, որից, ըստ նրա, կազմված են աւանդող («ցնորված, մոլեգնած»), աւեալ, աւաղ, աւիւն բառերն ու աւելոց ելանել կամ աւոլոց ելանել («փախչել, խրտնած դուրս փախչել») բառակապակցությունները։ Ըստ այդմ էլ աւողական հասկանում է «ցնորված, խենթացած» իմաստով (տե՛ս «Հայերեն արմատական բառարան», Ա, էջ 360—361)։

3. Այս տողում Պ$_{1-3}$ տպագրերը, ինչպես նաև Կ. Պոլսի 1782 և 1789 թթ. հրատարակությունները ունեն բնաւ բանիւ, իսկ Պ$_4$-ը գլխավոր տարբերությունների ցանկում տալիս է բնաւիւ բանիւ փխ բնագրի բնաւիւ բառի։ Մեր օգտագործած ձեռագրերը բնաւ բանիւ կամ բնաւիւ բանիւ ընթերցվածներն ուղղակիորեն չեն տալիս, այլ՝ սրբագրումով. այսպես՝ E օրինակում բնաւ բառը հետագա ձեռքով սրբագրված է բնաւիւ, s ձեռագիրը գրել է բնաւիւ և ապա սրբագրել բանիւ (տե՛ս տողի տարընթերցվածները)։ Ըստ երևույթին որոշ գրիչներ կամ Մատյանի առաջին տպագրիչները այդ սրբագրումներն ընկալել են ոչ թե իբրև նախապես գրված բառերի ուղղումներ, այլ որպես ճշտում-հավելումներ. այդպիսով թե՛ սրբագրված բառը և թե՛ նրա սրբագրումները կողք-կողքի տեղ են գտել տպագիր բնագրում և Պ$_4$-ի տարբերությունների ցանկում։

4. H ձեռագիրը (ժամ. XIV դ.) ջամբեալ բառն ունի առանց բ-ի՝ ջամեալ: Եթե դա սովորական գրչական վրիպում չէ, ապա հուշում է բառի թերևս նախնական ձևը։ Ըստ Հր. Աճառյանի, հայերենի ջամբ արմատը («ուտելիք, կերակուր», որից ջամբել բայը) աղերս կարող է ունենալ կամ պարսկերեն ճամ («ուտելը») և կամ կովկասյան (վրացերեն, մինգրելերեն և այլն) նույնանուն արմատի հետ, իսկ բ-ն հայերենում աճական է։ Հայ մատենագրության մեջ այդ արմատը պարունակող բառերը վկայված են ջ սկզբնագրով և բ աճականով՝ ջամբ (Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Դ, էջ 120—121)։ Անշուշտ, Նարեկացու Մատյանում ևս բուն հեղինակային ձևը եղել է ջամբեալ: Բայց H ձեռագրի ջամեալ տարընթերցվածն արդյո՞ք վերապրուկը չէ բառի նախնական պատկերի, երբ աճականը դեռևս չի երևացել նրանում։

5. Հմմտ. Եսա., Զ, 6—7։

ԲԱՆ ԻԳ

1. Անմատչելի նեռաւոր եւ անընդմիջելի մերձաւոր—այս տողը հանդիպում է նաև Նարեկացու «Տանձ ի սուրբ խաչն աստուածընկալ» խորագրով գանձում՝ միայն մեկ բառի տարբերությամբ.

Աննաւասանելի նեռաւոր եւ անընդմիջելի մերձաւոր

(տե՛ս Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, էջ 461)։ Չի կարելի ասել, թե երկու երկի համար ընդհանուր այդ տողը այլ ձեռքով է փոքր-ինչ փոփոխության ենթարկվել ու մուծվել մեկից մյուսը. դա հետագա միջամտության արդյունք չի կարելի համարել։ Նարեկացին, ճիշտ է, Մատյանում ինքնակրկնումի օրինակներ գրեթե չի տալիս, բայց նրա տարբեր ըստեղծագործություններում միևնույն համեմատության, պատկերի կամ ծավալուն դարձվածի առկայությունը բացառված չէ։ Բերենք միայն մեկ օրինակ. Մատյանի հիշատակարանում իր և իր ավագ եղբոր՝ Հովհաննեսի մասին ասվածը («…որք իբրև զմի մարմին բանական

ի յերկուց առ մի կերպարան շինելոյ դիմաց կենցաղավարելով...») հիշեցնում է Ասպարանից
խաչի պատմության մեջ բյուզանդական Վասիլ և Կոստանդին կայսր եղբայրների նրա բնու-
թագրումը՝ «...որք ի մի նկատումն կամաց խորհրդոյ երկեակ մարմնով և միով սրտիւ կեն-
ցաղավարեցան և որպէս զէութիւն երկուց տարաղուց անձին և մարմնոյ ի մի կերպարան շա-
րունակեցան...» (տե՛ս Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, էջ 375):

2. Գործնականացն զործի—Մատյանի միջնադարյան մեկնությունը հասկանում է մարդու
չար գործերը (տե՛ս ձեռ. 5650, էջ 356ա): Բայց տողի շարունակությունը ցույց է տալիս, որ
Նարեկացին նկատի է ունեցել մարդու զգայարանները՝ «գործնական առաքինութեանց» գոր-
ծիքները («Գիրք մեկնութեան», էջ 155), կամքը, որ գործողության շարժիչն է, զգայարան-
ների հետ՝ նաև ձեռքը, «որք արբանեկեն ի գործել» («Նարեկլուծ», էջ 104—105, ծնթ. 6):

3. Համտ. Սաղմ., ԽԸ, 13:

4. Ակնարկում է ավետարանում ասվածը (տե՛ս Ղուկ., Թ, 62), թե ով իր հոգու ան-
դաստանը մշակելու համար ձեռքն է առնում մաճը, չպետք է հետկույս նայի՝ հրապուրվելով
նախկին աշխարհիկ զբաղումներով, որպեսզի արորն ուղիղ ակոսով ընթանա՝ նրան տանելով
դեպի ճշմարիտ նպատակը (համտ., «Գիրք մեկնութեան», էջ 156, «Նարեկլուծ», էջ 105,
ծնթ. 11):

5. ... անբերելեացն տոյժ—նկատի ունի հոգու անտանելի տառապանքները (տե՛ս «Նա-
րեկլուծ», էջ 105, ծնթ. 15) կամ հավիտենական տանջանքները (տե՛ս ձեռ. № 5650, էջ 356բ):

6. Եւ վառարան իւղոյն՝ անիւնովն հնոցի լցեալ—ըստ մեկնիչների, վառարան իւղոյն
կապակցությունն ունի լապտերի իմաստ, որն այլաբանորեն համանշանակ է հոգուն կամ
մտքին: Բանաստեղծը խոստովանում է, որ իր հոգու կանթեղը լցված է անիւնովն հնոցի, այ-
սինքն՝ մեղքի մնացվածով, կյանքի ու աշխարհի սիրով (համտ. «Գիրք մեկնութեան», էջ 158,
«Նարեկլուծ», էջ 106, ծնթ. 18):

7. Երէ մատենագէտ՝ մուրհակի կորստեան—այսինքն՝ եթե ատենադպրի հանդիպեմ, որը
դատական դիվանի պաշտոնյա է, ապա կսպասեմ իմ ազատության գրի կամ պարտամուր-
հակի կորստյան (տե՛ս «Գիրք մեկնութեան», էջ 160, «Նարեկլուծ», էջ 106, ծնթ. 19):

8. Մատյանի բոլոր հին տպագիրները, ինչպես նաև Գ. Ավետիքյանի «Նարեկլուծ»-ի բը-
նագիրը, ունեն րօպափման: Այդ ընթերցվածը մեր օգտագործած ձեռագրերից ոչ մեկում չկա:
Ավետիքյանը եա նշել է, որ իրեն ծանոթ բոլոր չորս ձեռագրերը տալիս են րօպափելոյ («Նա-
րեկլուծ», էջ 106, ծնթ. 19), ինչպես ուղղել են Վենետիկի 1840 թ. հրատարակությունը և սրա-
նից կախում ունեցող հետագա տպագրիները: Տողի միտքը, ըստ Հ. Նալյանի, այս է. եթե
ավետարանական քարոզիչ տեսնեմ, կկարծեմ, թե ոտքերի փոշին է թոթափելու ի նշան այն
բանի, որ ես նրա քարոզը չեմ լսում («Գիրք մեկնութեան», էջ 160), այսինքն՝ ինձնից ձեռք
է քաշելու: «Զփոշի ոտից թօթափել» նշանակում է հաշիվները մաքրել, ձեռք քաշել, խզվել,
հրաժարվել (համտ. Մատթ., Ժ, 14):

9. Ակնարկում է շնացող կնոջը, որին Մովսեսը փորձել է ջրով (համտ. Թիվ, Ե, 16—22):
Ըստ այդ ավանդության, «փորձութեան ջուրը» խմող մեղավորի որովայնն ուռչում ու պայ-
թում է:

10. Երէ դեղ ինչ դատման ձգեմ—նշանակում է՝ եթե խրատ կամ ապաշխարություն ստա-
նամ:

11. Պ$_4$ տպագիրը գլխավոր տարբերությունների ցանկում րախծանաւք բառի փոխ ունի
րախանձանօք: Մեր օգտագործած ձեռագրերը և մյուս տպագիրներն այդ ընթերցվածը չեն
տալիս:

12. Մատյանի Պ$_4$ տպագիրը և հետագա բոլոր հրատարակությունները, բացի Պոլսի 1782,
1789 թթ. տպագիրներից, չունեն յերկինս առաբեմ բառերը, որոնք կրկնվում են տ. 94-ում: ԻԳ
գլուխը պարունակող մեր բոլոր ձեռագրերն առանց բացառության տ. 91-ում ունեն այդ բա-
ռերը: Դրանք եղել են նաև Գ. Ավետիքյանի օգտագործած գրչագրերում, և նա որևէ կասկած
չի հայտնել նրանց բնագրային չլինելու մասին (տե՛ս «Նարեկլուծ», էջ 107, ծնթ. 25):

13. Այս տողից հետո միայն Ղ ձեռագիրն ունի. «Փառաւորեալդ աստուած, աւրհնեալ և
երկրպագեալ յերիս յափտեանս, և անդ ֆան զպայման սահմանի իմանալեացն յափտենից»
(տե՛ս տողի տարընթերցվածները), որից առաջ գրիչը կասկածել և շրջանակաձև փոքրիկ նշան է
դրել: Նրա կասկածն անհիմն չի եղել. այդ հատվածը ձեռագրում ԻԳ գլխի վերջն է ընկել Բ
գլխից. որոշ տարբերություններով հանդերձ՝ համապատասխանում է վերջինիս 140—141-րդ տո-
ղերին:

ԲԱՆ ԻԴ

1. Ղ ձեռագիրը 5—29 տողերն ունի չափածո տողատումով՝ յուրաքանչյուր տող սկսելով
մեծատառ: Այդ ամբողջ հատվածը, 2-րդ տողից սկսած, հորինված է այ հանգով:

2. Մատյանի միջնադարյան մեկնությունը պանծանացն բացատրում է պարծանացն բա-
ռով (տե՛ս ձեռ. 5650, էջ 357ա): Հետաքրքիր է, որ այս տողում Xω գրչագրերը պանծանացն
բառի փոխ ունեն պարծանացն (տե՛ս տողի տարընթերցվածները): Ըստ երևույթին նրանցում
այդ տարբերությունն առաջացել է Մատյանի մեկնության ազդեցությամբ:

3. Թէ հայրենի ծոցո՞յն հարազատ, յորմէ ընկեցայ—այս տողը մեկնելու նպատակով
Հ. Նալյանը կատարում է հետևյալ համեմատությունը. արծիվն իր ձագերին ճանաչում է փոր-
ձով. եթե նրանք անթարթ աչքերով դեպի արև են նայում, ուրեմն նրա ձագերն են, իսկ եթե
ոչ՝ խորթ են. այս դեպքում գցում է բնից: Նարեկացին խոստովանում է, որ ինքը, իբրև մերժ-
ված, չի կարող դիմել հայրական բունը, որովհետև իր ծնողին խորթ է («Գիրք մեկնութեան»,
էջ 161):

4. Պ$_4$ տպագիրը և Մատյանի հետագա հրատարակությունների մեծ մասն ունեն մարմինս:
Մեր օգտագործած ձեռագրերն այս տարընթերցվածը չեն տալիս: Վենետիկի 1840 թ. հրատա-
րակությունը, հետևելով ձեռագրերին և հին տպագիրներին, ուղղել է որոշյալ առումով՝ զմար-
մինս, որին և այնուհետև հետևել են մյուս տպագիրները:

5. Այս տողում բոլոր տպագիրներն ինձ բառի փոխ ունեն ինչ, ինչպես տալիս են մի քանի
գրչագրեր (տե՛ս տողի տարընթերցվածները): Ձեռագրերում (հատկապես երկաթագրից օրի-
նակված բոլորգիր գրչագրերում) Ձ և Չ տառերի շփոթությունը սովորական գրչական երևույթ
է. օրինակ՝ այս գլխի տ. 28-ում ինձ ընթերցվածի փոխ F ձեռագիրն ունի ինչ և այլն: Նույն
սխալը տեղ է գտել նաև տ. 35-ում, որտեղ ևս բնագրայինը ինձ-ն է, ինչպես տալիս են A օրի-
նակը և գրչագրերի մեծագույն մասը: Նարեկացին ակնարկում է Ղևտ., ԺԳ գլխում բազմիցս
կրկնված օրենքը բորոտությամբ տառապողին, իբրև պղծի, մարդկանցից հեռացնելու և արտա-
քո բնակեցնելու մասին: Ըստ բանաստեղծի, այդ ախտի «փայլունակ, տգեղ, լնուցեալ» պալա-
րը, իբրև կրկնակի (հոգու և մարմնի) անմաքրություն, պահվել-հասել է իրեն (ի՛նձ պա-
հեալ): Մատյանի միջնադարյան մեկնությունը ևս ինձ ունի (տե՛ս ձեռ. 5650, էջ 358ա): Վեր-
ջապես, այդտեղ ինձ ընթերցվածի ճիշտ լինելն ապացուցվում է նրան հաջորդող տողերով, ուր
նույնպես Նարեկացին թվարկում է իրեն բաժին հասած դատությունները.

Պարծանացն նշոյլ ամենեւին ինձ չիջաւ *(տ. 37)*,
Թոյնք մահուն ինձ արծարծեցաւ *(տ. 42)*,
Սպանեալն կրկին ինձ կենդանացաւ *(տ. 43)*։

6. Լաստին դադարք վիմաւք խցաւ—*այսինքն՝ նավահանգիստը վեմ քարերով խցանվեց, փակվեց։ Ըստ Հ. Նալյանի, լաստը նավն է, որ այլաբանորեն նշանակում է մարդ («Գիրք մեկնութեան», էջ 166)։ Նավի ու նավահանգստի մասին այս հիշատակությունը կարծես յուրովի նախապատրաստում է հաջորդ գլխի բովանդակությունը՝ կյանքի ալեկոծ ծովում հոգու նավաբեկության նկարագրությունը։*

7. *Ինչպես այս, այնպես էլ տ. 38-ում հանգ կազմող բառը նույնն է՝* ստուերացաւ. *Նարեկացին, ինչպես ասել ենք, ինքնակրկնում թույլ չի տալիս, եթե դա չի հետապնդում գեղարվեստական նպատակ։ Թեկուզև այս դեպքում մի տողը մյուսից բաժանված է ութ տողանոց հատվածով, սակայն կարելի է ենթադրել, որ նրանցից մեկում այլ բառ է եղել, հնչումով* ստուերացաւ *բային մոտ, բայց տեղի է տվել այժմ բոլոր ձեռագրերի ու տպագիրների համար ընդհանուր դարձած գրչական սխալի։ Միայն մեր* Ծ *օրինակը երկու տողում էլ ունի* ստուարացաւ, *որն իր իմաստով անհարիր է և չի համապատասխանում այդ տողերի մտքի կապակցությանը։*

8. *Հմմտ. Եփես., Դ. 30։*

9. *Հմմտ. Թիւք, Ի, 1—11։*

10. *Ինչպես Գ. Ավետիքյանն է նկատել, այս գլխի վերջին հատվածը շնչում է լուսավոր լավատեսությամբ։ Տանջանքից, տրտմությունից ու ծայր հուսահատությունից Նարեկացին կարծես մեկեն անցում է կատարում և փարվում խորհրդապաշտի իր փրկության գաղափարին.*

Զի քեւ վերստին հաշտեալ յիս դարձցի...
Շնչոյս ողջունելի կապեալ ընդ շնորհիդ՝
Ի քեզ միանալ անբաժանելի։

Գլխի նման ավարտն անսպասելի չի կարող համարվել, որովհետև բանաստեղծն իր աղաչանք-աղերսը վարում է «երկոքումբ աչօք». մինչ մի աչքը պահում է իր «մեղքերի» վրա՝ ապաշխարելով զղջում ու ինքնաձաղկում, մյուսը՝ հույսի ու գթության վրա (հմմտ. «Նարեկլուծ», էջ 111)։

ԲԱՆ ԻԵ

1. ...փոխեալ զեղանակ բանիս, / Այլ ոչ զեղկութիւն աղէտիս—*այսինքն՝ փոխում եմ խոսքիս եղանակը կամ ձևը և ոչ թե ողբն ու եղուկ տալը։*

Պ$_4$ *և Մատյանի հետագա բոլոր հրատարակությունները, բացի Պոլսի 1782 և 1789 թթ. տպագիրներից, 5-րդ տողից հետո ունեն Բ հատվածաբաժանում։ Մեր* A *օրինակը և բազմաթիվ այլ գրչագրեր 6-րդ տողը չունեն որպես նոր պարբերության սկիզբ, այլ դիտում են իբրև նախորդ տողի շարունակություն։ Հետևելով ձեռագրական ավանդույթին, ինչպես նաև հնագույն տպագիրներին՝ այդտեղ վերացնում ենք հատվածաբաժանումը։*

2. *Այս գլխում հոգու նավաբեկության ընդարձակ հատվածը (6—53 տողեր) լոկ ընդհ. աղերս ունի պարսից հեների կողմից Երուսաղեմի և Սամարիայի կործանման մասին Եսայի մարգարեի ասածի հետ, ավելի ճիշտ՝ այդ կապը Եսայու սոսկ մեկ նախադասության հետ է, այն է՝ «Աղաղակ արասցէ վասն նոցա յաւուր յայնմիկ, իբրև զձայն ծովու ամբոխելոյ ալեօք» (Ե, 30)։ Նարեկացին ստեղծել է հողմերից ամբոխված երկրային ծովում կատաղությամբ բախ-*

վող ալիքներից խորտակվող նավի պատկերը, որը գրական որևէ սկզբնաղբյուր չունի։ Դա այլաբանական նկարագրություն է, որտեղ ծովը խորհրդանշում է կյանքը, նավը՝ բանաստեղծի մարմինը, իսկ նավավարը («նաւուղիղ»)՝ նրա հոգին, որն իր նավի կործանումը տեսնելով՝ «ձեռն ի ծնօտի եդեալ՝ արտասուաց գետս խշուցանէ»։ Այդ նկարագրությունը, ինչպես նշել ենք, հեռավոր մի ակնարկով արդեն նախապատրաստվում է նախորդ գլխում (տե՛ս ԻԴ գլխի 6-րդ ծանոթագրությունը) և, մանավանդ, Գ գլխի 134—136-րդ տողերով.

Երբ անաւրէնութեան մրրիկ խորտակիչ ճողմոյ յանկարծ բախեսցէ
Զճաստուածս մարմնոյ շինուածոյ մարդոյ յերկրային ծովու,
Հանդարտեսցի՛ անդրէն՝ ղեկաւ այս բեւոց ի քեզ պատկանեալ։

ԻԵ գլուխն այս հատվածի բանաստեղծական շքեղ ընդարձակումն է։ Նավը կազմող մասները, դրանց իրերահաջորդ խզումն ու բաժանումը, բեկումն ու գալարումը, պատառոտումն ու քայքայումը, ոստումն ու խոնարհումը, ընկղմումն ու սուզումը այնպիսի մանրակրկիտությամբ, ճշգրտությամբ և անկման տրամաբանական աստիճանավորումներով են պատկերված, որ Նարեկացու իմացությունն ու երևակայության ուժը զարմանք են պատճառում։ Բանաստեղծը թվում է նավի բաղկացուցիչներ, որոնք ձկնակյացի անձուկ խցի մեջ ամփոփված Նարեկա վանականը երբեք չէր կարող իմանալ։ Դեղարվեստական այդ անթերի նկարագրության հետ թերևս կարող է մրցել միայն սայլերի պատկերը նրա նշանավոր «Տաղ Յարութեան» երգում։ Այդ հանգամանքը հուշում է, որ Նարեկացին հայրենի աշխարհի կենցաղից ու առօրյայից կտրված չի եղել։ Մատյանի պատկերային հենքում իրեն ուժեղ զգացնել է տալիս երկրագործական կյանքի տարրերը, նրա բնարերգության բարձր ու վեհ ոլորտն է թափանցում կենդանի կյանքի փիլիսոփայությունը։

3. ...առ խարոց փոքր միջոցին—*նկատի ունի այն ժամը, որն ընկած է հանգստի (խաղաղության) և նրան հաջորդող տառապանքի միջև («ի մէջ հանգստեանն եւ աշխատութեանն»). Այլ կերպ՝ երբ դեռ անդորր է, չի սկսվել ալեկոծությունը, բայց գալիք փորձանքի սպասման կասկածը սողոսկել է մարդու հոգին («դոյզն կասկած արկածից ի միտ բերելով»)։ Ըստ Գ. Ավետիքյանի, «փոքր միջոցը» միջնադարյան ըմբռնումով կարելի է հասկանալ նաև այն ժամանակամիջոցը, որն ընկած է մարդու «անախտ մանկության» և հասունացման միջև, երբ դեռ մարմնի մեջ նոր են խլրտալու «ախտական ցանկությունները»,—կամ որն ընկած է «ի մէջ աշխատութեան աստի կենաց և հանգստեան հանդերձելոյն», այսինքն՝ այս կյանքի տառապանքների և «հանդերձյալ կյանքի» հանգստի միջև («Նարեկլուծ», էջ 115, ծնթ. 4)։*

4. Երեքալեանն դիմակցութեամբ—*այսինքն՝ եռակուտակ ալիքների բախումով։ Հ. Նալյանը կարծում է, թե Նարեկացու բնագրում սկզբնապես եղել է* չորեքալեանն, *և հետագա գրիչներն են սխալվել ու փոխել* երեքալեանն *(«Գիրք մեկնութեան», էջ 169)։ Այդ հիմնավորելու համար նա Նարեկացու տողը փորձում է կապել Դանիելի մարգարեության մեջ ասվածի հետ. «... և ահա չորք հողմք երկնից բախէին զծով մեծ. և չորք գազանք մեծամեծք ելանէին ի ծովէ անտի՝ այլակերպք միմեանց» (Է, 2—3)։ Մեր ձեռագրերից ոչ մեկը, նաև ոչ մի տպագիր չի տալիս* չորեքալեանն. *Նալյանի այդ առաջարկը հետևանք է այն բանի, որ Մատյանի յուրաքանչյուր «երկրային», ուղղակի պատկերի մեջ նա փորձել է տեսնել այլաբանություն՝ հոգևոր ներքին իմաստ, կրոնական խորհրդանիշ։*

5. Թեւոցն ձեռնարկութին—*Մատյանի միջնադարյան լուծմունքը հասկանում է նավի թիակները (ձեռ. 5650, էջ 358բ)։ Նույն բացատրությունն է տալիս նաև Հ. Նալյանը՝* թև-թիակունքը *դիտելով որպես մարդու գործնական առաքինությունների խորհրդանիշ, որոնք «ընթացուցանեն զնաւակ անձանց մերոց» («Գիրք մեկնութեան», էջ 169—170)։ Ըստ Գ. Ավետիքյանի, թևերը, ավելի ճիշտ, պետք է հասկանալ առագաստի փայտերի՝ խոտորնակ ձողերի իմաստով, որոնք,*

ինչպես ձեռքեր, պահում են նավի հողմուռույց առագաստները («Նարեկլուծ», էջ 116, ծնթ. 6)։

6. Կայմն—Ավետիքյանը համարում է առագաստանավի կենտրոնական բարձր գերանը (նույն տեղում, ծնթ. 7)։ Նալյանը մերթ, հետևելով միջնադարյան լուծմունքին, հասկանում է գերանի վրայի խոտորնակ փայտերը, մերթ էլ, ինչպես Ավետիքյանը, նավի միջին մեծ սյունը, որին խոտորնակներով կապվում է առագաստը («առագաստին թռչարան»)։ Հոգևոր առումով կայմը նրանք համարում են հույսի խորհրդանիշ։ Միջնադարյան մեկնիչը Մատյանի 23—44 տողերում նավի հիշատակվող մասերին տալիս է կոնկրետ, առարկայական բառաբացատրություններ, Նալյանը և Ավետիքյանը, նյութականի հետ միասին, ներկայացնում են նաև նրանց այլաբանական իմաստը։ Առագաստանավի յուրաքանչյուր բաղադրամասի անվանում, ըստ նրանց, խորհրդանշում է բարոյական և հոգևոր որևէ գաղափար. այսպես՝ շինուածոյն շուք-ը նավի ներկվածքն ու զարդարանքն է և, միաժամանակ, առաքինություններն ու իմաստությունը, առասանք-ը՝ պարաններն ու հոգու արիությունը կամ առաջնորդների խրատները, տեսարան դիտակի-ն՝ նավի դիտանոցը և մտքի արթնությունը, ապաւանդակին պարան-ը՝ կայմին կապված թոկը և վարքի կանոնները կամ առաքինության ուժը, ապսփնոյթին խարսխին-ը՝ խարսխի հաստ պարանը և համբերությունը, լուծք-ը՝ նավի գլխի կողմում իրար միացող երկու գերանները և հոգին ու մարմինը, կապարանք-ը՝ նավերի տախտակաշարը և մարդու թիկունքն ու կուրծքը պատող ջլերն ու կողերը և այլն (տե՛ս «Գիրք մեկնութեան», էջ 170—172, «Նարեկլուծ», էջ 116—118, ծնթ. 8—24)։

7. Ենթական և ստորոգյալը թվով չեն համաձայնվել (առասանք՝ հոգնակի, խզեցաւ՝ եզակի)։ Այդ անհամաձայնությունը երևան է գալիս նաև 37 (կապարանք ... յաւշատեցաւ), 39 (խելք... հատանեաւ), 40-րդ (պաղպաջունք... բարձաւ) տողերում։ Չնայած հազվադեպ ձեռագրեր, հատկապես G_1-ը, ինչպես նաև $Պ_{2-3}$ տպագիրները (և սրանց արտատպությունները) այդ դեպքերում ստորոգյալն ունեն հոգնակի թվով, բայց դրանք կարելի է համարել պատահական, հետագա միջամտության արդյունք (G_1-ը, ինչպես նշել ենք, օրինակված է Մատյանի XVIII դարի տպագիրներից որևէ մեկից, հավանաբար $Պ_2$-ից)։ Երևում է, որ Նարեկացին ինքը հանգակազմ բայաձևերը դրել է եզակի թվով, որովհետև նախ՝ նրանց ենթակաները, իբրև առագաստանավի մասեր (առասանք, կապարանք, խելք, պաղպաջունք), հոգնակի ձևով կարող են ընկալվել եզակի նշանակությամբ, և ապա՝ բայերի անցյալ կատարյալի կրավորաձև եզակի երրորդ դեմքի կիրառումը հեղինակին հնարավորություն է տվել պահպանել աւ հանգը, թեև ամբողջ հատվածում որոշ տողեր ավարտվում են նաև ան հանգով (սուզան, պակասեցան, անջատեցան, քարշեցան և այլն)։ Հանգավորման նպատակով հոգնակի ենթակայի հետ ստորոգյալը եզակի թվով է գործածված նաև ԻԴ գլխի տ. 42-ում՝ «Թոյնք մահուն ինձ արծարծեցաւ»։

8. Այստեղ ևս հեծէ եզակի թվով ստորոգյալն ունի հոգնակի ենթակա՝ նշմարք (տ. 48)։ Գ. Խաչատուրյանը, հակառակ Գ. Ավետիքյանի համոզիչ բացատրության («Նարեկլուծ», էջ 118, ծնթ. 25), հեծէ ստորոգյալի համար ենթակա է դիտել տ. 46-ի նաւուղիղն գոյականը և այդպես էլ թարգմանել՝ նավուղիղն... արցունքի գետ կիջեցնէ և կհեծէ ողորմ քախիծով, իսկ նշմարք-ը համարել է իր կողմից ավելացված տեսնելով հոլովված դերբայի ուղիղ խնդիր-լրացում՝ բեկորները տեսնելով (տե՛ս «Նարեկ. Մատեան ողբերգութեան», էջ 59)։ Ի դեպ, տ. 48-ում միայն Գ. Ավետիքյանի «Նարեկլուծ»-ի բնագիրը մնացուածոցն ընթերցվածն ունի առանց հոդի՝ մնացուածոց (տե՛ս նրա 112 էջը)։ Մեր ձեռագրերը և մյուս տպագիրները չունեն այդ տարբերթերցվածը. հավանաբար տպագրական վրիպակ է։

9. Նկատի ունի Մարիամի և Մարթայի եղբայր Ղազարոսին, որի մեռնելու մասին լսելով, ըստ ավանդության, Հիսուսն արտասվել է և ապա, ի ցույց թերահավատ հրեաների, բացել

տալով գերեզմանի վեմը՝ կենդանացրել քառօրյա մեռած Ղազարոսին (հմմտ. Յովհ., ԺԱ, 33—41)։ Տ. 50—61-ում ևս ակնարկվում է Ղազարոսի հարությունը. բռնելով խորտակված նավի հուսո առասաններից՝ Հիսուսն այն դուրս է բերում խաղաղության նավահանգիստ («յանփոյթն... խաղաղութիւն»)։

10. Հմմտ. Ղուկ., ԺԹ, 41։ Ելաց... Եւ զՅուդաս—Նարեկացին, ըստ Գ. Ավետիքյանի («Նարեկլուծ», էջ 118, ծնթ. 25), թերևս ակնարկում է ավետարանում ասվածը՝ «Բայց վայ մարդոյն այնմիկ, յոյր ձեռս որդին մարդոյ մատնեսցի» (Մատթ., ԻԶ, 24) և կամ մատնության գիշերը Քրիստոսի լացը (Եբր., Ե, 7)։

11. Արտաքսեաց բառի փխ $Պ_1$ տպագիրն ունի տարբեաց, $Պ_{2-3}$-ը՝ տարբերեաց։ Մեր ձեռագրերը չեն տալիս այդ տարընթերցվածները։ Հավանաբար տպագրական ճանապարհով առաջացած սխալներ են։ Հ. Նալյանը, նկատի ունենալով $Պ_2$ տպագիրը (կամ Մատյանի 1736 թ. հրատարակությունը), նշել է. «Իսկ որ տարբերեաց տպեցեալ է, արտաքսեաց պարտի գրել, զի ի գրուածս այնպէս է և է իսկ ճշմարիտ» («Գիրք մեկնութեան», էջ 173)։

12. Հ. Նալյանի կարծիքով, բնագրում այդտեղ ավելի ընդունելի է Մատյանի միջնադարյան մեկնության խարխլեալ ընթերցվածը. «... խաբարեալ բառն ասէ ոչ յարմարի ընթացից բանիս սորոյս» (նույն տեղում, էջ 174)։ Այդ մեկնության հին հրատարակություններում, սակայն, հիշյալ բառն առհասարակ չի վկայակոչվում կամ բացատրվում, իսկ մեր 5650 ձեռագրի օրինակում բառը խարխարեալ է (տե՛ս նրա 359բ էջը)։ Այդուհանդերձ, հակառակ Նալյանի, խաբարեալ բայն իր «եղծված, ավերված, կործանված» իմաստներով բոլորովին էլ անհարիր չէ տողի ընդհանուր կապակցությանը («Արդյոք կարո՞ղ եմ հուսալ բնության հավետ եղծված պատկերը դարձյալ հարդարված տեսնելու»)։ Մեր օգտագործած ձեռագրերից ոչ մեկը, ինչպես և ոչ մի տպագիր չի տալիս խարխլեալ (Գ խմբի գրչագրերից մի քանիսն ունեն խարխալեալ, սակավաթիվ ուրիշ ձեռագրեր՝ խարխարեալ կամ ակնհայտ վրիպակով՝ բարախեալ)։ Հետևելով A օրինակին և գրչագրերի ճնշող մեծամասնությանը՝ բնագրում պահում ենք ընդունված ընթերցվածը՝ խաբարեալ։

13. Տե՛ս Եզեկ., ԼԷ, 1—14։

14. Նկատի ունի Հովնան մարգարեին։

15. Հմմտ. Ղուկ., ԺԵ, 4—7։ Տող 81—84-ը եզրափակում են բայերի անցյալ դերբայի ձևով հանգավորված հատվածը (տ. 62—80)՝ նոր հանգավորումով (ատ հանգ)։ Մատյանն ունի միահանգ բազմաթիվ հատվածներ։ Բայց նշված քառատողը, ԻՋ գլխի հետ միասին, այդ իմաստով ամենաուշագրավն է։ Այդտեղ Նարեկացին տողերը հանգավորում է ոչ թե բայերի միևնույն ժամանակային ձևի (գրկեցայ... մոռացայ, շիջաւ... տրտմեցաւ, ցուցցի... մերժեցի), միևնույն դերբայի (գրաւեալ... արձանացեալ) կամ նույն վերջածանցն ունեցող ածականների (կրթական... թշուառական) կրկնությամբ, այլ բառերի չթեքված, ուղիղ ձևերի միջոցով։ Տողերում հանգակազմ բառերն են առաւատ, արատ, հատ գոյականները և մատ կապը։ Հետաքրքիր է, որ հայ հին բանաստեղծության տաղաչափությանն ու հանգին անդրադարձած մասնագետներն ամենևին չեն նկատել նրանց հանգավորումը և Մատյանում հանգի առկայության մասին խոսելիս գերազանցապես նկատի են ունեցել ԻՋ գլուխը։

16. Տե՛ս Յոբ, ԺԹ, 8։

17. Գ. Ավետիքյանի «Նարեկլուծ»-ի բնագրում բացակայում է սովին բառը, որ տպագրական ճանապարհով առաջացած բացթողում է և ոչ թե արդյունք որոշակի վերաբերմունքի։

18. Հմմտ. Ա Տիմոթ., Ջ, 16։

ԲԱՆ ԻԶ

1. Տուն բառն այստեղ ունի տողի նշանակություն։ Ի նոյն գիր բերեալ զաւարտմունս
տանցն—այսինքն՝ տողերն ավարտելով նույն գրով։ ԻԶ գլխի 21—84 տողերը հորինված են ի
հանգով։ Ըստ Նարեկացու, հանգի շնորհիվ խոսքը համարվում է ողբական եղանակին («ձայ-
նից կողկողանաց») և դառնում ավելի ճմլող ու սրտեր մորմոքող՝ ստիպելով արտասվել։ Նաև,
ինչպես Մատյանի միջնադարյան մեկնիչն է նկատել, «Զամէն տան յետք ի մի գիր աւարտեալ՝
կրկին շուք տայ բանին կարգաց» (ձեռ. 5650, էջ 360ա)։ Բանաստեղծն իրեն պատկերացնում
է իբրև մեկը, որ երգող եղերականների խմբի գլուխ անցած՝ իր վշտակիր հոգին է բացում։
Այդ նկատի ունենալով՝ Տ ձեռագրի գրիչը վերնագրի դիմաց թողել է հետևյալ լուսանցագրու-
թյունը. «Յաղագս լալական եղանակի» (ձեռ. 5707, էջ 27ր), իսկ ր. օրինակի գրիչը, հատուկ
ուշադրություն դարձնելով գլխի շեշտադրությանը, լուսանցքում նշել է. «Զշեշտերն յաղագս եղա-
նակի եդի, որ ոտնաչափն ուղորդ գայ և ի գոյնն, զի լալիք է» (էջ 71ա)։

2. ...ի գլուխս պարու ակմբից դասու—այս կապակցությունը, ինչպես Մատյանի մի շարք
ձեռագրերում, այնպես էլ մեկ-երկու տպագրում ենթարկվել է աղճատման ու փոփոխության։
A և մի քանի այլ գրչագրերում պարու ակմբից բառերը նախապես գրվել են պարուակ ըմպից
(կամ՝ պարու ակըմբից, պարուակ ըմբից) և ապա սրբագրվել պարուակ խմպից (խըմբից,
խմբից)։ Որոշ ձեռագրեր ուղղակի ունեն պարուակ խմպից (կամ՝ պարուական խմպից, պա-
րուական խմբից, պարուականաց խմբից, պարուակ խմբիցն, պարւական խմբից), առանձին
գրչագրեր՝ պարու կանանց խմբից, պարուրակ ըմպից, պարունակ խմպից, պատական խմբից
և այլն։ Այսպիսով, դուրս է մղվել ակմբից ընթերցվածը և նրա տեղը բռնել նրան համանիշ
խմբից բառաձևը, իսկ բառասկզբի ակ-ը պահպանվել է և, միանալով նախորդ պարու բառին,
տվել պարուակ, պարուրակ, պարունակ, պարուական, պարւական, պատական, պարուականաց,
պարու կանանց աղավաղ ընթերցվածները։ Տողի այդ խայտաբղետ պատկերը, ինչպես նշեցինք,
իր մասնակի արտահայտությունն է գտել նաև Մատյանի հրատարակություններում։ $Պ_1$-ն ունի
պարուակն խմբից, ինչպես Վատիկանի Առաքելական գրադարանի հայկական հավաքածուի թիվ
4 ձեռագիրը (էջ 82բ)։ Բուենոս Այրեսի տպագիրը (1948 թ.) չունի պարու ընթերցվածը (թեև
հանդիպադիր աշխարհաբար թարգմանության մեջ այդ բառը հանդես է գալիս հաջորդ բառի
հետ միացած՝ պարակումբներու)։ $Պ_4$-ի գլխավոր տարբերությունների ցանկում բերված է նաև
պարու այնր խմբից (փխ պարու ակմբից դասու այնր) ընթերցումը (էջ 391), որը մեր օգտա-
գործած ձեռագրերը չունեն։

Հ. Նալյանի կարծիքով, ավելի ճիշտ է ու Նարեկացիական պարուակ խմբից, քան պարու
ակմբից կապակցությունը. «Թէպէտ այսպէս տպեցեալ է, բայց սխալ է։ Այլ որպէս գտի ի
ձեռագիրսն, ճշմարիտ է այսպէս գրեալ՝ ի գլուխս պարուակ խմբից» («Գիրք մեկնութեան», էջ
177)։ Անշուշտ, նրան բնագրային է թվացել խմբից, քան ակմբից բառաձևը, որը հայ մատե-
նագրության մեջ համեմատաբար ավելի քիչ գործածություն ունի։ Այդ հիմքով էլ մերժվել է
նաև պարու ընթերցվածը և ընդունելի համարվել պարուակ-ը, որը, իբրև բառ, գրական այլ
աղբյուրով առհասարակ վկայված չէ։ Բայց այս վերջին հանգամանքը ներկա դեպքում վճռա-
կան լինել չի կարող. Նարեկացին ունի հարյուրավոր բառեր, որոնց աղբյուրը միայն իր
ստեղծագործությունն է, այլուր դրանք չեն հանդիպում։ Այստեղ էականը մեզ հետաքրքրող կա-
պակցության անցած գրչական ճանապարհն է։ Ո՞րն է եղել նրա սկզբնական պատկերը, ինչո՞ւ
է այն ենթարկվել այլափոխությունների։ Այդ ուղին մեզ ներկայանում է այսպես. նախնական
պարու ակմբից-ը, ըստ հնչման, գրվել է պարու ակըմբից, որը կարող էր ընկալվել ու ընդ-
օրինակվել նաև այսպիսի բառանջատումով՝ պարուակ ըմբից։ Վերջին բառի մեջ, մ-ից հետո,
ըստ երևույթին միջին հայերենի ազդեցությամբ, գրչագրերում ձայնեղ բ հնչյունը գրվել է ի

պ, ու ստացվել է զուգահեռ պարուակ ըմպից ընթերցումը, իսկ ըմբից (ըմպից)-ը, իբրև անի-
մաստ գրություն, հեշտությամբ կարող էր ուղղվել խմբից (խմպից)։ Հավանաբար այդպես է
վարվել, օրինակ, A ձեռագրի գրիչ Գրիգոր Սկևռացին կամ սրբագրության համար նրա օգ-
տագործած զաղափար օրինակի գրիչը՝ պարզություն մտցնելու նպատակով ըմպից գրությունը
սրբագրելով խմպից։ Վերջին բառը ձեռագրերում կարող էր հանդես գալ նաև որպես ակըմբից
բառի լուսանցային բառաբացատրություն, սակայն շփոթվելով ու ընկալվելով որպես սրբագր-
րում՝ գրիչների ձեռքով մուծվել է բնագիր՝ ակ-ի պահպանմամբ (պարուակ խմբից)։ Այդ շուղ-
ղումն» ու նրա նախնական գրությունը, ինչպես և այլ հանգամանքներ, գրչական աշխարհի
կեռմաններում իրենց հերթին տեղիք են տվել այլ սրբագրումների ու փոփոխությունների,
առնցից մի քանիսը վերևում վկայակոչեցինք տողատակի տարընթերցվածներից, բայց և ձե-
ռագրերի մի մասն էլ պահել է բնագրային նախնական գրության ստույգ պատկերը՝ պարու
ակմբից, ինչպես ուղղել է $Պ_2$ տպագիրը պատրաստող, նշանավոր բանաստեղծ և քերական
Պաղտասար Դպիրը։

3. Թերևս ակնարկում է իր վանական լինելը. ընդունելով կրոնավորի ուխտ ու քահանա-
յական օծում՝ նա պարտավոր էր հրաժարվել աշխարհայինից, սակայն սրտով ու գործով ոչ թե
սատծուն է տրվել, այլ գնացել է երկրային ցանկությունների ետևից. ուրեմն՝ աշխարհի հա-
մար բնավին մեռած չէ, որ աստծու համար կենդանի համարվի։ Նարեկացին իրեն դնում է
պարտիքի ու պարտազանցության սահմանագծում, տարակույսի կետում։

4. Տե՛ս Յայտ., Գ, 15։

5. Տպագիրներից միայն Գ. Ավետիքյանի «Նարեկլուծ»-ի բնագիրը կերպադրուփինf ըն-
թերցվածի փխ ունի կերպագրուփինf, ինչպես տալիս են որոշ գրչագրեր։ Ուղղումը կատարել է
Ավետիքյանն ինքը։ Սակայն անհարկի ենք համարում այն պահել բնագրում, քանի որ նախ՝
հիշյալ երկու բառերը փաստորեն դիտվում են որպես համանիշներ (տե՛ս «Նոր բառգիրք հայ-
կազեան լեզուի», Ա, էջ 1091), և ապա՝ կերպագրուփինf ընթերցվածը հանդիպում է միայն
սահմանափակ թվով ձեռագրերում՝ իբրև գ տառի հետ դ-ի շփոթության արդյունք։

6. Ուf ի մի գիծ սանմանեալ—այստեղ և, ինչպես տ. 4-ում, Նարեկացին դարձյալ ակ-
նարկում է, որ ինքը գլխի շարունակությունը հորինում է հանգավոր չափածոյով. 21—84
տողերը բոլորն էլ ավարտվում են ի հանգով։ Դա Մատյանի ամենաերաժշտական ու ռիթմիկ
հատվածներից մեկն է։ Բոլոր տողերում, սակայն, վանկերի քանակը նույնը չէ. Բ հատվածում,
որը 34 տող է կազմում (տ. 21—55), թեպետ տիրապետողը 14 վանկանի տողերն են (թվով 20),
բայց կան նաև 15 վանկանի (տ. 21, 23—24, 27, 30—31, 33—34, 36—37, 39, 47—48, 50)
և, նույնիսկ, 16 վանկանի (տ. 35) տողեր։ Գ հատվածում (տ. 56—77) տողերի վանկերի քանակը
տատանվում է 13-ից մինչև 20, իսկ Դ հատվածում (տ. 78—84), բացի տ. 83-ից (20 վանկ),
բոլոր տողերն ունեն 18 վանկ։ Այս տվյալները ցույց են տալիս, որ Նարեկացին հետամուտ չի
եղել ամբողջը գրելու միևնույն չափով, նրան չի հետաքրքրել տողերը հավասար թվով վանկերից
բաղկացած լինելու պայմանը (տե՛ս նաև «Նարեկլուծ», էջ 122, ծնթ. 3)։ Նրա նպատակը
գլխավորապես տողերի միահանգությունն է եղել։

Մ. Աբեղյանն այն տեսակետն է հայտնել, որ այս գլխի ողջ հանգավոր մասը հորինված
է «հայրենի» չափով («...բանաստեղծն այս ամբողջ Բանը հորինում է «հայրենի» չափով...».
տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, Գ, Երևան, 1968, էջ 615)։ Իսկապես, ամբողջ հատվածում իրեն
զգացնել է տալիս այդ չափը, իսկ որոշ տողեր ներկայացնում են այդ չափի դասական պատ-
կերը. այսպես՝

Վառեիշ աrfունի զանձուց՝
կըrկնաղառ եւ անրափելի (տ. 23),
Մեղաց եւ մահու զինուf

զգայարան զաղտնեացըս խոցի *(տ. 37)*,
Եւ ոչ ընդունի եւ կամ
նամբարի ի զանձ տէրունի *(տ. 48)*։

Բայց բոլոր 15 վանկանի տողերում այդ չափը հետևողականորեն կիրառված չէ։ Մեր վկայակոչած տողերից վերջինում, օրինակ, ռիթմական միավորներն իսկապես ոչ թե այս տեսքն ունեն՝ 2—3—2 // 3—2—3, ինչպես պահանջում է «հայրենի» չափը, այլ տալիս են յամբ-անապեստյան եռանդամ 15 վանկանի ոտանավորի կառուցվածքը՝ 5—5—5 («Եւ ոչ ընդունի // Եւ կամ ճամբարի // ի զանձ տէրունի»)։ *«Հայրենի» չափը նաև պահանջում է, որ տողում 7-րդ վանկից հետո լինի հաստատուն հատած՝ ռիթմական դադար, որի շնորհիվ առաջանում են 7 և 8 վանկանի կիսատողեր (կամ՝ կարճ տողեր), մինչդեռ, օրինակ, խնդրո առարկա հատվածի 31—32 և 47-րդ տողերում բավական թույլ նկատելի հատածը 10-րդ վանկից հետո է, 34—35-րդ տողերում՝ 6-րդ վանկից հետո, 40 և 50-րդ տողերում՝ 5 և 10-րդ վանկերից հետո և այլն, էլ չենք խոսում 13, 14 և 16—20 վանկանի տողերի մասին, որոնք շեղվում են «հայրենի» չափի վանկաքանակից։ Նարեկացին առհասարակ հայ բանաստեղծության պատմության մեջ այդ չափի առաջին կիրառողն է եղել, ուրեմն և՝ ստեղծողը. բացի Մատյանի առանձին տողերից ու փոքր հատվածներից, այդպես են հորինված նրա «Յարութեան» տաղերից մեկը* («Ես ծայն զաոիծուն ասեմ...») *և նշանավոր «Տաղ Վարդավառի»-ն* («Գոճար վարդըն վառ առեալ...»)։ *Սակայն ԻԶ գլխի 21—84-րդ տողերում գերիշխող չափը հնգավանկ անդամներով կազմված ոտանավորն է, ինչ տիրապետող է և ողջ Մատյանում. տաղաչափական հիմնական օրինաչափությունն այն է, որ հատվածի բոլոր տողերն ավարտվում են յամբ-անապեստյան հնգավանկ բարդ ոտքով* (... մեծաւ ի տուժի, ... զործովfս յիրաւի, ... եւ անբափելի *և այլն), որին սովորաբար նախորդում է մի եռավանկ ոտք, որով և տողերի վերջը գրեթե միշտ նույնանում է «հայրենի» չափով ոտանավորի 8 վանկանի կիսատողի հետ, բայց քանի որ դրանից առաջ, ինչպես նշեցինք, հազվադեպ է հանդես գալիս հատածը, իսկ տողի առաջին կեսի վանկաքանակը հաճախ 7-ից շեղվում է՝ նվազելով-դառնալով 5 կամ 6 վանկ կամ բարձրանալով-հասնելով 8—11, նույնիսկ, 12 վանկի, ուրեմն չենք կարող ասել, որ ամբողջ հատվածը հորինված է «հայրենի» չափով։*

7. Այս տողի դիմաց Բ—Դ հատվածների համար λ (էջ 142) և σ (հետագա ձեռքով, էջ 53բ) ձեռագրերում նշված է. «Ոտանաւոր»։ *Նույնն ունի նաև λ օրինակը՝ բուն գրչի ձեռքով (էջ 142), իսկ Վրաստանի Կ. Կեկելիձեի անվ. հին ձեռագրերի ինստիտուտի № 34 գրչագիրը՝ «Ոտանաւոր է» (էջ 42ա)։*

8. Ակնարկում է ավետարանական առակը ապերախտ և անգութ ծառայի մասին, որը տիրոջը պարտք էր բյուր քանքար և չէր կարողանում վճարել, բայց տերը նրան զիջում է, իսկ ինքը չի ներում իր ծառայակցին, որն իրեն պարտք էր ընդամենը հարյուր դահեկան, և բանտ է դնում։ Տերը, լսելով կատարվածի մասին, պատժում է նրան՝ հանձնելով դահիճների ձեռքը։ Այդպիսով չար ծառան ենթարկվում է կրկնակի դատ ու պատժի՝ տիրոջ հանդեպ՝ ապերախտ, իսկ ծառայակցի նկատմամբ անգութ գտնվելու համար (հմմտ. Մատթ., ԺԸ, 23—24)։

9. Ունկի—*Մատյանի միջնադարյան մեկնությունը հասկանում է հարցի մղեղը, «որ մշնաձև հատն պատեալ ունի» (ձեռ. 5650, էջ 360ա), այսինքն՝ հատիկի պատիճը։ Այդ բացատրությունն է տալիս նաև Հ. Նալյանը՝ բառի ուղիղ ձևը համարելով* ունգ (ունկ)*-ը («Գիրք մեկնութեան», էջ 179)։ Գ. Ավետիքյանն իրավացիորեն այն նույնացնում է հունարեն* օգկիա *(լատ.* ունցիա*)։ բառի հետ և նրա ուղղական ձևը համարում* նուկի*-ն, ինչպես ունեն Մատյանի որոշ ձեռագրեր։* Նուկի *ձևը, ըստ Հ.* Անառյանի, *հայերենին է անցել ասորերենից և նույնանում է* ունկի*-ի հետ։ Որոշ տպագիրներ* ($Պ_4$ *և սրա արտատպությունները)* քանքարոյ *ընթերցվածի փխ ունեն հոգ-*

նակին՝ քանքարոց: *Այսպես ունի նաև Ավետիքյանի «Նարեկլուծ»-ի բնագիրը, թեև ծանոթագրության մեջ ասվում է, որ՝ «ըստ լաւ օրինակաց եղաք* քանքարոյ...» *(էջ 123, ծնթ. 6)։ Մեր ձեռագրերը չեն տալիս* քանքարոց *տարընթերցվածը։*

10. Այլ յեղանակ իրձ ողբականաց սաստատ կճեցի—*այս տողն արժանացել է երեք տարբեր բացատրության։ Միջնադարյան մեկնիչն այդ և հաջորդ տողը հասկանում է ոչ թե խոսքի «յեղանակն», այլ ոչ զյեղանակն», այլ ենթաքի, այլ բովանդակությունը փոխելը՝ «զմիտս բանիս փոխեցի, այլ ոչ զյեղանակն», այսինքն՝ մինչ այդ, նախորդ 8 տողում, Նարեկացին խոսել է քանքարաթաքույցի առակի մասին (հմմտ. Մատթ., ԻԵ, 14—30), իսկ 29-րդ տողով խոսքի բովանդակությունը փոխում է, սակայն հավատարիմ մնալով նախկին ձևին՝ «ի նոյն պայմանի... որ յետըն ամէն ի լինի» (ձեռ. 5650, էջ 360ա—բ)։ Բայց մեկնիչը սխալվում է, քանի որ նախորդ 8 տողում ակնարկ կար նաև բյուր քանքարի պարտապան ծառայի առակի մասին (տե՛ս նախորդ ծնթ.)։ Այնուհետև. այդտեղ «յեղանակ» բառը, Նարեկացու ասածն իսկապես խոսքի եղանակին է վերաբերում և ոչ թե մտքին. «յեղանակ» բառը, ինչպես գիտենք, այդ իմաստով հանդիպում է նաև ԻԵ բանի տ. 4—5-ում (տե՛ս ԻԵ բանի 1-ին ծնթ.)։ Հ. Նալյանը գտնում է, որ* այլ յեղանակ *ասելով Նարեկացին նկատի ունի խոսքի այն «կերպ ու ձևը»՝ եղանակը, որը հատուկ է միայն ամբողջ ԻԶ գլխին, և որով վերջինս տարբերվում է Մատյանի նախորդ բոլոր գլուխներից։ խոսքի այդ եղանակը («կոծ կսկծելի») լալականների ողբն է հիշեցնում և «ոտանաւոր կերպիւ» է («Գիրք մեկնութեան», էջ 180)։ Գ. Ավետիքյանը* այլ *բառը դիտում է ոչ թե* յեղանակ *բառի որոշիչը («տարբեր, զանազան»), ինչպես նախորդներն են հասկացել, այլ համադասական շաղկապ, ըստ այդմ տողը բացատրելով այսպես՝ «բայց ինձ, որ խավար բանտի մեջ եմ՝ անօգնական ու առանց պաշարի, լալականների եղանակն է բախտ վիճակվել» (հմմտ. «Նարեկլուծ», էջ 123, ծնթ. 7)։ Այս բացատրություններից ամենահամոզիչը, մեր կարծիքով, Նալյանինն է։*

11. Անճատական բիւ խորհրդական երկեակ տասնեկի—*այս տողը ևս երեք զանազան մեկնությունների տեղիք է տվել։ Միջնադարյան լուծմունքը* երկեակ տասնեակ*-ն ընկալել է իբրև* երկոտասան *(տասներկու)՝ գտնելով, որ դրանով ակնարկվում են 21—32-րդ տողերը, որոնց գումարը կազմում է իսկապես 12։ Ըստ այդմ* անճատական *բառն էլ հասկացել է չբաժանվելու, չզանազանվելու, չտարբերվելու իմաստով, այսինքն՝ այդ 12 տողերն իրարից չեն տարբերվում չափով՝ «ի չափուն» (ձեռ. 5650, էջ 360բ), չնայած մեկնիչն այստեղ սխալվում է. այդ 12 տողերից վեցը՝ 15 վանկանի, իսկ մնացած վեցը՝ 14 վանկանի են (տ. 22, 25—26, 28—29, 32), միմյանցից տարբերվում են։* Անճատական *բառի ուրեմն վանկաքանակով իրար հավասար չեն, Մյուս՝* խորհրդական *բառը «երկոտասան» իմաստին վերագրելով՝ գտնում է, որ 12-ը խորհրդավոր թիվ է, որովհետև խորհրդանշում է տարվա ամիսների, կենդանակերպերի, մարդու անդամների քանակը և այլն (նույն տեղում)։ այդ բացատրությունն ընդունելի չէ։*

Հ. Նալյանը տողը մեկնում է ըստ Մատյանի հին տպագիրների. իսկ ինչպես $Պ_1$*-ում, այնպես էլ* $Պ_2$*-ում, որից հատկապես օգտված պետք է լինի նա,* երկեակ *բառի փխ կա* երրեակ *ընթերցվածը։ Ըստ Նալյանի,* երրեակ տասնեկի *նշանակում է «տասներեք», որի տակ պետք է հասկանալ ոչ թե 21—32-րդ տողերը, որոնց գումարը տասներկու է, այլ յուրաքանչյուր տողի վանկաքանակը։ Ապա սխալմամբ գրում է, որ «իւրաքանչիւր տող երեքտասան վանկ է», հետևապես* անճատական *բառն էլ այդ դեպքում նշանակում է «չբաժանվող», քանի որ 13-ը, իբրև կենտ թիվ, չի բաժանվում հավասար մասերի («Գիրք մեկնութեան, էջ 180)։ Սակայն Նալյանն իր բացատրությունից գոհ չի մնում՝ նկատելով, որ հին լուծմունքում և Մատյանի մի հին ձեռագրում իրեն հետաքրքրող ընթերցվածը* երկեակ *է, որը և նա ավելի ճիշտ է համարում՝ գտնելով, որ լուծմունքի բացատրությունն ավելի ընդունելի է։*

Տողի հիմնավոր ու խոր մեկնությունը տվել է Գ. Ավետիքյանը։ Նա, հակառակ իր նախորդների, երկեակ տասնեակ *հասկանում է ոչ թե 12-ի, այլ 20-ի իմաստով։ Դրանով, ըստ,*

նրա, ակնարկվում է տողերի հանգը՝ ի, որը հայոց այբուբենում ունի 20 թվային արժեք։ Ի-ն «անհատական» է անվանվում, որովհետև լինելով մի պարզ հնչյուն՝ այլևս չի բաժանվում ձայնային տարրերի, նաև «խորհրդական» է կոչվում, քանի որ Նարեկացին փոխաբերաբար նկատի ունի ավետարանական առակը քանքարը կամ մնասը շահեցնելու մասին. նախապես ընտացած տաս արծաթյա մնասը ծառան շահեցնում, դարձնում է քսան, որը տերը շնորհում է նրան (Ղուկ., ԺԹ, 12—26, նաև՝ Մատթ., ԻԵ, 14—30)։ Մատթեոսի ավետարանում այդ դրամն անվանվում է քանքար, իսկ Ղուկասի մոտ՝ մնաս։ Մատյանում կիրառված է առաջին բառը։ Ուրեմն, Նարեկացին տիրոջ նկատմամբ իրեն քսան քանքարի պարտապան է համարում, առածն ու անճկիրը միասին կորցնող («Նարեկլուծ», էջ 123—124, ծնթ. 8)։

12. Այս տողի փոյուփին բնուբեանս կապակցության մեջ Հայկազյան բառարանը «Յօշատեմ» բառահոդվածում վկայակոչված նարեկացիական տողում ունի զգայուփինս բնուբեանս («Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Բ, էջ 381)։ Մեզ հայտնի ոչ մի տպագիր կամ ձեռագիր չի տալիս այդ ընթերցումը։ Հավանաբար տպագրական վրիպակ է։

13. Միայն $Պ_1$-ը և Բուենոս Այրեսի հրատարակությունը ճայցուած ընթերցվածի փխ ունեն ճայեցուած։ Մյուս բոլոր տպագիրները և ձեռագրերն անխտիր տալիս են ճայցուած (V օրինակն ունի հոդով՝ ճայցուածս)։ Հայեցուած բառը հավանորեն տպագրական ճանապարհով առաջացած սխալ է։ Մատյանի թարգմանիչները, սկսած Գ. Խաչատուրյանից, նախապատվությունը տվել են սխալին և ոչ թե ձեռագրերի ընձեռած ճիշտ ընթերցվածին. ըստ այդմ Գ. Խաչատուրյանը թարգմանել է նայվածքս («Նարեկ. Մատեան ողբերգութեան», էջ 62), իսկ Մ. Խերանյանը («Մատյան ողբերգության», էջ 110) և Վ. Գևորգյանը («Մատյան ողբերգության. Տաղեր», էջ 154), հետևելով Տրապիզոնիի բնագրին՝ ճայացքս։ Մ. Գոչունյանը և Թ. Գուշակյանը խուսափել են սխալից. առաջինը պահել է բնագրի ճայցված բառը նույնությամբ («Աշխարհաբար Նարեկ», էջ 125), իսկ երկրորդը թարգմանել խնդրվածք համանիշով («Նարեկ աղոթամատյան», էջ 78)։

14. Այս և հաջորդ չորս տողում (տ. 51—55) Նարեկացին դիմում է աստվածամորը («պաղատիմ մարդ Յիսուսի»), չնայած ԻԶ բանը, ինչպես և Մատյանի մյուս գլուխները (բացի ՂԲ—ՂԳ-ից), վերնագրված է «Ի խորոց սրտից խաւսք ընդ աստուծոյ»։ Դրա մեջ չի կարելի անճշտություն տեսնել. Նարեկացին, այդտեղ մի պահ իր խոսքն ուղղելով տիրամորը, սակայն դրանից առաջ և հետո, գլխի մնացած մասում, իր հանդեպ ունի աստծուն, վերինի ահաղդեցիկ դիմապատկերն է տեսնում («Անճարկուփին դիմաց պատկերի վերնոյն տեսանի». տ. 43), իր արցունքների պտուղը մատուցում է բարի շնորհատուին (տ. 57)։ «Ի խորոց սրտից խաւսք ընդ աստուծոյ» են վերնագրված նաև ՀԲ բանը, որի առաջին հատվածն ուղղված է միանձանց և կրոնաստանների աշակերտներին, և, մանավանդ, Ձ բանը, որն ամբողջությամբ բանաստեղծի սրտահույզ գովեստը, խոստովանությունն ու աղերսն է աստվածածնին։

ԻԶ գլխի 51—55-րդ տողերը շատ հետաքրքիր են աստվածամոր կերպարի նարեկացիական ըմբռնման տեսակետից։ Բանաստեղծը նրան անվանում է փրկանակ կենաց. դրանով, թվում է, նրան հակադրում է նախամայր Եվային, որին Ադամը կոչել է կյանք, «զի նա է մայր ամենայն կենդանեաց» (տե՛ս Ծնունդք, Գ, 20), բայց Եվան, ըստ աստվածաշնչյան ավանդության, ճաշակելով արգելված պտուղը, դարձել է «մայր ամենայն մահկանացուաց» (հմմտ. «Գիրք մեկնութեան», էջ 183)։ Իսկ ահա Մարիամը, որպես ծնող փրկչի, հակառակ Եվայի՝ կոչվել է «մայր ամենայն կենդանեաց» (նույն տեղում), որից և նրան Նարեկացու տված անվանումը՝ փրկանակ կենաց։ Դա հիշեցնում է Զ գլխի սքանչելի տողերը.

Անա կաթիլ մի կաթին բուղ կուսուբեան,
Յանձն իմ անձրեւաւ, կենաց ինձ գաւրէ (տ. 68—69)։

Բայց ուշադրության արժանի է Նարեկացու վերաբերմունքը աստվածամոր նկատմամբ. բանաստեղծը նրան մատուցում է «խնկոց» և «անուշից իւղոց» բուրմունք՝ կարծես հիշեցնելով, որ նրան, իբրև կնոջ, հարմար ընծան քաղցրաբույր օծանելիքն է։ Նարեկացին իր օրհնության ձայնն է հղում նրան և պաղատում՝ «զղջմա ի յերկիր եդեալ», այսինքն՝ երկրպագելով, իսկ տիրամայրը ի վերջո ընդամենը սուրբ է և ոչ աստված. նրան, միջնադարյան աստվածաբանության համաձայն, պատշաճ չէ երկրպագելով պաշտելը, խունկ ու զմուռս (յուղ) ծխելը (հմմտ. «Նարեկլուծ», էջ 125, ծնթ. 16). նա, ինչպես Նալյանն է գրել, «ամենայն պատուոյ արժանի է զկնի աստուծոյ, սակայն աստուածպաշտական երկրպագութեամբ ոչ է պաշտելի... ապա թէ ոչ՝ լինի կռապաշտութիւն...» («Գիրք մեկնութեան», էջ 182)։ Նարեկացին կարծես թե աստվածացրել է տիրամորը՝ անցնելով թույլատրելիի սահմանը։

15. Արդ, յասացեալ ողբոցս ճիւռուած այլ մասն յանելի—այս տողը ցույց է տալիս, որ Նարեկացին Մատյանի ամեն մի գլուխ հորինել է նյութի, շարադրանքի ներքին բաժանման, այսինքն՝ հատվածաբաժանման, հստակ ըմբռնումով, բայց եթե գլուխները համարակալել է, ապա հատվածները դիտել է իբրև նոր մաս, նոր պարբերություն՝ առանց համարակալման։ Ինչպես գիտենք, հատվածների համարակալումը տպագիրների առանձնահատկությունն է և գալիս է $Պ_4$ հրատարակությունից։ Մեր ձեռագրերը և մյուս բոլոր տպագիրները չեն տալիս այդ տարընթերցվածը։ Ըստ երևույթին տպագրական վրիպակ է։

16. Գ. Ավետիքյանի «Նարեկլուծ»-ի բնագիրն ունի տաւակուսանացն (էջ 121)։

17. Բազմաճառուած էուփին բնուբեանս, ներճակք միմեանց ի պատերազմի—նկատի ունի իր մարդկային բնությունը, որը, ըստ միջնադարյան ըմբռնման, ինչպես մյուս գոյացությունները, կազմված է չորս սկզբնական տարրերից՝ հրից, օդից, ջրից և հողից (հմմտ. նաև ԶԶ գլխի 11—16 և 27—35 տողերի հետ)։ Չորս տարրերի մասին փիլիսոփայական ուսմունքը ստեղծվել է հին Հունաստանում՝ Էմպեդոկլի (մ. թ. ա. V դ.) ու նրա հետևորդների կողմից և, ըստ քրիստոնեական աշխարհայացքի, վերախմաստավորվելով, զարգացել նաև միջնադարում։ Այն իր արտահայտությունն է գտել և հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ՝ սկսած Եզնիկից ու Եղիշեից մինչև Գրիգոր Տաթևացի և ուշ միջնադար՝ իր ուժեղ հետքը թողնելով հայ բանաստեղծության վրա։ Չորս տարրերից յուրաքանչյուրը (Եզնիկը դրանք անվանում է հյուլի, նյութ կամ բնություն), այդ ուսմունքի համաձայն, կյանքի կոչվելով արարչից, օժտված է երկու այնպիսի ներհակ հատկանիշներով (հուրը չոր է և ջերմ, օդը՝ ջերմ և խոնավ, ջուրը՝ խոնավ և ցուրտ, հողը՝ ցուրտ և չոր), որոնցով հակադրության մեջ է մտնում և կամ միավորվում, հաշտվում մյուսի հետ՝ հաստատելով, կարծես, սիրո և ատելության խորհուրդը։ Այդ «թշնամական» ու «բարեկամական» կապից էլ արարչի կամքով գոյանում է բազմազան աշխարհը՝ բոլոր գոյացությունները. «...նախ զչորս հիւթսն մեկնեալս արարեալ, ապա նոքօք յօդեաց զամենայն»,—գրում է Եզնիկը («Եղծ աղանդոց», Թիֆլիս, 1914, էջ 154). «...քանզի ամէնիմաստ արարիչն արարածոց, հոգ խնամոյ տարեալ, յառաջագոյն անմահս հաստատեաց զբնութիւն չորից նիւթոցս»,—Եզնիկին հետևելով՝ գրում է Եղիշեն («Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», աշխատասիրությամբ՝ Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1957, էջ 174—175)։

Չորս տարրերը միջնադարի հայ իմաստասերները բնութագրում են այսպես՝ «թշնամիք անհաշտելիք և սիրելիք անքակտելիք»։ Նարեկացին, իր նախնի հայ իմաստասերների այդ տեսությանը հետևելով, ահա, ստեղծել է իր բազմահատված (այսինքն՝ բազմատարր, քառատարր) մարմնի էության մասին գեղեցիկ պատկերը։ Բանաստեղծի բնությունը «ամենայնի կայ ի վտանգի» (տ. 73), որովհետև այն կազմող տարրերը, որոնք «Ներճակք միմեանց ի պատերազմի»՝ դարձել են դավաճան ու անհաշտելի («Հարազատաց դաւաճանութիւն անճաշտելի ի կոտորածի»—տ. 74), և նա, քայքայված ու թաղված «զարշութեան տղմի» մեջ, իրեն զգում է

«ո՛չ մեռեալ և ո՛չ կենդանի» (տ. 75)։ Այս հատվածը մեկնելիս՝ միջնադարյան լուծմունքը (ձեռ. 5650, էջ 361 ա—բ) և Հ. Նալյանը նշում են, որ Նարեկացին նկատի ունի չորս տարրերը, ընդ որում Նալյանը հղում է հին լուծմունքի ավելի ընդարձակ բացատրությունը («Գիրք մեկնութեան», էջ 186), իսկ Գ. Ավետիքյանը ավելացնում է նաև հոգին ու մարմինը («Նարեկլուծ», էջ 125, ծնթ. 23)։ Բայց Նարեկացու բազմանիստուած բառը ցույց է տալիս, որ այստեղ խոսքը ոչ թե ընդամենը երկու, այլ ավելի ուժերի հակադիր պայքարի մասին է։

18. Դ հատվածը հորինված է ոչ թե Նարեկացու, այլ Մատյանի ԻԶ գլուխն ասողների կամ ընթերցողների անունից։ Նրա մեջ արտահայտված է աստծուն ուղղված նրանց խնդրանքը՝ բանաստեղծին, «որ զայս բան տպաւորեաց», երանելիների պսակին արժանացնել, անարատներին հաղորդակից դարձնել և այլն։ Կարելի է կարծել, որ մաղթողական բնույթի այդ հատվածը բնագրային չէ, ավելացված է մեկ ուրիշի ձեռքով՝ ի հիշատակ Նարեկացու։ Այդ առումով էլ դեռևս միջնադարում նրա վրա հատուկ ուշադրություն է դարձրել հին լուծմունքի հեղինակը, որը գրել է. «Զայս մեզ ուսուցանէ, զի մեք վասն նորա զայս արասցուք, թէ նոյն ինքն, որ զայս բանս աղօթից մեզ ասաց, ընդ սրբոցն պսակեսցի. և այլ տունքդ ըստ կարգի նոյն ոճով է» (ձեռ. 5650, էջ 361բ)։ Ինչպես տեսնում ենք, նա չի կասկածել, որ սույն գլխի 78—84 տողերը, որոնք ավարտվում են ի հանգով, Նարեկացունն են, միայն թե նա ակնարկում է այն հանգամանքը, որ նրանցում բանաստեղծի ոճը, այսինքն՝ խոսքի եղանակը, տարբեր է գլխի նախորդ մասից։ Նույնպիսի մի հատված էլ նա մատնացույց է անում ԻԸ գլխում, երբ մեկնում է վերջինիս 109-րդ տողը. «Որպէս ԻԶ ճառսն վասն իւր ասաց աղօթել, նոյնպէս և աստ...» (նույն տեղում, էջ 366ա)։

Հետևելով միջնադարյան մեկնիչին, ինչպես ԻԸ, այնպես էլ ԻԶ գլխի մեջ հետաքրքրող հատվածների նկատմամբ նույն վերաբերմունքն է հանդես բերել նաև Հ. Նալյանը. «Սուրբ վարդապետս բերանով ամենից զայս աղօթս ընթերցողաց վասն իւր աղօթել տայ...»,—գրում է նա («Գիրք մեկնութեան», էջ 186)։ Ասենք նաև, որ Մատյանի որոշ թարգմանիչներ (Մ. Խերանյան, Վ. Գևորգյան, Ն. Գրեբնև) հատվածը բաց են թողել։

Գ. Ավետիքյանը, անշուշտ, ծանոթ լինելով միջնադարյան մեկնիչի ու Նալյանի հետաքրքիր դիտումին, ինքը ևս հակված է կարծելու, որ գլխի այդ հատվածը Նարեկացին ինքն է հորինել՝ դիմելով արտահայտության մի այլ հնարանքի՝ «ի բերան աղօթողացն դնէ աղաչել վասն իւր» («Նարեկլուծ», էջ 125, ծնթ. 24)։ Ապա, նկատի ունենալով Մատյանի հիշատակարանում հեղինակի խոստովանությունն այն մասին, թե ինքն իր երկը գրել է «գործակցութեամբ եղբօր իմոյ ընտրելոյ՝ Յովհաննէս կոչեցելոյ», ենթադրում է, որ գուցե Հովհաննեսն «ինքն արար զայս յաւելուած՝ աղօթել վասն եղանելի Նարեկացւոյն» (նույն տեղում)։ Սակայն դա սոսկ ենթադրություն է և պատմական որևէ վկայությամբ չի հիմնավորվում։ Բանն այն է, որ բանաստեղծի՝ տարիքով իրենից ավելի մեծ եղբայրը՝ Հովհաննեսը, մատենագրական ժառանգություն չի թողել. գուցե ստեղծագործե՞լ է, բայց նրանից մեզ ոչինչ չի հասել, և մատենագրական զուգահեռ տեղեկություններ չկան այդ մասին, թեպետ Նարեկացին իր Ասպարանից խաչի պատմության ու դրան կից ներբողյանների հիշատակարանում Հովհաննեսին համարում է ամեն բանում իրենից առավել, «գիտական» ու «հանճարեղ իմաստասէր»։ Սակայն դա կարելի է համարել ավագ եղբոր հանդեպ Գրիգորի ունեցած հարգանքի ու եղբայրական սիրո զգացման հիացական արտահայտությունը։ Հովհաննեսի գործակցությունը գուցե ա՞յլ բնույթի է եղել։ ԻԶ գլխի 78—84 տողերը նրան վերագրելու համար, այդպիսով, մենք պետք է համոզված լինենք, որ նա զբաղվել է նաև գրական գործունեությամբ։

Նարեկացին իր գիրքը համարում է մի հավիտենական արձան, որն իր փոխարեն պետք է աղաղակի՝ «ընդ իմ աղաղակեսցէ» (ԶԸ, 44) ոչ միայն բանաստեղծի ձայնով՝ «իմովս ձայնիւ», այլև

Բարբառեսցի՛ շըրթամբք ընտրելոց քոց
Եւ խաւսեսցի՛ բերանովք նուիրակաց քոց (ԶԸ, 16—17)։

Ուրեմն, բանաստեղծը, որ համայն մարդկությանը կրում է իր մեջ իբրև իր անձնականը, կարող էր և իրեն «անջատել-հեռացնել» իրենից, այսինքն՝ իրեն տեսնել ուրիշի աչքով, ոչ թե իբրև ես, այլ՝ դու կամ նա, նոյն ինքն։ Համաշխարհային քնարերգության մեջ դա եզակի օրինակ չէ, և Նարեկացին դրա ամենավաղ կիրառողներից մեկն է։

Դ հատվածի տաղաչափությունը բավական կանոնավոր է. տողերը, բացի 78, 81 և 83-ից, նաև 85-ից, 18 վանկանի են՝ 4—5—4—5 անդամավոր կազմությամբ. օրինակ՝

Ակնարկելո՛վ // քո ողորմութե՛ան՝ // անարատի՛ // ցըն
ճաղորդեսցի՛ (տ. 79)։

Դա շատ հազվադեպ չափ է։ Հատվածի ռիթմական այդ յուրահատկությունը հավանաբար նկատել են Պ$_4$ տպագիրը պատրաստողները։ Որովհետև նրանց բնագրում (և առհասարակ Մատյանի բոլոր հրատարակություններում) տ. 84-ում բացակայում է եւ բառը, որի պատճառով տողի վանկերի քանակը պակասում-դառնում է 17, ռիթմը կանոնավորելու նպատակով նրանք փառք բառը գրել են փառըք գրությամբ, որով և տողի վանկաքանակը վերականգնվել-դարձել է 18։

19. Տե՛ս Առակք, ԺԱ, 26։

ԲԱՆ ԻԷ

1. Տ ձեռագիրը գլխի բովանդակության մասին վերնագրի դիմաց ունի լուսանցային նշում՝ «Մեղանացն» (էջ 28բ)։

2. Զդրութիւն թուոցս—գրաբարում դրութիւն և թիւ բառերը, բացի այլ իմաստներից, ունեցել են նաև գլխի, պատումի, դրվագի նշանակություն։ Դրութիւն բառն այդ իմաստով, ինչպես գիտենք, հանդիպում է նաև Մատյանի խորագրում (հոգնակի ձևով՝ դրութիւնք, այսինքն՝ գլուխներ), ապա և հիշատակարանում՝ վերջին դեպքում համանիշ դրուագ բառի հոգնակի մոտ («զբազմաստեղնեան դրուագս դրութեան»)։ Թիւ բառը գլխի իմաստով գործածել է պատմահայր Մովսես Խորենացին իր Պատմության Բ գրքի 10-րդ գլխում («յերեքտասաներորդ թուին», այսինքն՝ տասներեքերորդ գլխում)։ Զդրութիւն թուոցս կապակցության մեջ թուոցս հոգնակի ձևը հանդես է գալիս որպես իրեն համանիշ դրութիւն բառի սեռականով ավելադրություն։

3. Դարձեալ սկսայց զճառ պաղատանացս / խոստովանութէն, զղջականաբար—այսինքն՝ եթե նախորդ գլխում դրսևորել է իր հեծությունն ու հառաչանքը, ապա այստեղ, ԻԷ գլխում, իր պաղատանքն արտահայտելու է խոստովանության ու զղջումի եղանակով, ինչպես միջնադարյան մեկնիչն է գրում՝ «մինչ ցայժմ ողբօրէն ասացի, արդ փոխեմ զբանս խոստովանօրէն, զի մեղայն խոստովանութիւն է» (ձեռ. 5650, էջ 362ա)։

4. Զի անդրադարձութեամբ սկսմամբն եւ վերջաւորաւքն բառիւք—Նարեկացին այստեղ նախապես ակնարկում է, որ ինքը գրելու է այնպես, որ յուրաքանչյուր տողի սկզբի բառը կրկնվելով («անդրադարձութեամբ»)՝ դառնա նաև նրա վերջին բառը («սկսմամբն եւ վերջաւորաւքն բառիւք»), այսինքն՝ հորինելու է այսպես կոչված շղթայաձև ոտանավորով (հմմտ. «Նարեկլուծ», էջ 129, ծնթ. 1)։ Այդպես են գրված այս գլխի 11—21 և 57—63 տողերը։ Մատյանի միջնադարյան մեկնիչը, ուշադրություն դարձնելով Նարեկացու 8-րդ տողին, նշել է. «Այն է,

որ առաջքն և վերջքն մեղայ է» (ձեռ. 5650, էջ 362ա)։ $Պ_2$ և $Պ_3$ տպագիրները (նաև Կ. Պոլսի 1782 և 1789 թթ. հրատարակությունները) սկսմամբն բառի փխ ունին սկզբանցն ընթերցվածը, որը մեր օգտագործած ձեռագրերից ոչ մեկը չի տալիս։

5. ...աւրհնեալ է հատուած բանի / Յուսադրական սրտի այսր Մեղայ-ի—ըստ հին լուծմունքի, Նարեկացին նկատի ունի մեղայ-ով սկսվող և վերջացող տողերը (իր արտահայտությամբ՝ տները). «Զտուն առ տուն զմեղայն ասէ, զի ամենայն տուն ինքն առ ինքն հատեալ է և կատարեալ բան է» (ձեռ. 5650, էջ 362ա)։ Մեկնիչն, ուրեմն, հատուած բառն այստեղ ընկալում է հատվելու (բաժանվելու) և կատարյալ (ավարտուն) լինելու առումով։ Նալյանը հատուած բանի կապակցությունը դիտում է որպես այլաբանություն մեղայ բառի համար՝ վերջինիս, ըստ միջնադարյան քրիստոնեական խորհրդապաշտության, տալով «մեղսաքավիչ» նշանակությունը. «Հատուած բանի ասի անունն մեղայ-ին, զի է կարճ և զօրաւոր, սուր և ազդու և վճռական» («Գիրք մեկնութեան», էջ 189)։

Մատյանի թարգմանիչները տարբեր մոտեցում են ունեցել հատուած բանի արտահայտությանը. մերթ թարգմանել են խոսքի հատված (Մ. Գոշունյան, Մ. Խերանյան, Վ. Գևորգյան)՝ նրա տակ հասկանալով գլխի 11—21 տողերը, մերթ էլ՝ խոսքի կտրվածք (Գ. Խաչատուրյան)՝ այն վերագրելով մեղայ բառին, իսկ Թ. Գուշակյանը հատուած բառն իր թարգմանությունից դուրս է թողել։ Իհարկե, Նարեկացին իր երկի հատվածը «աւրհնեալ» չէր համարի, դա կհնչեր որպես ինքնամեծարում, հետևապես հատուած բանի-ն ավելի ճիշտ կլինի ընկալել մեղայ բառի վերաբերմամբ, որը, ինչպես միջնադարյան մյուս խորհրդապաշտների, այնպես էլ Նարեկացու համար «աւրհնեալ» էր և միջոց՝ մաքրվելու և հասնելու աստվածային կատարելության։ Եվ շարունակության մեջ բանաստեղծը դարձյալ խոսում է Մեղայ-ի մասին («Սոյն սա պատուելի աւանդ...»)՝ կարծես հավաստելով, որ իր ասածը վերաբերում էր ոչ թե գլխի մի հատվածին, այլ զղջման գաղափարին, որի արտահայտությունն է հիշյալ բառը։

6. Նարեկացին 24—47 տողերում փառաբանում է զղջման գաղափարը՝ այն բնութագրելով բանաստեղծական այնպիսի պատկեր-անվանումներով, որոնք հեռավոր աղերս ունեն Սուրբ Գրքի այս կամ այն դրվագի հետ և, մի տեսակ, «վավերացնում» են «մեղայ»-ի նշանակությունը։ Թերենք դրանցից մի քանիսը. հայրենեացն տուր (տ. 25), այսինքն՝ զղջումն, իբրև շնորհ, նախ դրվել է նախահայր Ադամին և Եվային, ուրեմն այն նախահարցն աւէն (տ. 25) է, նաև՝ հեթանոսաց զիւր (տ. 33), քանի որ այդ գաղափարին են ապավինել և հեթանոսները, նաև՝ խտրոց ահատր (տ. 36), որը սահմանագծում, իրարից բաժանում է մահն ու կյանքը, արդարներին ու մեղավորներին, նաև՝ արուեստ բարձրութեան (տ. 36), այն է՝ բարձրանալու հնար (միջոց) և կամ բարձր արվեստ, նաև՝ խորհուրդ կնքեալ (տ. 38), այսինքն՝ ունի խորին խորհուրդներ ու գաղտնիքներ, որոնց արագաթռիչ միտքն անգամ հասու դառնալ չի կարող (հմմտ. «Նարեկլուծ», էջ 129—130, ծնթ. 2—7)։

7. ...ի վերջին դատակնիք դասուն լքելոյ—ըստ միջնադարյան լուծմունքի և Հ. Նալյանի, Նարեկացին ակնարկում է, այսպես կոչված, դևերի դասը. «Դևքն են, որ զվերջին դատակնիքն ընկալան... զի ոչ յիշատակեցաւ առ նոսա մեղայ-ն» (ձեռ. 5650, էջ 362բ)։ Բայց, ինչպես նկատել է Գ. Ավետիքյանը («Նարեկլուծ», էջ 130, ծնթ. 8), բանաստեղծի խոսքը վերաբերում է առհասարակ մեղավորների դասին, որոնք, ըստ ավանդության, իբրև սև այծեր՝ վերջին դատաստանի ժամանակ հովվի ձեռքով պետք է առանձնացվեն անմեղ ոչխարներից ձախակողմում՝ լսելով ահեղ դատավճիռը կամ, ըստ Նարեկացու, «զվրիժակն իրաւանց» (տ. 43). «Երթա՛յք յինէն, անիծեալք, ի հուրն յաւիտենական, որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա» (Մատթ., ԻԵ, 41)։

8. Ըստ մովսիսական օրենքի մահապարտն անպատիժ էր մնում, քանի դեռ նա գտնվում էր տաճարում և բռնել էր սեղանի եղջյուրներից։ Մահապատիժն ի կատար ածելու համար

պարտավոր էին նրան դուրս բերել տաճարից։ Թագավորին դավաճանած Հովաբին, որը հրաժարվում էր թողնել եղջյուրները և հեռանալ խորանից, Սողոմոնի հրամանով ստիպված սպանում են ուղղակի տաճարում (հմմտ. Գ. Թագ., Բ, 28—35)։ Նարեկացին մեղսան համեմատում է այդ եղջյուրների հետ, բայց գտնելով, որ նրան ապավինողը փրկվում է պատժից և անարատ դառնում («պրծեալ ի պատժոց՝ անարատ գտաւ»)։

9. Աքար Զամրեան եւ Սաւուղ Կիսեան եւ Յուդա Սիմոնեան—Աքարը գողություն էր արել Երիքովի ավարից (հմմտ. Յեսու, է, 16—26), Կիսի որդի Սավուղն ինքնահավան էր, կամակոր ու անհնազանդ (հմմտ. Ա Թագ., ԺԵ), իսկ Հուդան՝ մատնիչ։ Երեքն էլ, ըստ ավանդության, իրենց կատարած հանցանքների համար պատժվել են, թեև մեղա են եկել, բայց... ակամայից, իսկ, ինչպես Նարեկացին է ասում,

...ակամայիցն բռնադատելոց ոչ է կատարեալ սէր,
Ուստի եւ ոչ բովանդակապէս փրկութիւն (տ. 53—54)։

Աքարը Քարմիի որդին էր, Զամրիի թոռը և Զարայի ծոռը։ Նարեկացու մոտ Աքարըն անվանվում է Զամրեան ($Պ_4$-ը և Մատյանի մյուս հրատարակությունները, բացի մի քանի հին տպագրերից, ունեն Զարմեան), մինչդեռ պետք է կոչվեր Քարմեան՝ իր հոր անունով։ Սակայն դա չի կարելի համարել փաստական անճշտություն և կամ գրչագրական վրիպակ։ Հենց Ս. Գրքում նա համարվում է նաև «որդի Զարայի»՝ պապի հոր անունով (տե՛ս Յեսու, է, 24)։ Ըստ այսմ Նարեկացին ևս նրան Զամրեան անվանելով (Г ձեռագիրն ունի Ս. Գրքի պես՝ Զամրեան), անպայման չի ուզեցել մատնացույց անել նրա հորը, այլ նախնիներից մեկին, այս դեպքում՝ նրա պապին։

10. ...մարմնոյ ձեռն յոգի ճարեալ—այս կապակցությունը տարբեր բացատրությունների տեղիք է տվել և թարգմանվել տարբեր կերպ (մարմնի ձեռքով հոգին մեռցնել, մարմնով ամբարտավանել, անձնապաստան լինել և այլն)։ Միջնադարյան լուծմունքը ձեռն բառն ընկալում է իբրև մարմնի կամք, որը հոգուն մեղքեր է բարդում. նաև տալիս է այսպիսի մեկնություն. մարդը ձեռքով հարվածում է կրծքին («բռամբ զկուրծսն հարկանէ»)՝ սիրտն ու հոգին համարելով «մայր և պատճառ մեղացն» (ձեռ. 5650, էջ 363բ)։ Նալյանը և Ավետիքյանը այդ բացատրությունը համարում են անկատար և միայն մասամբ ընդունելի։ Նալյանը զանազան նշանակություններ է տալիս կապակցությանը. մարմնին խնամք տանելով՝ անտեսել ու սպանել հոգին, անլվա ձեռքով սրբություն շոշափել, ունայնության հետևել, մարմնավոր մաքրությամբ հոգուն հաճոյանալ, ուրախանալ ընկերոջը հասած դժբախտության համար («Գիրք մեկնութեան», էջ 196—197)։ Ինչպես տեսնում ենք, այս բացատրությունները Նարեկացու տողի ազատ վերաիմաստավորումներն են։ Նրանք հիմնականում հանգում են մի ընդհանուր ճշմարտության, այն է՝ Նարեկացին շեշտել է իր «մոլորությունը». անտեսելով հոգին՝ կատարել է մարմնի կամքը, որը և ընդունելի է համարում Ավետիքյանը («Նարեկլուծ», էջ 131, ծնթ. 14)։

11. Մատյանի միայն Բուենոս Այրեսի հրատարակությունը վարանեցայ ընթերցվածի փխ ունի վտարեցայ («Նարեկ. Մատեան ողբերգութեան», էջ 64), որը հավանաբար տպագրական վրիպակ է. այդ տարընթերցվածը մեր ձեռագրերը չեն տալիս։ Հետևելով այս տողում որոշ ձեռագրերի ունեցած վատակեցայ սխալ ընթերցվածին՝ e օրինակի գրիչը կարծել է, թե դա իմաստով համընկնում է բնագրային վարանեցայ բառին, և լուսանցքում բերել է իբրև բացատրություն՝ գրելով. «Լուծումն. վատակեցաւ» (էջ 86ա)։

12. Ինքնապարսավանքի՝ նման տողերն ու հատվածները, որոնք հաճախ են հանդիպում Մատյանի այլևայլ գլուխներում, ոչ միշտ է, որ ընդհանուր կարգի խոսքեր են, այլ ունեն ինքնակենսագրական սկիզբ, ոչ թե առհասարակ մարդուն են վերաբերում, այլ իրեն՝ բանաստեղծին։

Զի զիս ունին, առ որ չեմ—*Նարեկացին այստեղ ակնարկում է իր բարձր կոչումը, գիտնական-վարդապետի մեծ համարում ունենալը, որը, իբր, ինքն իր գործով չի արդարացրել։ Այս տողին համահնչյուն են, օրինակ, ՀԱ—ՀԲ գլուխների մի շարք տողեր՝*

Դասիմ ի պարս ճեզոց, եւ ընդ այսս կաքաւեմ,
Ի մարդկանէ զովիմ, եւ ի տեսողէդ պարսաւիմ *(ՀԱ, տ. 88—89)։*
Պետ վարժից կոչեցայ՝ յանձինս դատախազ,
Ռաբբի ռաբբի անուանեցայ,
Եւ զգալեստն առ աստուած եղծի *(ՀԲ, տ. 62—64) և այլն։*

13. Հմմտ. Գործք, ԻԳ, 3։

14. Առ այն, զոր տեսի աչաւք իսկ իմովք—*այս տողին Մատյանի մեկնիչները հատուկ ուշադրություն են դարձրել՝ շեշտելու համար, որ Նարեկացին սուրբ լինելով՝ «կենդանի հաղորդակցություն» է ունեցել աստծու հետ. «Ասեն, թէ սուրբս այս ետես զՔրիստոս դէմ յանդիման»,—գրում է միջնադարյան մեկնիչը (ձեռ. 5650, էջ 363բ)։ «Ասի յաւանդութեան, թէ սուրբս Գրիգոր ետես զՔրիստոս մանկաձև ի գիրկ կուսին յառաւօտեան ժամուն ի վանս Նարեկայ ի ծագել արեգական...»,—հաղորդում է նրան Հ. Նալյանը («Գիրք մեկնութեան», էջ 189)։ «Այսու յայտնապէս ծանուցանէ զտեսանել իւր մարմնոյ աչօք զՔրիստոս, որով և հաստատի աւանդութիւնն, որ կայ յազգի մերում...»,—իր հերթին հավաստում է Գ. Ավետիքյանը («Նարեկլուծ», էջ 132, ծնթ. 16)։ Այս բացատրություններից երևում է, որ ոչ միայն Նալյանն ու Ավետիքյանը, այլև հին մեկնության հեղինակը ծանոթ են եղել Նարեկացու մասին միջնադարում ստեղծված ավանդությանը, որը պահպանվել ու մեզ է հասել ինչպես բանավոր ճանապարհով, այնպես էլ գրավոր ձևով՝ իբրև նրա զրուցապատում վարքի մի դրվագ։ Այդ ավանդության մի տարբերակի համաձայն, Նարեկացուն հեռվում, Առտեր կղզու վրա, երևացել է տիրամայրը՝ մանուկ Հիսուսը գրկին և ձայն տվել. «Ա՛ռ զտէր քո» (ընդունի՛ր քո տիրոջը), ու դրանից էլ մնացել է կղզու անունը՝ Առտեր (հմմտ. Ս. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 84)։*

Ավանդության գրավոր տարբերակում Առտեր կղզու մասին խոսք չկա։ Պատմվում է, որ Նարեկացին գնում է Ռշտունիք և յոթ տարի մարդկանցից թաքուն առանձնանում-ճգնում իր քեռու (իմա՝ մոր հորեղբայր Անանիա Նարեկացու) վանքի հանդեպ գտնվող մի այրում։ Այստեղ նրան երևում է Մարիամը՝ ասելով. «Ես եմ մայրն Յիսուսի»։ Նարեկացին կասկածում է։ Մյուս օրն առավոտյան նա նորից է երևում՝ «ունելով ի գիրկն զմանկացեալն աստուած»։ Այդ տեսիլից ներշնչված՝ Նարեկացին ծնկաչոք ասում է «Աչքն ծով...» երգը, այսինքն՝ «Մեղեդի Ծննդեան»-ը (տե՛ս նույն տեղում, էջ 319)։ Տիպիկ միջնադարյան այս ավանդությունը, որը սերունդների հարգանքի ու գնահատանքի տուրքն է մեծ բանաստեղծին ու նրա ստեղծագործությանը, կարծես առարկայական ընկալումն է ինչպես «Առ այն, զոր տեսի աչաւք իսկ իմովք» մտքի, այնպես էլ Մատյանի այլ գլուխներում նույն եղանակով Նարեկացու արտահայտած մտքերի, որոնցից հիշենք, մանավանդ, հետևյալը.

Զքեզ իսկ տեսի ճոգացեալ վասն իմ,
Զոր չէ սատ գրելի, եւ ոչ պատկառեցի *(Ի, տ. 70—71)։*

Նարեկացին, «սրտի աչքով» տեսնելով այն, ինչ չի կարող տեսնել մարմնական աչքը, իր անպարագիծ ու անսովոր երևակայության արդյունքը ներկայացրել է իբրև իրողություն։ Ուրեմն, այսպիսի դեպքերում խոսքը ոչ թե «մարմնոյ աչօք» Քրիստոսին տեսնելու, այլ բանաստեղծական հրաշքի մասին է։

*15. Հմմտ. Ժողով., Ժ, 4, ուր համապատասխան կապակցությունն այսպես է. «...*ողորմունն դարձուցանէ *զմեղս մեծամեծս»։ Նարեկացին ընդգծված բառերի փոխ գործածել է «*բժշկութիւն դադարեցուցանէ*», ինչպես ունեն Ս. Գրքի հունական, եբրայական, ասորական և լատինական բնագրերը։ Այդ հետաքրքիր տարբերությունը մատնացույց անելով և նշելով Նարեկացու ընթերցվածների նույնությունը ոչ թե մեզ հասած հայերեն, այլ այլալեզու բնագրերի հետ՝ Ավետիքյանը ենթադրել է, որ, թերևս, բանաստեղծն այդ դեպքում օգտվել է այլ թարգմանություններից («Նարեկլուծ», էջ 132—133, ծնթ. 19)։*

16. Այս տողում $Գ_{1-2}$ տպագիրներն ունեն A *օրինակի նման՝* լցեալ ի քեզ եւ նկարեալ յոգի*։ $Գ_3$-ը երևի նկատելով, որ նախորդ՝ 149-րդ տողում ևս կան* ի քեզ *բառերը, և հաջորդ տողում տվել է նրանց կրկնությունը, հետևելով ձեռագրերին՝ հանել է, թողնելով կապակցությունն այսպես՝* լցեալ եւ նկարեալ յոգի*։ Կարծում ենք, որ որոշ ձեռագրերում* լցեալ ի քեզ եւ *ընթերցումը վրիպակաբար առաջացել է տ. 149-ի* պատուաստեալ ի քեզ *բառերի ազդեցությամբ, այսինքն՝ առաջին բառի սխալ մասը կարող էր շփոթվել-ընթերցվել* լցեալ *և* ի քեզ *բառերի հետ օրինակվել երկրորդ անգամ՝ 150-րդ տողում՝ տարածում ստանալով ձեռագրական աշխարհում։* A *և նրան հետևող ձեռագրերի* լցեալ ի քեզ եւ *բառերի ավելորդ լինելը նկատել և բնագրից դուրս է թողել $Գ_4$ տպագիրը, որին և հետևել են Մատյանի հետագա հրատարակությունները, բացի Պոլսի 1782 և 1789 թթ. տպագիրներից։*

ԲԱՆ ԻԲ

1. Այս գլխի Ա հատվածն ամբողջությամբ զղջման և ինքնաձաղկման բնույթ ունի, սակայն իր արտահայտման եղանակով այն տարբերվում է նախորդ գլուխների համաբնույթ հատվածներից։ Նարեկացին, ինչպես ուրիշ դեպքերում, այստեղ ևս գտել է ինքնադրսևորման նոր եղանակ՝ դիմելով հռետորական հարցումի։ Նա իրեն դնում է իրարամերժ, իրար ոչնչով չօգնող, իրար չեկող, իր հոգու տագնապը չհանդարտեցնող ու չլուծող տարակույսների արանքում։ Խոսելով այս հատվածի մասին՝ դեռևս XVIII դարի առաջին կեսին Հ. Նալյանը նկատել է Նարեկացու բանաստեղծական արվեստի զարմանալի ճկունությունն ու ուժը, նույն թեման կամ տրամադրությունն ամեն անգամ մի նոր ձևով արտահայտելու և շարունակ փոխակերպվելու նրա հատկությունը. «Յիրաւի զարմանալի է ագահութիւն սորոյ վարդապետիս ի կողմանէ զղջականութեանն և զինքն քարկոծելոյն,—գրում է նա։—Բայց առաւել հիանալի է, թէ յամենայն սկզբնաւորութեան ճառից ո՞րպէս գտանէ զզանազան ձևս և եղանակս զղջականութեան։ Յիրաւի կոչելի է զսա ջրգողեալ զղջացող, զի որպէս նոքա լցմամբ ջրոյն միշտ ծարաւին, այսպէս և սա՝ զղջանալովն» («Գիրք մեկնութեան», էջ 201)։

2. Բուենոս Այրեսի հրատարակությունն ունի զընդդէմ *(տե՛ս նրա էջ 66-ը)։ Մատյանի մյուս տպագիրները և մեր ձեռագրերը չեն տալիս այդ տարընթերցվածը. հավանաբար տպագրական վրիպակ է։*

*3. Հմմտ. Առակք, ԺԲ, 16։ Նարեկացին բոլորովին փոխել է «Առակք»-ում ասվածը, որ հետևյալն է. «*Թաքուցանէ զանարգանս իւր այր խորագէտ*»։ Ուրեմն,* այր խորագէտ*-ը նրա մոտ դարձել է* ճանճարեղքն, թաքուցանէ*-ն՝ ավելի պատկերավոր* վերարկեսցեն, *իսկ* զանարգանս*-ը՝* զամաւթս։

4. N *ձեռագիրը բնագրի կարգում,* ամբարիշտ *բառից հետո, ունի աստղանիշ (աստերիսկոս)։ Գրիչները սովորաբար աստղանիշերի մեջ են առնում այն հատվածները կամ բառերն ու կապակցությունները, որոնց բնագրային լինելը կասկածի տակ է առնվել։ Բայց նշված տեղում*

կասկածի տեղիք տվող որևէ բառ կամ հատված չկա։ Նույն ձեռագրում աստղանիշ կա նաև ԻԹ գլխի ա. 21-ի քազատր բառից հետո։

5. Տե՛ս Ես., ԻԹ, 13։

6. Հմմտ. Գ Թագ., ԺԸ, 21։

7. Տե՛ս Ա Եզր., Ը, 72։

8. Միայն Ղ ձեռագիրն ունի զմեղս մեր, որ համապատասխանում է Նարեկացու աղբյուրին (Ովսէէ, ԺԴ, 3)։ Տ. 74—78-ը գրեթե բառացի համընկնում է աղբյուրին, սակայն կան առանձին բացթողումներ, որոնք, անշուշտ, Նարեկացու վերաբերմունքի արդյունք են։ Ղ ձեռագիրը, ըստ երևույթին, Ովսեի մարգարեության ԺԴ, 3 տան հետևությամբ վերականգնել է այդ բացթողումներից մեկը՝ մեր բառը, որի Նարեկացուն պատկանելը չի հաստատվում մյուս ձեռագրերի տվյալներով, հետևապես և այն չենք մուծում բնագիր. մեր-ը աղբյուրինն է, բայց ոչ Նարեկացունը։

9. Այս տողի սկզբում միայն Գ. Ավետիքյանի «Նարեկլուծ»-ի բնագիրն ունի և (տե՛ս նրա 135-րդ էջը)։ Մեր ձեռագրերը և բոլոր մյուս տպագրերը չունեն այդ ընթերցվածը. հավանաբար տպագրական վրիպակ է։

10. Հմմտ. Միքիէ, Է, 19։

11. Այս հատվածը (տ. 106—121) դիմումի իր եղանակով հիշեցնում է ԻՁ գլխի Դ հատվածը (տե՛ս ԻՁ գլխի 17-րդ ծնթ.), այսինքն՝ այստեղ ոչ թե բանաստեղծն է իր խոսքն ուղղում «վերծանողացն այսմ մատենի», այլ ինքն է ապավինում նրանց մաղթանքին. նրա «արտասուածին նուագի» ընթերցողներն են աղերսում բանաստեղծի համար, «որ զայս դեղ փրկութեան կենաց մեզ յարմարեցոյց», որպեսզի նա «եղիցի զերծեալ ի չար կապանաց մահուարկածից», իսկ նրա հետ՝ իրենք ևս համարվեն երջանիկ («...եւ մեք գրեսցուք՝ երջանիկ գտեալ ընդ միին»)։ Ինչպես տեսանք, Գ. Ավետիքյանը որոշ կասկած է հայտնել ԻՁ գլխի Դ հատվածի հեղինակային լինելու վերաբերմամբ՝ անելով զանազան ենթադրություններ։ Նրա այդ կասկածը վերաբերում է նաև ԻԸ գլխի այս հատվածին, որ, սակայն, հազիվ թե ընդունելի լինի (տե՛ս ԻՁ գլխի մեր 17-րդ ծնթ.)։

Տ. 109-ի սկիզբն առաքողի արտահայտությամբ, ըստ մեկնիչների, Նարեկացին ակնարկել է կա՛մ իր ծնողներին, կա՛մ իր վարդապետին, կա՛մ էլ նրանց, «որք յորդորեցին յօրինել» իր Մատյանը («Նարեկլուծ», էջ 139, ծնթ. 19)։ Մատյանի միջնադարյան մեկնիչը դրա տակ հասկացել է Նարեկացուն իրեն և նրա ուսուցչին՝ Անանիա վարդապետին. «Որպէս ի՛ց կարես հասկացել է Նարեկացուն իրեն և նրա ուսուցչին՝ Անանիա վարդապետին. «Որպէս իջ ճառսն վասն իւր սաստ աղօթել, նոյնպէս և սաստ, որ սկիզբն եղև առաքել զողբերգութիւնս առաջի աստուծոյ և վասն Անանիայի վարդապետին իւրոյ սաէ. լինի թէ նորա խրատովն արար գրանս» (ձեռ. 5650, էջ 366ա)։ Նարեկացին, ինչպես գիտենք, իր Մատյանը գրել է «ի խնդրոյ հայցմանց հարց միանձանց եւ բազմաց անապատականաց» (տե՛ս խորագիրը), այսինքն՝ բազում կրոնավորների խնդրանքով, 1001—3 թթ. մեջ, երբ Անանիա Նարեկացին կենդանի չէր։ Եթե վերջինս ինչ-որ չափով առնչված լիներ Նարեկացու գլխավոր երկի ստեղծմանը, ապա հազիվ թե չհիշատակվեր նրա հիշատակարանում։

12. Ցուցական դերանվամբ արտահայտված այսմ նախադաս որոշիչն ընդունել է ոչ թե իր լրացյալ հատկացուցչի (նուագի) թեկադրած սեռական հոլովը, այլ հանդես է եկել տրականաձև, ինչպես տ. 106-ում (այսմ մատենի)։ Քերականորեն ավելի ճիշտ կլինեին՝ այսր արտասուածին նուագի (ինչպես ունեն KZs ձեռագրերը), այսր մատենի (ինչպես UVZk ձեռագրերում է)։ Բայց այդ անկանոնությունը բնորոշ է Նարեկացուն. հիշենք այդպիսի մի օրինակ ևս. «Որ է ար վերջին այսմ կենցաղի» (ԼԳ, տ. 126)։

13. Այս տողից առաջ Մատյանի բոլոր տպագրերը, բացի 1948 թ. Բուենոս Այրեսի հրատարակությունից, ինչպես նաև բոլոր ձեռագրերը, բացի Tq օրինակներից, լուսանցքում

ենթավերնագիրը. «Ընդդիմամարտ դիւաց այս նուագ ա-
կամ բնագրի կարգում ունեն հետևյալ ենթավերնագիրը. «Ընդդիմամարտ դիւաց այս նուագ ա-
ղաւթից եւ դիւասարսուռ, ջերմնատագնապ ախտաւորութեանց աստուծով փարատիչ» (ձեռագրա-
կան տարբերությունները տե՛ս տողատակում, 121-րդ տողի շարունակության վրա)։ T գրչա-
գրում հետագա ձեռքով ավելացված է «Աղօթք ջերման» ենթավերնագիրը, իսկ q օրինակն
ունի «Ընդդէմ սարսուռ և դիւական ջերման» ենթավերնագիրը։ Այդպիսով, բոլոր ձեռագրերն ու-
նեն ենթավերնագիր, ընդ որում Z-ն ունի նաև տողատակին՝ «Բան վասն ջերման»։ Որոշ գրչա-
գրերում ենթավերնագրով սկսվող հատվածը նույնիսկ համարակալված է (KNh), ուրեմն՝ այն
դիտված է որպես առանձին գլուխ. Kh օրինակներում (նաև Վատիկանի հայերեն ձեռագրերի
հավաքածուի № 4 գրչագրում) այն ունի ԻԹ, իսկ N օրինակում՝ ԻԳ համարակալում.
KN ձեռագրերը ենթավերնագրից առաջ ունեն նաև գլուխների համար սովորական «Վերստին
յաւելուած...» վերնագիրը կիսատ։ Հետաքրքիր է, որ N օրինակի գրիչը ինչպես այս, այնպես
էլ ԺԲ գլխի 46-րդ տողով սկսվող («Ընկա՛լ քաղցրութեամբ...») և Հե գլխի է հատվածի հա-
մար իր ունեցած ենթավերնագրերը համարակալել է, և այդ այն դեպքում, երբ առհասարակ
մյուս գլուխները չի համարակալել, բացի ՂԲ—ՂԳ գլուխներից (Մատյանի սկզբի որոշ գլուխ-
ներ ևս մինչև Ջ գլուխը ներառյալ նրանում համարակալված են, սակայն հետագա ձեռքով).
երևի ցանկացել է ընդգծել այդ ենթավերնագրերի կարևորությունը։
  Բայց ԻԸ գլխի այս ենթավերնագրի, ինչպես և մյուս գլուխների (ԺԲ, ԼԳ, ԼԴ, ՀԵ, ՂԳ)
մի քանի հատվածների ենթավերնագրերի համարակալումն առհասարակ պատահական երևույթ
պետք է համարել, որովհետև այդ առանձնահատկությունը, ինչպես տեսանք, ունեն խիստ սակա-
վաթիվ գրչագրեր, և ապա՝ գրիչներն իրենք խուսափել են դրանք համարակալելուց՝ թվահա-
մարը պահելով միայն գլուխների համար. օրինակ՝ s ձեռագրի գրիչը մեզ հետաքրքրող ենթա-
վերնագրի կապակցությամբ նշել է, թե՝ «Առանց թուոյ» (էջ 77բ), այսինքն՝ ենթավերնագիրը
համար չունի կամ չպետք է ունենա։ Նույն վերաբերմունքն է ցույց տվել նաև h-ի գրիչը.
համարակալելով ոչ միայն այդ ենթավերնագիրը, այլև ԼԳ գլխի երկու հատվածները՝ նա այ-
նուհետև նկատել է, որ երեք համարի տարբերություն է ստացվում իր օրինակում, այն է՝ ԼԷ
գլուխն ինքը համարակալել է Խ համարով,—գլուխների ճիշտ համարակալումը վերականգնելու
համար հաջորդ ԼԸ և ԼԹ գլուխները թողել է առանց թվահամարի և Խ-ից սկսած վերականգ-
նել ճիշտ համարակալումը, ուրեմն փաստորեն նկատել ու վերանայել է ԻԸ և ԼԳ գլուխներում
թույլ տված իր սխալը։
  Բայց արդյո՞ք ԻԸ գլխի ենթավերնագիրը հեղինակային է։ Այս հարցին ժամանակին անդ-
րադարձել է Գ. Ավետիքյանը՝ գրելով. «Յաղագս մակագրիս չէ յայտ՝ արդեօ՞ք սրբոյ վարդա-
պետին իցէ, թէ այլոյ ուրումն» («Նարեկլուծ», էջ 139, ծնթ. 21)։ Այս հարցադրումն իսկ խոսում
է այն մասին, որ մեծանուն հայագետը որոշ կասկած է ունեցել նրա նկատմամբ։ Մատյանի
արևմտահայ թարգմանիչ Գ. Խաչատուրյանն ավելի որոշակի հայտնում է այն միտքը, որ
ենթավերնագիրը հետագա հավելում է. «Անշուշտ երկրորդ գրիչ մը այս հատվածին իբր խորա-
գիր դրած է հետևյալ խոսքերը...» (բերում է ենթավերնագրի թարգմանությունը. «Նարեկ.
Մատեան ողբերգութեան», էջ 270)։ Որքանո՞վ է հիմնավոր այդ տեսակետը։ Բանն այն է, որ
ձեռագրերի մի մասում, ի թիվս որոնց և A օրինակում, այս և մյուս ենթավերնագրերը բերվում
են լուսանցքում, և դա ինչ-որ նշանակություն ունի։ Չէ՞ որ, ասենք, նույն A գրչագրում գլուխ-
ների սովորական վերնագրերը («Վերստին յաւելուած...» և «Ի խորոց սրտից...») երբեք լու-
սանցք չեն տարվում, այլ միշտ գրվում են բնագրի կարգում և, իբրև վերնագրեր, առանձնաց-
վում։ Այդպես նաև մնացած գրեթե բոլոր ձեռագրերում։ Իհարկե, կարող ենք մտածել, որ
այդպես կարող էր վարվել և ինքը՝ Նարեկացին, այսինքն՝ իր երկի կառուցվածքային հիմքում
դնելով գլխաբաժանման կարգը, սակայն, վերնագրեր նաև որոշ հատվածներ՝ նկատի ունենա-
լով նրանց թեմատիկ առանձնահատկությունը և կիրառական կողմը։ Բայց դա քիչ հավանական

է. այս դեպքում կասկած է հարուցում այն հանգամանքը, թե հապա ինչո՞ւ ձեռագրերում սովորույթ է եղել այդ ենթավերնագրերն օրինակել լուսանցքում, չխառնել բնագրին, թեպետև գրիչների մի մեծ մասն էլ, ինչպես տեսանք, գրել է բնագրի կարգում, որը նախորդ, ավելի նախնի թվացող ավանդույթի խախտումն ու անտեսումն է։

Մեր տրամադրության տակ չունենալով ձեռագրական ոչ մի ուղղակի կռվան, որը հերքեր գրչագրերում ինչպես այլ, այնպես էլ ԻԸ գլխի է հատվածին նախորդող ենթավերնագրի բնագրային լինելը, այդուամենայնիվ, օգտվելով անուղղակի տվյալներից, կարող ենք հակվել այն մտքին, որ առհասարակ Մատյանի ենթավերնագրերը հետագա հավելում են։ Հակառակ պարագայում ինչո՞ւ Նարեկացին իր լայնածավալ երկի միայն մի քանի հատվածներին պետք է անվանումներ տար, հապա մնացա՞ծը։ Չէ՞ որ «Ի խորոց սրտից խաւսք ընդ աստուծոյ» վերնագիրը սպառիչ կերպով արտահայտում է թե՛ ամբողջ Մատյանի և թե՛ այդ հատվածների էությունն ու բովանդակային ուղղվածությունը։

Հատվածների ենթավերնագրումը հետագա դարերի վերաբերմունքն է մեծ բանաստեղծի ստեղծագործության նկատմամբ և յուրահատուկ արտահայտությունը միջնադարում գործող հեղինակային մի պահանջի. արվեստին ու գրականությանը տալ կիրառական նշանակություն։ Ահա այդ մոտեցումով էլ հետագա դարերում Մատյանի համար կազմվել են մի քանի ցանկեր։ A ձեռագրում պահպանված ցանկը կրում է «Բանք նշանաւորք, որ ի գիրս յայս» անունը և ամենահամառոտն ու հինն է դրանց մեջ (ընդամենը 15 կետ)։ Այստեղ նշանավոր համարված գլուխների թվում է և ԻԸ գլուխը, որի բովանդակությունը բնութագրված է այսպես. «Ընդդէմ դիւասարսուռ ջերման» (էջ 4ա)։ Մի այլ ցանկում գլուխը հիշատակվում է հետևյալ կերպ՝ «Սոգտանք և մախթանք ի բան մեղ[այ]ի և վասն ջերման» (Շ, էջ 3բ), երրորդում՝ «Վասն դրոշմ արարողի. աստ է և ջերման աղօթքն» (V, էջ 4բ) և, վերջապես, չորրորդում՝ ուղղակի «Ջերմանն» (Դ, էջ 2)։ Չմոռանանք, որ երկրորդ և երրորդ ցանկերն ընդգրկում են Մատյանի բոլոր գլուխները։ Ուրեմն, ցանկերում փորձ է արվում յուրովի բացահայտել ու շոշափելի դարձնել գլուխների թեմատիկ կողմը, նրանք ենթարկել-կապել հարցերի որոշակի շրջանակի հետ, ընդգծել նրանց գործնական-կիրառական նշանակությունն ու զորությունը. Նարեկացիական բանաստեղծությունն ըմբռնվում է որպես աղոթք և հանձնարարվում կարդալ այս կամ այն հիվանդության ու դժբախտության, պատահարի ու աղետի առթիվ (հիշենք և գրիչների թողած լուսանցային նշումները տարբեր գլուխների սկզբնամասերի դիմաց՝ «Ի վերայ հիւանդի կարդա», «Ղարիբութեան կարդա» և այլն)։ «Ընդդիմամարտ դիւաց այս նուագ աղաւթից... աստուծով փարատիչ» ենթավերնագիրն, ահա, առաջացած պետք է լինի այդ ճանապարհով։ Ինչպես որ ԺԲ գլխի «Ընկա՛լ քաղցրութեամբ...» սկսվածքով հատվածն է համարվել «մաղթանք զաւրաւորք» գիշերային արհավիրքներից փրկվելու համար, այնպես էլ ԻԸ գլխի վերջին հատվածները ենթավերնագրում դիտվում են «նուագ աղաւթից», որոնք ասողը աստծով փարատվում է «դիւասարսուռ ջերմնատագնապ» ախտերից։

Նարեկացու կյանքն ու գործը հայ միջնադարում սրբացվել են, ուրեմն և նրա Մատյանին վերագրվել է հրաշարար զորություն։ Նրա միջնադարյան զրուցապատում վարքում կարդում ենք. «... խօսեցաւ Աստուածածինն ընդ սրբոյն Գրիգորի և ասաց.

— Տաց քեզ շնորհս և իշխանութիւն՝ առնել բազում սքանչելիս և հանել զդևս և բժշկել զամենայն ախտս ցաւոց ի մարդոց և յանասնոց. և որք ապաւինին ի քո բարեխօսութիւնն, ազատեսցին ի պարտուց իւրեանց» (տե՛ս Ս. Ղանալանյան, Ավանդապատում, էջ 319)։

Բանաստեղծի մասին այդպիսի պատկերացում ունեցող անհայտ մեկն էլ ստեղծել է ենթավերնագրերը, սակայն զարկ ստանալով և օգտվելով Նարեկացու իսկ տողերից, որոնցից հիշենք մի քանիսը.

Երէ սարսուռ դիւային ջերման դողութեամբ ինչ զոք խռովեսցէ,
Սրափեսցի՛ ի սոյն յայս նշան... (Գ, տ. 131—132)։

Սաստեա՛ տագնապող եւ դիւական տենդիս ջերմութեան,
Որ սպրդեալ մուծաւ ընդ մեղաց,
Զի փախիցէ ի մարդոյս... (ԻԸ, տ. 133—135)։

...Որով մահացաւ դիմամարտութիւն բանից վիշապին
Կենարարն կրիւ ամենազաւրին (ԻԸ, տ. 160—161)։

Ահա թե ինչու մերժելով ենթավերնագրի բնագրային լինելը՝ այն տարել ենք տողատակ։

14. ...ի սխրալի և յանբաւելի արեան վտակի—այս կապակցության մեջ հատկացյալն (վտակի) ընդունել է իր հատկացուցչի (արեան) թեկադրած սեռական հոլովը, չնայած ստացել է և ի նախդիրը. պետք է լիներ ի ... վտակէ, ինչպես ունեն $Պ_3$ տպագիրը (նաև Կ. Պոլսի 1782 և 1789 թթ. հրատարակությունները) և մեր G_1 T γ e ձեռագրերը։ Նարեկացու լեզվին հատուկ են և՛ այն երևույթը, երբ լրացումն ընդունում է իր լրացյալի հոլովը, և՛ դրան հակառակ երևույթը, երբ լրացյալն է ընդունում իր լրացման հոլովը։ Առաջին դեպքի համար ես բերենք մեկ օրինակ՝

Նւ ի կողանեռձ, սայրասուր սլաքէ ուժգին բախմանէ (ԻԸ, տ. 149), որտեղ բացառական հոլովով ի բախմանէ լրացյալի ազդեցությամբ նրա հատկացուցիչը ևս դրվել է բացառականի ձևով (սլաքէ), մինչդեռ պետք է լիներ սեռականաձև (սլաքի), այսինքն՝ «և կողը հերձող սայրասուր սլաքի ուժգին բախումից» (հմմտ. «Նարեկլուծ», էջ 140—141, ծնթ. 24 և 27)։ Հիշենք, որ ոչ մի ձեռագիր կամ տպագիր չի տալիս քերականորեն ավելի ճիշտ սլաքի տարբերակը, բացի վենետիկի 1840 թ. թերցվածը։

15. Բոլոր ձեռագրերը, բացի G_1N-ից, ունեն յայսց, ինչպես ուղղել է վենետիկի 1840 թ. հրատարակությունը, որին և հետևել է հետագա տպագիրների մեծ մասը։ Հին տպագիրներից միայն $Պ_1$-ն ունի այսց, որը մեր ձեռագրերից ոչ մեկը չի տալիս, մյուսներն ունեն յայս։ Ըստ Գ. Ավետիքյանի, յայսց հոգնակիի գործածությամբ նրա լրացյալ խոնարհութենէ բառը ևս կարծես ընկալվում է հոգնակի, իբրև «ի պատկառելի խոնարհութեանց յայսցանէ» (Նարեկլուծ», էջ 141, ծնթ. 25)։ Բայց այդ բացատրությունը բոնազբոսիկ է. յայսց հոգնակին տվյալ կապակցության մեջ ոչ մի կերպ իրեն չի արդարացնում։ Նախընտրում ենք յայս ընթերցվածը, չնայած, ինչպես ասացինք, վկայված է ընդամենը մեկ-երկու ձեռագրով (G_1N, որոնցից G_1-ը թերևս ծագում է տպագիրներից)։

16. Քստմնափուշ—Մատյանի միջնադարյան մեկնիչը և Հ. Նալյանը գտնում են, որ այդ բառով բանաստեղծն ակնարկել է այն բեռները, որոնցով Քրիստոսին գամել են «յաշտարակ խաչին», այսինքն՝ խաչափայտին (տե՛ս ձեռ. № 5650, էջ 366ա, «Գիրք մեկնութեան», էջ 208)։ Ավետիքյանը տալիս է այլ բացատրություն՝ հասկանալով «քստմնեցուցիչ, փուշ-փուշ անող (փշաքաղ անող)» իմաստով, քանի որ բևեռ առումով նախորդ տողում գործածված է նեղոյս («նեղուսիցն») բառը։ Քստմնափուշ բառը հայ մատենագրության մեջ հանդիպում է միայն Նարեկացու Մատյանի այս տողում. անշուշտ նրա իսկ ստեղծած բառաբարդությունն է։

17. Հմմտ. Հովհ., ԺԹ, 30։

18. Պիտակ—միջնադարյան մեկնիչը և Հ. Նալյանն այս բառն ընկալում են «անուն» նշանակությամբ։ Ավետիքյանը ճշտում է նրա իմաստը։ Ըստ նրա, պէտ արմատից կազմված այդ գոյականը Մատյանում գործածված է «պետք, կարոտություն» առումով («Նարեկլուծ», էջ 141, ծնթ. 29)։ Հետևապես, 164—165 տողերի միտքն է՝ աստվածային խորախորհուրդ միության մեջ

Երրորդությունից մեկը մյուսից սոսկ զորության կարոտություն չունի։ Այդ տողերով, ըստ մեկնիչների, Նարեկացին արտահայտել է Երրորդության մասին հայ եկեղեցու դավանաբանական ըմբռնումը՝ առանց անունը տալու հակադրվելով Սաբելլիոս Լիբեացուն (III դար) և նրա հետևորդներին (տե՛ս ձեռ. 5650, էջ 366ա, «Գիրք մեկնութեան», էջ 213)։ Սաբելլիոսի հերձվածի համաձայն, Հայրը, Որդին և Ս. Հոգին միևնույն անձն են. միևնույն աստվածային անձնավորությունը մերթ գործում է իբրև Հայր, մերթ՝ իբրև Որդի և մերթ էլ՝ իբրև Ս. Հոգի։ Սաբելլիոսի ուսմունքը քննադատվել ու մերժվել է իր առաջացման իսկ շրջանում՝ III դարում։

Ավետիքյանի կարծիքով, Նարեկացին իր տողերում հակադրվում է, մանավանդ, այսպես կոչված արիոսականներին և հոգեմարտներին, որոնք ևս Որդուն և Ս. Հոգուն համարել են Հորից կախում ունեցող զորություններ («Նարեկլուծ», էջ 141, ծնթ. 29)։ Նարեկացին Երրորդությունը ներկայացնող Հորը, Որդուն և Հոգուն անվանում է հավասարապատիվ տերություն (տ. 169), համարուն, անբաժ ինքնություն (տ. 170). Հայրը Որդու պատճառն է «հայրութեամբ, այլ ոչ նախադրութեամբ» (տ. 131). եթե Հայրն «անժամանակ» է, ապա Որդին՝ «անսկիզբն» (տ. 166—167), ինչպես և Հոգին՝ «անպատճառ»։ Նարեկացին Երրորդության մասին նիկիական հանգանակի (ընդունված Նիկիայի 325 թ. եկեղեցական ժողովում) բանաստեղծական ընդարձակ շրջասությունը տալիս է Մատյանի ԼԴ և ՀԵ գլուխներում։

ԲԱՆ ԻԹ

1. Հմմտ. Ղուկ., ԺԷ, 4։

2. Ակնարկում է Մատթեոսի ավետարանում ասվածը՝ «շատ է աւուրն չար իւր» (տե՛ս Մատթ., Զ, 34)։

3. Թագաւոր բառից հետո N ձեռագրի գրիչը դրել է աստղանիշ. բայց այդտեղ հավելյալ տող կամ հատված չկա (տե՛ս նաև ԻԸ գլխի 4-րդ ծնթ.)։

4. Տե՛ս Եփես., Գ, 20։

5. Քանզի իննուց յիսնից եւ թուոց երից եւ չորեակ տասանց—այս և հաջորդ 31—34 տողերի միտքը բացատրելիս՝ Մատյանի մեկնիչներն անմիջական աղերս են տեսել դրանց և Մատթեոսի ավետարանի հետևյալ տների միջև. «Յայնժամ մատեաւ առ նա Պետրոս և ասէ. Տէր, քանի՞ցս անգամ, թէ մեղիցէ ինձ եղբայր իմ, և թողից նմա. մինչև յեւ՞թն անգամ։ Ասէ ցնա Յիսուս. Ոչ ասեմ քեզ, թէ մինչև յեւթն անգամ, այլ մինչև յեւթանասնեկին եւթն» (ԺԸ, 21—22)։ Այդ կապն ըստ երևույթին առաջինը տեսել են Մատյանի գրիչները, որոնցից ոմանք երից ընթերցվածը չեն գրել կամ գրել, բայց սրբագրել-հանել են (տե՛ս տողատակի տարընթերցվածները), քանի որ դրանով տողում հիշված թվերի գումարը դառնում է 493, որով և անհամապատասխանություն է առաջանում ավետարանի հիշյալ տների հետ։ Ոմանք էլ ուղղակի լուսանցքում նշել են, որ այդ ընթերցվածը չպետք է լինի. «Երից չպիտի. յընտիր օրինակաց տեսի յերկուս գիրս» (T, էջ 76ա), «Երից չպիտի» ([illegible], էջ 82բ, ω, էջ 71բ)։

Բայց խիստ սակավաթիվ ձեռագրեր չունեն երից բառը, այն էլ, ինչպես կարելի է ենթադրել, իբրև արդյունք նրանց գրիչների միջամտության։ Ձեռագրերի ճնշող մեծամասնությունը, ի թիվս որոնց և բոլոր հին գրչագրերը, ունի երից։ Երևի այդ հանգամանքը նկատի ունենալով էլ Մատյանի միջնադարյան մեկնիչը փորձել է տողն այնպես, ինչպես այն կա, առանց երից-ը կրճատելու, հարմարեցնել ավետարանում ասվածին։ Նա առաջարկում է այն հասկանալ այսպես՝ «Իննուց յիսնից և թուոց չորից տասանց» (ձեռ. 5650, էջ 366բ). «չորից տասանց»-ը, բացատրում է նա, երեք («երից») տասնյակի և մի չորրորդ («չորեակ») տասնյակի գումարն է։ Այդպիսով, բավական բռնազբոսիկ հարմարեցումով ստացվում է 490։ Մեկնիչը տալիս է նաև

մի այլ բացատրություն. առաջարկում է 40-ը («չորեակ տասանց») կիսել ոչ հավասար երկու մասի՝ 26 և 14, որով և տողում ստացվում է երեք թիվ՝ 450 («իննուց յիսնից»), 26 և 14։ Սակայն անհասկանալի է մնում, թե ինչո՞ւ 40-ը կիսում է 26-ի և 14-ի և ոչ թե, ասենք, 28-ի և 12-ի կամ 24-ի և 16-ի և այլն։ Մեկնիչը տողի մեջ ուզում է տեսնել նաև այլաբանություն. երից-ը հասկանում է հույս, հավատ և սեր գաղափարների իմաստով, ապա և նույնացնում աստվածային Երրորդության հետ՝ նշելով, որ մեղքերի թողությունը և «ամենայն խորհուրդ» առանց նրանց չեն կատարվում (նույն տեղում)։ Նարեկացու տողի այսօրինակ մեկնաբանումն այնքան սխալ ու կամայական է, որ Գ. Ավետիքյանն այդ առթիվ գրել է, թե՝ «Քաջ տեսանէ ընթերցողն՝ որչափ ի հեռաւորս ձգի բանն» («Նարեկլուծ», էջ 146, ծնթ. 3)։

2. Նալյանը, հետևելով հին տպագիրներին ($Պ_{1—3}$), որոնցում, թերևս, որոշ գրչագրերի հետևությամբ, բնագրից հանված է երից ընթերցվածը, ինքն էլ իր հերթին անտեսում է այն՝ գտնելով, որ տողում հիշված թվերի գումարը պետք է տա յոթանասուն անգամ յոթի արտադրյալը՝ 490 («Գիրք մեկնութեան», էջ 215)։ Ավետիքյանը ևս կարծում է, որ տողում առանձին թվերով ակնարկված է ավետարանի յոթանասուն անգամ յոթը, և քերականորեն հիմնավորում է իր միտքը։ Նա տողի երից եւ չորեակ կապակցությունը դիտում է իբրև հարադրություն՝ «երեք-չորս» նշանակությամբ, ուրեմն՝ երից եւ չորեակ տասանց, ըստ նրա, նույնն է 3—4 տասնյակի (40) հետ։ Որպես ապացույց նա Ս. Գրքից բերում է մի շարք զուգահեռ օրինակներ, որոնց հիման վրա եզրակացնում է. «Ապա ըստ այսոցիկ օրինակաց՝ ասելն աստանօր երից և չորեակ տասանց նշանակէ՝ երից տասանց և չորրորդ տասին, որ լինի ընդ ամէնն 40» («Նարեկլուծ», էջ 146, ծնթ. 3)։ Նա գտնում է, որ տողում թուոց բառը երից-ի հետ մեկ կապակցություն չի կազմում. այն պետք է վերցնել տասանց բառի հետ (իմա՝ երից և չորեակ տասանց թուոց), և բնագրում թուոց և երից բառերի միջև բութ է դրել (նույն տեղում, էջ 142)։

Ինչպես տեսնում ենք, Ավետիքյանը ևս, հին մեկնիչի նման, ընդունում է, որ երից-ը բնագրային է, բայց նրա և հին մեկնիչի հիմնավորումները տարբեր են, թեպետ երկուսն էլ հանգում են միևնույն եզրակացության՝ տողում հիշված թվերի գումարը կազմում է ոչ թե 493, այլ 490, և ակնարկում է Մատթեոսի ավետարանի վերոհիշյալ տեղը։ Ըստ այդմ էլ բանասերը բացահայտում է հաջորդ տողերի (տ. 30—34) բովանդակությունը, որը, ըստ նրա, հետևյալն է. օրվա վաղորդայնից մինչև արևմուտ (տ. 30) հոժարությամբ («յաւէտ կարկառմամբ», «անարգել սրտիւ»—տ. 31—32) միմյանց բարեգործելը՝ 490 անգամ ներելը («բարեգործել միմեանց շնորհատուութիւն»—տ. 34) մարդկանց համար ավելի բարձր առաքինություն է («ի վեր է»—տ. 33), քան հույս հայցելը կամ հուսադրելը («քան զաղերսանաց ակնկալութիւն մարդկան»—տ. 33), (Հմմտ. «Նարեկլուծ», էջ 145, ծնթ. 3)։ Իհարկե, Ավետիքյանի բացատրությունը ևս սպառիչ ու անթերի չի կարելի համարել։ Այնուամենայնիվ, տարակույս է առաջացնում տ. 29-ի «եւ թուոց երից» կապակցությունը։ Նրա առկայությունը ոչ մի կերպ, անգամ ռիթմի պահանջով, չի կարելի արդարացնել. չէ՞ որ Նարեկացին, եթե կամենար 490 թիվն արտահայտել, կարող էր ասել՝ «Քանզի իննուց յիսնից և չորեակ տասանց», բոլորովին անհրաժեշտ չէր համարի տողամիջում դնել նաև՝ «եւ թուոց երից». ռիթմը խախտված չէր, որ դրանով ձգտեր այն վերականգնել։ Բնականաբար տողը պարունակում է մի այլ գաղտնիք։

Այդ գաղտնիքը բացահայտել է ականավոր հայագետ Ստ. Մալխասյանը «Մի առեղծված Նարեկի մեջ» հոդվածում (տե՛ս «Հուշարձան», Վիեննա, 1911, էջ 223—224)։ Նա Ավետիքյանի բացատրությունը համարում է ձգձգված և ոչ ճիշտ՝ գտնելով, որ Նարեկացու խոսքը տվյալ դեպքում ներմանը չի վերաբերում (ներման մասին են Մատյանի ԺԵ գլխի 91—92-րդ տողերը՝ «Այլ եւթանասնիցս եւթն թողուլ / Անդուստ ի յաւուր զիւրաքանչիւր մեղանաց զպարտս»), հետևապես կապ չունի Մատթեոսի ավետարանի նշված տների հետ։ Մալխասյանը տալիս է Նարեկյան տողի այնպիսի մի սրամիտ լուծում, որը հայ բանասիրության մեջ իր նմանը չունի։

«Ինձ թվում է,—գրում է նա,—թե այս առեղծվածը լուծվում է ավելի բնական և իմաստին համապատասխան կերպով, տրված բոլոր թվանշաններն էլ նկատի առնելով, այսպես.
Ինն յիսուն=450+բիւր երեք=3+չորեակ տասունք=40, ընդամենը 493։ Այս գումարը (493) վերածվում է հետևյալ թվերին—400, 70, 20, 3, որոնք նպատակահարմար շարքով դասավորելով և տառերով արտահայտելով՝ կստանանք.

70=Հ	400=Ն	=«Հինգ» բառը
20=Ի	3=Գ	

Առեղծվածը այսպես լուծվելուց հետո հասկանալի կդառնա և ամբողջ խոսքի իմաստը» (Նույն տեղում, էջ 224)։

Բայց ինչո՞ւ է արտածում հինգ բառը, որի թվային նշանակությունը 493-ի է հավասար. որովհետև դրա ապացույցն է հատվածի 30-րդ տողը՝ ձեռների կարկառմամբ «ի վաղորդայնէ տուընջեանն առ մուտս արեւուն» աղոթելու մասին. այսինքն՝ Նարեկացին նկատի ունի օրվա վաղորդայնից սկսած մինչև արևամուտ հայոց եկեղեցում ըստ ժամագրքի սահմանված աղոթքի ժամերը՝ Առաւօտու, Արեւագալի, Երրորդ, Վեցերորդ և Իններորդ, որոնց քանակը հինգ է. իսկ հինգի թվային նշանակությունը, ինչպես տեսանք, 493 է, որը համապատասխանում է Մատյանի 29-րդ տողին։ «Ի վաղորդայնէ տուընջեանն առ մուտս արեւուն» տողը, ըստ Մալխասյանի, հեռավոր կերպով ակնարկում է Ղուկասի ավետարանի «Յամենայն ժամ յաղօթս կալ» խոսքը (ԺԸ, 1)։

6. Բոլոր տպագիրները, բացի Պ$_{1}$-ից, ունեն բիւք: Մեր օգտագործած ձեռագրերից ոչ մեկը չունի բիւք. բոլոր օրինակներում եզակի է՝ բիւ։ Ըստ երևույթին «Նարեկլուծ»-ում Ավետիքյանի օգտագործած բոլոր գրչագրերը ևս ունեցել են բիւ («ի բազում օրինակս՝ բիւ», ինչպես նշել է նա. «Նարեկլուծ», էջ 146, ծնթ. 3)։ Բիւք տարընթերցվածը հավանաբար տպագրական ուղղում է՝ արված ստորոգյալի հետ քերականական համաձայնության նպատակով։ Բայց ստորոգյալի հոգնակիությունը պայմանավորված է աստեղացդ բիւ կապակցությամբ, որ կարող է ընկալվել իբրև հոգնակի։ Նշենք, որ հաջորդ տողի զօրս հարաբերական դերանունը ևս համաձայնեցված է աստեղացդ գոյականի հետ և ոչ թե բիւ ենթակայի հետ։ Հետևելով ձեռագրերին՝ վերականգնել ենք բիւ ընթերցվածը։

7. Հմմտ. Սաղմ., ՃԽԶ, 4։

8. Մատյանի Պ$_{1-3}$ տպագիրները (նաև Կ. Պոլսի 1782 և 1789 թթ. հրատարակությունները) ելաւ ընթերցվածի փխ ունեն եհան (տե՛ս և Պ$_{4}$-ի գլխավոր տարբերությունների ցանկում, էջ 391)։ Մեր օգտագործած ոչ մի գրչագիր չի տալիս եհան։

9. Հ. Նալյանը յամաւրալեացն ածանցավոր բառը բաժանում է երկու բառի՝ ամաւր և ալեաց ու նրանց տալիս սխալ նշանակություն՝ «ալեհեր լինելով ունենալ մանկան խելք» («Գիրք մեկնութեան», էջ 216)։ Չի նկատել, որ դա ամաւրալի ածականի հոգնակի հոլովաձև է։

10. Մատյանի Բուենոս Այրեսի տպագիրն ունի ի մահ («Նարեկ. Մատեան ողբերգութեան», էջ 71)։ Նախդիրը չունեն ո՛չ մյուս տպագիրները, ո՛չ մեր օգտագործած ձեռագրերը. այն հավանաբար տպագրական վրիպակ է։

11. Մատյանի Պ$_{3-4}$ տպագիրները և հետագա բոլոր հրատարակությունները բառն ունեն եզակի թվով՝ դէմ: Մեր օգտագործած ձեռագրերից ոչ մեկը չի տալիս այս տարընթերցվածը։

12. Տե՛ս Ղուկ., ԺԸ, 9—14։ Ավետարանական առակում պատմվում է, որ փարիսեցին և մաքսավորը մտնում են տաճարն աղոթելու։ Մինչ փարիսեցին, փոխանակ զղջալու, խոսում է, որ ինքը հափշտակող, անիրավ ու շնաբարո չի եղել, ինչպես մաքսավորն ու մյուս մարդիկ, այսինքն՝ անմեղ է համարում իրեն, մաքսավորը, ընդհակառակը, կուրծքն է ծեծում և քավություն աղերսում իր մեղքերի համար, ապա արդարացած՝ դառնում իր տունը, իսկ փարիսեցին թողություն չի ստանում, որովհետև «...ամենայն, որ բարձրացուցանէ զանձն իւր, խոնարհեսցի, և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի»։

ԲԱՆ Լ

1. Ի բազմագրելին... զղջման մեղաւորին—դարձյալ ակնարկում է մեկ օրում 490 անգամ (յոթանասուն անգամ յոթ) մեղավորին ներելու մասին ավետարանական առակը, ինչպես ԺԵ Գլխի 91—92-րդ տողերում։

2. ...կցորդս այս անձնիշխանական—ըստ Մատյանի միջնադարյան մեկնիչի և Հ. Նալյանի, Նարեկացին նկատի ունի մարդու մարմինը՝ «...մարմինս խաբող է, խառնի ի ստութիւն աշխարհիս» (ձեռ. 5650, էջ 367բ), «Մարմինս (ասէ) ընտանի թշնամի է հոգւոյս...» («Գիրք մեկնութեան», էջ 222)։ Գ. Ավետիքյանը գտնում է, որ խոսքն այստեղ մարդու զգայական աշխարհի մասին է («Նարեկլուծ», էջ 152, ծնթ. 2)։

3. Տե՛ս Առակք, Թ, 12։

4. Բոլոր տպագիրներն ունեն՝ ոչ երբէք համարձակի: Մեր օգտագործած գրչագրերից ոչ մեկը չունի երբէք ընթերցվածը։ Դժվար է ասել՝ այդ բառը տպագրակա՞ն հավելում է, թե՞ ծագում է որևէ ձեռագրից։ Մատյանի իր թարգմանության մեջ Քասիմը երբէք-ը փոխարինել է բնավ բառով («բնավ չհամարձակիր արքայություն խնդրել իրեն համար». «Աշխարհաբար Նարեկ», էջ 151), որին հետևել է Վ. Գևորգյանը, իսկ մյուս թարգմանիչները (Թ. Գուշակյան, Գ. Տրապիզոնի, Մ. Խերանյան) այդ բառն առհասարակ չեն պահել։

5. «Նարեկլուծ»-ում Գ. Ավետիքյանի օգտագործած ձեռագրերից մեկն ունեցել է գրեցեալք փխ կրեցեալք ճիշտ ընթերցվածի, իսկ Մատյանի Պ$_{1-3}$ տպագիրները և Կ. Պոլսի 1782 և 1789 թթ. հրատարակությունները տաշտք բառի մոտ ունեն երկու ընթերցվածը, որը մեր ձեռագրերից և հետագա տպագիրներից ոչ մեկը չի տալիս։ Ի դեպ, Z օրինակի մաշք տարընթերցվածը հետևանք է այն բանի, որ գրիչը (կամ նրա նախորդը) գաղափար օրինակի երկաթագիր տաշք (ինչպես հանդիպում է Վատիկանի հայերեն ձեռագրերի հավաքածուի № 4 գրչագրում փխ տաշտք ճիշտ ընթերցվածի) բառի տ-ն շփոթել-ընկալել է իբրև մ։

6. Անանխայելի ընթերցվածի փխ Վենետիկի 1840 թ. հրատարակությունը և նրանից ծագող հետագա մի շարք տպագրեր, ինչպես նաև Մատյանի միջնադարյան լուծմունքն ունեն ճիշտ հակառակը՝ անխայելի, ընդ որում լուծմունքը բառին տալիս է սխալ բացատրություն՝ «անխնամ տխրեալ» (ձեռ. 5650, էջ 368ա—բ)։ Չնայած անանխայելի ընթերցվածը տալիս են միայն մի քանի գրչագրեր (որոնցից մի քանիսը՝ սրբագրումով), սակայն նախընտրեցինք այն, քանի որ անխայելի բառը բնագիր տանելու դեպքում տողի հակադրական իմաստը կորչում է։

7. Հմմտ. Եզք, ԻԲ, 27։

8. Ակնարկում է Մարկ., Է, 31—37-ում պատմվող առակը խուլուհամրի մասին, որի խլությունը Քրիստոսը բուժում է... իր մատները մտցնելով նրա ականջները։

9. Այս տողի կարուած արեւն բառերն ընկալել ենք որպես իմաստային մեկ միավոր՝ արեւակարիլ, հետևապես ստացական դերանունը գրել ենք ոչ թե քոյ, այլ քո ձևով։ Տե՛ս նաև սույն գլխի տ. 125-ը, որտեղ նշոյլ կենաց բառակապակցությունը ևս դիտելի է իբրև իմաստային մեկ միավոր, մի բարդության նշանակությամբ՝ կենաանշոյլ. ահա թե ինչու նախընտրել ենք ոչ թե քոյ ընթերցվածը կամ ձեռագրերի մեծ մասի տված քոց հոգնակի սեռականը (չնայած այս վերջինը համաձայնում է կենաց հոգնակի սեռականին), այլ քո եզակի ձևը, ինչպես ունեն ABDEHSα գրչագրերը, և ինչպես ավարտվում են 99—128 տողերը։

ԲԱՆ ԼԱ

1. Այսմ ամենայնի—Պ$_{1-3}$-ը, Պոլսի 1782 և 1789 թթ. տպագիրներն ունեն այսմ տէր ամենայնի։ Պ$_4$-ը և նրանից ծագող տպագիրները, բացի Վենետիկի և Բուենոս Այրեսի հրատարակություններից, ունեն այսմ ամենայնի տէր։ Տարընթերցվածը հայտնի է եղել Գ. Ավետիքյանին։ Նրա օգտագործած օրինակներից երեքը (տե՛ս «Նարեկլուծ», էջ 158, ծնթ. 4), իսկ մեր օգտագործած բոլոր ձեռագրերը չունեն տէր բառը։ Ճիշտ ենք համարում այսմ ամենայնի ընթերցվածը։

2. Հմմտ. Ծննդ., ԺԷ, ԺԸ։ Հռովմ., Դ, 18։ Ա Թագ., Ա, 17—18։

3. Որ է բիւ մի անքաւուրեան—խոսքը յոթ թվի մասին է։ Միջնադարյան մտածողությանը բնորոշ էր թվերին խորհրդանշական իմաստներ վերագրելը։ Թվերի միստիկական նշանակությունը միջնադարը վերցրել էր պյութագորականներից։ Պյութագորականները բացարձականացնում էին իրերի քանակական հարաբերությունները, նրանց էության հիմքում դնելով թիվը։ Զորս թիվը նրանք համարում էին չորս տարրերի խորհրդանիշ, յոթը՝ կույս թիվ, տասը՝ կատարյալ։ Յուրացնելով պյութագորականների այս միստիկան, եկեղեցու հայրերն ու մեկնաբանները ավելի խորացրին այն՝ խորհրդանշական տարբեր իմաստներ վերագրելով հատկապես յոթ թվին։ Յոթը ոչ միայն անբավություն ու անսահմանություն էր նշանակում, այլև ակիզբ ու վախճան, հավիտենություն և հարակայություն; էություն ու կատարելություն, նույնիսկ աստվածություն, անիմանալի և անմեկնարանելի։ Նաև՝ կույս, քանի որ տասի սահմանում նրանից չի ծնվում ոչ մի թիվ և ոչ էլ ինքն է ծնվում՝ իր գումարմամբ կամ բազմապատկմամբ։ Հ. Նալյանը յոթ թվի անբավության իմաստը կապում է նաև հայերեն է տառի բազմիմաստ՝ աստված, և թվային արժեքի՝ յոթ նշանակության հետ (տե՛ս «Գիրք մեկնութեան», էջ 233)։ Նարեկացու այս հատվածում նկատի են առնված յոթ թվին վերագրվող զանազան իմաստներ։ Թվերի միստիկական այս խորհուրդները Նարեկացուն կարող էին հայտնի լինել ամենից առաջ Դավիթ Անհաղթից։ «...Պարտ է գիտել,—գրում է Դավիթ Անհաղթը,—եթէ եւթն թիւդ կոյս լսի, որպէս Աթենայ և ժամանակ։ Եւ կոյս վասն զի ամենայն թիւ ի ներքոյ տասնեկիդ կամ ծնանի զոք կամ ծնանի յումեքէ. իսկ եւթն ոչ ծնանի զոք ի ներքոյ տասնեկիդ և ոչ ծնանի յումեքէ. որզոն, երկուք ծնանի զչորս ի ձեռն բազմապատկութեան, եւ երեք՝ զինն» (Դաւիթ Անյաղթ, Սահմանք իմաստասիրութեան, էջ 112—114)։

4. Բոյլք բանակաց—Պ$_3$-ը, Պոլսի 1782 և 1789 թթ. տպագիրները, ինչպես նաև մեր օգտագործած ձեռագրերի մեծ մասը, ունեն բանակաց։ Բուենոս Այրեսի 1948 թ. հրատարակությունը և մեր KMUVZ ձեռագրերն ունեն վանականաց։ η ունի բնականաց։ Նախընտրում ենք բանականաց տարընթերցվածը։ Նարեկացու խոսքը այստեղ առհասարակ կրոնավորների, իսկ մասնավոր այս դեպքում ուսումնական վարդապետների՝ վարդապետությամբ պարապողների մասին է (տե՛ս «Նարեկլուծ», էջ 160, ծնթ. 9)։

5. Ողորմիս—այսպես ունեն մեր A և ձեռագրերի մեծ մասը, իսկ տպագիրներից՝ միայն Բուենոս Այրեսի 1948 թ. հրատարակությունը։ Սահմանական ներկայի այս ձևը նախընտրեցինք ողորմեսցիս ստորադասական եղանակի երկրորդ ապառնիի ձևից։

6. Ոչ ճո իցէ—Պ$_4$-ը գլխավոր տարբերությունների ցանկում ունի ոչ կեցցէ (էջ 391)։ Այս տարընթերցվածն այլուստ հայտնի չէ մեզ։

ԲԱՆ ԼԲ

1. Վենետիկի 1840 թ. հրատարակությունն ունի ճաստատեալսն։ Այլ աղբյուրից հայտնի չէ այդ ընթերցվածը։ Կարծում ենք ճ հոդը տպագրական վրիպակ է։

2. Տե՛ս Միքիէ, է, 1—7։

3. Տե՛ս Ես., ԾԸ, 1։

4. Տե՛ս Միքիէ, է, 1։ Յովէլ, Ա, 15։

5. Տե՛ս Սաղմ., ԼԱ, 5—6։

6. Հմմտ. Ես., ԾԱ, 1։

7. Նարեկացին հաճախ դիմում է աստծուն՝ անուն բառի հարադրությամբ կազմված կոչականներով՝ անուն կենդանի, վկայեալ անուն, բնաւեալ անուն, անուն անճառութեան, անուն աճաւոր, անուն մեծութեան և այլն։ Նախասիրած այդ գործածություններից մեկն էլ խոստովանեալ անուն արտահայտությունն է՝ գործածված տարբեր գլուխներում, շարահյուսական տարբեր կիրառմամբ. անուն ճզօրիդ խնկեալ և խոստովանեալ, խոստովանեալ անունդ անճնին, անուն 1ս խոստովանեալ աստուծոյ Որդի և այլն։ Այստեղ տ. 66-ում ընտանի անուն և տ. 68-ում խոստովանեալ անուն կոչականներում անուն բառի այսքան մոտիկ գործածությունը անհարիր է Նարեկացու ոճին։ Սպասելի էր, որ անուն բառի փոխարեն մի դեպքում լիներ այլ բառ։ Ընտանի անուն արտահայտությունն օգտագործված է միայն այստեղ և, կարծում ենք, բնագրային է, մինչդեռ խոստովանեալ անուն արտահայտությունը գործածված է տարբեր գլուխներում և, թվում է, այն կարող էր ծագել ազդեցությամբ, սխալմամբ։ Ոչ մի տպագիր կամ ձեռագիր չունի տարընթերցվածք։ Ուստի բնագրում թողնում ենք երկու ընթերցվածներն էլ, համոզված, սակայն, որ այստեղ կա ոճական ինչ-որ անհարազատություն, հետևաբար՝ իմաստային աղճատում։

8. Վենետիկի 1840 թ. տպագիրը և նրանից ծագող արտատպությունները, ինչպես նաև մեր Ս-ն ճայի բառի փոխարեն ունեն ճայր։ Տարընթերցվածը հայտնի չի եղել Գ. Ավետիքյանին։ Եթե տպագրի սրբագրման համար հիմք դարձած լինի նույնիսկ ձեռագրական վկայություն, ապա այն իր հերթին պետք է լինի գրչագրական վրիպակ՝ ծագած Ի և Ր տառերի շփոթությունից։ Հայի բառն այստեղ ակն բառի ստորոգյալն է, և տողն ունի շարահյուսական ճիշտ կառուցվածք։

9. Նարեկացին այստեղ զուգահեռ է տանում ավետարանում հիշատակված մեղավոր կնոջ և իր միջև։ Նա դարձ է աղերսում, արցունքով թրջելով Հիսուսի ոտքերը, ինչը պաղատում է Քրիստոսին՝ նրա անարատ մարդեղության ոտքերն ընկած՝ համաշնչապես նրան միանալու հույսով։ «Եւ կին մի էր ի քաղաքին մեղաւոր. իբրև գիտաց, թէ բազմեալ է ի տան փարիսեցւոյն, բերեալ շիշ մի իւղոյ ազնուի. կայր յետոյ առ ոտս նորա, լայր. և արտասուօքն սկսաւ թանալ զոտս նորա, և հերով գլխոյ իւրոյ ջնջէր, և համբուրէր զոտս նորա, և օծանէր իւղովն» (Ղուկ. է, 37—38)։ Ըստ Հովհաննես ավետարանչի՝ այդ կինը եղել է Մարթայի և Ղազարոսի քույր Մարիամը. «Այս այն Մարիամն էր, որ օծ զտէրն իւղով, և ջնջեաց զոտս նորա հերով իւրով, որոյ եղբայրն Ղազարոս հիւանդ էր» (Յովհ. ԺԱ, 2)։ Հ. Նալյանը անանուն այդ կնոջը նույնացնում է Մարիամ Մագթաղինացու հետ։ «Ընկալ և զայս ողբերգութիւնս՝ ի տեղի ցօղոյ արտասուաց,—գրում է Նալյանը,—որով ի հեռաստանէ լուանալ կամիմ զոտս մարդեղութեան քոյ, և զխորհրդոյ մեղանս իմ յայտնեմ քեզ օրինակաւ հերաց Մագդաղենացւոյն, որով ցացանեմ թէ՝ և խորհրդովս առ քեզ դառնամ...» («Գիրք Մեկնութեան», էջ 244)։ Ո՞ր Մարիամի մասին է խոսքը, դա, ըստ էության, կարևոր չէ։ Բանն այն է, որ Մարիամների այդ շփոթության հարցը հուզել է բազմաթիվ մեկնաբանների, որոնք, սակայն, հանգել են այն եզրակացության, որ Ղուկասի ավետարանում հիշատակված մեղավոր կնոջ անունը ավետարանիչը չի տվել և սխալ է նրան նույնացնել Մարիամ Մագթաղինացու կամ Մարթայի և Ղազարոսի քույր Մարիամի հետ (տե՛ս Encyclopédie théologique, t. 3, Paris, 1846, էջ 382—384)։ Հետաքրքիր է, որ Նարեկացին ևս նրան կոչում է «յանցաւոր»՝ առանց սակայն անունը տալու։

10. Խզեցին խաղրճ—խաղր (որոգայթ, թակարդ) բառը՝ հոգնակի ձևով, Նարեկացին օգտագործել է բազմիցս. կորուսչին խաղրճ պաճեալ, կանգնես զմատնեալն խաղրից գլորման,

մաՐՐեսցես ի խաղբից զծածկարան անկողնոյս, ի խաղբս մանու անզգայապէս, խայտառակեսցին խաղբիցն դրուիւնՐ և այլն։ Այս բառը ձեռագրերում վկայված է գրության երկու ձևով՝ խաղբ և ճաղբ: Գ. Ավետիքյանին ևս հայտնի է եղել ճաղբն ձևը (տե՛ս «Նարեկլուծ», էջ 166, ծնթ. 15)։ Ըստ Հր. Աճառյանի, բառի ճիշտ և հին ձևն է խաղբ, նոր և սխալ ձևը՝ ճաղբ (տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, 1977, էջ 14)։ Նախընտրում ենք խաղբն ճիշտ ձևը։ Ավետիքյանը ևս նախընտրել է այս ձևը, գտնելով, որ Նարեկացին այստեղ դիմել է հանգիտության, քանի որ «յաջորդ հատուածքն նոյնատառ բառիւք ձևանան» («Նարեկլուծ», էջ 166, ծնթ. 15). Խզեսցին խաղբն, ոռշեսցին ոռզայրՐն, կապտեսցին կապանՐն, վանեսցին վինն» և այլն։ Պետք է ընդունել նաև, որ Նարեկացին օգտագործել է բառի նախնական ձևը։

11. Այս տողում «Նարեկլուծի» Թե՛ 1801 և Թե՛ 1827 թթ. տպագրերն ունեն անձնաւորութեան, որը, հավանաբար, տպագրական վրիպակ է։

ԲԱՆ ԼԳ

1. Տե՛ս Մատթ., ԻԶ, 6—13։ Յովհ., ԺԲ, 3։
2. Համտ. Ովսէէ, Ա, 2, Գ, 1—3։
3. Տե՛ս Եզեկ., ԺԶ, 16։
4. Տե՛ս Բ. Օրին., ԼԲ, 24։
5. Յիշատակաւ Հաւրն բարձրելոյ՝ յՈրդին կցորդութիւն—բանասիրության մեջ, ելնելով առանձին գլուխների դավանաբանական բնույթից, այն կարծիքն է արտահայտվել, որ ինչպես մի քանի ամբողջական գլուխներ (ՀԵ, ՂԲ, ՂԳ), այնպես էլ մի քանի գլուխների (ԻԶ, ԼԳ, ԼԴ) առանձին մասեր չեն պատկանում Նարեկացու գրչին և կամ սկզբնապես չեն եղել Մատյանում։ Դրանց մի մասը համարվել է նույնիսկ թարգմանություն (տե՛ս «Բազմավէպ», 1900, էջ 446)։ Քննարկելով այս հարցերը, Մ. Մկրյանը հանգում է այն եզրակացության, թե «Նարեկացին ՂԲ և ՂԳ ոչ բանաստեղծական գլուխները, ինչպես և ՀԵ ու մի քանի այլ գլուխների վերջին հատվածները կամ բոլորովին ինքը չի գրել, կամ եթե երբևէ ինքն է գրել, ապա դրանք հորինել է անկախ իր պոեմից, այլ նպատակներով, որոնք սակայն հետագայում գրիչների կողմից ինչ-ինչ նկատառումներով խառնվել են բուն պոեմի տեքստին» (Մ. Մկրյան, Գրիգոր Նարեկացի, էջ 177)։ Թարգմանիչներից ոմանց համար (Մ. Խերանյան, Վ. Գևորգյան) սա հիմք է հանդիսացել թարգմանությունից դուրս թողնելու մի քանի գլուխներ (ՀԵ, ՂԲ, ՂԳ) ամբողջությամբ, կամ թարգմանելու մի քանի գլուխների (ԻԶ, ԼԳ, ԼԴ) միայն առանձին հատվածներ, իսկ Գ. Խաչատրյանը նպատակահարմար է գտել ՀԵ, ՂԲ և ՂԳ գլուխները դնել որպես հավելված՝ պահպանելով, սակայն, գլուխների հաջորդական կարգը։ «Պոեմի ՀԵ, ՂԲ և ՂԳ գլուխներն ամբողջությամբ, ինչպես և առանձին ենթամասեր՝ ԼԳ, ԼԴ և ԼԶ գլուխներում ունեն զուտ դավանաբանական և կրոնա-փիլիսոփայական բնույթ ու բովանդակություն,—գրում է Մ. Խերանյանը,—որոնք իրենց ոճով ու ոգով անհարիր լինելով ընդհանուր պոեմի հետ, մեր կարծիքով, հազիվ թե հանճարեղ հեղինակի գրչին պատկանեն» (տե՛ս Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, գրաբարից թարգմանեց Մկրտիչ Խերանյան, Երևան, 1960, էջ XXXIV)։ Այս կարծիքները չի կարելի հիմնավոր համարել։ Ձեռագրերը հիմք չեն տալիս կասկածելու, թե դրանց հեղինակը Նարեկացին չէ, թե դրանք կարող են թարգմանություն լինել, թե դրանք սկզբնապես չեն եղել Մատյանում, այլ ընդմիջարկվել են գրիչների կողմից։ Թարգմանություն համարելու վարկածն առաջացել է ՂԲ գլխի «աղաչանս եղեալ ընդ կերպարանս թարգմանութեանն» և ՂԳ գլխի «ամղաւթք թարգմանաւրէն» արտահայտություններից, ուր թարգմանութիւն բառը նշանակում է մեկնություն, բացատրություն։ Ըստ Հ. Նալյանի՝ «թարգմանօրէն բառս՝ աստէն իմանի մեկնօղօրէն»

(տե՛ս «Գիրք մեկնութեան», էջ 678), իսկ ըստ Ավետիքյանի՝ «աղաչանս եղեալ ընդ կերպարանս թարգմանութեանն» նշանակում է աղոթք՝ «հանդերձ տեսութեամբ մեկնութեանն, կամ ըստ օրինակի բացայայտութեան» (տե՛ս «Նարեկլուծ», էջ 481, ծնթ. 1)։ Որ ԼԳ գլուխը սկզբնապես եղել է Մատյանում՝ վեր է կասկածից։ Որ նրա մասերը մտել են այդ գլխի մեջ՝ նույնպես։ Նարեկացին այդ գլուխը նվիրել է իր դավանանքի արտահայտմանը։ Դա երևում է հենց առաջին տողի «զյարմարութիւն պաշտաման բանիս» արտահայտությունից։ Ապա բանաստեղծը խնդրում է աստծուց, որ խոստովանության իր այդ մատյանի բուրումն ազդի շատերին («Այլ արասցես զաւրանալ կրկին յաճախութեամբ բուրման խոստովանութեան այսր մատենի՝ ի բազումս ազդեալ»), որից հետո փոխում է խոսքի եղանակը («Այլ յայլ աւրինակ փոխեալ զմատեան մաղթանաց այսր ողբերգութեան»), իր մեղապարտության պատիժը մարգարեներից վկայակոչված խոսքերով հաստուցելու համար, որն ավարտվում է այն խոր հավատով, թե Քրիստոսի Ավետարանը կյանք է («զի Քրիստոսեան աւետարանն՝ կեանս է ամենեցին») և միանգամայն բնականբար անցնում է Հոր, Որդու և Սուրբ Հոգու դրվատմանը։

6. Բուենոս Այրեսի 1948 թ. տպագիրն այստեղ սկզբան բառի փոխարեն ունի սկզբնական։ Եթե տպագրական վրիպակ չէ, ապա պետք է Այս տարընթերցվածը հայտնի չէ այլ աղբյուրից։ ենթադրել, որ բառը սրբագրել է Գ. Խաչատրյանը՝ թերևս ըստ իր ունեցած ձեռագրի։

7. Այս տողից հետո բոլոր տպագիրներն ու ձեռագրերը, բացի -ից, ~ -ից, որ տեղ է ունեն «Աղաւթք, որ նախքան պատարագն թողել, բայց չի լրացրել և O-ից, որ պակասավոր է, մատուցանի» ենթախորագիրը։ C-ում ենթախորագրի տակ, լուսանցքում, ուշ գրչությամբ նշված է. «Զայս կարմիր գրով ի կարգն գրէ՝ խորագիր և ոչ ի վեր» (էջ 73ա)։ Ի տարբերություն C-ի Ь-ն ունի. «Ի վերս գրէ» (էջ 68ա)։ Kh-ը, ինչպես նաև Վատիկանի ձեռագրերը այս և հաջորդ հատվածները դիտել են իբրև առանձին գլուխ՝ «Բան ԼԵ» համարակալմամբ։ Y ենթավերնագրից հետո ունի. «Աւգնեա՛յ Հոգիդ Սուրբ աստուած»։ O-ում ենթավերնագիրը գրեթե բառացի վերցված է Ներսես Լամբրոնացու Պատարագի մեկնությունից. «Եւ մատուցեալ անգանի առաջի սեղանոյն լուռ և անմռունչ եւ ասէ զաղաւթս առ Սուրբ Հոգին՝ անաւրէն գործոյն» (Համտ. «Սրբոյն Ներսեսի Լամբրոնացւոյ Տարսոնի եպիսկոպոսի խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ և մեկնութիւն խորհրդոյ պատարագին», Վենետիկ, 1847, էջ 195)։ Լամբրոնացին մեջ է բերել և մեկնարանել Նարեկացու այս հատվածները, առաջին դեպքում լրիվ (տ. 98—179), երկրորդ դեպքում՝ առանց վերջին տողերի (տ. 98—173) (տե՛ս «Մեկնութիւն խորհրդոյ պատարագին», էջ 195—197 և էջ 250—260)։ Երկու դեպքում էլ Լամբրոնացին չի բերում ենթախորագիրը, թեև մեր A ձեռագիրը, որը գրված է նրա պատվերով և պատկանում էր Լամբրոնացուն, ունի ենթախորագիրը թե՛ սկզբից՝ ցանկում և թե՛ իր տեղը՝ գլխում։ Ենթախորագիրը, կարծում ենք, հեղինակինը չէ (տե՛ս մեր ծանոթագրությունը Բան ԺԲ, ծնթ. 4)։ Պատարագի մեկնության մեջ Լամբրոնացին, բնականաբար, պետք է օգտագործեր մեր A ձեռագիրը, որն իր օրինակն էր։ Տպագիրը, սակայն, մեր A-ի համեմատությամբ ունի որոշ տարբերություններ և տարընթերցվածներ։ Դրանք կարող էին առաջ գալ նախ՝ Պատարագի մեկնության ընդօրինակությունների ժամանակ, գրչագրական վրիպակների հետևանքով, երկրորդ, Նարեկացու Մատյանի այլ, Լամբրոնացու օրինակից տարբեր, ձեռագրերի օգտագործման դեպքում և, վերջապես, Լամբրոնացին ինքը, ելնելով իր երկի բնույթից, կարող էր խմբագրական վերաբերմունք ունենալ։ Այստեղ տալիս ենք այդ տարբերություններից ու տարընթերցվածներից առավել կարևորները։ Պատարագի Մեկնությունը (տե՛ս սույն գլխի ծնթ. 7) ևս ունի այսպես (էջ 195 և 250)։

8. A ունի Ամենակալ աստուած բարերար, Պատարագի Մեկնությունը՝ ընողի (էջ 195), ընող (էջ 251)։

9. A ունի ընութեան, Լամբրոնացու Մեկնությունը՝ ջրոցն (էջ 195 և 252)։

10. Համտ. Ա Կորնթ., Բ, 10։

11. A ունի ջրոյն, Լամբրոնացու

12. A ունի շրջակրութեամբ, Լամբրոնացու Մեկնությունը՝ շրջարկութեամբ (էջ 195 և 252)։

13. A ունի զկատուցանելն զլոյծ մածուածդ, Լամբրոնացու Մեկնությունը՝ զկատուցանել զլոյծ մանուած (էջ 195) և զկատուցանել զլոյծ մածուած (էջ 253)։ Մեր տսճ ձեռագրերը ևս ունեն մանուած։

14. Չքո բառի փոխարեն Լամբրոնացու Մեկնությունն ունի զ' ի քէն (էջ 196 և 253)։ Այդ ընթերցվածը չունեն մեր օգտագործած ձեռագրերը։

15. Հմմտ. Մատթ., ԺԲ, 10։

16. Բոլոր տպագիրները 141—143 տողերն ունեն որպես ենթախորագիր։ Այդ տողերը հեղինակինն են, բնագրային և գտնվում են իրենց տեղում։ Լամբրոնացին ևս իր Պատարագի մեկնության մեջ դրանք դիտում է բնագրի շարունակություն, հեղինակի դիմում Սուրբ Հոգուն։ Մինչ այդ բանաստեղծը հիշատակում է Սուրբ Հոգու սքանչելիքները, բարեբանում է նրան, ապա անցնում խնդրանքի՝ մինչև որ բազմապատիկ թախանձանքներով կարողանա Սուրբ Հոգու գթության լույսը «խոնարհեցուցանել, և հրաշալի ազդմամբ առ իս ձգել»՝ ավետարանելու համար «խառնվեալ խորհրդոյս խաղաղութիւն և հանդարտութիւն» (էջ 254—255)։

17. A-ն գրել է վստահութիւնն, սրբագրել՝ վերահայեցութիւնն։ Մեկնությունն ունի վերահայեցութիւն (էջ 196) և վերահայեցողութիւն (էջ 254) տողատակին՝ իբրև տարընթերցված։ Հ. Նալյանն այս բառի առթիվ գրել է. «Ի ձեռագիր օրինակս ոչ գտանի վերահայեցողութիւն բառս» («Գիրք մեկնութեան», էջ 258)։ O-ն ունի ազդեալ յայտնեցլի։ Լամբրոնացու Մեկնությունը ևս։ Այս նույնությունը ևս ցույց է տալիս O-ի՝ Մեկնության հետ ունեցող աղերսը։

18. Հմմտ. Հռովմ., Ը, 26։

19. Հմմտ. Ա. Կորնթ., Գ, 16։

20. Հմմտ. Մատթ., ԺԸ, 20։ Ա Կորնթ., Զ, 17։

21. Այս տողում Լամբրոնացու Մեկնությունն ունի մի դեպքում Իսկ դու ընկալցիս (էջ 196), ինչպես A-ն մյուս դեպքում՝ Իսկ և դու ուղէս զհամակամ ընկալցիս (էջ 256), որ չունեն ո՛չ մեր ձեռագրերը և ո՛չ էլ տպագիրները։ Տարընթերցվածը, թերևս, Լամբրոնացու խմբագրական վերաբերմունքի արդյունք է։

22. Հմմտ. Յովհ., Զ, 49—52։

23. Հմմտ. Ես., Զ, 6—7Ֆ։

24. Լամբրոնացու Մեկնությունն ունի յայսմ ամենայնի։ Այսպես ունեն նաև OZՑs-ը և $Պ_1$-ը։

ԲԱՆ ԼԴ

1. ...զոր ի նախնին ճառեալ եւ յերկրորդումս ցուցից—նախորդ՝ ԼԳ գլխի նման այս գլուխը ևս ունի դավանաբանական բովանդակություն։ Առաջին մասը նվիրված է Սուրբ Հոգուն՝ ասեխնախոսության կամ բեմախոսության շնորհի հայցմամբ, երկրորդ մասը՝ Նիկիական հավատի հանգանակին, երրորդը՝ գոհաբանություն է Քրիստոսին։ Որ այս գլուխը ևս սկզբնապես եղել է Մատյանում, ակներև է հենց բերված արտահայտությունից։ ԼԴ գլուխը ԼԳ գլխի տրամաբանական շարունակությունն է թե՛ կառուցվածքային և թե՛ բովանդակության առումով։ Որ այս գլխի մասերը ևս կազմում են կառուցվածքային մի ամբողջություն, ակներև է Նարեկացու այն արտահայտություններից, որոնք նշում են անցման կապը։ Սուրբ Հոգուն դիմելուց առաջ Նարեկացին նշում է այսպես. «Իսկ յանդիմանութիւնս գրաբանականս՝ ի կոյտս բազմութեան ազգաց և բարգմանութիւնս ժողովրդոց, զայս արգահատութիւնս մաղթողականս նուիրեցի, զոր ներքնաշարեալքդ սահմանադրեն գոհաբանութիւնք», (բան ԼԴ, տ. 4—6), Նիկիական հավատի հանգանակը շարադրելուց առաջ՝ այսպես. «Իսկ զհաւատոյ սահման բանի ընտրութեան շնորհի կե-

նաց կանոնի առ համագոյ Սուրբ Երրորդութեանն զայս վարդապետեցի, զոր շափղ կարգիդ վե-
րանկարէ» (բան ԼԴ, տ. 33—35), շարադրանքն ավարտելուց հետո՝ այսպես. «Արդ, զայս գո-
չումն ծածուկ խորհրդոց կերպատրելոց յայսմ մատենի, ամենալուր ականջաց մեծիդ աստուծոյ
ընծայեցուցի» (բան ԼԴ, տ. 121—122)։ Ուշադրության արժանի է նաև Նարեկացու հետևյալ
արտահայտությունը. «Այլ արդ, քանզի բազմաւք պաղատեցայ դրուատաւք խանդաղատականաւք,
որ ոչ է գրեալ ի յայս կարգ ձայնի, լո՛ւր, բարեգութ, ըստ սմին բանի այնմ ամենայնի» (բան
ԼԴ, տ. 133—135)։ Իր այս պաղատանքների հետ բանաստեղծը խնդրում է աստծուն՝ լսել նաև
խանդաղատանքով գրված իր մյուս՝ այլ բնույթի, բայց ոչ այս կարգի գրվածքների խնդրվածք-
ները։ Թե՛ ԼԳ և թե՛ ԼԴ գլուխներն ունեն բոլոր ձեռագրերը։
2. Այս տողից հետո բոլոր ձեռագրերն ու տպագիրները, բացի Բուենոս Այրեսի 1948 թ.
հրատարակությունից, ունեն «Ի հանդիսարանս խաւսից ատենի՝ բանս մաղթանաց, որով Հոգին
աստուծոյ հաշտեալ՝ հասանէ յաւգնականութիւն» ենթախորագիրը։ Կարծում ենք, որ ենթախո-
րագրերն առհասարակ հեղինակային չեն, որ դրանք ծագում են Նարեկացու բնագրից՝ համա-
պատասխան խմբագրմամբ (տե՛ս բան ԺԲ, ծնթ. 4)։ Այստեղ ևս ենթախորագիրն արտածված է
Նարեկացու հետևյալ տողերից. «Իսկ յանդիմանութիւնս գրաբանականս՝ ի կոյտս բազմաւք
մութեան ազգաց եւ բարգմանութիւնս ժողովրդոց, զայս արգահատութիւնս մաղթողականս նուի-
րեցի»։ Ուր բանաստեղծն այն պարզ միտքն է արտահայտում, որ ինքը՝ բանախոսությամբ,
քարոզով, բեմախոսությամբ բազմության, ժողովրդի առջև հանդես գալուց առաջ աղոթքով դիմում է
Սուրբ Հոգուն, որ նա լուսավորի իր միտքը աստվածային գիտության անսովոր ծագմամբ, որ ինքն
արժանի լինի «առնել եւ ուսուցանել՝ յաւիտենակ բարեաց աստուածասէր լսողաց»։
3. Որ ձեռնադրես առաքեալս... բարբառեցուցանես համբրս.—Հմմտ. «Եւ զորս եդն աստուած
Պ$_4$-ը և նրանից ծագող տպագիրները 7—32 տողերը դիտել են իբրև առանձին հատված՝
Բ համարակալմամբ։ Գտնելով, որ ենթախորագիրը բնագրային չէ, իսկ 1—6-րդ տողերը ուղ-
ղակի նախադրություն են, որին հաջորդում է Նարեկացու մաղթանքը, 7—32-րդ տողերը մենք
դնում ենք որպես մեկ՝ Ա հատված։
յեկեղեցւոջ՝ այս են. նախ զառաքեալս, երկրորդ զմարգարէս, երրորդ զվարդապետս, ապա զօ-
րութիւնս, վարիչս, ազգս լեզուաց, բարգմանութիւնս լեզուաց» (տե՛ս Ա Կորնթ., ԺԲ, 28)։
4. Այս տողից հետո Պ$_4$-ը և նրանից ծագող տպագիրների Բ հատվածը։ Մի շարք ձեռագրերում
35 տողերը, որոնցով էլ ավարտվում է այդ տպագիրների Բ հատվածը սկսում են այդ տողերով,
DPαλbhikpx և այլն) այդ տողերը դիտված են որպես հաջորդ (մեր Բ) հատվածի սկիզբ կամ
նախադրություն։ Մեր K-ն և Վատիկանի ձեռագիրը ևս նոր հատվածը շարունակությունը դիտել են իբրև
բայց այն տարբերությամբ, որ երկուսն էլ տ. 33-ից սկսած՝ շարունակությունը դիտել են իբրև
առանձին գլուխ՝ «Բան ԼԷ» համարակալմամբ։ Հետևելով K. Վատիկանի և մեր մի շարք այլ
ձեռագրերի կառուցվածքին, մենք 33—35 տողերը դնում ենք հատվածի սկիզբ։ Թ. Գուշակյանը
այս տողերը դուրս է թողել իր թարգմանությունից (տե՛ս «Նարեկ աղոթամատեան», էջ 113)։
5. Բոլոր տպագիրներն ու ձեռագրերի մեծ մասը, բացի HNOVՅΓn-ից և O-ից, որ պակա-
սավոր է, այս տողից հետո, իսկ մեր K-ն և Վատիկանի ձեռագիրը տ. 32-ից հետո, լուսանց-
քում կամ բնագրի կարգում, ունեն «Երրորդութիւն անայլայլական նորոգ սահմանադրութեան
ազդեալ յաստուծոյ, յոր ինչ ի Նիկիայն սահմանեցաւ հաւատ» ենթախորագիրը։ K-ն այս են-
թախորագրից առաջ ունի «Վերստին յաւելուած կրկին հեծութեան ձորին հսկողի», իսկ Վատի-
կանի ձեռագիրը՝ «Նորին խաւսք ընդ աստուծոյ» ինչ պայմանավորված է նրանով, որ այդ եր-
կուսն էլ, ինչպես տեսցինք, տ. 33-ից սկսած՝ շարունակությունը դիտել են իբրև նոր գլուխ՝
«Բան ԼԷ» համարակալմամբ։ Ե-ի գրիչը ենթավերնագրի համար ունի նշում՝ «Ի դուռս գրէ»՝
այսինքն լուսանցքում գրիր (էջ 70բ)։ Այս ենթախորագիրը ևս, կարծում ենք, որ հեղինակինը չէ
(տե՛ս բան ԺԲ, ծնթ. 6)։ Այն արտածված է Նարեկացու «Իսկ զհաւատոյ սահման բանի ընտ-

ռութեան շնորհի կենաց կանոնի առ համագոյ Սուրբ Երրորդութեանն զայս վարդապետեցի» (բան ԼԴ, տ. 33—34) տողերից՝ խմբագրական մուտքմամբ: Այս հատվածը, ինչպես հեղինակի «առ համագոյ Սուրբ Երրորդութեանն զայս վարդապետեցի» արտահայտությունն է հուշում, ունի դավանաբանական բնույթ: Նարեկացին տալիս է իր հավատի հանգանակը, հայ լուսավորչական եկեղեցու իր դավանությունը, որը հիմնականում հարում է Նիկիայի 325 թ. տիեզերական ժողովի ընդունած հավատի հանգանակին: Գլխի շարունակությունը՝ 36-րդ տողից սկսած, տեղ է գտել առանձին ժողովածուներում՝ նոր վերնագրմամբ: Ահա դրանցից մեկը. «Կարգ և կանոն աղաւթից զոր խնդրեալ է հոգէկիր արանց՝ յամենէ միայնացելոյ՝ արթուն և զուարթուն հոգւոյ Գրիգորի Նարեկացւոյ, որ և ցուցանէ նախադրութիւն բանիս, թէ ոչ համարի զանձն արժանի այսպիսի իրի, վասն այն զառաքելոյն ի մէջ առեալ դնէ սկիզբն կանոնիս պատմութեան և ոգէշահ խրատու» (Մատենադարան, ձեռ. 1326, էջ 250ա): Աղոթքի այս կանոնը իսկապես ունի նախադրություն՝ աղոթքի նշանակության պարզաբանմամբ, որին հաջորդում է ԼԴ գլխից մի հատված՝ «Խոստովանիմք եւ դաւանեմք... իբր զշունչ ինչ անդասելի»: Կան ոչ կարևոր, ուղղագրական բնույթի տարընթերցվածներ: Նարեկացուն վերագրված այս աղոթքը տե՛ս նաև «Գիրք, որ կոչի Մեկնութիւն աղօթից», Կ. Պոլիս, 1730, էջ 408—20):

6. ... ամպով անհեննութեան ծածկեցաւ—Հմմտ. «Եւ ամպն կալաւ զնա յաչաց նոցա» (տե՛ս Գործք, Ա, 9):

7. ... որ յանէից գոյացոյց զբոլոր եղեալքս.—քերականորեն ճիշտ ձևը պետք է լիներ եղեալսս: Նարեկացին, ըստ երևույթին, հետևել է կենդանի խոսքի տարածված ձևին:

8. ... զմկրտեալսս ի մահն Քրիստոսի—Հմմտ. «...զի որ միանգամ մկրտեցաք ի Քրիստոս Յիսուս, ի մահ անդր նորա մկրտեցաք» (տե՛ս Հռովմ., Զ, 3):

9. ... զամենայնն—այսպես ունի միայն Գ. Ավետիքյանի 1827 թ. «Նարեկլուծի» հրատարակությունը (տե՛ս «Նարեկլուծ», էջ 182): Ն հոդը հավանաբար տպագրական վրիպակ է:

10. ... լռութեան—այսպես ունեն Պ$_{1-3}$-ը, Պոլսի 1782 և 1789 թթ. տպագրները, ինչպես նաև Վենետիկի 1840 և Բուենոս Այրեսի 1948 թ. հրատարակությունները: Պ$_4$-ը, նրանից ծագող տպագրները, «Նարեկլուծի» 1827 թ. հրատարակությունը ունեն լռութենէ: Վերջինս չի տալիս մեր օգտագործած ձեռագրերից ոչ մեկը: Նախընտրում ենք լռութեան տարընթերցվածը:

11. ... ասել Ադոնայի տէր, եւ զհրամայեալ պատուէրդ ոչ առնել—Հմմտ. «Զի կոչէք զիս՝ տէր, տէր, և զոր ասեմն ոչ առնէք» (տե՛ս Ղուկ., Զ, 46):

12. ... զոսկեղէն տախտակս խաւսից... զգրեալս մատամբդ աստուծոյ—Հմմտ. «...տախտակս քարեղէնս գրեալս մատամբն աստուծոյ» (տե՛ս Ելք, ԼԱ, 18):

13. ... դրուատաւք խանդաղատականաւք—Պ$_1$-ը, Պ$_4$-ը և նրանից ծագող տպագրները, ինչպես նաև «Նարեկլուծը» և Բուենոս Այրեսի 1948 թ. հրատարակությունը ունեն դրուակաւք: Մեր Պ$_{2-3}$-ը, ինչպես նաև Պոլսի 1782 և 1789 թթ. հրատարակություններն ունեն դրուատաւք: Մեր A-ն, 13 այլ ձեռագրեր և Վատիկանի ձեռագիրը ևս ունեն դրուատաւք: Այս տարընթերցվածը չի վկայակոչված ոչ Պ$_4$-ի գլխավոր տարբերությունների ցանկում և ոչ էլ Գ. Ավետիքյանի ծանոթագրություններում: Ձեռագրերից բացի այն կարող էր հրատարակիչներին հայտնի լինել նախորդ՝ Պ$_2$ և նրանից ծագող արտատպություններից: Նախընտրում ենք դրուատաւք տարընթերցվածը, քանի որ, եթե մի պահ ընդունենք, որ պետք է լինի դրուակաւք, այսինքն՝ դրվագներով, ապա առաջ կգա իմաստային անճշտություն: Նարեկացին ԼԳ և ԼԴ գլուխներում գլխավորապես շարադրում է իր հավատո հանգանակը, իր դավանանքը: Դա պահանջում է այլ ոճ, խոսքի այլ կարգ, այլ եղանակ: Այլ կերպ ասած՝ դրանք սրտահույզ, աղոթական ու զղջման արցունքներով գրված տողեր չեն, և բանաստեղծը դիմում է ասածն իր դավանության խոստովանության հետ ընդունել նաև այն խոսքերը, այն բազում պաղատանքները, որոնք

ասված են «դրուատաւք խանդաղատականաւք»՝ խանդաղատագին դրվատանքներով և որոնք ոչ են «գրեալ ի յայս կարգ ձայնի» (տե՛ս բան ԼԴ, տ. 134—135):

14. ... հացի պանից բաղարջոց՝ իւղով զանգելոց—Հմմտ. «... և պանս բաղարջս... զանգեալ իւղով» (տե՛ս Ելք, ԻԹ, 2):

15. Հեղիաս—Նկատի ունի Եղիա մարգարեին (տե՛ս Գ Թագ., ԺԹ, 9): Եղիա մարգարեի անունը Հեղիաս գրությամբ չի վկայակոչված Սուրբ Գրքում: Հակառակ դրան՝ Մատյանի ոչ մի ձեռագիր կամ տպագիր չի տալիս Եղիա ընթերցվածը: Եղիա մարգարեի անունը Հեղիաս գրությամբ հանդիպում է նաև ՂԳ գլխի 108-րդ տողում: Այստեղ ևս չկա Եղիա տարընթերցված: Հեղիաս ձևը Նարեկացուն կարող էր հայտնի լինել հունարենից կատարված այդ տառադարձմամբ՝ թարգմանական գրականությունից:

16. ... ի շարժումն մեծ, ի հողմս ուժգին, ի հուրն կիզանողական—Հմմտ. «Եւ ահա տէր անցցէ, և հողմ մեծ ուժգին, որ զլերինս քակիցէ զվէմս խորտակիցէ առաջի տեառն, և ոչ ի հողմն տէր, և յետ հողմոյն շարժումն, և ոչ ի շարժմանն տէր, և յետ շարժմանն հուր, և ոչ ի հուրն տէր...» (տե՛ս Գ Թագ., ԺԹ, 11—12):

17. ... ի հանդարտութիւն մեղմութեան օդոյն քաղցրութեան—Հմմտ. «... յետ հրոյն ձայն մեղմ օդոյ, և անդ տէր» (տե՛ս Գ Թագ., ԺԹ, 12):

18. ... քանզի կամաց ողորմութեանց դու միայն ես—Հմմտ. «Ո՞վ է աստուած իբրև զքեզ, որ բառնայ զանօրէնութիւնս... զի կամեցող ողորմութեան է» (տե՛ս Միքիէ, Է, 18):

19. ... ողորմեա՛ Երուսաղեմի—Հմմտ. «Մինչև ցե՞րբ ոչ ողորմեսցիս ի վերայ Երուսաղեմի» (տե՛ս Զաք., Ա, 12):

20. Հմմտ. Երր., Է, 25:

ԲԱՆ ԼԵ

1. Հմմտ. Սաղմ., Ը, 4:

2. Հմմտ. Երր., Ա, 14:

3. Հմմտ. Մատթ., Թ, 2: Ղուկ., Ե, 18—20:

4. Պ$_1$-ը ունի չափք փառք հրաշից քեզ: Պ$_{2-3}$-ը, ինչպես նաև Պոլսի 1782 և 1789 թթ. տպագիրներն ունեն չափք փառաց հրաշից քեզ: Պ$_4$-ը գլխավոր տարբերությունների ցանկում ունի փառք հրաշից և չափք փառաց հրաշից քեզ (էջ 391): Մեր օգտագործած ձեռագրերը չեն տալիս այս ընթերցվածները: Պ$_1$-ի չափք փառք հրաշից քեզ կապակցությունն ունի շարահյուսական անկանոնություն: Թերևս տպագիրների մյուս ընթերցվածները ծագել են Պ$_1$-ից՝ շարահյուսական համաձայնության կանոնավորմամբ:

5. Հմմտ. Ղևտ., Ի, 8:

6. Հմմտ. Ելք, Դ, 6—7:

7. Հմմտ. Յեսու, ԻԴ, 14: Ելք, Բ, 24—25:

8. Դու ես, որ փոխարէս զքարեղէն սրտից կարծրութիւն ի լոյծ կակղութեան մարմնոյ գոյութեան—Հմմտ. «Եւ հանից զսիրտ քարեղէն ի մարմնոց նոցա և տաց նոցա սիրտ մարմնեղէն» (տե՛ս Եզեկ., ԺԱ, 19, ԼԶ, 26):

9. Տե՛ս Երեմ., ԼԲ, 40: Մաղաք., Բ, 5:

10. Դուռն բառի հոգնակին գրաբարում ունի երկու ձև՝ դրունք և դուրք, սեռականում համապատասխանաբար՝ դրանց և դրաց: Այս երկու ձևերն էլ հարազատ են Նարեկացու ոճին. տագնապաւ մեծաւ առ դուրս իմն հասեալ (բան, Ա, տ. 58), զիմաստիցն դրունս փակեալ (բան ԻԱ,

տ. 51), փարթամբն ընչիւ ոչ դեգերին առ դուռս լիոցն (բան ՄԹ, տ. 22), զականջացս դրանս խցցես (բան ԺԹ, տ. 39), խորտակեալ դրացս վտանճարան (բան Բ, տ. 27), դարձայց միւսանգամ ի դրաց դժոխոց (բան ՀԹ, տ. 120) և այլն:

11. Հմմտ. Մարկ., Է, 33—35: Թ. Գուշակյանի թարգմանության մեջ չկա այս տողը («Նարեկ աղոթամատյան», էջ 122):

12. Մի՛ յանդգնաբար խաւսելով իբր զնախնին—նկատի ունի Ադամին (տե՛ս Ծննդ., Գ, 9—13): Հին լուծմունքը բնաբան վերցնելով այս տողի յանդգնաբար բառը, տողը մեկնում է այսպես. «ԼՄ. զի ասաց կինս զոր ետուր. և այլն» (ձեռ. 5650, էջ 377բ): Մեր Ո-ը ևս ունի այս մեկնաբանությունը՝ փոքր-ինչ ընդարձակված. «ԼՄ. զի ասաց Ադամ. կինս, որ ետուր ինձ. և այլն որ զկնի. և այն լրբութիւն մի էր» (էջ 170ա, լուսանցքում):

13. Անբանութեան.—այսպես ունեն մեզ հայտնի 10 ձեռագիր: Այդ թվում՝ նաև Վատիկանի ձեռագիրը. β ունի սրբագրությամբ: A-ն և ձեռագրերի ճնշող մեծամասնությունն ունեն անբաւութեան: Տողի իմաստին հարիր է անբանութեան ընթերցվածը՝ լռության, անխոսության մատնվել. անբանութեան մատնեցայց: Անբաւութեան տարընթերցվածը, ի թիվս գրչագրական շփոթության և այլ պատճառների, կարող էր ծագել մի քանի տող հետո այդ բառի գործածությունից (առակ մեծութեան քումդ անբաւութեան—տ. 63):

14. Հմմտ. Մատթ., Ե, 15:

15. Տե՛ս Միքիա, Է, 18—19:

16. Արմատս—այսպես ունի միայն Բուենոս Այրեսի 1948 թ. հրատարակությունը («Նարեկ. Մատյան ողբերգության», էջ 93):

17. Հմմտ. Մատթ., ԺԴ, 30—31:

18. Միայն Պ$_{4}$-ը գլխավոր տարբերությունների ցանկում սասանեցելոյս բառի փոխարեն ունի վտանգելոյս, որը չունեն մեր օգտագործած ձեռագրերը և տպագիրները:

19. Ասպակասպաս (տարընթերցված՝ ասպականասպաս)—այս բառն օգտագործել է միայն Նարեկացին: Հին լուծմունքը ասպականասպաս բառը մեկնում է այսպես. «Լափին է, զոր տան շան» (ձեռ. 5650, էջ 377ա): Մեկնիչը բառի սպաս բաղադրիչն ընդունում է գոյական՝ լակ, ամանի նշանակությամբ: Հ. Նալյանը բարդության առաջին բաղադրիչը համարում է ասպակ բառը և բացատրում է այսպես. «ասպակս, այսինքն շան լակն, և կամ փշրանքն սեղանոյ, զոր խնդրեաց քանանուհին, զինքն ի շուն օրինակելով» («Գիրք մեկնութեան», էջ 296): Գ. Ավետիքյանը բարդությունը բաժանում է ասպականի և սպաս բաղադրիչների. այդպես է նաև Նոր Հայկազեան բառարանում: «Եթէ զբառն ասպականի իմասցուք շուն որսական,—գրում է Ավետիքյանը,—ըստ այսմ ասպականասպաս նշանակէ՝ իբրև զշուն սպասող կերակրոյ կամ փշրանաց»: Ասպականի բառը Ավետիքյանը ստուգաբանում է պարսկերեն ասպ—ձի բառից և բացատրում «նշանակէ ձիաւոր որսորդ»: «Արդ, ըստ այսմ՝ ասպականասպաս նշանակէ սպասաւոր կամ ծառայող որսորդի. որպէս է շունն որսական» («Նարեկլուծ», էջ 195, ծնթ. 17): Ըստ Նոր Հայկազյան բառարանի՝ ասպականասպաս նշանակում է՝ «որ կայ ի սպասու ասպականին, այսինքն որսորդի. որսորդ շուն. բարակ որսական» («Նոր բառգիրք հայկազեան լեզուի», էջ 315): Հր. Աճառյանը անդրադառնալով վերոհիշյալ բոլոր բացատրություններին, գրում է. «Իսկ ես կարծում եմ, որ ասպականասպաս նշանակում է «կերակրի մնացորդներին սպասող» և կազմված է ոչ թե ասպականի «որսորդ կամ շուն», այլ ասպակ «կերակրի մնացորդ» բառից» («Հայերեն արմատական բառարան», հ. Ա, էջ 271): Ընդունելով Աճառյանի ճիշտ դիտողությունը, նախընտրեցինք ասպակասպաս տարընթերցվածը:

20. Հմմտ. Մատթ. ԺԵ, 24:

ԲԱՆ ԼԶ

1. A-ի գրիչը վերնագիրը գրել է կրճատ. «Վերստին յաւելուած կրկին», ապա նշել՝ «Ի լման սաս՛» (էջ 133ա), այսինքն՝ Լրիվ սաս:

2. Ոչ զթզենւոյն տունկ առժամայն չորացուցեր—այս հատվածում Նարեկացին դիմում է հակադրությունների՝ նյութ դարձնելով մատնության գիշերվա և խաչելության օրվա առանձին դրվագներ: Քրիստոսը չպատուհասեց իրեն խաչ հանողներին, համբերեց բոլոր չարչարանքներին և ներեց նրանց: Նա, որ լոկ խոսքով չորացրեց թզենու անպտուղ տունկը (տե՛ս Մատթ., ԻԱ, 19), չհրամայեց, որ չորանային իրեն հարվածողների ձեռքերը՝ ներողամտության օրինակ ցույց տալու համար:

3. ... որ զարուսեակն մրացուցեր.—Հմմտ. Մատթ., Իէ, 45: Եսա., ԺԴ, 12: Արուսեակն բառն այստեղ հոմանիշ է արեգակն բառին թէ՛ ըստ Հ. Նալյանի («Արդ, դու, աստ, որ յամենից խոստովանեալ աստուած ես, զանողացդ ապիրատութեան համբերեցեր, որպէսզի մահացելոյս մեզօք զառաքինութեան ճանապարհն հանգիստ և դիւրին առնէիր». «Գիրք մեկնութեան», էջ 298) և թէ՛ ըստ Գ. Ավետիքյանի («զայս բառ փոխանակ արեգական առնու սուրբ վարդապետս». «Նարեկլուծ», էջ 198, ծնթ. 5):

4. Ոչ հայհոյչացն հնարաւոր չարաբանութիւն կապտեցեր—Գ. Ավետիքյանը ենթադրում է, որ «Թուի թէ մարթ է աստանօր զկապտելն առնուլ ի կապոյտ բառէն, այսինքն կապուտակել. իբրև թէ զնենգաւոր լեզուս կամ զշրթունս հայհոյչացն ոչ կապուտակեցեր, առ ի պատիժ սաստեցուցանելով զարիւնն» («Նարեկլուծ», էջ 198, ծնթ. 6): Ավետիքյանը հակադրության հիմք է դարձնում Նարեկացու «զլուսնին պատկեր երանգաւ արեան զունեցեր» արտահայտությունը և կապտեցեր բառը ստուգաբանում կապույտ բառից, մինչդեռ Նարեկացին հայհոյիչների չարախոսությանը հակադրում է նրանց լեզուն պապանձեցնելու Քրիստոսի կարողությունը:

5. Հմմտ. Յայտ., Զ, 12:

6. Ի յարձան քարի յեղանակեցեր—նկատի ունի Ղովտի կնոջը, որին աստված պատժեց՝ դարձնելով աղի արձան (տե՛ս Ծննդ., ԺԹ, 26):

ԲԱՆ ԼԷ

1. Վերնագրի դիմաց, լուսանցքում, ծ-ն ունի նշում. «Մեծի ուրբաթին ԼԶ, ԼԷ, ՀԷ. գի՛տ»: Վերնագիրը կրճատ. «Վերստին... նորին», որից հետո նշում՝ «Ի լման», այսինքն՝ Լրիվ սաս:

2. Նախամարտիկն զինուորութիւն երկնային պարուն՝ զգիշերավարն խաւարասէր—ըստ Գ. Ավետիքյանի՝ խոսքն այստեղ այն մասին է, թե ինչպես երկնային զորքերի զորապետը՝ Միքայել հրեշտակապետը զգետնեց, երկնքից ցած նետեց խավարասեր գիշերավարին՝ արուսյակին, այսինքն՝ սատանային, որ «առաջին ներհակ կանգնեցաւ բարւոյն աստուծոյ» («Նարեկլուծ», էջ 202, ծնթ. 3):

3. Խոպանման.—այսպես ունեն Պ$_{1-2}$-ը և Պոլսի 1782 և 1789 թթ. տպագրերը, Պ$_{3}$-ը ունի խոպանացմամբ, Պ$_{4}$-ը և հետագա մնացած բոլոր տպագրերն ունեն խոպանացման: Մեր օգտագործած ձեռագրերը չեն տալիս ոչ խոպանացմամբ և ոչ էլ խոպանացման տարընթերցվածները:

4. Փափկութենէն.—այսպես ունի միայն Բուենոս Այրեսի 1948 թ. հրատարակությունը:

5. Հմմտ. Սաղմ., ՁԱ, 1:

6. Ակնարկ՝ Հուդայի վախճանի մասին (հմմտ. Մատթ., ԻԷ, 5):

ԲԱՆ ԼԸ

1. Շ լուսանցքում, ուշ գրչությամբ, գլխի համար ունի նշում. «Վասն վերջին դատաստանի» (էջ 107ա)։

2. ... յայլ ընթերցուածի—նկատի ունի Մատյանի Ձ գլուխը, ուր թվարկվում են գլխավոր մեղքերն իրենց ծնունդներով։ Այս գլխում բանաստեղծը հիշատակում է «նուազս յոլովից»՝ մի սակավ մասը այն լուսավոր գործերից, որոնք հոգու փրկության գրավականն են։

3. Հմմտ. Հռովմ., Է, 22—23։ Ը, 2։

4. Թ. Գուշակյանի թարգմանության մեջ, թերևս, պատահաբար, բաց են թողնված 66—68 տողերը («Նարեկ աղոթամատյան», էջ 129), Գ. Խաչատուրյանի թարգմանության մեջ՝ 68-րդ տողը («Նարեկ, Մատեան ողբերգութեան» էջ 99)։

5. Հմմտ. Յովհ., ԺԲ, 48։

ԲԱՆ ԼԹ

1. Կրճատ գրված վերնագրի համար A ձեռագիրը լուսանցքում ունի նշում՝ «ի լմա՛ն սաս» (էջ 139ա)։

2. Տե՛ս Եզեկ., Բ, 9։

3. ... զայս նմանութիւն աաղականաց—այստեղ ևս, ինչպես ԻՋ գլխում, Նարեկացին գրում է լալյաց երգերի նմանությամբ։ Եվ, իսկապես, շարունակությունը (ա. 27—35) գրված է-ոյս հանգով, որ շատ քիչ է օգտագործվել միջնադարում։ Հանգն ավելի հուզական ու ազդու է դարձնում բանաստեղծի խոսքը։

4. Պ$_4$-ը գլխավոր տարբերությունների ցանկում ունի ազդէ (էջ 396), որ չունեն մյուս տպագիրները և մեր օգտագործած ձեռագրերը։

5. ... Երգս կատակերգութեան ջնարաճար պոռնկի—նկատի ունի Աստվածաշնչում հիշված բնարահար այն պոռնկուհուն, որը ողբում էր Տյուրոսի կործանման աղետը ոչ թե մարդկանց նկատմամբ ունեցած կարեկցանքից, այլ իր շահը կորցնելու վշտից (տե՛ս Ես., ԻԳ, 16)։

ԲԱՆ Խ

1. Գենf—այս բառը փոս, վիճ իմաստով Ս. Գրքում օգտագործված է երեք անգամ՝ Երեմ., ԽԹ, 3, Եզեկ., ԼԹ, 11 և 15։ Պ$_{1-3}$-ը, ինչպես նաև Պոլսի 1782 և 1789 թթ. տպագիրները ունեն գէնf, Պ$_4$-ը և նրա վերահրատարակությունները՝ վինf: Այդպես ունի նաև Բուենոս Այրեսի 1948 թ. հրատարակությունը։ A-ն և 16 այլ ձեռագրեր ունեն գէնf կամ գենf: Ըստ այսմ էլ նախընտրեցինք մեր A և 16 մյուս ձեռագրերի գենf վնից ընթերցվածը։ Հ. Նալյանը բառը հղում է դէնf ձևով և մեկնաբանում այսպես. «դէհն կողմն լսի» («Գիրք մեկնութեան», էջ 311)։ Այս տարընթերցվածը հայտնի չէ այլուստ։

2. ... ո՛չ աղաչանf լեզուաց—այս կիսատողն ունեն միայն չորս ձեռագիր. tu-ն՝ բնագրում, ʊә-ն՝ լուսանցքում։ αe-ն XIV դարի ձեռագրեր են։ Մեր օգտագործած հնագույն ձեռագրերը չունեն կիսատողը, բայց սա դեռևս բավարար հիմք չէ կիսատողը միջարկություն համարելու։ Բավարար հիմք չէ այդպես համարելու նաև այն իրողությունը, որ αe-ն կիսատողն ունեն լուսանց-

քում։ Ընդհակառակը դա հենց խոսում է այն մասին, որ գրիչները անպայման ունեցել են բում։ Ընդհակառակը դա հենց խոսում է այն մասին, որ գրիչները անպայման ունեցել են
ձեռագիր հիմք՝ ընթերցվածը նշելու համար։ Կիսատողը խորապես հարիր է հատվածի բովանդակությանը, ոճական առանձնահատկությանը և չնայած այն մեզ է հասել չորս ձեռագրի վկայությամբ, բայց մենք համարում ենք հեղինակային և լրացնում տողը։

3. ... յաւրինակս Երիս—Հմմտ. Բ Կորնթ., Գ, 18։ Բանաստեղծը խնդրում է, որ աստվածային լույսի պատկերն իր մեջ տպավորվի երեք օրինակով. ըստ հին լուծմունքի՝ «ի մարմին, ի շունչ և յոգի» (ձեռ. 5650, էջ 379բ), ըստ Հ. Նալյանի՝ «երեք օրինակ սաէ զմիտն, զբանն և զկիշուրիւնն», որոնցից առաջինը ակնարկում է Հայր աստծուն և «խնդրէ զփայլումն լուսաւորութեան հաւատոյն», երկրորդը՝ Որդուն, և «խնդրէ զշնորհալի արտաբերութիւն», այսինքն խոսելու ձիրք, երրորդը՝ Սուրբ Հոգուն, և «խնդրէ զանմոռացութիւն երախտեաց» (տե՛ս «Գիրք մեկնութեան», էջ 312)։ Ըստ Ավետիքյանի՝ բանաստեղծը հայցում է «մաքրելով զմթութիւն մեղացն վերստին յինքն տպաւորել զնմանութիւնն աստուծոյ, ասելով. նորոգեա՛ զպատկեր և այլն։ Եւ զայս նախ՝ յոգիս, ի հոգին, որ օրինակ է Հօր. զոլով հոգին արմատ ամենայն յատկութեանց և աստուածայնոցն։ Երկրորդ՝ ի գեղ դիմացս, կատարելութեանց մարդոյ, որպէս և Հայր՝ ամենայն մարդկային. դէմքն՝ օրինակ Որդւոյ, որ կերպարան է Հօր. և զի մարդեղութեամբն երևելի եղև մեզ։ Երրորդ, ի կերպարան տեսութեան մտացս, ուղիղ և պայծառ ճաշնորհօք մաքրութեան զգայարանացն. դէմքն՝ օրինակ Հոգւոյն Սրբոյ, որ քննէ զամենայն, նաշելով զաստուածայինսն. և ըստ այսմ միտքն՝ օրինակ Հոգւոյն Սրբոյ»։ Ընդարձակ այս բացատրությունից բացի, Ավետիքյանը տալիս է մեկ և զխորս աստուծոյ»։ Ընդարձակ այս բացատրությունից բացի, Ավետիքյանը տալիս է մեկ այլ հակիրճ մեկնություն, ըստ որի «երրեակ եղանակ կամ նմանութիւն պատկերին աստուծոյ» նշանակում է «բնականն՝ ի ձեռն խմացականութեան, զերբնականն՝ ի ձեռն սրբարար շնորհաց, և Երանականն՝ ի ձեռն պայծառ տեսութեանն աստուծոյ ի հանդերձեալն» («Նարեկլուծ», էջ 212, ծնթ. 7)։ Աստվածային անեղծ պատկերով տպավորվելու և նորոգվելու Նարեկացու խնդրվածքը, անշուշտ, ամենից առաջ վերաբերում է հոգուն, հոգով աստվածանալուն։

ԲԱՆ ԽԱ

1. Այս գլխի վերջում, լուսանցքում, ծ ձեռագրի գրիչը նշել է՝ «Թաղման է» (էջ 116բ), իսկ Մատյանի միջնադարյան ցանկերում գլուխը բնութագրվում-հիշատակվում է այսպես՝ «Աղօթք» (ձեռ. 7091, էջ 3բ), «Բժշկութեան» (Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի 1215 ձեռ., էջ 2), «Վասն ախտից առողջութեան ամենայն ցաւոց» (ձեռ. 3895, էջ 5ա), այսինքն՝ նրան վերագրվում է բուժիչ զորություն։ Պատահական չէ, որ գլուխը մտել է հմայիլների մեջ (տե՛ս, օրինակ, Մաշտոցյան մատենադարանի 152, 194, 198 հմայիլներ և այլն)։

2. Հմմտ. Ծննդ., ԺԸ, 14։ Ղուկ., Ա, 37։

3. B օրինակում դեւf բառի վրա, անհասկանալի է, թե ինչու, գրիչը դրել է սաղանիշ (էջ 229), բայց այդտեղ ձեռագիրը որևէ բառի կամ հատվածի բացթողում չունի։

ԲԱՆ ԽԲ

1. Այս գլխի համար ծ ձեռագրի գրիչը նշել է՝ «Հիւանդի է» (էջ 117ա), որից երևում է, որ միջնադարում գլուխը կարդացվել է հիվանդի վրա։

2. Նկատի ունի Քրիստոսի աջակողմում խաչված ավազակին, որը, ավանդության համա-

ձայն, թեպետ Հիսուսի պատճառով չէր բռնվել ու դատապարտվել մահապատժի, բայց նրա նկատմամբ ունեցած իր հավատով («Յիշեա՛ զիս, տէր, յորժամ գայցես արքայութեամբ քով». Ղուկ., ԻԳ, 42), ինչպես Նարեկացին է ասում, «անձկալեաց լուսոյ արժանի ցուցեալ» (տ. 15)։

3. Ամէն-ին—*ակնարկում է Քրիստոսի երդումի խոսքը՝ «Ամէն ասեմ քեզ» (Ղուկ., ԻԳ, 43)։*

ԲԱՆ ԽԳ

1. Տպագիրները տալիս են եղակի՝ դաշամբ: *Մեր ձեռագրերը չունեն այս տարընթերցվածը։*

2. Հմմտ. Ես., ԾԸ, 8—9։ Որ ընդ ասելոյն *(տ. 6) կապակցությունը համապատասխանում է Եսայու և* մինչդեռ խօսեսցիս *նախադասությանը։*

ԲԱՆ ԽԴ

1. Օրինակներից մեկում (s), լուսանցքում, այս գլուխը բնութագրված է այսպես՝ «Խաւսք ի Սուրբ Երրորդութիւնն»։

2. Հմմտ. Յովհ., Գ, 16։

3. Տե՛ս Զաք., ԺԳ, 7։

4. Նուրբ նախագրին—*ըստ մեկնիչների, Նարեկացին նկատի ունի Մովսես մարգարեին, որը ձեռքերը խաչաձև տարածելով, հաղթել է Ամաղեկին՝ դրանով իսկ, կարծես, տալով Քրիստոսի խաչվելու նախօրինակ պատկերը (ձեռ. 5650, էջ 380, «Գիրք մեկնութեան», էջ 317, «Նարեկլուծ», էջ 220, ծնթ. 4)։ Մեր* e *ձեռագրի գրիչը ևս 31-րդ տողը լուսանցքում մեկնել է այսպես. «Նախագիր զՄովսէս կոչէ» (էջ 142ր)։ Ավետիքյանը* Նուրբ նախագիր *ասելով հասկանում է նաև Աբելի սպանությունը Կայենի ձեռքով, որը, ըստ նրա, «առաջին տիպ եղև Քրիստոսի զենմանն» («Նարեկլուծ», էջ 220, ծնթ. 4)։*

5. Հմմտ. Եբր., Թ, 20—21։

6. $Պ_4$ *տպագիրը գլխավոր տարբերությունների ցանկում* ինքնագործ *ընթերցվածի փխ ունի* ինքնակործս, *որը մեր օգտագործած ձեռագրերից ոչ մեկը չի տալիս։*

7. Հավանաբար նկատի ունի կա՛մ Եսայուն (Մարգ., Խ, 31), կա՛մ Երեմիային (Ողբք, Գ, 24—25), կա՛մ Նավումին (Մարգ., Ա, 7) և կա՛մ, մանավանդ, Ոզիային (Բ Մնաց., Ի, 15)։ Տե՛ս «Նարեկլուծ», էջ 221, ծնթ. 5։

ԲԱՆ ԽԵ

1. Գլխի բովանդակության համար S *(լուսանցքում) և* b *(վերնագրից հետո) ձեռագրերն ունեն «Վասն խոստովանութեան», իսկ* s *օրինակը (վերնագրից հետո)՝ «Խոստովանութիւն գաղտնեաց» նշումները։ Գրիչները նկատի են ունեցել այն, որ համարյա ամբողջ գլխի ընթացքում Նարեկացին խոսում է իր «կործանեալ» անձի ոչ միայն կատարած, այլև մտածական մեղքերի մասին՝ վերջիններիս համար ևս իրեն պարտավոր համարելով խոստովանել ու զղջալ (հմմտ. տ. 4—7)։*

2. ... զցանկականիդ գործարան—*այդպես է անվանում երիկամները, որոնք, մարդակազմության մասին միջնադարյան գիտության համաձայն, դիտվում էին իբրև մարդու մեջ հեշտանք ու ցանկություն առաջացնող օրգան։ Հիշենք հին զրույցը հայոց թագավորի մասին, որն իր սպասավորներին ուղարկում է մորթված կենդանուց ընտրելու և իրեն ներկայացնելու նրա այն մասը, ինչ նրանցից յուրաքանչյուրը կհամարեր ամենապիղծը։ Եվ սպասավորներից մեկն ընտրում է երիկամը։ Թագավորի այն հարցին, թե «Ի՞նչ պիղծ կայ ի յերիկամն», նա պատասխանում է. «Երիկամն է, որ զինչ արտաքին սէր և ցանկութիւն կայ, նայ ամէն ի յիրմէն է...» (տե՛ս Ա. Սրապյան, Հայ միջնադարյան զրույցներ, Եր., 1969, էջ 247)։ Նարեկացին երիկամները համարում է կրկնապղտոր խորհուրդներ արթնացնող գործարան, այսինքն՝ հեշտանքի ու չարի նկատմամբ՝ ախորժանք, իսկ տրամության ու բարու նկատմամբ տհաճություն հարուցող (հմմտ. «Նարեկլուծ», էջ 224, ծնթ. 1)։*

3. Հմմտ. Երեմ., ԺԷ, 1։

4. Հմմտ. Մատթ., ԺԷ, 24—27։

5. Հմմտ. Ղուկ., Է, 36—50։

6. Այս տողի տակ, ստորին լուսանցքում, անհասկանալի է, թե ինչու, N ձեռագրի գրիչը նշել է. «Աստ է զանազանութիւն» (էջ 115ա)։ Հազիվ թե նկատի ունենա այն, որ տողում, ի տարբերություն մյուս գրչագրերի զփափագելն *անորոշ դերբայի, բառն ունի անցյալ դերբայական ձևով՝* զփափագեալն:

7. Հմմտ. Բ Պետր., Բ, 20։ Այս տողի անկարծիցն *բառի փխ մի շարք ձեռագրեր տալիս են* անկածիցն, *սակավաթիվ գրչագրեր՝* արկածիցն. *հանդիպում է* արկարծիցն *աղավաղ տարընթերցվածը, իսկ որոշ ձեռագրեր, նախապես գրելով* անկարծիցն, *ապա սրբագրել են* անկածիցն *կամ ընդհակառակն (տե՛ս տողի տարընթերցվածները)։ Առհասարակ բոլոր տպագիրները, բացի* $Պ_3$*-ից և Կ. Պոլսի 1782 և 1789 թթ. հրատարակություններից, ունեն* անկարծիցն: *Հ. Նալյանը, անդրադառնալով տողի* զընթաղրութիւնս անկարծիցն *կապակցությանը, նշել է, որ այդտեղ խոսքը վերաբերում է դևերի կամքին ենթարկվելուն, հետևապես նախընտրելի է համարել ան*կածիցն *ընթերցվածը. «...որ* անկարծիցն *է տպեալ,* անկածից *պիտոյ է, զի ի հին ձեռագիրսն այնպէս տեսի» («Գիրք մեկնութեան», էջ 325)։ Ըստ այդ դիտողության էլ 1763 թ. տպագիրը բնագրում գրել է* անկածիցն: *Բայց մեր օգտագործած գրչագրերից համեմատաբար փոքրաթիվ օրինակներ ունեն* անկածիցն. *ձեռագրերի մեծագույն մասը, ի թիվս որոց և՝* A*-ն ու հնագույն գրչագրերից շատերը, տալիս են* անկարծիցն: *Մատյանի միջնադարյան մեկնությունը ևս նկատի է ունեցել* անկարծիցն *ընթերցվածը։ «*Զընթաղրութիւնս անկարծիցն*» բառակապակցությունը նա բացատրել է այսպես. «Զկամս թողու և զանկարծելին առաջի դնէ» (ձեռ. 5650, էջ 382ա)։* Անկարծիցն *ընթերցվածը գերադասել է նաև Գ. Ավետիքյանը՝ տալով հետևյալ մեկնությունը. «Զներքոյ անկանիլն անկարծելի թշուառութեանց և մեղաց» («Նարեկլուծ», էջ 228, ծնթ. 32)։ Այնուհետև համեմատելով Հովհան Ոսկեբերանի՝ Ավետարանի մեկնության հետևյալ տողի հետ՝ «Ուստի ծնանիցին իբրս այս... բայց եթէ յանկարծ՝ ի վատթար արանց...»,—իմաստային նմանություն է տեսնում նրա* յանկարծ *և Նարեկացու* անկարծիցն *բառերի միջև և եզրակացնում. «Այս իմաստ առաւել համիմաստ է... որպէս թէ ասել. զկամս և զառաքինիսն թողի, իսկ զանարգան կամ զմեղուցեալսն արհամարհեցի» (նույն տեղում)։*

8. Տե՛ս Երեմ., ԻԲ, 28—30։ Բարձեալ բողեալ *բառերը կազմում են բայական մեկ հարադրություն՝ «բարձիթող արված» նշանակությամբ, որի համար և միմյանցից ստորակետով չենք անջատել։*

*9. Մի շարք ձեռագրեր (*adehipx*, նաև չհամեմատված №№ 4980 և 7042 գրչագրերը)* դժնէից *բառից հետո ունեն աստղանիշ (աստերիսկոս), չնայած այդտեղ չունեն հավելյալ հատված։ Նույն տեղում աստղանիշ է ունեցել նաև* k *օրինակը, սակայն քերված-հանված է (հավանաբար*

գրչի ձեռքով)։ Այդ նշանն ունի իր նախապատմությունը և նարեկյան գրչագրերում շատ վաղ է հանդես եկել, դեռևս մեր A օրինակը գրվելուց առաջ։ Հարցի վրա լույս են սփռում K (գրչության վայր՝ Դրազարկ, ժամանակ՝ 1247 թ.), Վատիկանի գրադարանի № 4 (ժամանակ՝ 1226 թ.) և Մաշտոցյան մատենադարանի № 5456 ձեռագրերը։ Վերջինս (ժամանակ՝ ԺԴ դ. վերջ) արտագրություն է K-ից (հետևապես քննական բնագիրը պատրաստելիս ավելորդ ենք համարել օգտագործել)։ Այս երեք օրինակներում, բացի գլուխներից, համարակալված են նաև ենթավերնագիր ունեցող մի քանի հատվածներ, որով և Մատյանի գլուխների քանակը 95-ի փոխ դարձել է 100 (K և № 5456 ձեռագրեր) կամ 99 (Վատիկանի ձեռագիր)։ Երեքում էլ ԽԵ գլուխն ունի ԽԸ, իսկ ԽԸ գլուխը՝ ԾԱ համարակալում, այսինքն՝ այդ գլուխների սովորական համարակալումը շեղվել, երեքով բարձրացել է։ Այդ նույն փոփոխությանն է ենթարկվել նաև մյուս գլուխների համարակալումը ԻԹ գլխից սկսած։ Սակայն ներկա դեպքում մեզ հետաքրքրում է ԽԵ և ԽԸ գլուխների հարցը։

Բանն այն է, որ K և № 5456 ձեռագրերում ԽԸ գլխի (նրանցում՝ ԾԱ) մի ամբողջ հատված՝ 48-րդ տողի կռակարանացն մառնիչ բառերից մինչև 131-րդ տողի Աւազափոյ շինուածf ապականացու բառերը ներառյալ, մուծված է ԽԵ գլխի (նրանցում՝ ԽԸ) մեջ, տ. 77-ի դժնէից և դաճնաց բառերի արանքը։ Այս ընդմիջարկությունը մեզ հասած ձեռագրերից միայն այդ երկուսում է հանդես գալիս, բայց սխալի առաջացումը կապվում է ավելի վաղ գրչագրված ձեռագրերի հետ, որոնք մեզ չեն հասել։ Դրա ապացույցը տալիս է մեր A օրինակը։ Այստեղ չնայած ԽԸ գլխի հիշյալ հատվածն իր տեղում է, սակայն գրիչ Գրիգորը զարմանալիորեն նրա սկզբից և վերջից ատաղանիշեր է դրել (ի դեպ, կռակարանացն բառից առաջ աստղանիշ ունեն նաև BGP βγλadefhiknp օրինակները և C-ն՝ նրա դիմաց, լուսանցքում, իսկ ապականացու բառից հետո՝ ABCEPγadehikx ձեռագրերը և npr օրինակները՝ նրան հաջորդող սառցուածf բառի ու-ի վրա։ Երկու տեղում էլ աստղանիշերն ունեն նաև №№ 5832 և 5852 ձեռագրերը)։ Այս փաստն A ձեռագրի համար ինքնին վկայում է, որ նրա գրիչը ոչ թե մեկ, այլ առնվազն երկու գաղափար օրինակից է օգտվել, որոնցից մեկը համանման է եղել ավելի ուշ օգտագործված K ձեռագրին։ Մեր կարծիքով, նկատելով, որ այդ մի օրինակում ԽԸ գլխի հատվածը գրված է եղել ԽԵ գլխի կազմում, գրիչ Գրիգորը, հետևելով հանդերձ մյուս՝ բնագրի ճիշտ ընթացքով օրինակին, այդուհանդերձ, ԽԸ գլխի մեջ վիճելի հատվածի սկզբից ու վերջից դրել է աստղանիշեր։

Այն, որ Գրիգորը, բացի սովորական գլխակարգությամբ օրինակից, իր ձեռքին ունեցել է նաև ՂԹ կամ Ճ համարակալումով ձեռագիր, հաստատվում է նաև նրանով, որ A օրինակում ՂԳ գլուխն ունի և մի երկրորդ՝ ՂԹ համարակալում, ինչպես K-ն, Հռոմի № 4 և մեր № 5456 գրչագրերը։ Թվում է, որ ԽԸ գլխում նշված տեղերում աստղանիշ դնելու ավանդույթը հետագա ժամանակների ձեռագրերին է փոխանցվել A օրինակից։ Գ խմբի մի քանի ձեռագրերում (adehikpqx) նույնիսկ աստղանիշը հանդես է գալիս նաև ԽԵ գլխի դաճնաց բառից հետո, այսինքն՝ ընդմիջարկման տեղում։ Հիշենք, որ երկուական գաղափար օրինակից են օգտվել նաև Հռոմի № 4 և մեր K ձեռագրերի գրիչները, սակայն առաջինն ընդմիջարկման սխալը չի կրկնել, իսկ երկրորդը նախապատվությունը տվել է ընդմիջարկություն ունեցող օրինակին, բայց երբ ԽԸ (իր մոտ՝ ԾԱ) գլուխն է ընդօրինակելիս եղել, նկատել է իր սխալը և ԽԵ գլխում մուծված հատվածն այլևս ամբողջությամբ չի գրել. գրել է միայն տ. 48-ից մինչև տ. 55-ի կիսակտուր պրծեալ բառերը ներառյալ և հրաժարվել շարունակությունը լրացնելուց։

ԽԵ և ԽԸ գլուխներում հանդիպող աստղանիշերն իրենց հերթին մի շարք գրչագրերում պատճառ են դարձել աղճատումների ու բացթողումների. նախ՝ K-ի գրիչը թե՛ ԽԵ գլխի ընդմիջարկված հատվածում և թե՛ ԽԸ գլխում մոռացել է գրել ԽԸ գլխի տ. 131-ի սառցուածf բառը, ապա՝ U ձեռագրի գրիչը կարծել է, թե այդ նույն տողի աստղանիշը վերաբերում է 130—131-րդ տողերի սնոտի սնրմանիf / Աւազափոյ շինուածf բառերին, և դրանք, հետագա

հավելում դիտելով, բաց է թողել. երևի նույն նկատառումով tu ձեռագրերի գրիչները չեն գրել
նույն 131-րդ տողի ապականացու սառցուածf բառերը, Zs օրինակները դրանք ունեն տ. 132-ի
սպառնողաց ձեռագրերի գրիչները ԽԵ գլխի տ. 76-ի սպանողաց
ամժանմաւնf բառերից հետո, և սառցել են մի այլ ընթերց-
և ԽԸ գլխի տ. 131-ի ապականացու բառերը միավորել-խառնել (ապականացու+սպանողաց=ապականողաց), որը օրինակներն ունեն
ված՝ ապականողաց
սրբագրումով։

10. Հմմտ. Մատթ., ԺԳ, 24—25, 37։

11. Հմմտ. Հռովմ., Ա, 28—31։

ԲԱՆ ԽՋ

1. Գլխի բովանդակության համար ձեռագրերն ունեն հետևյալ նշումները՝ «Զօղուածոց
մարդոյս մեկնութեան» (Ճ, էջ 124), «Ցոյցք զշնորհ և զպատիւ մարդոյն» (Տ, էջ 124բ)։ Գրիչ-
ները ցանկացել են ուշադրություն հրավիրել այն բանի վրա, որ Նարեկացին այս գլխում խո-
սում է մարդու մարմնի կազմության և այն շնորհների մասին, որոնցով օժտված է բանական
արարածը։

2. Հմմտ. Ղուկ., ԺԵ, 15։

3. ... ուլոցն ամայարճակաց—Մատյանի միջնադարյան մեկնիչը բացատրել է այսպես.
«... որ են դեք, որ ամայի են յաստուծոյ» (ձեռ. 5650, էջ 382բ)։ Հ. Նալյանը, նկատի ունենա-
լով նաև տ. 4-ի խոզիցն բառը, գրում է, որ ուլը և խոզը միասին են հիշատակվում, քանի որ
«ի յԱւետարանին նշանակեն զդևս» («Գիրք մեկնութեան», էջ 327)։ Քրիստոնեական միջնադա-
րում այծը և ուլը ըմբռնվել են իբրև հեթանոսության, մեղքի և ուրացության խորհրդանիշ, ընդ-
որում այծերի հորանին հակադրվել է ոչխարների հոտը։ «Վկայք Արևելից»-ի հայերեն թարգ-
մանության մեջ հեղինակը Շապուհ 2-րդի հալածանքների ժամանակ հավատն ուրացած աստի-
քրիստոնյաներին համեմատում է սպիտակ ոչխարների հետ, որոնք սև այծերի են վերածվում.
«Դասակք դասակք աւդեաց մտանէին խիզախելով, և պառակք պառակք այծեաց ելանէին սև-
ացեալք զունովք ուրացութեանն։ Մտանէին սուրբք և սպիտակք, և ելանէին աղտեղիք և արի-
նոտք» («Աբրահամու խոստովանողի Վկայք Արևելից», աշխատասիրությամբ Գ. Տեր-Մկրտչյանի,
էջմիածին, 1921, էջ 41)։ Եվ, ընդհակառակն, հեթանոսությունից դարձ կատարած և քրիստոնյա
մկրտվածները Ագաթանգեղոսի պատմության մեջ նկարագրվում են այսպես. «Եւ տեսի հօտս ան-
թիւ այծեաց ի գոյն սեւութեան, որք անցեալք ընդ ջուրն՝ յօդիս դարձան և զգոյնս իւրեանց ի
կերպարանս սպիտակութեան շրջեցին...» («Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Տփխիս, 1909,
էջ 385), կամ՝ «Եւ հօտք բազմութեան այծեացն սեւութեան, որք յիջանել ի ջուրսն յօդիս դարձեալ
սպիտակութեան...» (Նույն տեղում, էջ 390)։ Նարեկացին, ինչպես Գ. Ավետիքյանն է գրում,
իրեն համարում է մի հովիվ, որ խնամում է «զերամակս վայրենի ձագուց այծից», այսինքն՝
գարշ մեղքերը (հմմտ. «Նարեկլուծ», էջ 232, ծնթ. 3)։

4. Տե՛ս Երգ երգոց, Ա, 7։

5. Հմմտ. Եզ., ԻԵ, 37։

6. Երեf ճարիւրց եւ տասանց վեցից յաղիւf շաղկապեցար... Եւ ... հինգ զգայութեանց—
Նարեկացին նկատի ունի մարդու մարմնի մասերը և հինգ զգայարանները՝ նրանց քանակն
արտահայտելով 365 թվով, որը միաժամանակ տարվա օրերի քանակն է։ Մարդու մարմնի մաս-
սերով չի կարելի հասկանալ միայն ոսկորները, որոնց գումարը, ըստ մարդակազմության մասին
միջնադարյան գիտության, հավասար է եղել 248-ի (տղամարդու մոտ) կամ 252-ի (կնոջ մոտ)։

Այս տվյալը հանդիպում է, օրինակ, Աբուսայիդի (XII դ.) հայտնի աշխատության Ասար Սեբաստացու (XVII դ.) կատարած խմբագրության մեջ, ուր, ի միջի այլոց, նշվում է, որ մարդն ունի 360 երակ և 448 ջիլ (տե՛ս Абусаид: О строении человека. К изданию подготовила С. А. Варданян, Ереван, 1974, стр. 172, 212):

Յաղ ասելով ի՞նչ է հասկացել Նարեկացին. հավանաբար, ինչպես Գ. Ավետիքյանն է գրել, մարդու ոսկորների հետ միասին՝ նաև մարմնի այլ մասերը՝ «ըստ հաշուելոյ բժշկաց այնր ժամանակի» («Նարեկլուծ», էջ 232—233, ծնթ. 8)։ Բայց ո՞ր մասերը՝ հայտնի չէ։ Այդ բառը նրա մոտ, այդպիսով, գործածված է զոդվածի նշանակությամբ, իսկ զոդվածները ոչ միայն մարմնի հոդերն են, այլև գործարանները (ուղեղ, սիրտ և այլն)։ Բերենք նաև միջնադարյան մեկնիչի բացատրությունը. «3Կե (365) օր ի տարին, նոյն թուով յօդուածք ի մարմին մարդոյն։ Եւ զինչ տարին այնքան աւուրբք և այնքան եղանակօք պսակի (նկատի ունի 40—41-րդ տողերը), այսինքն՝ բոլորի, նոյնպէս և մարդս այնքան յօդուածովք և զգայարանօք կազմեալ է...» (ձեռ. 5650, էջ 383ա)։ Ըստ այդմ էլ մարմնի զոդվածներին՝ բանաստեղծի տված առանձին բնութագրումները (տ. 33—35, 37) մեկնիչը պարզաբանում է հետևյալ կերպ՝ ստուարf եւ զաւրաւորf-ը՝ իբրև մեծամեծ ոսկորներ, փոfունf-ը՝ մատների կոճեր, կարծրակերտf-ը՝ ջիլեր, կարեւորf եւ պատկանելիf-ը՝ «ծածուկ անդամք» (նույն տեղում, էջ 382բ—383ա)։ Իսկ տ. 36-ի փղտրակաճf բառի տակ Ավետիքյանը հասկանում է լեղուն, թոքերը, սիրտը և այլն («Նարեկլուծ», էջ 233, ծնթ. 9)։ Հետաքրքիր է, որ Սայաթ-Նովան ևս իր խաղերից մեկում սիրած կնոջ մարմնի մասերը հիշատակում է տարվա օրերի քանակին համապատասխան, բայց ոչ թե 365, այլ 366 թվով.

Իրեf ճարուր վացցուճ ու վից ամեճ աճղամտ ղարարի

(«Սայաթ-Նովա», կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Մ. Հասրաթյան, Երևան, 1963, էջ 45)։

Նալյանն արել է մի ենթադրություն. ըստ նրա Նարեկացու տվյալը համընկնում է «թալմուդական վարդապետաց» կարծիքին։ Վերջիններս գտնում էին, որ Հին կտակարանի առաջին հինգ գրքերում (Ծննդոց, Ելք, Ղևտականք, Թիւք, Երկրորդումն օրինաց) մովսիսական օրենքների քանակը կազմում է 613, որոնցից 360-ը, այսպես կոչված, «հրաժարականք» օրենքներն են՝ «ըստ աւուրց տարւոյն», իսկ 248-ը՝ «յանձնառականք» օրենքները՝ «ըստ չափու ոսկերաց մարդոյն» («Գիրք մեկնութեան», էջ 327—328)։ Սակայն Նալյանն ինքը, ցույց տալու համար, որ «Սուրբ գիրն ոչ ունի զայսպիսի բանս», մեկ առ մեկ բերում է մովսիսական մատյաններում ցրված օրենքները (նույն տեղում, էջ 329—344) և ակներև դարձնում, որ ամենևին էլ դրանց քանակը 613 կամ 360 չէ, հետևապես հրեա րաբունիների կարծիքը «համարելի է ի կարգըս առասպելեաց», իսկ բանաստեղծը հազիվ թե «ի համբաւոյ լուեալ»՝ հետևեր նրանց և գրեր՝ «Երեք հարիւրոց եւ տասանց վեցից յաւդիւք»։

Բայց, այնուամենայնիվ, որտեղի՞ց է գալիս այդ թիվը Նարեկացու մոտ. հավանաբար մարդակազմությանը վերաբերող մեզ անհայտ որևէ աղբյուրից։

7. Իմիf անորոշ դերանունը (ուղղական՝ իմճ) իր լրացյալի՝ կաճոճաւ գործիական հոլովով գոյականի հետ դրվել է տրական հոլովաձևով, բայց գործիականի առումով, քանի որ իմճ դերանունը չունի գործիական հոլովաձև։ Սպասելի էր, որ նրա փխ հանդես գար ինչ դերանվան գործիական հոլովաձևը՝ իփf, բայց ոչ մի ձեռագիր այդ ընթերցվածը չի տալիս. մեր օգտագործած բոլոր գրչագրերն ունեն իմիf: Մատյանի հին տպագիրները ևս ($Պ_{1-3}$, Կ. Պոլսի 1782 և 1789 թթ. հրատարակությունները), ձեռագրերի պես, ունեն իմիf: $Պ_4$ տպագրում առաջին անգամ իփf ընթերցվածը, ըստ երևույթին՝ առանց որևէ ձեռագրական հիմքի, ուղղված է

իփf. հետագա բոլոր տպագիրները հետևում են այդ ճշգրտմանը և անխտիր ունեն իփf: Ելնելով այն հանգամանքից, որ, ինչպես նշեցինք, իմճ դերանունը չունի գործիական հոլովաձև (գոնե չի վկայված), և հետևելով ձեռագրերին՝ վերականգնում ենք իմիf-ը՝ հաշվի առնելով, որ այն, անշուշտ, բնագրային է և տվյալ կապակցության մեջ հանդես է եկել գործիական հոլովաձևի պաշտոնով։

8. Հմմտ. Ա Կորնթ., ԺԲ, 12—17։ Եփես., Ե, 32։

9. Միայն Բուենոս-Այրեսի տպագիրն ունի որոշյալ առումով՝ յանցաւորութեամբն («Նարեկ. Մատեան ողբերգութեան», էջ 117)։ Մյուս տպագիրները և մեր օգտագործած ձեռագրերն
ունեն յանցաւորութեամբ: Հավանաբար տպագրական վրիպակ է։

10. Այս տողում ծուղակ ընթերցվածի փխ Գ. Ավետիքյանը, հակառակ Մատյանի մյուս
տպագիրների, բնագրում դրել է ծողակ («Նարեկլուծ», էջ 231)՝ ծանոթագրելով, որ իր օգտա-
գործած ձեռագիր մի այլ օրինակ ունի ծուղակ (նույն տեղում, էջ 234, ծնթ. 17)։

ԲԱՆ ԽԷ

1. Սույն գլխի համար որոշ ձեռագրեր վերնագրի դիմաց, լուսանցքում, կամ տողատակին
ունեն այսպիսի նշումներ՝ «Ի Հայր ասացեալ է» (Ծ, էջ 126ա), այսինքն՝ Նարեկացու խոսքն
այս գլխում ուղղված է հայր աստծուն, «Պատարագիչ աւ՛ւրն ասա» (Շ, էջ 121ա, հետագա
ձեռքով), «Ի Մանասէ և յանառակ յորդին» (Տ, էջ 127բ—128ա), այսինքն՝ բանաստեղծն այս
գլխում նկատի է ունեցել Մանասե թագավորին և անառակ որդուն։

2. Տե՛ս Ողբք Երեմ., Գ, 28—29։
3. ...մեծ մեղաւորին—ակնարկում է Մանասե թագավորին, որը, ըստ Ս. Գրքի, որդին
էր Հուդայի թագավոր Եզեկիայի։ Տասներկու տարեկան հասակում հաջորդել է վերջինիս։ Հա-
կառակ իր բարեպաշտ հոր՝ եղել է անաստված ու չար բռնակալ և հետևել կռապաշտությանը։
Ի հատուցումն իր բռնությունների՝ գերեվարվել է Բաբելոն։ Այստեղ գիտակցել է իր հանցանք-
ները և ապրել խոր զղջում, որի արտահայտությունն է «Աղօթք Մանասէի թագաւորի» հայտնի
պարականոնը (տե՛ս «Անտուածաշունչ», Վենետիկ, 1805, «Յաւելուած», էջ 25)։ Վերահաս-
տատվելով գահի վրա՝ ջանացել է ուղղել իր գործած չարիքները (հմմտ. Դ Թագ., ԻԱ, 1—17։
Բ. Մնաց., ԼԳ, 1—20)։ Տե՛ս նաև ԾԱ գլխի 5 և 6 ծնթ.։

4. Հայ մատենագրության մեջ (վաղ շրջան) ճիւղ (հյուլե) բառն ավելի հաճախակի հան-
դիպում է ճիւղէ ձևով։ Նարեկացու տողը (Քաճ զճիւղ Երկրի ճողմաճոս փոշւոյ) հիշեցնում է
«Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Տփխիս, 1909, էջ 383)։ Չնայած տ. 13-ում իմաստա-
Ագաթանգեղոսի համեմատությունը՝ «...ըստ նմանութեան մանրամաղ փոշւոյ հիւղէի» (տե՛ս
վոր է նաև զճող ընթերցվածը, ինչպես ունեն ձեռագրերի մեծ մասը և Մատյանի հին տպա-
գիրները ($Պ_{1-3}$), բայց, $Պ_4$-ի և հետագա տպագիրների պես, նախընտրում ենք սակավաթիվ
ձեռագրերի զճիւղ ընթերցվածը, որի բնագրային լինելու օգտին է խոսում Ագաթանգեղոսից
վկայակոչված օրինակը, որն, ինչպես տեսանք, ունի ճիւղէ և ոչ թե ճող:

5. Այս տողից հետո $Պ_4$-ը և նրանից ծագող հետագա բոլոր տպագիրներն ունեն նոր հատ-
վածբաժանում՝ Գ համարով։ Սակայն բովանդակության առումով 15—45-րդ տողերը նա-
խորդ 8—14-րդ տողերի հետ մեկ միասնություն են կազմում՝ խոսքի միևնույն եղանակով։ Այդ
իսկ պատճառով Գ հատվածաբաժանումը չենք պահպանում։

6. Տե՛ս Ղուկ., ԺԵ, 19, 21։
7. Հմմտ. Ղուկ., ԺԵ, 22—23։

ԲԱՆ ԽԸ

1. Այս գլխի համար որոշ ձեռագրեր լուսանցքներում, հատկապես վերնագրի դիմաց, ունեն նշումներ՝ «Առ Սողոմոն» (Հ), «Սողոմոնի է» (Ն), «Վասն կոոցն Սողոմոնի Իսրայէլի» («Ի Սողոմոն արքայ», «Յարքայն Սողոմոն», «Ի Սողոմոն թագաւորն», «Ի Սողոմոն թագաւորն Իսրայէլի», «Յարքայն Իսրայէղի Սողոմոն» Տ, էջ 130ա, 131ա, 132ա, 133ա, 134ա, 135ա): Այդ նշումներով գրիչներն ուշադրություն են հրավիրել այն բանի վրա, որ ամբողջ գլխի ընթացքում Նարեկացին իր հոգեկան աշխարհը բացահայտում է՝ հենվելով Սողոմոնի կերպարի և նրան վերագրված աստվածաշնչյան գրքերի վրա։

2. Հմմտ. Երգ., Ժ, 19։

3. Հմմտ. Յոբ, ԺԴ, 17։

4. Այս տողում Պ$_4$-ը և նրանից ծագող հետագա բոլոր տպագիրները, ի թիվս որոնց և Գ. Ավետիքյանի «Նարեկլուծ»-ի բնագիրը, ունեն պարզևաց կենաց բոց ապաւինեալ: Կապակցության մեջ կենաց բառը հավելագրություն է, առաջացած նախորդ տողի («Տուիչ կենաց խմոց բարերար») ազդեցությամբ, և ունի ձեռագրական հիմք. այդ հավելագրությունն ունեն նաև մի շարք ձեռագրեր (տե՛ս տողի տարընթերցվածները)։ Ըստ երևույթին Պ$_4$-ի բնագիրը պատրաստելիս այդ դեպքում հետևել են մի այդպիսի ձեռագրի։ Հին տպագիրներում (Պ$_{1-3}$ և այլն) սխալը չի արտահայտվել։

5. Նկատի ունի Սողոմոնի մոլորությունները (տե՛ս Գ Թագ., ԺԱ, 1—8)։

6. Կաակարանացն բառից առաջ մի շարք ձեռագրեր ունեն աստղանիշ (տե՛ս ԽԵ գլխի 9-րդ ծնթ.)։

7. Միայն Բուենոս Այրեսի տպագիրը, միակ F ձեռագրի պես, ունի աշխարող («Նարեկ. Մատեան ողբերգութեան», էջ 117) փխ բոլոր տպագիրների և մնացած գրչագրերի աշխատող ընթերցվածի (Տ ձեռագիրը նախապես գրել է ապաշխարող, ապա սրբագրել աշխատող)։ Տողի ամփոփ գոչացեալ կապակցությունը վկայում է, որ նրա շարունակությունը պետք է լինի տարակուսեալ աշխարող (և ոչ թե տարակուսեալ աշխատող)։ Բնագրային ճիշտ ընթերցվածը, այդպիսով, պահպանվել է միայն F ձեռագրում։ Ինչի՞ հիման վրա է Բուենոս Այրեսի տպագրում ուղղված բնագիրը. արդյոք Գ. Ավետիքյանի տված սույն բացատրությա՞ն՝ «...տարակուսանօք ապաշխարող, թէ հասցէ՞ արդեօք թողութիւն մեղացն» («Նարեկլուծ», էջ 243, ծնթ. 13), թե՞ որևէ ձեռագրի հետևությամբ,—դժվար է ասել։ Մենք ևս նախընտրում ենք աշխարող ընթերցվածը։

Տող 50-ում բանաստեղծը, ինչպես Հ. Նալյանն է նկատել, թերևս ակնարկում է Սողոմոն արքային վերագրվող չորս գործերից հատկապես «Բանք ժողովողին» երկը, որը, ըստ Գրիգոր Նազիանզացու, Գրիգոր Նյուսացու և Ներսես Լամբրոնացու, Սողոմոնը գրել է «մեղանչելուց» հետո՝ իբրև զղջացողի մատյան («Գիրք մեկնութեան», էջ 351, 359)։

8. Ընդունված է այն կարծիքը, որ Սողոմոնի «Առակաց գիրքը» հորինված է մանուկների ու պատանիների դաստիարակության, իսկ «Բանք ժողովողին»՝ չափահասների համար (տե՛ս «Նարեկլուծ», էջ 244, ծնթ. 18)։

9. Տե՛ս Գ Թագ., Ը։

10. Փագովրը կամ Բելփեգովրը (Քամոս) եղել է մովաբացիների աստվածը (տե՛ս Գ Թագ., ԺԱ, 7), որի արձանը Սողոմոնը կանգնեցրել էր մի լեռան վրա, Երուսաղեմի հանդեպ (տե՛ս Թուոց, ԻԵ, 9)։ Այդ կուռքը պատճառ է դառնում քսանչորս հազար իսրայելացիների կոտորածի, որի համար և Նարեկացին այն անվանում է «մահամատոյց» (հմմտ. «Նարեկլուծ», էջ 244, ծնթ. 23)։

11. Նկատի ունի Աստարտեսին (տե՛ս Կ գլխի 8-րդ ծնթ.)։
12. Հմմտ. Ա Կորնթ., Ա, 29։ ձեռագիրը հաջորդ հատվածի համար ունի են-
13. Այս տողից հետո, բնագրի կարգում, ձեռագիրը հաջորդ հատվածի համար ունի են-
թավերնագիր՝ «Սաղովմովնի դարձն է» (էջ 108բ), որը, անշուշտ, գրչի միջամտության ար-
դյունք է, բնագրային լինել չի կարող։
14. Բուենոս Այրեսի տպագիրը Այլ բառի փխ ունի Եւ («Նարեկ. Մատեան ողբերգութեան»,
էջ 118), որը ձեռագրերը և մյուս բոլոր տպագիրները չեն տալիս. հավանաբար տպագրական
վրիպակ է։
15. Նկատի ունի Սողոմոնին վերագրվող «Բանք ժողովողին» ստեղծագործությունը, որը
բանաստեղծը բնութագրում է իբրև Իսրայելի արքայի դարձի հիշատակարան («Ջղարձին իւրոյ
յիշատակարան», տ. 21), այսինքն՝ հետևում է այն հին մեկնիչներին, որոնք ենթադրել են,
թե Սողոմոնը, բազում մեղքեր կատարելուց հետո, զղջացել է՝ իր ապաշխարանքը դրսևորելով
հիշյալ գրքում (տե՛ս նաև սույն գլխի 7-րդ ծնթ.), թեպետ ուրիշ մեկնիչներ անհավանական
են համարում դա կամ Սողոմոնի դարձի վկայություն են համարում «Առակաց գիրքը» (հմմտ.
«Նարեկլուծ», էջ 245, ծնթ. 28)։
16. Այստեղ Նարեկացին հիշատակում է երկու երկ՝ «Մատեանք քահանայից» և Աքիա
Սիլոնացու գիրք, որոնք, ըստ Հին կտակարանի գիտակների, չեն պահպանվել։ Բ Մնաց. Թ,
29-ում նշվում է հետևյալը. «Եւ մնացորդք բանիցն Սողոմոնի առաջինք և վերջինք՝ ահա գրեալ
են ի բանս Նաթանայ մարգարէի և ի բանս Աքիայ Սիղոնացւոյ և ի տեսիլն Յովելայ տեսա-
նողի վասն Յերոբովամայ որդւոյ Նաբատայ»։ Այստեղ թվարկվող երկերը, որոնք Ս. Գրքի կա-
նոնական համարվող գրքերի ցանկի մեջ չեն մտել և չեն պահպանվել, արդյո՞ք Նարեկացուն
ծանոթ են եղել՝ դժվար է ասել։ Գուցե և բանաստեղծը քահանայից մատյանների և Աքիա Սի-
լոնացու մասին հիշատակում է՝ հետևելով Բ Մնացորդաց գրքից վկայակոչված հատվածին և
Ս. Մակաբ., ԺԶ, 24-ի հետևյալ նշումին՝ «Այն ամենայն գրեալ է ի մատեանս քահանայից...»,
թեև 125-րդ տողից կարելի է ենթադրել, որ նա որոշ պատկերացում է ունեցել այն մասին,
թե ի՛նչ է պատմվում իր հիշած գրքերում («Յորում զվոյթն իւրում ընթացիցն արտասուելիս
իմն յեղանակէ»)։ Նարեկացու 124-րդ տողին դեռևս իր ժամանակին անդրադարձել է միջնա-
դարյան մեկնիչը և կատարել որոշ պարզաբանումներ. «Քահանայք յետ դարձին խօսեցան և
գրեցին բազում բանս վասն Սողոմոնի և բազումք՝ վասն այլ իրի, որ չէ հրամայեալ յԱստուա-
ծաշունչ գիրս, բայց պատմութիւն է, և յիշեն վարդապետք եկեղեցւոյ. Եւսեբի և այլք։ Եւ չէ այժմ
ի միջի Գիրք քահանայիցն, որ բազում ինչ պատմեն վասն դարձին Սողոմոնի։ Այլ և Աքիա
Սիլոնացի բազում ինչ պատմէ վասն զղջմանն։ Այս Աքիայս մարգարէ էր և էր յաւուրս Սո-
ղոմոնի։ Սա պատռեաց զհանդերձս իւր յերկոտասան ծուէնս և ետ սան ետ զՅոբովամ ծառայն
Սողոմոնի և ասաց տասն բանին՝ թագաւորելոց էր ի վերայ ցեղից տասանցն Իսրայէլի։ Եւ
է սորա գիրս գրեալ վասն Սողոմոնի և այլ մարգարէութիւնս, զոր չէ ի միջի...» (ձեռ. 5650,
էջ 385բ—386ա)։
17. Տե՛ս ԽԵ գլխի 9-րդ ծնթ.։
18. Հմմտ. Ա Պետր., Գ, 19։
19. Պ$_4$ տպագիրը և նրանից ծագող հետագա բոլոր հրատարակությունները յարեան ըն-
թերցվածն ունեն որոշյալ առումով՝ յարեանն, որը մեր օգտագործած ձեռագրերից ոչ մեկը չի
տալիս։ Ավելի հին տպագիրներն այդ բառից առաջ ունեն ավել բառ, այսպես՝ յոր արեան
(Պ$_1$) կամ յորոյ արեանն (Պ$_{2-3}$)։ Ավել բառը հանդիպում է խիստ սակավաթիվ ձեռագրերում.
ըստ երևույթին այն առաջացել է յարեան բնագրային ձևը շփոթումով իբրև երկու բառ ընկալվե-
լու հանապարհով՝ յ[որ, որոյ] արեան։
20. Նկատի ունի ՀԱ սաղմոսը, որն ունի «Ի Սողոմոն սաղմոս» վերնագիրը։

21. Պուետիկոս ումն բարեշնորհ—ըստ Մատյանի միջնադարյան մեկնության, բանաստեղծը ակնարկում է կա՛մ Գրիգոր Նյուսացուն, կա՛մ Գրիգոր Աստվածաբանին (Նազիանզացուն), կա՛մ Որոգինեսին և կա՛մ Եպիփան Կիպրացուն: Վերջինիս է վերագրվում սաղմոսների այն մեկնությունը, որը Ս. Գրքում ուղեկցում է սաղմոսների հայերեն թարգմանությանը (տե՛ս «Լուծմունք աղաւթական բանիցն Գրիգորի Նարեկեցւոյ», ձեռ. 5518, էջ 262բ—263ա): Գ. Ավետիքյանն անհավանական է համարում այդ տեսակետը. «Իսկ թէ ո՞ իցէ պուետիկոսն, որ աղաչէր վասն Սողոմոնի,—գրում է նա,—ոմանք զՆիւսացին Գրիգոր ասեն. սակայն ի գործս նորա ոչ գտաւ այնպիսի ինչ, որպէս և ոչ ի գործս Աստուածաբանին կամ Բարսղին կամ Ոսկեբերանին: Ոմանք զԵպիփան կարծեցին (ի մեկնութեան սաղմոսին ՀԱ)» («Նարեկլուծ», էջ 248, ծնթ. 49): Այդպիսով, Ավետիքյանը մերժում է միջնադարյան մեկնիչի տեսակետը, որովհետև հիշյալ հայրերի մատենագրության մեջ չկա Սողոմոնի համար գրված աղերսական կամ աղոթական հատված, մինչդեռ Նարեկացու նշած «ոմն պուետիկոս»-ը արգահատել, աղաչել է վասն Սողոմոնի՝ դառնալով նրա աղոթակիցը («... ընդ նմին վասն նորին աղերսել...»—տ. 207): Այդպիսին, ըստ Ավետիքյանի, կարող է համարվել Սիրաքը, որին հիշատակելիս՝ Նարեկացին Մատյանում երկու անգամ կոչում է իմաստուն (գլ. Լ, տ. 95 և գլ. Հ, տ. 51), իսկ պուետիկոս (բանաստեղծ, քերթող) բառը ևս լայն իմաստով նշանակում է իմաստասեր կամ իմաստուն (հմմտ. «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Բ, Վենետիկ, 1837, էջ 660): «Այլ ինձ թուի զՍիրաք իմանալ (զոր սուրբ վարդապետս անուամբ իմաստնոյ սովոր է կոչել...),—գրում է Ավետիքյանը:— Արդ՝ Սիրաք (գլ. ԽԷ), յետ պատմելոյ զմեղս Սողոմոնի, յաւելու ի համարն 24. «Այլ աստուած ոչ թողցէ զողորմութիւն իւր...» և այլն, որ արդարև աղօթական բան է վասն անձինն Սողոմոնի...» («Նարեկլուծ», էջ 248, ծնթ. 49): Սիրաքի հայերեն հին թարգմանությունը մեզ թերի է հասել. չի պահպանվել նաև Ավետիքյանի հղած ԽԷ գլուխը, բայց Նարեկացին ժամանակին իր ձեռքի տակ է ունեցել թարգմանության ամբողջական բնագիրը (տե՛ս ԴԳ գլխի ծանոթագրությունները): Ըստ այդմ կարելի է ընդունել, որ մեզ հետաքրքրող տողում բանաստեղծն իսկապես նրան է նկատի ունեցել:

22. Աւստացւոյն—նկատի ունի Ս. Գրքի Հոբին, որը բնակվում էր Ուսս երկրում (Յոբ, ԽԲ, 17.—«Բնակէր յերկրին Աւսսայ, ի սահմանս Եդովմայեցւոց և Արաբացւոց...»): Ըստ ավանդության, Հոբը եղել է Աբրահամի ցեղից (հինգերորդ սերունդ): Հնում տարբեր կարծիքներ են գոյություն ունեցել նրա գրքի հեղինակային պատկանելության շուրջ: Ենթադրվել է, որ նրա պատմությունը գրառել են նրա բարեկամները՝ հետևելով նրա իսկ ցանկությանը, թե՝ «Ո՞ տայր ինձ գրել զբանս իմ և հանել զնոսա ի մատեան յաւիտեան» (Յոբ, ԺԹ, 23): Ըստ մի այլ կարծիքի, հեղինակը առասպելական Մովսես մարգարեն է, որը ժամանակով մերձ է եղել նրան: Վերջապես, մի այլ ենթադրության համաձայն, հեղինակ է դիտվում Սողոմոն թագավորը: «Զի Սողոմոն է ստեղծեալ զպատմութիւն Յոբայ»,—նշել է Մատյանի միջնադարյան մեկնիչը (ձեռ. 5650, էջ 388ա): Այս վերջին տեսակետը պաշտպանող վարդապետները (որոնց թվում և՝ Գրիգոր Աստվածաբանը) հիմնվում են, մանավանդ, այն իրողության վրա, որ ինչպես Սողոմոնին վերագրվող սուրբգրական մյուս երկերը, այնպես էլ Հոբի գիրքը բնագրում «ստիքերոն» (տաղաչափական) հորինվածք ունի: Այս տեսակետն է արտահայտում նաև Նարեկացին 209—210 տողերում. «...ի նմանէ (այսինքն՝ Սողոմոնից) ստեղծեալն բազմահրաշաւորն, մարգարէաճառն պատմագրութիւն» (տե՛ս Հոբի գրքի նախադրությունը, նաև՝ «Նարեկլուծ», էջ 248, ծնթ. 49):

23. ...սկզբանց եւ անսկզբանց / Ընդ սկզբանց եւ սկզբնաւորից սկզբանց—բանաստեղծը ոչ թե ընդունված անուններով, այլ, այսպես կոչված, ժամանակային հատկանիշներով ակնարկում է Երրորդությունը՝ Հորը («սկզբանց եւ անսկզբանց»), Որդուն («ընդ սկզբանց») և Սուրբ Հոգուն («սկզբնաւորից սկզբանց»): Այս խիստ վերացական ու այլաբանական բնութագրումը,

ինչպես Գ. Ավետիքյանն է նկատել, մասամբ հիշեցնում է Գրիգոր Նազիանզացու՝ Երրորդության տված հետևյալ ձևակերպումը նրա երեսուներկուերորդ ճառում, որտեղ խոսվում է Կոստանդնուպոլսի 2-րդ տիեզերական ժողովի մասին. «Որ անսկիզբն և սկիզբն և որ ընդ սկզբանն մի աստուած է... անսկիզբն՝ Հայր, սկիզբն՝ Որդի, ընդ սկզբանն՝ Հոգի Սուրբ» (տե՛ս «Նարեկլուծ», էջ 249, ծնթ. 52):

ԲԱՆ ԽԹ

1. Հմմտ. Հռովմ., Զ, 12:
2. Հմմտ. Մատթ., ԺԱ, 30:
3. Հմմտ. Թիւք, Իէ, 16:
4. Կա թվի քերականական անհամաձայնություն. պետք է լիներ ի նոսա, ինչպես պահանջում է զանդունդս աղբիւրն հանդերձ կապակցությունը, և ոչ թե ի նմա, ինչպես ունեն բոլոր ձեռագրերը և տպագիրները:
5. Հմմտ. Միքիէ, Է, 18:
6. Այստեղ, ինչպես և 36, 38-րդ տողերում, ակնարկում է Ես., ԼԴ, 10-ում ասվածը՝ «Արդ՝ յարեայց, ասէ տէր. արդ՝ փառաւորեցայց, արդ՝ բարձրացայց...»:
7. N ձեռագրի գրիչ Մարտիրոսը մաղթողիս բառից հետո բնագրի կարգում ավելացրել է իր անունը (տե՛ս տ. 66-ի տարընթերցվածները):
8. Երանելով սաղմոսիւն—հմմտ. Սաղմ., ԼԱ, 1:
9. Ձեռն քո մխեցի յիս—հմմտ. Յոբ, ԺԹ, 21:
10. Հմմտ. Հռովմ., Ը, 3:

ԲԱՆ Ծ

1. Այս գլխի համար Տ ձեռագիրն ունի երկու տողատակային նշում. «Որպիսի՛ հեզութեամբ սրտի աղօթել» (էջ 138բ), «Զի՛արդ պարտ է աղօթել» (էջ 139բ): Սույն նշումները ցույց են տալիս, որ Նարեկացու միջնադարյան գրիչը գլխի բովանդակությունը հանգեցրել է այն բանին, թե ինչպե՛ս պետք է աղոթել: Գլխի բովանդակությունը փաստորեն նույն կերպ է ընկալել նաև Հ. Նալյանը. «Ի սոյն գլխոյ ցուցանէ, թէ արդարութիւնն առանց մեղաց խոստովանութեան ոչ օգնէ, և մեղքն ի խոստովանիլն ոչ վնասէ» («Գիրք մեկնութեան», էջ 371): Մինչդեռ սույն գլխում բանաստեղծը բարձրացնում է բարոյական բարձր խնդիրներ, մերժելով ինքնագոհ, բարձրահոն ու ամբարտավան կեցվածքը՝ դրվատում է միշտ կատարելության ձգտելու մարդու միտումը, նախընտրում է

Երթալ նստել ոչ յառաջին բարձին հպարտից
Ընդ ամբարշտացն հանրախորհուրդ ժողովելոց...
Այլ ընդ զղջացելոցն սրտի, պատկառելոցն մեղաւք...
Յետնոցն հաւասարեալ ատէն ի յերկրի կամաւ խոնարհութեան
(տ. 33—34, 37, 39):

2. Հմմտ. Գործք, Դ, 12։

3. Իր արդարության համար պարծեցող փարիսեցու և իր մեղքերն ամբաստանող մաքսավորի մասին տե՛ս ԻԹ գլխի 11-րդ ծնթ.։

4. Տե՛ս Յովէլ, Ա, 15։

5. Հմմտ. Յովէլ, Ա, 15. Բ, 1—2, 11։

6. Հմմտ. Ես., Ձ, 5։

7. Իբր եռջանիկն արքայից—Նկատի ունի Իսրայելի թագավոր Դավթին (հմմտ. Սաղմ., ԾԵ, 6)։ Այդպես է հիշում նրան նաև տ. 46-ում։

8. Հմմտ. Առակք, ԺԵ, 13։

9. Հմմտ. Բ Կորնթ., Է, 10։

10. Հմմտ. Առակք, ԻԵ, 6։ Ղուկ., ԺԴ, 8։

11. Հմմտ. Սաղմ., Ա, 1։ ԻԵ, 4—5։ Երեմ., ԺԵ, 17։

12. Հմմտ. Ես., ԿԵ, 5։ Նախորդ՝ 44-րդ տողից ցած, ստորին լուսանցքում, h ձեռագրի գրիչը հիշատակագրել է. «Ես գրէի՝ զոռեհն (իմա՝ զոռեխը, իշամեղուն—Պ. Խ.) զարկինս իմ ծըծէր. բռնեցի և զփորն պատառեցի և գրեցի» (էջ 107ա)։ Իր անձնական կյանքին վերաբերող այս իրապատում հիշատակագրությունը կատարելիս գրիչը, կարծես, նկատի է ունեցել տ. 45-ում Եսայի մարգարեից վկայակոչված խոսքը՝ «Մի՛ յիս, ասէ, մերձենար. մաքուր եմ...»։

13. Հմմտ. Սաղմ., ԼԹ, 13։

14. Նկատի ունի երից մանկանց (հմմտ. Դան., Գ, 28—33)։

15. Տե՛ս Բ Եզր., Թ, 15։

16. ... Ես՝ ճշգրիտ պատկեր ամենայն երկրի—բանաստեղծն իրեն պարտական է համարում համայն մարդկության կատարած բազում չարությունների համար՝ բոլորինը համարելով իրենը, և իրենը՝ բոլորինը։ Այդ միտքն արտահայտված է Մատյանի բազմաթիվ գլուխներում, բայց Նարեկացին յուրաքանչյուր դեպքում կարողացել է խուսափել ինքնակրկնումից՝ գտնելով գեղարվեստական նորանոր ձևակերպումներ։ Հիշենք դրանցից երկուսը.

Ե՛ս ամենայնն, և յի՛ս ամենեցուն (ՀԲ, 57).
Ունիմ զամենայն երկրի
Եւ եմ պատգամաւոր աղաւթանուէր ամենայն աշխարհի (ԻԸ, 52—53)։

17. Հմմտ. Ղուկ., ԻԲ, 61։

18. Նկատի ունի այն բոլոր հանցանքները, որ մարդը կարող է կատարել իր երեք տարբեր հասակներում՝ մանկության («զառաջին չարիսն»), երիտասարդության («զմիջնովքն») և չափահաս կամ կատարյալ («զվերջնականաւքն») տարիներին (հմմտ. «Նարեկլուծ», էջ 259—260, ծնթ. 15)։

19. Հմմտ. Սաղմ., ԾԷ, 5—6։

20. Հմմտ. Բ Պետր., Բ, 19։

ԲԱՆ ԾԱ

1. Այս գլխի վերաբերյալ, էջատակին, ds ունեն նշումներ. d՝ «Ի դէմս Որդւոյ խաւսի զճառս զայս մեծս Գրիգորիոս» (էջ 119բ), s՝ «Ի յոյսն աներկբայ» (էջ 141ա), «Ի յոյս ճառատուն» (էջ 142ա), «Առ յոյս բարի» (143ա), «Ի յոյսն բարի անյիշաչարութեամբ առ Մանասէ» (էջ 143բ—144ա)։

2. Պ1-ը և Բուենոս Այրեսի 1948 թ. հրատարակությունը, ի տարբերություն մյուս բոլոր տպագիրների, ունեն պաղատեցայ և ոչ թե պաղատեցայց։ Տարընթերցվածը հայտնի է եղել նաև Գ. Ավետիքյանին («Նարեկլուծ», էջ 263, ծնթ. 1)։ Այստեղ էական տարբերություն չկա, այլ կա քերականական ժամանակների տարբերություն. պաղատեցայ (սահմ. եղ. անցյալ կատարյալ), պաղատեցայց (ստորադասական եղ. երկրորդ ապառնի)։ Առաջին դեպքում խոսքը վերաբերում է արդեն ասված խնդրանքներին՝ մի՞թե մինչև այժմ ես երկրածին մեկին պաղատեցի, երկրորդ դեպքում՝ ասվելիք խնդրանքներին՝ մի՞թե երկրածին մեկին պիտի պաղատեմ։ Խոսքի ներքին տրամաբանությանն ավելի հարիր է ստորադասական եղանակի երկրորդ ապառնին՝ պաղատեցայց։

3. Մի խումբ ձեռագրեր, Պ1-ը և Բուենոս Այրեսի 1948 թ. հրատարակությունն ունեն այսր փոխանակ այրս։ Կարծում ենք, որ տարընթերցվածը առաջացել է ր և ս տառերի գրչագրական դիրափոխության հետևանքով։ Ճիշտ է այրս ընթերցվածը, քանի որ այսր ցուցական դերանունը գործածված է սխալ համաձայնությամբ։

4. Տե՛ս Եբր., Է, 18։

5. Չի բէ Մանասէի փրկութիւնն խոստովանելի է—Մանասե թագավորը ոչ միայն մեծ մեղքեր էր գործել, այլև արյունոտ ոճիրներ (տե՛ս Դ Թագ. ԻԱ, 1—16), բայց ապաշխարեց և արդարացավ (տե՛ս Բ Մնաց., ԼԳ, 11—20)։

6. Որ եւ զմեծն իսկ տեսանողաց—ակնարկում է Եսայի մարգարեին, որին սպանել էր տվել Մանասե թագավորը, հրամայելով, որ սղոցով երկու կես անեն նրան։ Մանասեի այդ ոճիրն առավել ծանր էր, քանի որ, ըստ մեկնիչների, Եսային թագավորազն էր (նա Հուդայի թագավոր Ամասիայի Ամովս եղբոր որդին էր), Մանասեի դաստիարակը («մանկավարժ ինքեան», ինչպես ասում է Նարեկացին) և նրա աները («Գիրք մեկնութեան», էջ 379, «Նարեկլուծ», էջ 266, ծնթ. 11)։

7. Հմմտ. Եզ., Ը, 3։ Ամովս, Ե, 26։ Ըստ հին լուծմունքի՝ «Քեանն կին էր բոզ և պոռնիկ, գարշ և զազիր, քան զամենայն կանայս և զբազումս պաշտոնատար իւր արար, վասն աղտեղութեանն և այնքան մինչ զի յետ սակմանն՝ զամօթոյ պատկեր պղծոյն Քեւանայ ձուլեաց Մանասէ և կանգնեալ ի չորս դէմս տաճարին, զի յամէն դրանէ, որ մտանէր ի տաճարն՝ երկրպագութիւն առցէ...» (ձեռ. 5650, էջ 391ա—բ)։ Այս մեկնությունը Գ. Ավետիքյանը համարում է «անյայտ աւանդութիւն» և գտնում, որ «Քեանու զԱրուսեակն իմացուք կամ զԵրեւակն, կամ զայլ աստղ. զի ամենայն զօրութեանց երկնից արար Մանասէ սեղանս ի տաճարին»։ Իսկ թէ ինչու է քառադեմ, քառադիմակի կոչվել, Ավետիքյանը հենվում է հին մեկնիչների վրա, մասնավորապես վկայակոչում է Եվսեբիոսին, որը գտնում է, թե Քեանի արձանը «ունէր չորս աչս ի գլուխն, երկու առաջոյ և երկու յետուստ. և ի փակել երկուցն՝ այլ երկուքն բաց մնային» կամ այն պատճառով, որ նրա արձանը «ի քառակուսի խարսխի հաստատեալ կայր, կամ ըստ ոմանց՝ ընդ չորս կողմանս տաճարին կանգնեալ էր» («Նարեկլուծ», էջ 366, ծնթ. 14։ Տե՛ս նաև Թ. Գուշակյանի ծանոթագրությունը. «Նարեկ աղոթամատյան», էջ 356, ծնթ. 3)։

8. Բէեղզեբուղ—այս կուռքի անունը կա թե՛ Հին և թե՛ Նոր կտակարաններում։ Հին կտակարանում հայերեն թարգմանության մեջ այսպես է՝ Բահաղ ճանճիկ կամ Բահալ ճանճիկ («...հարցէք ի Բահաղ զճանճիկ աստուածն Ակկարոնի...», Դ Թագ., Ա, 2), իսկ Նոր կտակարանում այն հատուկ անուն է և պարզապես տառադարձվել է հայերեն Բէեղզեբուղ ձևով՝ դևերի իշխանի նշանակությամբ (տե՛ս «... Ոչ ինքն հանէ զդևս, եթէ ոչ Բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց» Մատթ., ԺԲ, 24։ Հմմտ. Մարկ., Գ, 22։ Ղուկ., ԺԱ, 15, 19)։

9. Թ. Գուշակյանի թարգմանության մեջ, անկասկած վրիպակաբար, դուրս է մնացել տ. 95—ձեղուն բառից մինչև տ. 96-ը ներառյալ (տե՛ս «Նարեկ աղոթամատյան», էջ 166)։

10. Հմմտ. Մատթ., Ը, 20։

ԲԱՆ ԾԲ

1. Հմմտ. Սաղմ., ՃԲ, 9։
2. Հմմտ. Գ Թագ., Զ, 4։
3. Հմմտ. Ես., Ա, 19։ Զաք., Թ, 7։
4. Հմմտ. Ամբակ., Գ, 2։
5. Հմմտ. Երեմ., Բ, 31։ Ես., ԽԳ, 26։
6. Հմմտ. Ես., Զ, 11։
7. Հմմտ. Ովսէէ, Ե, 15, Զ, 1—3։
8. J և γ օրինակներից բացի, մնացած բոլոր ձեռագրերն ու տպագիրներն ունեն որք... աղաղակեն։ Հոգնակի այս ձևերը չեն համաձայնվում նախորդ՝ 41-րդ տողում հիշված խորանէ գոյականի հետ, որը եզակի է։ 41—42-րդ տողերի բովանդակությունը կապվում է Պողոս առաքյալի հետևյալ արտահայտության հետ. «... և ի ցօղումն արեան նորա, որ առաւել խօսի քան զՀաբելին» (Եբր., ԺԲ, 24), այսինքն՝ տիրոջ թափված խորհրդական արյունն ավելի բարձր է գոչում, քան Աբելի արյունը, որ միայն վրեժխնդրություն էր հայցում աստծուց։ Նարեկացու թե՛ մեկնիչները և թե՛ թարգմանիչները որք հարաբերականը և աղաղակեն ստորոգյալը դնում են եզակի՝ համաձայնեցնելով խորան բառի հետ, իսկ Գ. Ավետիքյանը ծանոթագրության մեջ խորան բառը դնում է հոգնակի՝ համաձայնությունը վերականգնելու համար. «Քան զբողոքումն մահուն Հաբելի՝ առաւել մեծաձայն գոչեն խորանք արեան քո...» («Նարեկլուծ», էջ 270, ծնթ. 13)։ Հետևելով J γ ձեռագրերի ճիշտ ընթերցվածներին, բնագիրն ուղղում ենք ըստ եզակի թվի համաձայնության։
9. Տե՛ս Եբր., Է, 19։

ԲԱՆ ԾԳ

1. Այս գլխի համար τS ունեն լուսանցագրություններ. τ՝ «Պատարագիչ սուրբն սայր» (էջ 147բ), S̄՝ «Ի պատարագն» (էջ 147բ), «Վասն զօրութեան պատարագին» (էջ 148ա), «Ի մեծութիւն պատարագին» (էջ 149ա), «Ի պատարագին գերունակ զօրութիւնն» (էջ 150ա)։
2. Հմմտ. Ղուկ., ԺԹ, 40։
3. Հմմտ. Ծննդ., ԺԹ, 26։
4. Տե՛ս Ղուկ., ԺԸ, 9—14։
5. Հմմտ. Դան., ԺԳ, 1—65։
6. Հմմտ. Մարկ., Ե, 25—34։
7. Հմմտ. Սաղմ., ՃԽԳ, 14։
8. Հմմտ. Սաղմ., ԼԹ, 3։
9. Հմմտ. Դ Թագ., Ի, 8—11։
10. Հմմտ. Ես., ԽԳ, 25։ Երեմ., ԼԱ, 34։
11. Հմմտ. Մատթ., Է, 7։

12. Հմմտ. Եբր., Թ, 11—14։

13. Ասէր ումն ողոքաւոր—Ո՞ւմ մասին է խոսքը, պարզ չէ։ Միջնադարի մեկնիչը գրում է այսպես. «Այր մի աղօթող այսպէս ասէր...» (ձեռ. 5650, էջ 393ա)։ Հ. Նալյանը, հավաստելով այս փաստը, ավելացնում է՝ «և ոչ մեք կարեմք ասել, թէ ով իցէ» («Գիրք մեկնութեան», էջ 394)։ Գ. Ավետիքյանը գրում է, որ հատվածի բովանդակությունը «խրթնութիւն ունի վասն ոչ գիտելոյ մեր հաւաստեաւ՝ ո՛ ոք իցէ ողոքաւորս, և ուր, կամ զինչ իցէ ասացեալ։ Այս ինչ հաւաստի թուի, թէ իցէ մի ոք ի դարձելոց հեթանոսաց, ի պարսից, կամ յայլ ազգէ, որպէս մոգպետքն, որք ի ժամանակս սրբոց ղևոնդեանց դարձան ի քրիստոնէութիւն, և գրով և անգիր զմեր ճշմարտութիւնս քարոզեցին» («Նարեկլուծ», էջ 276, ծնթ. 17)։ Ավետիքյանը նկատի ունի Եղիշեի պատմածը պարսիկ այն մոգպետի և իշխանի մասին, որին հանձնարարված էր բանտարկված հայ հոգևորականների և նախարարների հսկողությունը։ Այդ մոգպետն ընդունում է քրիստոնեություն, բանտարկյալներին հրավիրում է իր տուն, մկրտվում է հայ հոգևորականների ձեռքով «հաղորդէր ի կենդանարար մարմինն և ի քաւիչ արիւնն տեառն մեր Յիսուսի Քրիստոսի, բարձր բարբառով աղաղակէր և ասէր. «Մկրտութիւնս այս լիցի ինձ լուացումն մեղաց իմոց, և ի ծնունդս նորոգութեան վերստին Հոգւոյն Սրբոյ, և ճաշակումն անմահ խորհրդոյս ի ժառանգութիւն երկնաւոր որդէգրութեանն» («Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», Երևան, 1957, էջ 152)։ Նարեկացին այդ ողոքավորին է վերագրում այն միտքը, թե նա կարծում էր, որ մարմնի վախճանի ժամանակ, հաղորդություն ընդունելով, մարդ կարող է ավելի շուտ փրկության արժանանալ, քան նահատակությամբ, բարեգործությամբ։ Նարեկացին նորադարձ այդ քրիստոնյայի դատողությունը համարում է չկշռադատված («անկշռելի առ ումն դատէր»), քանի որ նահատակը կարող է հոգով խառնվել և հաղորդվել սուրբ պատարագի խորհրդին՝ առանց այն ճաշակելու։ Թ. Գուշակյանը ևս ընդունում է, որ Նարեկացին «Հավանաբար կակնարկե Եղիշեի պատմության մեջ հիշատակված Մոգպետին, որ քրիստոնեություն ընդունելեն վերջ, կհայտարարեր, թե անմահ խորհրդին ճաշակումը երկնավոր որդեգրության ժառանգությունը կապահովե» և ավելացնում, որ կարելի է «Համեմատել նաև Ոսկեբերանի սա խոսքին. «Ումն այր սուրբ ասաց, որ թուի թէ յանդգնագոյն ինչ իցէ, բայց սակայն համարձակեցաւ ասել։ Զի՞նչ իցէ. և ոչ մարտիրոսութեան, ասէ, արիւն կարէ զայսպիսի մեղս ջնջել» («Նարեկ աղոթամատյան», էջ 275)։

Առաջին հայացքից Նարեկացու աղբյուրը թվում է Ոսկեբերանն է, մինչդեռ այդ «ումն այր սուրբը» խոսում է եկեղեցու միասնությունը ամեն ինչից բարձր դասելու մասին, պառակտումը համարելով այնպիսի մեղք, որ նահատակության արյունն անգամ չի կարող սրբել (տե՛ս «Յոհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի Մեկնութիւն թղթոցն Պաւղոսի», հ. 1, Վենետիկ, 1862, էջ 794)։ Բացառված չէ, որ Նարեկացին կարող էր ունենալ նաև այլ աղբյուր։

14. $Պ_4$-ը և հետագա տպագիրները, ինչպես նաև ձեռագրերի մեծ մասը ունեն մարմինս։ $Պ_{1-3}$-ը, 1782 և 1789 թթ. հրատարակությունները և ձեռագրերի մի փոքր խումբ՝ մարմնիս։ Գ. Ավետիքյանը, թեև բնագրում թողել է մարմինս ընթերցվածը, սակայն ծանոթագրության մեջ առաջարկում է ուղղել մարմնիս. «Կասկածեմ վրիպակ ինչ սպրդեալ աստանօր փոխանակ ասելոյ յանցաւոր մարմնիս վախճան՝ ընդունել, զի այսպէս պահանջէ յարմարութիւն բանին...» («Նարեկլուծ», էջ 276, ծնթ. 18)։ Թարգմանիչները հետևել են Ավետիքյանի բացատրությանը, կապակցությունն ընկալելով այսպես՝ ի վախճանի անցաւոր մարմնոյս։ Քանի որ մարմինս ձևը քերականորեն իսկապես անհարիր է շարահյուսությանը, ուստի նախընտրեցինք մարմնիս ձևը, նկատի ունենալով նաև Գ. Ավետիքյանի դիտողությունը։

15. Հմմտ. Սաղմ., ԻԱ, 4։
16. Տե՛ս Գաղ., Զ, 9։
17. Հմմտ. Եղնիկ, Եղծ աղանդոց, Ա, ա։

ԲԱՆ ԾԴ

1. B կրճատ վերնագրից հետո ունի նշում. «Ի լման ասա» (էջ 301ա)։

2. …ո՛չ երբէք ճարք ընթանայ երիվար առանց սանձակալի։ Այս տողից սկսած՝ Նարեկացին դիմում է հակադրությունների՝ արտահայտելու համար այն հիմնական միտքը, որ ինչպես կյանքում և բնության մեջ, ոչ մի բան առանց կառավարման չի կարող ուղիղ ընթացք ունենալ և հասնել բարի վախճանի, այնպես էլ առանց Քրիստոսի կամքի («առանց քոյ կամաց ոչ ումեք լինել նորոգ փոփոխել», տ. 6) ու հրամանի («առանց բարեգործիդ հրամանաց ակնարկութեան», տ. 26) ինքը չի կարող բարոյապես վերափոխվել ու նորոգվել հոգեպես և ինքնակատարելագործման նրա ջանքերն էլ չեն հասնի ըղձալի արդյունքի։

3. Տ. 30—33. Հմմտ. Մատթ., ԺԱ, 28։

4. …զիա՞րդ յԱբրահամ պարծեցայց—ըստ հրեական ավանդության՝ Աբրահամն իսրայելացիների նահապետն է (տե՛ս Ծննդ., ԺԷ, 4)։ Աստված նրա հավատը փորձելու համար հրամայում է զոհել Իսահակ որդուն։ Աբրահամն առանց վարանելու հնազանդվում է աստծու հրամանին (տես Ծննդ., ԻԲ, 1—11), որը և հիմք է դարձել նրան կոչելու «հավատացյալների հայր»։

5. Որդիս զաշուրեան հաւր ամովրհացւոյ եւ մաւր քետացւոյ—Նարեկացին իրեն «զարորդի» է համարում, ելնելով այն արտահայտությունից, որ տվել է Եզեկիել մարգարեն իսրայելացիներին՝ նրանց համարելով ամորհացիների և քետացիների՝ Քանանի երկրի ժողովուրդների որդիներ. «... արմատ քո և ծնունդ քո յերկրէն քանանացւոց. և հայր քո ամորհացի, և մայր քո քետացի, և ծնունդն քո յորում աւուր ծնար՝ ոչ ոք հատ զպորտ քո, և ոչ պնդեցին զատինս քո, և ջրով ոչ լուացար ի փրկութիւն, և աղիւ ոչ յաղեցար» (Եզեկ., ԺԶ, 3—4)։

6. Ժառանգս մերժելի եգիպտացի եւ ոչ սեռեկին Սառայի—Աբրահամն իր Հագար աղախնից ծնված ապօրինի որդուն՝ Իսմայելին (տե՛ս Ծննդ., Ժ, 15) զրկեց ժառանգության իրավունքից (տե՛ս Ամովս., Թ, 7)։ Սառան Աբրահամի կինն էր (տե՛ս Ծննդ., ԺԱ, 29), Իսահակի մայրը (տե՛ս Ծննդ., ԻԱ, 2)։ Նարեկացին իրեն նմանեցնում է Հագարից ծնված ապօրինի ժառանգի և ոչ թե Սառայի օրինական զավակի հետ։

7. Ակնարկում է Ամովս մարգարեի՝ Հագարի որդու վերաբերյալ ասվածը (տե՛ս Ամովս., Թ, 7)։

8. Եղբայրն Շամրնի եւ կամ Գոմորայ—Շամրին Սամարիա քաղաքն է (տե՛ս Գ Թագ., ԺԶ, 24), Գոմորը՝ Գոմոր քաղաքը, որոնցից առաջինը հայտնի էր իր կռապաշտությամբ (տե՛ս Եզեկ., ԺԶ, 46), իսկ երկրորդը՝ իր անօրինությամբ ու մեղքերով, որոնց պատճառով էլ կործանվեց Սոդոմի հետ միասին (տե՛ս Ծննդ., ԺԹ, 29)։

9. …Ոողայ եւ Ոողիբայ—Աստվածաշնչում հիշված պոռնիկ քույրեր (տե՛ս Եզեկ., ԻԳ, 4), որոնցից առաջինը խորհրդանշում է Սամարիան, իսկ երկրորդը՝ Երուսաղեմը (տե՛ս Եզեկ., ԻԳ, 4)։ Բարոյական իր ապականությունը բանաստեղծը համեմատում է պոռնիկ քույրերից ծնված «անլուաց եւ անաղելի» ընկեցիկի աղտեղության հետ։

10. Այսու առակաւ եւ ես՝ եղկելիս—մեղքերից խորտակվող իր հոգու տագնապները բանաստեղծը համեմատում է գարնան հեղեղի հորձապտույտին մատնված ջրահեղձի սարսափների հետ՝

իր խորտակումն առավել ատելի համարելով, քան ջրահեղձինը, քանի որ վերջինս կործանվում է դիպվածաբար, իսկ ինքը՝ հոժարակամ կատարած մեղքերի պատճառով։

11. Ձոր գիրդ՝ ընդ մարմնոյս եւ բանդ՝ ընդ հոգւոյս—Նարեկացին իր Մատյանը համարում է մի «մշտնջենաւոր ձայնարկու», որի տառը՝ իր մարմնի, իսկ բառը՝ իր հոգու փոխարեն մշտապես թախանձելու են աստծուն՝ մեղքերի խոստովանությամբ հայցելով քավություն։

ԲԱՆ ԾԵ

1. Հմմտ. Մատթ., Զ, 12, 14—15։

2. Հմմտ. Մատթ., Ե, 44։ Ղուկ., Զ, 27—28։

3. Իբրև վողողակ—$Պ_{1-3}$-ը, 1782 և 1789 թթ. տպագիրները, ինչպես նաև մի խումբ ձեռագրեր ունեն զլողակ։ $Պ_4$-ը, հետագա տպագիրները և ձեռագրերի մի ստվար խումբ, այդ թվում նաև A-ն, ունեն զողողակ։ Վերջինս «Նոր հայկազյան բառարանում» վկայված է միայն Նարեկացու այս տողով (տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. Բ, էջ 508)։ Հին լուծմունքն այս բառը բացատրում է այսպես. «Հեղեղատ ասէ, որ փուլ լինի կորել, և մարդ մթնով ի ներս անկանի...» (տե՛ս $Պ_1$, էջ ՃՂԵ)։ Հ. Նալյանը վկայակոչում է զլուղակ և ոչ թե զողողակ բառը՝ Անկայ իբրև զլուղակ մրային, «Այսինքն, որպէս զծովային ձկունս ի մէջ մթութեան աշխարհիս, որպէս ի ծովու» («Գիրք մեկնութեան», էջ 406)։ Գ. Ավետիքյանը հին լուծմունքի բացատրությունը տալիս է իր վերաշարադրմամբ. «ողողակ իմանայ զհեղեղատ փոսիւ կորեալ, յոր մարդ անկանի ի մթագին ժամանակի» («Նարեկլուծ», էջ 285, ծնթ. 10)։ Հին լուծմունքի բացատրությունը Ավետիքյանը մերժում է, գտնելով, որ այն «անյարմար է տեղւոյս» և ողողակ բառը բացատրում է լողացող՝ «թէ մարդ իցէ և թէ ձուկն»։ Նոր Հայկազյան բառարանը ևս այս իմաստն է տալիս. «ողողեալն ի խորս ջրոց» (տե՛ս Ողողակ բառահոդվածը)։ Ըստ Մալխասյանի՝ ողողակ նշանակում է «Ջրի մեջ ողողված, լողացող, ջրի տակ սուզվող» (տե՛ս «Հայերէն բացատրական բառարան», հ. 3, էջ 556)։ Թարգմանիչները հիմնականում հետևել են Գ. Ավետիքյանի և Ստ. Մալխասյանի բացատրություններին։ Մ. Գոշունյանը թարգմանել է լողորդ («Աշխարհաբար Նարեկ», Կ. Պոլիս, 1902, էջ 272), Թ. Գուշակյանը՝ լողակ («Նարեկ աղոթամատյան», էջ 178), Գ. Խաչատուրյանը («Նարեկ. Մատեան ողբերգութեան», էջ 138) և Մ. Խերանյանը («Մատյան ողբերգության», էջ 237) թարգմանել են սուզակ։

4. ... չար ասել զմահ՝ առ չիմանալոյն պատճառի—հին լուծմունքն այս միտքը վերագրում է Պլատոնին։ «Պղատոնի ասէ, որ ասաց զմահն չար ոչ գիտողացն զնա. որպէս ասէ, մահ գիտելի՝ կեանք, և մահ անգիտելի՝ մահ» (ձեռ. 5650, էջ 395ա)։ Պլատոնը մահվան մասին խոսում է իր «Ֆեդոն» երկխոսության մեջ, ուր փիլիսոփայության առարկան սահմանում է այսպես. «Իմաստասիրութիւն է խոկումն մահու»։ Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» երկի մի ամբողջ գլուխ՝ պրակ Ը, նվիրված է Պլատոնի այս սահմանմանը. ի՞նչ է ասել Պլատոնը մահվան մասին և ի՞նչպես պետք է հասկանալ նրան։ «Իսկ բնական մահ՝ է անջատումն հոգւոյ ի մարմնոյ,—գրում է Անհաղթը,—ըստ որում ամենեքեան վախճանիմք, այսինքն՝ ապրիլ կենդանւոյն, Իսկ յօժարական մահ է ըստ առաքինութեան կենցաղավարութիւն, յորժամ խոկումն լինի մահու վասն մեռելութիւն գործելոյ ախտից» («Սահմանք իմաստասիրութեան», էջ 72)։ Մահվան մասին այս միտքը Նարեկացուն կարող էր հայտնի լինել նաև Հերմես Եռամեծին վերագրված «Առ Ասկղեպիոս սահմանք» փիլիսոփայական երկի թարգմա-

նությունից. «Մահ իմացեալ անմահութիւն է, ոչ իմացեալն՝ մահ» (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», Գ, Երևան, 1956, էջ 311)։ Հ. Նալյանը կարծում է, որ Նարեկացու հիշատակած իմաստասերը Կյուրիոնն է, թեև Կյուրիոնը հեթանոս իմաստասեր չէր։ «Այլ արդ Կիւրիոն չար ասէ զմահն,—գրում է Նալյանը,—վասն զի ոչ զգամք, և ոչ իմանամք, այլ յանկարծ ըմբռնէ զմեզ յանպատեհ և ի յանապատ ժամու» («Գիրք մեկնութեան», էջ 407)։ Գ. Ավետիքյանը, նրան հետևելով և Գ. Խաչատուրյանը ու Թ. Գուշակյանը, գտնում են, որ Նարեկացին ակնարկում է Եղիշեի՝ ոմն հին իմաստասերից բերած այս արտահայտությունը. «Որպէս և ասաց ոմն ի հնումն. մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է։ Որ զմահ ոչ գիտէ՝ երկնչի ի մահուանէ, իսկ որ գիտէ զմահ, որ երկնչի ի նմանէ» («Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», էջ 14)։

5. Տե՛ս Յոբ, Գ, 22—23։

6. Տե՛ս Հռովմ., Է, 9—11։

7. Տե՛ս Յոբ, ԺԷ, 2։

8. Տե՛ս Առակք, Լ, 1—3։

ԲԱՆ ԾԶ

1. Զինուոր ճնճգաւոր (տ. 5), խորհրդակից ճնճգաւոր (տ. 38), բերանս չարախօս (տ. 6), բնակակից չարախօս (տ. 49)։ Նույն մակդիրների այս կրկնությունը միևնույն գլխում բացառիկ է Նարեկացու համար։ Սպասելի էր, որ երկու դեպքերից մեկում լիներ այլ մակդիր։ Ձեռագրերը, սակայն, հիմք չեն տալիս կարծելու, որ այստեղ կա գրչական շփոթություն։

2. Հմմտ. Առակք, ԺԲ, 10։

3. Հմմտ. Սիրաք, ԻԵ, 4։ «...Զնպարտ աղքատ և զմեծատունն սուտ...»։

4. Բնակակից—A-ն և ձեռագրերի մեծ մասն այս բառի փոխարեն ունեն բնակակիտ։ Ու մի բառարան, սակայն, չունի բնակակիտ բառահոդված։ Ջնջված բառի կազմությունը կանոնավոր ությանը, իմաստը, սակայն, պարզ չէ։ Գուցե սա ավելի ճիշտ ընթերցված է, քան բնակակից բառը, սակայն մենք խուսափել ենք այդ բառը բնագիր մուծել, ենթադրելով, որ բնակակիտ բառը կարող էր ծագել բնակակից բառից՝ ց-ն տ-ի հետ շփոթելուց։

ԲԱՆ ԾԵ

1. Ծ վերնագրի համար տողատակին ունի նշում. «Հիւանդի է բանք պիտանի» (154բ)։

2. Հմմտ. Մարկ., Ժ, 27։

3. ...Հոգւոյդ քոյ Սրբոյ—այսպես ունեն $Պ_{1-3}$-ը, 1782 և 1789 թթ. Պոլսի տպագրերը և մեր օգտագործած բոլոր ձեռագրերը։ $Պ_4$-ը և հետագա մյուս բոլոր տպագրերն ունեն ոգւոյդ քո սրբոյ։ Վերջինս թվում է սխալ ընթերցված և ուղղում ենք Հոգւոյդ քոյ Սրբոյ՝ ըստ ձեռագրերի։

4. Եւ որպէս զՎիմին գրել ոչ գրեցեր—ակնարկում է Պետրոս առաքյալի ուրացությունը՝ Հիսուսի մատնության գիշերը (տե՛ս Մատթ., ԻԶ, 69—75)։ Պետրոս առաքյալին սովորաբար ավանդաբանական գրականության մեջ կոչում են կամ պարզապես Վէմ, կամ՝ Վէմ հաւատոյ, ելնելով ավետարանական այն ավանդությունից, որ Հիսուսն է ասել. «Եւ ես քեզասեմ զի դու ես Վէմ, և ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ» (տե՛ս Մատթ., ԺԶ, 18)։

5. Հմմտ. Բ Թագ., ԺԲ, 13։

6. Զրուժեալս արեամբ քո, գրած—$Պ_{1-2}$-ը ունեն այսպես. «Զրուժեալս արեամբ քով և զրուժեալս սռեամբ քով, գրած»։ $Պ_4$-ը և նրա հետագա արտատպությունները, այդ թվում նաև Գ. Ավետիքյանի «Նարեկլուծի» բնագիրը ունեն այսպես. «Զրուժեալս արեամբ քո, և զրուժեալս սռեամբ քո՝ գրած»։ $Պ_3$-ը, 1782 և 1789 թթ. Պոլսի տպագրերը, Վենետիկի 1840 թ. հրատարակությունը և նրա հետագա արտատպությունները, ինչպես նաև Բուենոս Այրեսի 1948 թ. տպագիրն ունեն «Զրուժեալս արեամբ քո, գրած»։ Տողի ընդարձակված պատկերը, կարծում ենք, առաջացել է արհեստականորեն՝ լուսանցագրային սրբագրված տարընթերցվածները բնագիր մուծելու հետևանքով։ Ձեռագրերի մեծ մասը, այդ թվում նաև Վատիկանի ձեռագիրը, ունեն «Զրուժեալս արեամբ քո, գրած» ընթերցվածը։ Տողի պատկերը, եթե վերանանք զուտ քերականական համաձայնության բնույթի տարբերություններից, այսպես է. «Զրուժեալս արեամբ քո, գրած», կամ՝ «Զրուժեալս սռեամբ քո, գրած», կամ՝ «Զրուժեալս արեամբ քո, գրած», կամ՝ «Զրուժեալս սռեամբ քո, գրած»։ Խնդիրն այն է, թե տարիմաստ այս ընթերցվածներից ո՞րն է ճիշտը, ընդունելին, հեղինակայինը։ Զրուժեա՞լս, թե՞ զրուժեալս, արեա՞մբ, թե՞ սռեամբ։ Ասացինք, որ այս տարընթերցվածներից էլ առաջացել է տողի ընդարձակված պատկերը։ Որ պետք է դրանցից մեկն ընդունել և ոչ թե միավորել իրար, բնագրային այս պահանջը զգացել են դեռևս $Պ_3$-ի հրատարակիչները՝ Գևորգ դպիր Հովհաննիսյան Պալատեցին և Հովհաննես Աստվածատրյանը։ Տողը նրանք գրել են այսպես. Զրուժեալս արեամբ քով, գրած, իսկ նրանց հետևելով, Վենետիկի 1840 թ. հրատարակությունը, ձեռագրական հիմքով, անշուշտ, բայց քերականական սրբագրմամբ, ունի՝ «Զրուժեալս արեամբ քո, գրած», որին և հետևել ենք մենք։ Նախընտրելով արեամբ տարընթերցվածը, մենք, սակայն, վճռականապես չենք մերժում նաև սռեամբ կամ սռեամբք տարընթերցվածը, մանավանդ որ այդպես ունեն մի խումբ հին ձեռագրեր, այդ թվում նաև մեր A-ն։ Ինչ վերաբերում է զրուժեա՞լս, թե՞ զրուժեալս տարընթերցվածներին, ապա պետք է ասել, որ, նախ, ձեռագրերի բացարձակ մեծամասնությունն ունի զրուժեալս, և, երկրորդ, զրուժեալս տարընթերցվածը կարող էր հեշտությամբ ծագել ծ և ժ տառերի գրչագրական շփոթությունից։

ԲԱՆ ԾԸ

1. Գլխի համար ԾՏ ունեն նշումներ. Ծ-ն՝ «Հիւանդի է պիտանի» (էջ 156բ), Տ-ը՝ «Յախտացեալն ԼԸ ամօք» (էջ 160ա), նույնը՝ էջ 161ա։

2. Հմմտ. Սաղմ., ԿԶ։ Թիւք, Զ, 24։

3. Հմմտ. Յովհ., Ե, 1—9։

4. ... յաղիցն լուծմամբ—միայն Բուենոս Այրեսի 1948 թ. հրատարակությունն ունի լուծմամբք։ Մեր օգտագործած ձեռագրերից ոչ մեկը չունի այդ տարընթերցվածը։ Թերևս տպագրական վրիպակ է։

5. Ըստ ավետարանական ավանդության՝ մատնության գիշերը Հիսուսին ապտակում է քահանայապետի սպասավորներից մեկը (տե՛ս Յովհ., ԺԸ, 22)։ Մեկնիչներից ոմանք կարծում են, որ ապտակողը եղել է երեսնութամյա անդամալույծ այն երիտասարդը, որին հրաշագործությամբ բուժել էր Հիսուսը (հմմտ. Յովհ. Ե, 5—9)։ Նարեկացին հետևում է հին մեկնիչների այդ բացատրությանը։

6. Հմմտ. Բ Տիմոթ., Գ, 16։
7. Հմմտ. Յովհ., Ե, 8։
8. ...որպէս երբեմն յուսոյ պանակին—խոսքը Սիմոն Կյուրենացու մասին է։ Գողգոթայի ճանապարհին նա Հիսուսից վերցրեց խաչափայտը և տարավ խաչելության վայրը (տե՛ս Մատթ., Իէ, 32)։ Մինչդեռ ըստ Հովհաննես ավետարանչի՝ Հիսուսն ինքն է Գողգոթա տարել իր խաչափայտը (տե՛ս Յովհ., ԺԹ, 17)։ Նարեկացին հետևում է Մատթեոսին։ Համեմատության իմաստըն այն է, որ ինչպես մի ժամանակ Հիսուսը Սիմոն պանակի ուսից վերցրել է խաչափայտը՝ թեթևացնելով նրա բեռը, այնպես էլ այժմ բանաստեղծը պաղատում է Հիսուսին՝ վերցնել իր հոգու մեղքերի բեռը, որպեսզի հաստատուն հույսի ամուր հավատով ինքը՝ բանաստեղծը խաչվի նրա հետ։

ԲԱՆ ԾԹ

1. Ակնարկում է մաքսավորին (հմմտ. Ղուկ., ԺԸ, 13)։
2. Ակնարկում է փարիսեցուն (հմմտ. Ղուկ., ԺԸ, 11)։
3. Հմմտ. Մարկ., Բ, 17։
4. Հմմտ. Յոբ, ԼԳ, 9։
5. Հմմտ. Թիւք, ԺԶ, 5։
6. Հմմտ. Դ Թագ., Ա, 9—10։
7. Նարեկացին այստեղ Երեմիային նմանեցնում է Քրիստոսին՝ թերևս նկատի ունենալով մարգարեի հետևյալ արտահայտությունը. «Ես իբրև գառն անմեղ, վարեալ ի սպանդ» (տե՛ս Երեմ., ԺԱ, 19)։
8. Հմմտ. Գաղ., Բ, 20։

ԲԱՆ Կ

1. ւ գլխի համար ուշ գրչությամբ ունի լուսանցային նշում. «Սօղոմոնի է» (էջ 152բ)։
2. Տ. 1—2։ Նկատի ունի Սաղմ., ԽԹ, 16։
3. ծ ունի զամենայն շրջուն—այսպես է նաև Աստվածաշնչում (տե՛ս Սաղմ., ԺԱ, 4)։ Այս բնույթի տարընթերցվածներն առաջ են եկել առանձին գրիչների այն նախասիրությունից, որոնք ձգտել են Նարեկացու մեջբերումներն Աստվածաշնչից ուղղել, լրացնել, սրբագրել ըստ բնագրի՝ բառացի ճշգրտությամբ, մինչդեռ Նարեկացին միշտ չէ, որ հետևել է բառացի համապատասխանությանը։ Եվ, ընդհակառակն, կան գրիչներ, որոնք աստվածաշնչական մեջբերումները տալիս են թերի, կիսատ, նկատի ունենալով, որ ընթերցողը պիտի իմանա անգիր և կարող է լրացնել հիշողությամբ։ Այսպես է վարվել, օրինակ, Ս-ի գրիչը։
4. Հմմտ. Սաղմ., ԻԵ, 4։
5. Հմմտ. Ա Կորնթ., ԺԴ, 15։
6. Հմմտ. Սաղմ., ԻԵ, 24։
7. Յաւակնանացն (կամ՝ յաւեանականացն)—այս բառը Հայկազյան բառարանը վկայակոչում է միայն Նարեկացու միակ այս գործածությամբ (տե՛ս «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», Բ, էջ 381)։ Ըստ Հայկազյան բառարանի՝ բառը ծագում է յօսեմ կամ յաւսեմ, յօսում կամ յաւսում բայից, որ նշանակում է «անառակիլ. խառնակիլ. մտանել առ բոզ. պոռնկիլ.

շնալ. ապականել. պղծել. պղծիլ. առևանգել»։ Յաւսնիցեն (սորրադաս. եղ. առաջին ապառնի) բառը Նորայր Բյուզանդացին բացատրում է այսպես. «յօսնեմ կամ յօսեմ կամ յօսում բայեն, որ կնշանակե կին պղծել, պոռնկիլ» (տե՛ս «Հայկական բառաքննութիւն», էջ 21—22)։ Ըստ այսմ էլ՝ յաւսական կամ յաւսնական նշանակում է պոռնկական, տարփական, անառակ։ Գ. Ավետիքյանը նախընտրել է բնագրում դնել յաւսնականացն ձևը. «Հարազատ թուեցաւ յաւսնականացն դնել, որ ելանէ ի բայէն յաւսնոյ, այսինքն տռփել» («Նարեկլուծ», էջ 308, ծնթ. 17)։ Մենք, ընդհակառակն, նախընտրում ենք դնել յաւսականացն, հետևելով, նախ, տարընթերցվածների մեծամասնությանը, ապա և մեր ADHΣΦ օրինակների և Վատիկանի ձեռագրի աւսականացն ձևին, ուր տարբերությունը վկայված է ամենահին ձեռագրերով։

8. Աստարտայ եւ Քամովսայ եւ Մեղքոմայ—Աստվածաշնչում հիշված կուռքեր (հմմտ. Գ Թագ., ԺԱ, 4—8), որոնց պաշտամունքը հարևան ժողովուրդներից վերցրին իսրայելացիները՝ Սինայի անապատով անցնելիս։ Ըստ հին լուծմունքի՝ Աստարտը և Քամովսը սիդոնացիների աստվածներ էին, կուռքեր, «զոր պաշտէին իսրայելացիքն խոտորեալ յօրինացն, և գնալով զհետ պոռնկութեան, զի պատկերին ամօթոյ անդամօքն բացերև կայր ի կողն կառուցեալ զի տեսանողն զախտն տռփողացն արծարծեսցէ» (ձեռ. 5650, էջ 399ա)։ Աստարտ և Աստարտովթ (առաջինը հունական ձևն է, երկրորդը՝ եբրայական) հաճախ նույնացվում են, թեև, թվում է պետք է տարբեր կուռքեր լինեին, ինչպես երևում է Աստվածաշնչի այս վկայությունից. «...և պաշտեցին որդիքն Իսրայելի զԱստարտն և զԱստարտովթ, և զաստուածս ազգացն որ շուրջ զնոքօք» (տե՛ս Յեսուս, ԻԴ, 33)։ Աստարտը գրեթե միշտ հիշվում է Բահաղ անվան հետ. «...պաշտեցին զԲահաղ և զաստարտսն...» (տե՛ս Դատ., Բ, 13), ուր աստարտս հոգնակի ձևը նշանակում է Աստարտի արձաններ, պատկերներ։ Աստարտը կամ Աստարտովթը հայերեն հաճախ թարգմանված է անտառ, անտառներ. «...ի բաց արարէք զաստուածս օտարոտիս ի միջոյ ձերմէ և զանտառսն, և պատրաստեցէ՛ք զսիրտս ձեր առ Տէր...» (Ա Թագ., Է, 3)։ Համապատասխան հատվածը ռուսերեն թարգմանված է այսպես. «...Удалите из среды себя богов иноземных и Астарт и расположите сердце ваше к Господу» (I Царства, 7, 3)։ Հայերենը ոչ թե սխալ է թարգմանված, այլ բխում է Աստարտի պաշտամունքի ուղղակի, նախնական ընկալումից։ Տարբեր ժողովուրդների մոտ նույն աստվածությունը, նույն պաշտամունքը տարածված է եղել տարբեր իմաստավորմամբ։ Փյունիկեցիների մոտ այն նախապես պիտի կապված լիներ արմավենու պաշտամունքի հետ, պտղաբերության պաշտամունքի հետ։ Անհաթե ինչու այդ աստվածությունը ծառի կամ ծառերի ձևով խորհրդանշում էր տիեզերքը կամ բնությունը՝ աշխարհի տիրակալի՝ Բահաղի հետ և նրա պատկերը դրվում էր Բահաղի զոհասեղանի վրա կամ կողքին։ Երեմիա մարգարեն նրան կոչում է «երկնքի տիկին» «...արկանել խունկս տիկնոջն երկնից և նուիրել նմա նուէրս, որպէս արարաք մեք և հարքն մեր...» (տե՛ս Երեմ., ԽԴ, 17)։ Ուսափ մեկնիչներից շատերը Աստարտ անունը ստուգաբանում են աստղ բառից, նույնացնում Աստղիկ աստվածուհու կամ Արուսյակի պաշտամունքի հետ, որը «կհամարվեր ամեն բախտավորության տվիչ և պահպանիչ» (տե՛ս «Բառարան Սուրբ Գրոց», էջ 84)։ Ըստ Ավետիքյանի՝ «Լուսին էր սա, և արձան եղջիւրաւոր կազմեալ, կամ ի ճակատ նորա եղջիւրաձև լուսին եդեալ. իգական ձևով խայտառակութեան ի զարշութիւնս գրգռելով զպաշտօնեայս. որք և մերկանդամ ծառայէին՝ ըստ հաճոյից այնպիսի աստուածուհւոյ» («Նարեկլուծ», էջ 245, ծնթ. 24)։ Աստարտի արձանները մի շարք ժողովուրդների՝ քանանացիների, սիդոնացիների, ամոնացիների, փղշտացիների և այլոց մոտ կերտվում էին մերկ կնոջ մարմնով և նրա պաշտամունքն ուղեկցվել է այնպիսի արարողություններով, ինչ հիմք է տվել նրան կապել անառակության ու խայտառակության հետ։ Իրականում նա խորհրդանշել է պտղաբերության, զգայական սիրո վերածնող ակիզբը։ Ամենալայն իմաստով՝ դա եղել է բնության աստվածուհին։ Բահաղը խորհրդանշել է արական սկիզբը, Աստարտը՝ իգական, որոնց հիմքում

էլ ընկած է եղել Արևի և Լուսնի՝ բնության կյանքի հետ ունեցած նրանց շարժման ու ներգործման հզոր ուժերի՝ ընդունող ու վերարտադրող սկիզբների աստվածացումը (տե՛ս Еврейская Энциклопедия", հ. 3, Ս. Պետերբուրգ, էջ 354)։

Քամովսը ևս Աստվածաշնչում հիշված կուռքերից է («... եթող զիս, և երկիր եպագ... Քամովսայ կռոց Մովաբացւոց...», Գ Թագ., ԺԱ, 33), մովաբացիների աստվածներից մեկը։ Մեկնիչներից ոմանք Քամովսին նույնացնում են Փեգովրի հետ (տե՛ս բան ԽԸ, ծնթ. 10)։ Մեղքոմը ևս Աստվածաշնչում հիշված կուռքերից է. «... և երկիր եպագ... և Մեղքոմայ զազրութեան որդւոցն Ամոնայ...» (Գ Թագ., ԺԱ, 33)։ Մեկնիչներն այս կուռքը նույնացնում են Մողոքի հետ (տե՛ս բան Ի, ծնթ. 12)։ Առհասարակ նույնացման հիմքը գալիս է ոչ թե սխալ մեկնաբանությունից կամ շփոթությունից, այլ նրանից, որ բնության նույն երևույթի աստվածացման հիմքը լինելով նույնը, տարբեր ժողովուրդների մոտ տարբեր անուններ է ունեցել և, բնականաբար, եղել են ծիսական-արարողական տարբերություններ։ Մեղքոմն ու Մողոքը, Աստարտն ու Աստարովթը, Քամովսն ու Փեգովրը, ըստ էության, նույն աստվածությունների տարբեր անուններն են՝ տարբեր ժողովուրդների մոտ և էապես տարբերություն չկա, թե մի ժողովուրդ Աստարտը նույնացրել է Լուսնի թե Արուսյակի հետ։

9. ... Թարահատայ բարմատարի—այս կուռքի անունը չի հիշված Աստվածաշնչում։ Ըստ Գ. Աբեղյանի՝ մեկնիչներից ոմանք «ասացին լինել կուռս շինեալ ի Թարայէ՝ ի հօրէն Աբրահամու», մանավանդ որ Թարան ոչ միայն ինքը սկսեց պաշտել օտար աստվածներ, այլև նա էր, որ սկիզբ դրեց կուռքեր ձուլելուն։ Ոմանք էլ Թարահատին նույնացնում են Մեղքոմի, հետևաբար և՝ Մողոքի հետ։ Աբեղյանը նշում է նաև, որ Խորենացու Պատմության մեջ հիշվում է «զկուռս ինչ անուանեալ Թարաթայ։ Այլ թէ այս իցէ յիշեցեալն սրբոյ վարդապետիս, և կամ այլ կուռք, հաւաստի ասել ոչ ունիմք» (տե՛ս «Նարեկլուծ», էջ 308, ծնթ. 20)։ Կարծում ենք, որ ճիշտ է Թարահատը նույնացնել Թարաթայի հետ։ Այդպես է կոչվել ասորական կուռքերից մեկը։ Աբգար հայոց թագավորը հիմնադրում է Եդեսիան և Մծբինից իր արքունիքը տեղափոխում է այնտեղ. «և զամենայն կուռս իւր, զՆաբոգ և զԲէլ և զԲաթնիքաղ և զԹարաթայ» (Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Գիրք Բ, գլ. ԻԷ)։

10. Համա. Սաղմ., ԾԲ, 6։

11. ... զապերախտութիւնն Յակոբայ—նկատի ունի հրեաների՝ Հակոբի տան ապերախտությունը Մովսեսի հանդեպ՝ Ավետյաց երկրի ճանապարհին։ Զուգահեռի իմաստն այն է, որ ինչպես նրանք չէին առաջնորդվում Մովսեսի սքանչելագործ գավազանի զորությամբ, այնպես էլ ինքը Քրիստոսի փրկագործ խաչին չի հետևում։

12. Տե՛ս Ելք, Դ, 2—5։

13. Համա. Մատթ., ԺԳ, 4։

14. Տե՛ս Յովհ., Դ, 7—11։

15. Տե՛ս Գ Թագ., ԺԸ, 1։

16. Տե՛ս Մատթ., ԻԸ, 19—20։

ԲԱՆ ԿԱ

1. Բանաստեղծը նախորդ գլխում 41 անգամ ուղղակի մեջբերումներ է կատարել սաղմոսներից (տե՛ս գլխի տողատակը բնագրում), ընդ որում, բացառությամբ մի քանի դեպքի, այդ վկայակոչումները հանդես են գալիս ոչ թե ետևառաջ դասավորությամբ, այլ այն հաջորդական

կարգով, ինչ նրանք ունեն բուն Սաղմոսարանում։ Սույն գլխում ևս Նարեկացին մեջբերումներ է անում բացառապես սաղմոսներից, չնայած կշտամբում է իրեն՝ ասելով, թե՝

Եւ ընդէ՞ր է ինձ բնաւ, որ սաղմոսին,
Այնպիսեաց բանիցն ի կիր արկանել (տ. 1—2)։

2. Տաղաւք ընթերցվածի փոխ որոշ ձեռագրեր (ի թիվս որոնց և A օրինակը) տալիս են տաղաւք կամ տաղիւք, իսկ երբեմն՝ տողօք (տե՛ս տողի տարընթերցվածները)։ Մատյանի հնագույն տպագիրները ($Պ_{1-3}$) նախընտրել են տաղիւք ընթերցվածը, իսկ $Պ_4$-ից սկսած հետագա բոլոր հրատարակությունները, բացի Պոլսի 1782 և 1789 թթ. տպագիրներից, ուղղել են տաւղօք։ Այդտեղ խոսքը, անշուշտ, տավիղ նվագարանի մասին է։ Նարեկացին ունի գանձարանային բազմաթիվ երգեր, որոնք «տաղ» են կոչվում, բայց Մատյանում նա առհասարակ այդ բառը չի գործածել։ Մեզ հետաքրքրող տեղում, ինչպես Գ. Աբեղյանն է նկատել, բանաստեղծն իր բերանը համեմատել է տավիղի հետ («Նարեկլուծ», էջ 314, ծնթ. 1), իսկ տավիղ-սաղմոսարանն այն գործիքն է, որի վրա նվագել է սաղմոսների ավանդական հեղինակը՝ Դավիթ մարգարեն։ Հիշենք Նարեկացու երկու տողը «Վարդավառի» տաղից, ուր հիշվում է Դավիթն իր տավիղով.

Տեւեն տաւիղ տուողին,
Ձոր եւգէր Դաւիթ ճռաշալին

(Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, էջ 482)։

Սաղմոսներից առանձին տներ ու արտահայտություններ վկայակոչող Նարեկացին, իհարկե, համեմատություն-զուգահեռ է անցկացնում իր և Իսրայելի սաղմոսերգու թագավորի միջև և իր երգասաց շուրթերը նմանեցնում նրա տավիղին։ Նույնպիսի պատկեր-համեմատություն հանդիպում է նաև բանաստեղծի «Աչքն ծով ի ծով...» սկսվածքով «Ծննդեան» կոչված տաղում, բայց արտահայտչորեն որքա՜ն տարբեր «Հանապազ երգել իմովքս տաւղաւք» տողից.

Լեզուին շարժողին քաղցրերգանայր տաւիղն

(Նույն տեղում, էջ 465)։

Այսպիսով, արտաքին նմանության հետևանքով, բնագրային տաղաւք ընթերցվածը Մատյանի որոշ գրիչներ շփոթել և ընդօրինակել են մերթ իբրև տաղաւք (տաղիւք) և մերթ էլ՝ տողօք։

3. Նկատի ունի Դավիթ մարգարեին, որը, ըստ ավանդության և Նարեկացու բնորոշմամբ, լինելով զինվոր, թագավոր ու մարմնական հրամանատար, այսինքն՝ զանազան հոգսերով զբաղված («Նարեկլուծ», էջ 314, ծնթ. 2), միաժամանակ հավատարմորեն հետևել է հին (մովսիսական) օրենքին, այսինքն՝ «աւրինաւոր» (տ. 11) և օրինապահ արքա է եղել։ Բանաստեղծը ակնարկում է Սաղմոս Ճ, 4—8-ում Դավթի բերանով ասվածը. «Խոտորեալ յինէն անզգամին, և ես ոչ ինչ փոյթ առնէի։ Որ խօսէր գաղտ զընկերէ իւրմէ, զնա բացէ ի բաց հալածէի։ Որ ամբարտաւանեալ աչօք և ագահ սրտիւ, ընդ նմա և հա՛ց ոչ ուտէի. Աչք իմ ի հաւատացեալս երկրի, զի նստցին նոքա ընդ իս։ Որ գնայր ի ճանապարհ անբիծ, նա՛ պաշտէր զիս։ Ոչ բնակէր ի մէջ տան իմոյ, որ առնէր զամբարտաւանութիւն։ Որ խօսէր զանօրէնութիւն, չէր յաջողեալ նմա առաջի աչաց իմոց։ Ընդ առաւօտս սպանանէի զամենայն մեղաւորս երկրի. սատակեցից ի քաղաքէ տեառն զամենեսեան, որ գործեն զանօրէնութիւն»։

4. Համա. Սաղմ. Ճ, 8։

5. Համա. Նույնը։

6. Հմմտ. Սաղմ., ՃԺԱ, 9։
7. Հմմտ. Սաղմ. ՃԽԴ, 10։
8. Գ. Ավետիքյանի ձեռքի տակ եղած գրչագիր օրինակներից մեկն ունեցել է վերարձակութիւնք տարընթերցվածը (տե՛ս «Նարեկլուծ», էջ 316, ծնթ. 24), որը մեր ձեռագրերից ոչ մեկը չի տալիս։
9. Միայն Պ$_1$ տպագիրը ճաշաբեր բառի փոխ ունի ճաշաբերութեան (էջ 260)։ Այդ սխալագիր ընթերցվածը հետագա տպագիրներում և մեր օգտագործած ոչ մի ձեռագրում չի հանդիպում։

ԲԱՆ ԿԲ

1. ...ի վերագրեցեալն սաղմոս—այսինքն՝ վերևում հիշատակված սաղմոսի վրա։ «Սաղմոս» բառը, ինչպես հայտնի է, միջնադարում ընկալվել է նաև հոգնակի նշանակությամբ, իբրև սաղմոսներ, սաղմոսարան, իսկ վերագրիմ կրավորաձև բայի անցյալ դերբայաձևը (վերագրեցեալ կամ վերագրեալ) այստեղ ունի «վերևում գրված» («վերևում բերված», «վերոհիշյալ») իմաստը, ինչպիսի առումով այն բազմիցս հանդիպում է Մատյանի նաև այլ գլուխներում (հմմտ. Է, 4—«զոր վերագրեալքդ սահմանեցին», ԺԵ, 41—«վերագրեցելոցդ աւրինակութեամբ», ԽԵ, 76—«մի՛ ի վերագրելոցդ բաւականապէս զաւէ սատակման», ԾԶ, 63—«զո՞ւս ի վերագրելոցդ մասանց» և այլն)։

ԿԲ գլխի տ. 1—2-ում Նարեկացու ասածը՝ «... ընդէ՞ր ոչ ի վերագրեցեալն սաղմոս նախանձառական / Եւ յայլ մարգարէիցն մասն ինչ յաւելեցից» («ինչո՞ւ վերոհիշյալ նախանձախնդիր սաղմոսների վրա մյուս մարգարեներից ևս հատված չավելացնեմ»), կարևոր նշանակություն է ձեռք բերում ԿԲ—ԿԳ գլուխների բնագրային կարգը վերականգնելու հարցում։ Ինչպես գիտենք, մեր օգտագործած գրչագրերի մեծագույն մասը (A—Z և α—Φ) ունի նախ՝ ԿԳ գլուխը («Բարեբար եւ բազմագութ...»)՝ ԿԲ համարակալումով և ապա՝ ԿԲ գլուխը («Այլ արդ, ընդէ՞ր ոչ ի վերագրեցեալն...»)՝ ԿԳ համարակալումով, որին հետևել են հին տպագիրները (Պ$_{1-3}$ և Պոլսի 1782 և 1789 թթ. հրատարակությունները)։ Եվ, ընդհակառակն, ձեռագրերի միայն մեկ երրորդ մասը (a—x, բացի o գրչագրից, որում ԾԸ—ԿԴ գլուխները բացակայում են) այդ գլուխներն ունի Պ$_4$ տպագրից սկսած ավելի ընդունված կարգով և ճիշտ համարակալումով (ԿԲ—«Այլ արդ, ընդէ՞ր...», ԿԳ—«Բարեբար եւ բազմագութ...»)։ Նկատելի է շատ հետաքրքիր մի հանգամանք. գլուխների հաջորդության առաջին ավանդույթը (ԿԳ—ԿԲ) արտահայտվել է թե՛ Կիլիկիայում, թե՛ բուն Հայաստանում և թե՛ հայ գաղթավայրերում գրված ձեռագրերում, մինչդեռ երկրորդ ավանդույթը (ԿԲ—ԿԳ) Կիլիկիայում, ըստ երևույթին՝ նաև ղրիմահայ ու լեհահայ գրչակենտրոններում, օրինակված ոչ մի ձեռագրում չի արտահայտվել (հայտնի է, որ Ղրիմի և Լեհաստանի հայ գրչության դպրոցները հատկապես հետևել են Կիլիկիայից եկող ձեռագրական ավանդույթներին)։

Գլուխների այդ տարբեր կարգը դեռևս միջնադարում նկատել են իրենք՝ Մատյանի գրիչները։ C օրինակում հետագա մեկը, որը բազմաթիվ սրբագրումներ է կատարել ձեռագրում, նկատելով այդ տարբերությունը, նշել է. «Հետ այսոր Բարեբար-ն է ի մեկայլ օրինակն» (տե՛ս նրա 129ա էջը)։ Մյուս օրինակում, ուրեմն, եղել է նախ՝ «Այլ արդ, ընդէ՞ր...» սկսվածքով գլուխը (ԿԲ), ապա՝ «Բարեբար եւ բազմագութ...» սկսվածքովը (ԿԳ)։ Իսկ E ձեռագրի գրիչը, Մատյանի միջնադարյան մեկնության մեջ վերջինիս կարգով ներկայացնելով գլուխները, սակայն, «Այլ արդ, ընդէ՞ր...» սկսվածքն ունեցող գլուխը նշանակել է ԿԳ, իսկ մյուսը՝ ԿԲ թվահամարով, այսինքն՝ ԿԳ թվահամարը նրա գրչագրում նախորդում է ԿԲ-ին (տե՛ս նրա 402ա էջը)։ Այդ կերպ նա մեկնության գլուխները համապատասխանեցրել է Մատյանի իր գրչագրած օրինակին։ ԿԲ—ԿԳ գլուխների կարգով տարբեր երկու տիպի գաղափար օրինակներից օգտվելու պատճառով չէ՞, արդյոք, որ e ձեռագիրը չունի ԿԳ գլուխը, իսկ Անթիլիասի կաթողիկոսարանի № 90 գրչագիր Նարեկում (ժամ.՝ XIII—XIV դդ.), ընդհակառակն, բաց է թողնված ԿԲ գլուխը («Այլ արդ, ընդէ՞ր...»), իսկ ԿԳ գլուխը («Բարեբար եւ բազմագութ...») համարակալված է ԿԲ (տե՛ս նրա 158ա էջը։ Օգտվել ենք Ա. վրդ. Դանիելյանի անտիպ ձեռագրացուցակից)։

Իսկ ինչպիսի՞ն է եղել մեզ հետաքրքրող գլուխների հաջորդությունը Մատյանի բուն, հեղինակային նախօրինակում. բնագրագիտական այս կարևոր խնդրի լուծման համար չկան ձեռագրական ուղղակի կռվաններ։ Բայց Նարեկացու վերոհիշյալ հռետորական հարցումը, թե՝ «...ընդէ՞ր ոչ ի վերագրեցեալն սաղմոս նախանձառական / Եւ յայլ մարգարէիցն մասն ինչ յաւելեցից», ինքնին ապացույց է այն բանի, որ Կ—ԿԱ գլուխներին, որտեղ բանաստեղծը չափազանց շատ մեջբերումներ է կատարել սաղմոսներից (Կ-ում՝ 45, իսկ ԿԱ-ում՝ 30), հաջորդելու է «Այլ արդ, ընդէ՞ր...» սկսվածքով և ոչ թե «Բարեբար եւ բազմագութ...» սկսվածքն ունեցող գլուխը։ Այս վերջինում Նարեկացին 9 անգամ վկայակոչում է մյուս մարգարեներին։ Եթե սա Մատյանի ԿԲ գլուխը լիներ, ապա այդ դեպքում Նարեկացին ինչո՞ւ պետք է հաջորդ գլխի սկզբում նշեր, որ ուզում է վերոհիշյալ սաղմոսների վրա նաև մյուս մարգարեներից հատվածներ ավելացնել։ Անիմաստ կլիներ այդպես ասելը։ Ուրեմն նա նկատի ուներ Կ—ԿԱ գլուխները, որոնցում Դավիթ մարգարեի սաղմոսներից բազում մեջբերումներ կատարելուց հետո, այնուհետև հաջորդ՝ «Այլ արդ, ընդէ՞ր...» սկսվածքով գլխում արդեն նա դիմում է (8 անգամ) մյուս մարգարեներին, գրելով. «Եւ յայլ մարգարէիցն մասն ինչ յաւելեցից»։ Հետևաբար, Մատյանի անխաթար բնագրում հեղինակային մտահղացմամբ «Այլ արդ, ընդէ՞ր ...» սկսվածքով գլուխն ունեցել է ԿԲ համարակալում և նախորդել է «Բարեբար եւ բազմագութ...» սկսվածքով ԿԳ համարակալում ունեցող գլխին։ Գլուխների այս կարգը տպագիրներից առաջինը վերականգնել է Պ$_4$-ը՝ առանց, սակայն, բանասիրորեն հիմնավորելու։ Հետագա տպագիրները, բացի Պոլսի 1782 և 1789 թթ. հրատարակություններից, հետևել են նրան։ Մենք ևս նախընտրում ենք գլուխների այդ կարգը։

2. Հմմտ. Ես., ՍԹ, 12։
3. Տե՛ս Մատթ., Թ, 17։

ԲԱՆ ԿԳ

1. Հմմտ. Դան., Գ, 50։
2. Նկատի ունի Ղովտի կնոջը (տե՛ս Ծննդ., ԺԹ, 26)։ Նարեկացին նրան անվանում է երկյակ բնությամբ արձան («Երկեակ բնութիւն ի նոյն արձանի»), այսինքն՝ կազմված աղից ու քարից, որ անմեղների (Ղովտը և նրա դուստրերը) և մեղավորների (Սոդոմ-Գոմորի բնակիչները) միջև է կանգնած («Ոչ իսկապէս ընդ անպարտսն եւ ոչ նամայն ընդ պատժաւորսն»)։
3. Հմմտ. Ելք, ԺԴ, 21—22. ԺԵ, 8։ Տ. 13-ում Մատյանի Բուենոս Այրեսի տպագիրը զկարկառս հոգնակի ձևի փոխ բառն ունի եզակի՝ ըզկարկառ («Նարեկ. Մատեան ողբերգութեան», էջ 159)։ Հավանաբար վրիպակ է, առաջացած տպագրական ճանապարհով. մյուս տպագիրները և մեր օգտագործած ձեռագրերը չեն տալիս այդ տարընթերցվածը։
4. Հմմտ. Ելք, ԺԵ, 6։
5. Հմմտ. Յեսու, Գ, 15—16։

6. Հմմտ. Ցեսու, Ջ, 20։
7. Հմմտ. Դ Թագ., Բ, 21։
8. Հմմտ. Ելք, ԺԵ, 23—25։
9. Հմմտ. Ելք, Դ, 9։
10. Ինչպես Գ. Ավետիքյանն է նկատել, նկարագրիլ կրավորաձև անորոշ դերբայն այստեղ հանդես է գալիս ներգործական սեռի նշանակությամբ, հետևապես պետք է լիներ նկարագրել: Սակայն ոչ մի ձեռագիր կամ տպագիր այս վերջին ձևը չի տալիս։ Նկարագրիլ դերբայաձևը, ըստ Ավետիքյանի ենթադրության, «թերևս ի գրչաց մտեալ է փոխանակ գնելոյ նկարագրել» («Նարեկլուծ», էջ 322, ծնթ. 7)։ Որքան էլ ճիշտ լինի այդ ենթադրությունը, սակայն, բնագրում թողնում ենք նկարագրիլ ձեռագրական միակ ընթերցվածը։
11. Հմմտ. Ելք, Դ, 4։
12. Միայն Բուենոս Այրեսի տպագիրը ճրաշից բառի փխ ունի ճրաշալից («Նարեկ. Մատեան ողբերգութեան», էջ 159)։ Մյուս տպագիրները և մեր օգտագործած ձեռագրերից ոչ մեկը չունեն այդ ընթերցվածը. հավանաբար տպագրական վրիպակ է։
13. Հմմտ. Ելք, Դ, 6—7։
14. Տե՛ս Յոբ, ԺԲ, 20։
15. Հմմտ. Յոբ, Թ, 6:
16. Հմմտ. Իմաստ., ԺԳ, 3։
17. Հմմտ. Սաղմ., ՃԳ, 32։
18. Ակատ—մակույկ, նավակ։ Փոխառված է հունարենից (տե՛ս «Նարեկլուծ», էջ 324—325, ծնթ. 20)։ Հայ մատենագրության մեջ գործածել է միայն Նարեկացին։
19. Հմմտ. Ա Կորնթ., ԺԵ, 42։
20. «Նարեկլուծ»-ում Գ. Ավետիքյանի օգտագործած գրչագրերից մեկն ունեցել է մաճու փխ մաճացու բառի («Նարեկլուծ», էջ 325, ծնթ. 21)։ Տպագիրները և մեր գրչագրերը չեն տալիս այդ ընթերցվածը։
21. Թերևս Նարեկացին նկատի է ունեցել Ամովս, Դ, 13-ում արարչի մասին ասվածը՝ «... առնէ առաւօտ և մէգ», բայց ստեղծել է զարմանալի գեղեցիկ մի պատկեր. «Որ միայն ճենուս, անկանես անճառ արուեստիւ / Հնարագիտութեան՝ մէգ եւ առաւատ» (տ. 92—93), այսինքն՝ դու, որ հնարագիտությամբ և անճառ արվեստով հինում ու գործում ես մեգն ու առավոտը։ Մեգը և առավոտն այստեղ հիշեցնում են ժողովրդական հեքիաթի սև ու սպիտակ կծիկները. իսկ սև կծիկով ոստայնանկի հինելն ու գործելը խորհրդանշում է գիշերը (մեգը), սպիտակ կծիկովը՝ առավոտը (ցերեկը)։
22. Տե՛ս Յոբ, Թ, 10։
23. Հմմտ. Ես., ԾԳ, 4։
24. Հմմտ. Հռովմ., Ե, 17—18։

ԲԱՆ ԿԴ

1. Հմմտ. Մատթ., ԺԱ, 17։
2. Տե՛ս Ամբակ., Գ, 4։ Սաղմ., ՀԳ, 11։ Զաք., Ա, 21։
3. Տե՛ս Ես., ԼԳ, 14. ԿԶ, 24։
4. Բաճաղ (Բաճալ)—փյունիկյան կուռք, որի պաշտամունքը կատարել են նաև երրայեցիները Սամարիայում։ Ս. Գրքում հիշատակվում է նաև Բէեղզեբուղ կամ Ճանճիկ աստուած Ակկարոնի անուններով (տե՛ս ԾԱ գլխի 8-րդ ծնթ.)։ Նրա հետ նույնանում է բաբելական Բելը։ Ձեպեցայ ի տաւնս Բաճաղու—այսինքն՝ տարվել է մարմնական ախտերով, աշխարհիկ խրախճանքներով (հմմտ. «Նարեկլուծ», էջ 328, ծնթ. 6)։

5. Տե՛ս Դ Թագ., ԺԸ, 21։ Խոսքը Եղիա մարգարեի մասին է։ Մատյանի ձեռագրերը չունեն այս ընթերցվածը։
6. Մատյանի բոլոր հրատարակությունները, բացի $Պ_3$-ից, Պոլսի 1782 և 1789 թթ. և Բուենոս Այրեսի տպագիրներից, աւրինաւք ընթերցվածի փխ ունեն աւրինակաւք: Ձեռագրերի մեծագույն մասը ևս տալիս է այս վերջին բառը (տե՛ս տողի տարընթերցվածները)։ Նախընտրում ենք աւրինաւք ընթերցվածը, քանի որ, ինչպես հաջորդ տողերն են ցույց տալիս, բնագրում խոսքը ոչ թե օրինակի, այլ Մովսեսի Օրենքի մասին է։ Այն հիշվում է ի թիվս մարգարեների գրքերի, առաքելական մատյանների, այսինքն՝ ավետարանների ու առաքյալներին վերագրվող գրքերի («Գործք առաքելոց», «Յայտնութիւն Յովհաննու» և այլն)։ Նախապատվությունը տվել ենք աւրինաւք ընթերցվածին՝ նկատի ունենալով նաև այն, որ աւրինակն բառը կա մի քանի տող հետո (տ. 55)։
7. Հմմտ. Առակք, Է, 3։
8. Միայն Բուենոս Այրեսի տպագիրն ունի կտակաւ («Նարեկ. Մատեան ողբերգութեան», էջ 163), որը հավանաբար տպագրական վրիպակ է. մյուս բոլոր տպագիրներն ու մեր օգտագործած ձեռագրերը տալիս են կտակաւն:
9. Տե՛ս Մատթ., ԻԷ, 52։
10. Հմմտ. Ղուկ., ԺԶ, 28։
11. Հմմտ. Յոբ, ԽԱ, 15։ Տ. 54-ում մի շարք ձեռագրեր և բոլոր տպագիրները, բացի $Պ_{1-}$ և Պոլսի 1782 և 1789 թթ. հրատարակություններից, անընդոստ բառի փխ տալիս են անոստ: Երկու բառն էլ ունեն միևնույն իմաստները՝ «անշարժ, հանդարտ, անխռով, պղերգ, խստասիրտ, կարծր» (տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Ա, էջ 148)։ Անոստ բառը հայ մատենագրության մեջ հայտնի է գործածության եզակի դեպքերով. բացի մեզ հետաքրքրող տողից, այն հանդիպում է դարձյալ Նարեկացու մոտ, նրա Առաքյալների ներբողյանում, իսկ մեկ անգամ էլ Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» երկի թարգմանության մեջ՝ անոշտ (տե՛ս նույն տեղում, էջ 217)։ Ընդհակառակն, անընդոստ բառը գործածության անհամեմատ ավելի շատ օրինակներ է տալիս (նույն տեղում, էջ 148), ընդ որում հանդես է գալիս նաև Մատյանի ՂԲ գլխի Ժ հատվածում («... իսկ զանընդոստն կակղացուցեր՝ զարթնուլ եւ զգաստ լինել...»)։ Տ. 53—54-ի աղբյուրը, որը Մատյանի ոչ մի հրատարակության մեջ, նաև Հ. Նալյանի ու Գ. Ավետիքյանի մեկնություններում, նկատված չէ, ինչպես նշել ենք, Հոբի գրքի ԽԱ, 15 տունն է, որտեղ անընդոստ կամ անոստ բառերը թեև բացակայում են, բայց նրանց իմաստն արտահայտված է անշարժ համանիշով՝ «... իբրև զսալ դարբնաց անշարժ»։
Մենք հակված ենք այն մտքին, որ Նարեկացու տողում բնագրային նախնական ու ճիշտ ընթերցվածը եղել է անընդոստ բառը, որի ընդ բաղադրիչը Մատյանի հետագա գրիչը կարող էր պարզապես անզգուշորեն զանց առնել, իսկ այդպես առաջացած անոստ ընթերցվածն անցնել ձեռագրից-ձեռագիր։ Դրա պահպանված ամենավաղ վկայությունը տալիս է մեր A գրչագիրը։ Չնայած որ այն պատկանել է Ներսես Լամբրոնացուն, բայց վերջինս ժողովողի գրքի իր մեկնության մեջ, գրեթե նույնությամբ մեջ բերելով Նարեկացու տողը, հակառակ իր իսկ ձեռագրի, դնում է ոչ թե անոստ ընթերցվածը, այլ անընդոստ. այսպես՝ «Մնաց իբրև զսալ դարբնաց անընդոստ» (օրինակը տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի». Ա, էջ 148)։ Ուրեմն Լամբրոնացին այդ դեպքում հետևել է մի այլ գրչագրի՝ իր կարծիքով ավելի ճիշտ ընթերցվածին։ Մենք ևս Լամբրոնացու և $Պ_{1-3}$ տպագիրների նախընտրած անընդոստ ընթերցվածը, ինչպես ունի մեր օգտագործած ձեռագրերի մեծագույն մասը։ բնագրում դնում ենք
12. Տե՛ս Դ գլխի 3-րդ ծնթ.։

ԲԱՆ ԿԵ

1. Որոշ ձեռագրեր վերնագրի դիմաց գլխի համար ունեն նշումներ՝ «Վասն գերեզմանին է ճառս» (F, էջ 77բ), «Գերեզմանին» (Տ, էջ 71ա), «Ի գերեզման մահու» (s, էջ 182ա)։

2. Ատտիկե (Հելլադա) գավառն իր մայրաքաղաք Աթենքով անտիկ աշխարհում հռչակված էր որքան իմաստությամբ ու քաղաքական օրենքներով, նույնքան էլ իր բնակիչների ամբարտավանությամբ ու անպատկառությամբ։ Ատտիկեցին ծայրահեղորեն ներհակ այդ երկու կողմերի կրողն էր։ Ինչպես Հ. Նալյանն է գրել. «... ատտիկեցիք որքան բարեբաստք էին խելօք և իմաստութեամբ, այնքան վատթարագոյնք էին հպարտութեամբ» («Գիրք մեկնութեան», էջ 473)։ Նարեկացին իրեն, ահա, ատտիկեցի է համարում «ըստ վատթարութեան, այլ ոչ ըստ բարեբաստութեան»։ Մատյանի միջնադարյան մեկնիչը բանաստեղծի «ըստ վատթարութեան» կապակցության իմաստը կապում է Ատտիկե գավառի անբարեբեր հողի հետ. «Ատտիկէ Ելլադայ է, որ գաւառ է իմաստասիրացն։ Երկիրն աղտի և անպտուղ է, որ վատթար է... Եւ ես,—բացատրում է մեկնիչը Նարեկացու տողը,—ըստ անպտղութեանն եմ ատտիկեցի և ոչ [ըստ] իմաստութեան» (ձեռ. 5650, էջ 405բ)։

3. Մի՛ մերժեսցի ստորոգյալն այստեղ կրկնվում է. այն կա նաև տ. 55-ում։ Թե՛ մեկ և թե՛ մյուս տողում կրկնվող բառի համար ձեռագրերը մի այլ ընթերցված չեն տալիս։ Թերևս նրանցից մեկը գրչական վրիպակ է։

4. ... ի բիւս հազարաց—ըստ գրաբարյան ընդունված համաձայնության, ինչպես նկատել է Գ. Ավետիքյանը («Նարեկլուծ», էջ 133, ծնթ. 10), պետք է լիներ ի բիւս հազարս, բայց բանաստեղծը, երևի բանավոր հայերենի ազդեցությամբ, ի բիւս նախդիրով հոգնակի հայցականի հետ ետադաս թվական լրացումը գործածել է սեռական հոլովով (հազարաց)։ Նարեկացուն հատուկ քերականական այդ յուրահատկությունն արտահայտվել է նաև Մատյանի այլ գլուխներում. օրինակ՝ «ուրի միոյ ամաւք» (ԾԸ, 19), որտեղ ուրի միոյ նախադաս լրացումները դրված են դարձյալ սեռական և ոչ թե լրացյալի (ամաւք) պահանջած գործիական հոլովով։

5. Տ. 90—92-ին բավական նման են ԴԴ գլխի 9—10-րդ տողերը.

Որում կրկնի ծունր երկրպագութեան ամենայն եղելոց՝
Երկնաւորաց եւ երկրաւորաց եւ սանդարամետականաց:

6. Բացի Բուենոս Այրեսի հրատարակությունից, բոլոր տպագիրները և ձեռագրերի մեծագույն մասը կասեցայ բառի փխ ունեն կամեցայ։ Սակայն վերջինս իր իմաստով չի ներդաշնակվում տողի լքայ և կործանեցայ բայերին, որոնց միջև ընկած է։ Դ հատվածի 94—100-րդ տողերից յուրաքանչյուրում իրար հաջորդող բառերը բանաստեղծի հոգու վայրէջքն են արտահայտում միևնույն տրամադրության աստիճանավորումներով. այդ անցումը դրսևորվում է միմյանց հարևանող այնպիսի բառերով, որոնք կա՛մ հոմանիշներ են, կա՛մ, տարիմաստ լինելով հանդերձ, իրար հետ միավորվում են բանաստեղծի ինքնահոժար կորստի, զրկանքի ու անկման արտահայտությամբ, ընդ որում յուրաքանչյուր տողում գործողություն-գաղափարը հետզհետե սաստկանում է, և տողի վերջին բայը կարծես առաջինի ուժգնացում-զարգացումն է։ Մեզ հետաքրքրող տողում միայն (տ. 96), ինչպես ասացինք, կամեցայ բայը չի ներդաշնակվում իրեն հարևան բառերին։ Այդ բանը նկատելով՝ Մատյանի Բուենոս Այրեսի հրատարակության մեջ Գ. Խաչատուրյանը, հավանաբար առանց ձեռագրական հիմքի, այն ուղղել է կարկամեցայ, բայց իր կողմից ավելացրած կար սկզբնավանկը բնագրում դրել է այլ տառատեսակով («Նարեկ. Մատեան ողբերգութեան», էջ 166)։ Մեզ հայտնի ոչ մի ձեռագիր չի տալիս կարկամեցայ, հետևաբար Խաչատուրյանի ուղղումը բնագիր տանել չենք կարող։ Բարեբախտաբար մեր ձեռագրերից հինգն ունեն կասեցայ (HOp ձեռագրերն՝ ուղղակի, իսկ bĪ գրչագրերը նախապես գրել են կամեցայ, ապա սրբագրել կասեցայ. տե՛ս տողատակը)։ Այդ ձեռագրերը գրչության ժամանակով պատկանում են XIII—XV դարերին։ Կասիմ բառն իր մի իմաստով լքանիմ բայի հոմանիշն է (տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Ա, էջ 1059)։ Այդ ընթերցվածն ենք նախընտրում բնագրում ոչ միայն նրա համար, որ իմաստով այն համաձայնում է տողին, այլև որովհետև կամեցայ տարընթերցվածն այստեղ դիտում ենք իբրև գրչական ճանապարհով առաջացած մի աղճատում, որը Մատյանի ձեռագրերի մեծագույն մասում դուրս է վանել բնագրի կասեցայ ընթերցվածը. թե՛ երկաթագրում և թե՛ բոլորգրում ս և մ տառերի շփոթության պատճառով, մեր կարծիքով, բնագրային կասեցայ բառը գրիչներից հեշտությամբ կարող էր ընկալվել ու ընդօրինակվել իբրև կամեցայ։

7. Մարմնոյ քոյ հաղորդեալ—հաղորդեալ բայի մարմնոյ լրացման քոյ դերանուն-լրացումը դրված է սեռական հոլովով, մինչդեռ պետք է լիներ տրականաձև՝ քում, որ ոչ մի ձեռագիր և տպագիր չի տալիս։

8. Տպագիրների մեծ մասը, սկսած $Պ_2$-ից մինչև Գ. Ավետիքյանի «Նարեկլուծ»-ի բնագիրը ներառյալ, զի բառի փխ ունի զիս, որը, թերևս, տպագրական ճանապարհով առաջացած վրիպակ է. մեր օգտագործած բոլոր ձեռագրերը տալիս են զի։ Այսպես են ունեցել նաև Գ. Ավետիքյանի ձեռքի տակ եղած գրչագրերը («Նարեկլուծ», էջ 334, ծնթ. 14)։ Ըստ երևույթին այդ հանգամանքը հաշվի առնելով՝ Մատյանի 1840 թ. վենետիկյան հրատարակությունը ձեռագրերով չվկայված զիս ընթերցվածն ուղղել է զի, ինչպես ունեցել է Լ և $Պ_1$ տպագիրը։

ԲԱՆ ԿԶ

1. Գլխի բովանդակության համար ձեռագրերից երկուսն ունեն լուսանցային նշումներ՝ «Ողբավարի» (Տ, էջ 72ա), «Նետաձգութիւն յերեսս դիւին նմանիք չարչարանացն Քրիստոսի» (s, էջ 188ա), «Մենամարտութիւն ընդ Բելիարայ չարչարանօքն Քրիստոսի» (Նույն տեղում, էջ 187բ—188ա)։

2. Հմմտ. Սաղմ., ԼԹ, 3։ Ձեռագրերի մեծ մասը տ. 16—17-ի «Երկուցեալ / Ի վիմին իսկ հաստատութեան» դարձվածն ունի այսպիսի տրոհումով՝ «Երկուցեալ ի վիմէն (կամ՝ վիմին)։ Իսկ հաստատութիւն» (APWaγbcdgmqu և այլն), այսինքն՝ ի վիմին ներգոյականից անջատում է իսկ հաստատութիւն բառերը՝ վերջիններս առնելով ուսեալ ի Պաւղոսէ կապակցության հետ։ Ըստ այդմ բնագիրն ընկալվում է այսպես՝ «երկնչելով վեմից» կամ «երկնչելով վեմի վրա» («Երկուցեալ ի վիմէն» կամ «ի վիմին»). «Իսկ հաստատություն սովորելով Պողոսից» («Իսկ հաստատութիւն ուսեալ ի Պաւղոսէ»)։ Սխալը հետևանք է այն բանի, որ չի գիտակցվել, որ հաստատութեան սեռականը նախորդ վիմին գոյականի ետադաս որոշիչ լրացումն է, և իսկ-ը ոչ թե շաղկապ է, այլ եղանակավորող բառ, որը սաստկացնում է ի վիմին հաստատութեան բառակապակցության իմաստը («նույնիսկ հաստատուն վեմի վրա»)։ Ուրեմն ամբողջ կապակցությունը պետք է հասկանալ ոչ թե այսպես՝ «երկնչելով վեմից (կամ՝ վեմի վրա)։ Իսկ հաստատություն սովորելով Պողոսից», այլ այսպես՝ «հաստատուն վեմի վրա անգամ երկնչելով, Պողոսից սովորելով...»։

3. Տե՛ս Ա Կորնթ., Ժ, 12։

4. Սահմանողի այսմ կանոնի իրաւադատի—ըստ Մատյանի միջնադարյան մեկնության, Նարեկացին նկատի ունի իրեն և իր երկը. «... և ինձ՝ սահմանողիս զայս կանոնս մեղանացն նմանեցէ» (ձեռ. 5650, էջ 406բ)։ Սակայն համեմատությունը թույլ չէր տա, որ Նարեկացին իր

երկն անվանեք «կանոն իրաւադատ»։ Ինչպես Գ. Ավետիքյանն է նկատել, բանաստեղծն ակնարկում է Սողոմոնին, որը գրել է այդ իրավադատ կանոնը («Նարեկլուծ», էջ 339, ծնթ. 4)։ Իսկ իրեն Նարեկացին հիշում է քիչ հետո, տ. 25-ում, նրաղելով, որ իր մեջբերած պատգամները թող փորագրված մի անեղծ հուշարձան դառնան և աղաղակեն իր եղկելի ու մահկանացու անձի փոխարեն։

5. Միայն Գ. Ավետիքյանի «Նարեկլուծ»-ի երկրորդ հրատարակության բնագիրն ունի եզակի՝ գրութեան, որը տպագրական վրիպակ է. Մատյանի մյուս տպագիրները (նաև «Նարեկլուծ»-ի առաջին՝ 1801 թ. հրատարակությունը), ինչպես և բոլոր ձեռագրերն ունեն գրութեանց։ Ավետիքյանը ևս գլխի մեկնության բաժնում բառը վկայակոչում է վերջին՝ ճիշտ ձևով («Նարեկլուծ», էջ 339, ծնթ. 5)։

6. ... անձեռնհաս տագնապիս—այստեղ, ինչպես Ավետիքյանն է նկատել, անձեռնհաս բառն ունի «անդարմանելի», «անհնարին» կամ «սաստիկ» նշանակությունները, իսկ տ. 21-ի «յանձեռնհասան բարձրութենէ» կապակցության մեջ՝ «գերաղանց», «վսեմ» կամ «անհասանելի»։

7. Համտ. Սաղմ., ՃԽԲ, 10. ԺԷ, 29։

8. Համտ. Ղուկ., ԻԲ, 44 (տե՛ս ՀԸ գլխի 1-ին ծնթ.)։

9. Հայնոյութեանն համբերութիւն յաստուածամարտիցն—տողում կա քերականական անկանոնություն. հատկացուցիչը (աստուածամարտիցն), ստանալով իր լրացյալի (հայհոյութեանն) նախդիրը, հեռացել է նրանից և ընկել համբերութիւն ենթակայից հետո, որին կապված չէ շարահյուսորեն։ Տողի միտքը, ըստ Ավետիքյանի, այս է՝ «աստվածամարտների (կամ «աստվածամարտ հրեաներից եկող») հայհոյության հանդեպ փրկչի համբերությունը» (Համտ. «Նարեկլուծ», էջ 340, ծնթ. 16)։ Հետևելով Ավետիքյանին՝ Թ. Գուշակյանը, տողի բովանդակությունն ավելի որոշակի դարձնելու համար, իր թարգմանության մեջ ավելացրել է հրեից և փրկչին բառերը («Նարեկ աղոթամատյան ս. Գրիգորի Նարեկացվո», էջ 217)։

10. Միայն Բունեոս Այրեսի տպագիրը գլխոյն ձորձով բառերն ունի այսպես՝ ձորձոյն գլխով, այսինքն՝ եռևառաջ դասավորությամբ և հակառակ հոլովաձևերով։ Դա, հավանաբար, տպագրական վրիպակ է։ Մեր օգտագործած ոչ մի ձեռագիր այդպես չունի (a գրչագիրն ունի գլխոյ, իսկ ω -ն՝ գլխոյդ, ինչպես Մատյանի $Պ_{1-3}$ տպագիրները)։

11. Մեր օգտագործած ձեռագրերի մեծ մասը ծախողք բառի փխ ունի խածողք, որին հետևել են Մատյանի գրեթե բոլոր հրատարակությունները $Պ_4$ տպագրից սկսած։ Բնագրում նախընտրել ենք ծախողք ընթերցվածը (այդպես են տալիս նաև ամենավաղ՝ $Պ_{1-3}$տպագիրները), որը համեմատաբար սակավաթիվ գրչագրեր (թվով 13, որոնցից երկուսը՝ սրբագրումով) ունեն։ Նարեկացին երկու տող հետո գործածել է խածմունս բառը (տ. 135), որի հետադարձ ազդեցությամբ էլ, թերևս, ծախողք բառը գրչության ընթացքում կարող էր փոխվել-դառնալ խածողք։ Հավանական թե բանաստեղծն իրար այդքան մոտ տողերում կիրառեր նույնարմատ խածողք և խածմունս բառերը. անկասկած դրանցից մեկնումեկը (մեր կարծիքով՝ առաջինը) գրչական վրիպակ է։ Տ. 133-ում ծախողք ընթերցվածն ենք բնագրային համարում՝ ելնելով «ժանիք ծախողք» և ՀԹ գլխի տ. 128-ի «ծախել ատամամբքն» կապակցությունների հարազատությունից։

12. Ակնարկում է վաղ քրիստոնեության շրջանում և միջնադարում տարածված այն կարծիքը, թե Քրիստոսի ծնունդից 1000 տարի հետո արձակվելու է Նեռը, և վրա է հասնելու աշխարհի վախճանը (տե՛ս Յայտ., Ի, 2—10)։ Եթե, ասում է Նարեկացին, հազարամյա փոքր կապանքների քանդումով բերկրի սատանան, ապա հավիտենական տանջարանի մեջ, վերջին շղթաներով նորից սանձված («կարկեալ վերստին») և անդերձ տագնապով բռնված, թող դղա-
Տ. 159-ում Մատյանի բոլոր տպագիրները, բացի $Պ_{2-3}$-ից և Կ. Պոլսի 1782 և 1789 թթ. հրատարակություններից, կարկեալ բառի փխ ունեն կրկնեալ։ Այս վերջին ընթերցվածը հանդիպում է մի քանի ձեռագրերում միայն և նարեկացիական տողի ընդհանուր կապակցության մեջ վերստին

համանիշ բառի կողքին բացարձակապես ավելորդ է։ Դժվար չէ նկատել, որ բնագրի կարկեալ ընթերցվածը, իբրև ավելի սակավ գործածվող բառ, հավանաբար վերստին մակբայի ազդեցությամբ, որոշ գրիչներ սխալմամբ ընկալել-գրել են կրկնեալ։ Ձեռագրերից հետո, դեռևս Մատյանի $Պ_1$ տպագրում ևս տեղ գտած այդ սխալը $Պ_2$-ում նշանավոր բանաստեղծ ու գիտնական Պաղտասար Դպիրն ուղղել է կարկեալ, բայց այս ճշտումը զարմանալիորեն հաշվի չի առնվել $Պ_4$-ում, անգամ վերջինիս գլխավոր տարբերությունների ցանկում, գոնե իբրև այլընթերցված, չի բերված կարկեալ բառը։ Այդպիսով, կրկնեալ սխալ ընթերցվածն այդուհետև ևս աննկատ է մնացել ու պահպանվել Մատյանի մինչև այժմ եղած գրեթե բոլոր հրատարակություններում։

ԲԱՆ. ԿԷ

1. Ասելով, թե Քրիստոսի ճշմարիտ խոսքն ավելի իրեն՝ բանաստեղծին է դատապարտում, քան չարիքի սկզբնահայր սատանային՝ Նարեկացին, ինչպես Գ. Ավետիքյանն է նշել («Նարեկլուծ», էջ 343, ծնթ. 1), անշուշտ, այն կարծիքին չէ, թե մարդն ավելի մեղսական է, քան սատանան։ Բանաստեղծը սույն գլխում դնում է մարդու բարոյական պարտավորվածության ու երախտագիտության հարցը. «Իսկ ես զերախտիսն ատուծոյ լքի» (տ. 30),—ասում է նա, մինչդեռ պարտավոր էր վարձահատույց լինել նրան, որն իր մեջ «զբովանդակն եհեղ առատութեամբ» (տ. 11)։ Իսկ «որում շատ տուաւ՝ շատ խնդրեսցի ի նմանէ» (Ղուկ., ԺԲ, 48)։ Ուրեմն ինքը պարտավանց և ուխտամոռաց մի այր է, «միշտ խրատեալ» (տ. 51), բայց «ոչ ինչ խրատեցեալ» (տ. 53)։

2. Համտ. Փիլիպ., Գ, 21։

3. Կերպին խնկութեան...—նկատի ունի Հայր աստծու անձի պատկերը (տե՛ս «Նարեկլուծ», էջ 343, ծնթ. 2, էջ 390, ծնթ. 20)։

4. Համտ. Փիլիպ., Բ, 6—7։

5. Համտ. Յովէլ, Բ, 28։ Գործք, Բ, 17—18։

6. Միայն Ավետիքյանի «Նարեկլուծ»-ի բնագիրը և Զմյուռնիայի 1843 թ. հրատարակությունը չունեն տողասկզբի Եւ շաղկապը («Նարեկլուծ», էջ 342, «Ս. Գրիգորի Նարեկայ վանից վանականի Ողբերգութիւն», Զմյուռնիա, 1843, էջ 195)։ Այդ բացթողումը պայմանավորված չէ Մատյանի որևէ ձեռագրով. առաջացել է տպագրական ճանապարհով։

7. Տպագիրներից մեկ-երկուսը ($Պ_2$, 1736 թ. հրատ.) բառն ունեն եզակի թվով՝ տոռամբ, որ, թերևս, տպագրական վրիպակ է։ Առհասարակ բոլոր ձեռագրերը և տպագիրները տալիս են հոգնակի թվով՝ տոռամբք։ Բունեոս Այրեսի հրատարակության գրաբար բնագրում թեև բառը եզակի է, բայց թարգմանված է հոգնակի՝ «շվաններով» («Նարեկ. Մատեան ողբերգութեան», էջ 171)։

8. Այրս մահու ի յարեանց գնդից—այս տողի յարեանց ընթերցվածի փխ միայն Σ ձեռագիրը սրբագրումով տալիս է յարեաց, իսկ Mo գրչագիրը և α -ն՝ սրբագրումով ունեն յարանց (Σα օրինակները նախապես գրել են յարեանց)։ Այս ընթերցվածներից յարանց-ը տողի հյուսվածքում բոլորովին չի իմաստավորվում. անիմաստ կլիներ ասել, թե՝ «այրերի (տղամարդկանց) գնդից մահու (մահապարտ) այր եմ». դա ոչ միայն միևնույն բառի աննպատակ կրկնություն է, այլև բացարձակապես զուրկ է փոխաբերական-բանաստեղծական արժեքից։ Հետևաբար, յարանց ընթերցվածը ոչ մի կերպ չի կարելի համարել բնագրային։ Իզուր չէ, որ յարանց-ը սոսկ երեք գրչագրում է երևան գալիս և Մատյանի ոչ մի տպագրում տեղ չի գտել։ Ինչպես տեսանք, մեր օգտագործած ձեռագրերից միայն Σ -ն է տալիս յարեաց ընթերցվածը, այն էլ
Արդ, մյուս երկու ընթերցվածներից (յարեանց, յարեաց) ո՞րն է բնագրայինը։ Ինչպես

նախապես գրած յարեանց *բառը սրբագրելով։ Նրա գրիչը ինչ-որ գրչագրի՞ հետևելով է կատարել իր սրբագրումը, թե՞ առանց որևէ ձեռագրական հիմքի,—դժվար է ասել. բայց այդ ընթերցվածը, Պ₂-ից սկսած, մուտք է գործել որոշ տպագիրներ (Պոլսի 1736, 1755, 1763, 1782, 1789 թթ. տպագիրներ, Վենետիկի 1840 թ. հրատարակություն և սրանից ծագող հետագա տպագիրներ, Բուենոս Այրեսի հրատարակություն)։ Իսկ* յարեանց *ընթերցվածն ունեն Պ₁-ը, Պ₄-ը և վերջինիս բոլոր արտատպությունները, ինչպես նաև Գ. Ավետիքյանի «Նարեկլուծ»-ի բնագիրը և Զմյուռնիայի 1843 թ. հրատարակությունը։*

Ո՞րն է նրանցից բուն նարեկացիականը. այդ հարցին փորձել է պատասխանել Գ. Ավետիքյանը։ Իր «Նարեկլուծ»-ի բնագրում Պ₄ տպագրի հետևությամբ դնելով յարեանց *ընթերցվածը՝ նա տողին տալիս է այս բացատրությունը. «Ի գնդէ կամ ի ժողովոյ արիւնահեղաց՝ ես եմ այր մահու, այսինքն՝ մահապարտ» («Նարեկլուծ», էջ 344, ծնթ. 7)։ Սակայն այդ նույն ծանոթագրության մեջ Ավետիքյանը վստահելին ու ճիշտը համարում է* յարեաց *ընթերցվածը. «Բայց յայլ օրինակ ասի՝* ի յարեաց գնդից. *և առաւել պատշաճ թուի կարգի բանին. որպէս թէ ի գնդէ առաքինեաց կամ քաջաց՝ ես միայն եմ մահապարտ»,—ավելացնում է նա։ Ի դեպ, նշենք, որ ըստ Ավետիքյանի այդ երկու տարբեր բացատրությունների էլ Մատյանի հետագա թարգմանիչներն աշխարհաբարի են վերածել տողը. Մ. Գոշունյանը և Գ. Խաչատուրյանը թարգմանել են «մահապարտ մ'եմ մարդասպաններու գունդին» («Աշխարհաբար Նարեկ», էջ 329) կամ «Մահապարտ մըն եմ՝ մարդասպաններու գունդին պատկանող» («Նարեկ. Մատեան ողբերգութեան», էջ 171), իսկ Թ. Գուշակյանն ու Մ. Խերանյանը՝ «քաջերու գունդին մեջ մահապարտս» («Նարեկ աղօթամատյան ս. Գրիգոր Նարեկացվո», էջ 221) կամ «Քաջերի գնդում մահապարտ եմ մի» («Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության», էջ 291)։ Ուրեմն, Գոշունյանն ու Խաչատուրյանը նկատի են ունեցել* յարեանց *ընթերցվածը, այսինքն՝* արիւն *բառի հոգնակի բացառականը (չնայած գրաբար բնագրում, իր թարգմանությանը հակառակ, Խաչատուրյանը դրել է* յարեաց *ընթերցվածը), իսկ Գուշակյանն ու Խերանյանը՝* յարեաց*-ը, այսինքն՝* արի *բառի հոգնակի բացառականը։*

Կարծում ենք, որ երկու ընթերցվածներից բնագրայինը յարեանց *բառն է։ Հայ մատենագրության մեջ* արիւն *բառն ունեցել է նաև «սպանություն» կամ «կոտորած» նշանակությունը՝ իրեն հարակից բառերի հետ ձևոք բերելով իմաստային տարբեր նրբերանգներ (տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Ա, էջ 358). օրինակ՝ Սիրաքի գրքի հնագույն թարգմանության մեջ* այր արեանց *հարադրությունն ունի «արյունարբու մարդ», «արյունռուշտ մարդ» կամ «մարդասպան» նշանակությունը. «Որ զրկէն զնոսա, այր է արեանց» (Սիրաք, ԼԱ, 25)։ Նարեկացու տողում շատ ավելի որոշակի է ասված՝ «Այրս մահու ի յարեանց գնդից», այսինքն՝ սպանողների գնդից լինելով՝ ես ինքս մահապարտ մի այր եմ։ Մատյանի միջնադարյան մեկնության ամենահին խմբագրության հեղինակը ևս բնագրում նկատի է ունեցել* յարեանց *ընթերցվածը և մեկնել. «Ի սպանողաց գունդն եմ ես» (ձեռ. 5518, էջ 278ա)։*

9. Հմմտ. Ես., ԺԳ, 19. ԺԴ, 22—23։ Երեմ., Ի, 4—6։

ԲԱՆ ԿԸ

1. Հմմտ. Ծննդ., Բ, 10։

2. Նարեկացին 5-րդ տողի առաջս (ճյուղեր) բառի և այս տողի նույնահունչ առաջս *(աչքերի մեջ) կապակցության միջոցով ստեղծել է բառախաղ։*

3. Հմմտ. Երեմ., Թ, 1։

4. Հմմտ. Յոբ, Գ, 3։ Երեմ., Ի, 14։

5. Միայն Պ₄-ը և նրա արտատպությունները, ինչպես նաև Գ. Ավետիքյանի «Նարեկլուծ»-ի բնագիրն ունեն նկատ, *որը, հավանաբար, տպագրական ճանապարհով է առաջացել. մեր ձեռագրերը չեն տալիս այդ տարընթերցվածը։ Ավետիքյանը նշել է, որ իր օգտագործած չորս ձեռագրերը և հին լուծմունքի իր օրինակը բոլորն էլ տալիս են* նկատեալ *(«Նարեկլուծ», էջ 348, ծնթ. 4)։ Վենետիկի 1840 թ. հրատարակությունը վերականգնել է ճիշտ ընթերցվածը՝* նկատեալ, *որին և հետևել է հետագա տպագիրների մեծ մասը։*

6. Հմմտ. Առակք, Զ, 7—8։ Տ. 31—32-ը ակնարկում են, մանավանդ, ճպուռի և մրջյունի մասին ժողովրդական առակի հետ։

7. Հմմտ. Մատթ., Ե, 25։

8. Հմմտ. Ելք, ԻԳ, 15. ԼԲ, 29։

9. Հմմտ. Յակոբ, Ե, 7։

10. Հմմտ. Մատթ., ԻԵ, 3—10։

11. Տե՛ս Ծննդ., ԺԹ, 24։

12. Սա երաց զկոկորդն ըմբռնողական*—այս տողը, փոքր-ինչ տարբեր, հանդիպում է նաև Նարեկացու Հակոբ Մծբնա հայրապետին նվիրված ներբողյանում, այսպես՝ «... բանայ զկոկորդն ըմբռնողական» (տե՛ս* Գրիգոր Նարեկացի, *Մատենագրութիւնք, էջ 446)։*

13. Տե՛ս Թիւք, ԺԶ, 32։

14. Բանաստեղծը իրեն նմանեցնում է Հովնան մարգարեին, որին, ըստ ավանդության, կուլ է տվել կետ ձուկը (հմմտ. Յովն., Ա—Բ)։

15. Հմմտ. Դ Թագ., Բ, 23—25։ Ինչպես Գ. Ավետիքյանն է նկատել, Ս. Գրքում ավանդված չէ, թե բեթելացի մանուկները եղել են քրմերի որդիներ. Նարեկացին ինքն է նրանց քրմորդի կոչում («Նարեկլուծ», էջ 348, ծնթ. 11)։

16. Հմմտ. Ելք, Ժ, 21։

17. Հմմտ. Եզեկ., ԼԹ, 17—20։

18. Միայն Ավետիքյանի «Նարեկլուծ»-ի բնագիրն ունի եզակի թվով՝ սնեեալ *(էջ 347), որը, հավանաբար, տպագրական վրիպակ է։ Մեր ձեռագրերը չեն տալիս այդ տարընթերցվածը։*

19. Մատյանի բազմաթիվ հրատարակություններ (XVIII դարի բոլոր տպագիրները և Պ₄-ի հետագա վերահրատարակությունները), Ավետիքյանի «Նարեկլուծ»-ի բնագիրը և մեր օգտագործած Jγσωe₁ *գրչագրերը* զրտոցն *ընթերցվածից հետո ունեն* մեղաց աւինակքն *բառերը։ Դրանց բնագրային լինելու մասին առաջին անգամ իր կասկածն է հայտնել Ավետիքյանը. «Այս չէր յօրինակս ինչ, և օտար իսկ թուի ի կարգէ բանին...,—գրել է նա,—թուի այդ յաւելուած, յայլմէ եղեալ ի լուսանցսն իբրև լուծումն, յետոյ ի գրչաց ի բուն բանսն մուծեալ» («Նարեկլուծ», էջ 348, ծնթ. 16)։ Ուրեմն, Ավետիքյանը գտնում է, որ* մեղաց աւինակքն *բառերը Մատյանին հարազատ չեն, և ենթադրում, որ դրանք, իբրև տ. 96-ի* տաղտկատեսակ զարշութիւն զրտոցն *կապակցության բացատրություն, հետագա մեկի ձեռքով ավելացվել են լուսանցքում և ապա գրիչների կողմից շփոթմամբ մուծվել բնագիր։ Անշուշտ, Ավետիքյանն իրավացի է, քանի որ մեզ հայտնի ձեռագրերի ճնշող մեծամասնությունը դրանք չունի։ Նարեկացու մեծահմուտ մեկնաբանի կարծիքը ճշմարտվում է հատկապես մեր մի քանի գրչագրերի հետաքրքիր ավյալներով։* Ταηa *օրինակներում գրիչները բնագրի կարգում* զրտոցն *ընթերցվածից հետո տեղ են թողել* մեղաց աւինակքն *բառերը լրացնելու համար, բայց երևի նկատելով, որ նարեկացիական չեն,* Ταη*-ի գրիչները նույն այլ ձեռագրերում դրանք չկան, և մտածելով, որ նարեկացիական չեն, Ταη-ի գրիչները նույն բառերն օրինակել են լուսանցքում, իսկ* a*-ն հրաժարվել է գրել։ Հետաքրքիր է, մանավանդ, այն, որ* B *օրինակը* մեղաց աւինակքն *բառերի փխ նույն 96-րդ տողի դիմաց, լուսանցքում,*

ունի մեղաց տեսակf *նշումը, որով քիչ տարբեր, քան* Τᾳ *ձեռագրերը՝ նույնպես բացատրել է* տաղտկատեսակ զարշուփին զորտոցն *կապակցությունը։*

Այս ամենից հետո կարող ենք հետևություն անել, որ, խակապես, սկզբում ինչ-որ մեկը հիշյալ փոխաբերական կապակցության իմաստը փորձել է մեկնել լուսանցային «մեղաց արփնակքն» (կամ՝ «մեղաց տեսակք») նշումով՝ և՛ դրա վրա, և՛ տողի համապատասխան կապակցության վերջին՝ զորտոցն *բառի վրա դնելով միևնույն պայմանական նշանը, որպեսզի գիտակցվի, թե ինչի՛ն է վերաբերում մեկնաբանական լուսանցագրությունը, բայց, ինչպես դա հաճախ է պատահել, հետագա գրիչներից ոմանք լուսանցագրությունն ընկալել են ոչ իբրև բացատրություն, այլ որպես բնագրից պատահաբար դուրս մնացած արտահայտություն և այն մուծել են բնագրի կարգը, այնտեղ, ուր նշանն է եղել։ Տեսանք, որ մեզ հասած ձեռագրերում այդպես են վարվել միայն* Ἰ῀σω$_1$ *օրինակների գրիչները, բայց այդ սխալը Մատյանի գրչագրերում, բարեբախտաբար, մեծ տարածում չի ստացել։ Ավետիքյանի ճիշտ դիտումը նկատի ունենալով՝ Մատյանի 1840 թ. վենետիկյան հրատարակությունը* մեղաց ատինակքն *բառերը՝ որպես հետագա ընդմիջարկություն, բնագրից դուրս է թողել, որին հետևում ենք նաև մենք։*

20. Հմմտ. Յովէլ, Ա, 4. Բ, 25։

21. Նկատի ունի այն տասը հարվածները, որոնց, Հին կտակարանի ավանդության համաձայն, ենթարկվել են Եգիպտոսն ու նրա բռնակալ փարավոնը, որը Մովսես մարգարեին և նրա ժողովրդին արգելում էր վերադառնալ հայրենիք (հմմտ. Ելք, Է—Ժ)։ Ս հատվածում Նարեկացու ստեղծած մի քանի պատկեր-համադրություններ (մանավանդ 94, 96, 98 և 101 տողերում) որոշ չափով հիշեցնում են Ելից գրքի նշված դրվագները։

ԲԱՆ ԿԹ

1. Գրիչ Մարտիրոսը (N ձեռ.) վերնագրից հետո ավելացրել է իր անունը կրճատ գրությամբ Մարտիր, *իսկ* Გ *ձեռագրի գրիչը լուսանցքում, վերնագրի դիմաց, գլխի բովանդակությունն արտահայտել է հետևյալ նշումով՝ «Ճառ լուի» (էջ 187ա)։*

2. Բուենոս Այրեսի տպագիրը եղանուբեան *բառի փխ ունի* եղեւուբեան *(«Նարեկ. Մատեան ողբերգութեան», էջ 176). մեր օգտագործած ձեռագրերը և մյուս հրատարակությունները չեն տալիս այդ ընթերցվածը. թերևս տպագրական ճանապարհով առաջացած տարընթերցված է։*

3. Մատյանի բոլոր տպագիրները մարգիմ *բառի փխ ունեն* պարգիմ: *Վերջին ընթերցվածը տալիս են սակավաթիվ ձեռագրեր միայն։ Բառն այստեղ օգտագործված է մաքրվելու, պարզվելու, հստակվելու, զտվելու իմաստով։ Գրիչները կարող էին կասկածել* մարգիմ *ընթերցվածի ճշտությանը և դրա փխ տեղ տալ* պարգիմ *բառին։* Մարգ *արմատը փոխառված է պարսկերենից որտեղ ունեցել է «սրբել, մաքրել, օծել» նշանակությունները։ Արմատի նախնական այդ իմաստները հայերենում պահպանել է* մարձել *բառը, որը* մարգել *բայի կրկնակն է (տե՛ս Հ.* Աճառյան, *Հայերեն արմատական բառարան, Գ, 1977, էջ 282)։ Հայ մատենագրության մեջ եթե* մարձել *բառը օգտագործվել է հատկապես շփելու, օծելու, նաև՝ սրբելու, մաքրելու իմաստով,* մարգել-ը՝ *վարժելու, կրթելու նշանակությամբ։ Բայց երկու բայն էլ գրությամբ նախապես, անշուշտ, նույնն են եղել (տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Բ, էջ 224 և 225)։ Հետևաբար,* մարգել *բայի կրավորական ձևի* (մարգիմ) *համար ամենևին էլ խորթ չի կարող լինել մաքրվելու (պարզվելու, հստակվելու, զտվելու) նշանակությունը։ Ահա թե ինչու Մատյանի մի քանի տասնյակ ձեռագրեր մեզ հետաքրքրող տողում, սահմանափակ թվով գրչագրերին հակառակ, տալիս են ոչ թե* պարգիմ, *այլ* մարգիմ, *որն այդ դեպքում չի կարող նշանա-*

կել վարժվել, կրթվել, այլ՝ մաքրվել (զտվել և այլն)։ Ուրեմն, Նարեկացին բառի այդօրինակ գործածությամբ պահել է նրա նախնական այն իմաստը, որը հատկացվել է նրա կրկնակին՝ մարձիմ *բային։*

4. Տե՛ս Երեմ., Զ, 29։

5. Բոլոր հին տպագիրները, Պ$_4$-ը և նրա արտատպությունները, ինչպես նաև Գ. Ավետիքյանի «Նարեկլուծ»-ի բնագիրը մարդոյն *բառի փխ ունեն* մարմնոյն, *որը մեր օգտագործած ձեռագրերից ոչ մեկը չի տալիս։ Ձեռագրական ճիշտ ընթերցվածն իր մեկնության մեջ մատնացույց է արել դեռևս Ավետիքյանը («Նարեկլուծ», էջ 352, ծնթ. 8), որի հիման վրա Մատյանի 1840 թ. վենետիկյան հրատարակությունն ուղղել է* մարդոյն: *Հետագա տպագիրները մեծ մասամբ հետևել են վերջինիս։*

6. Միայն Բուենոս Այրեսի տպագիրը ճարկաւ *բառի փխ ունի* աճարկու *(Պ$_{1-3}$ ունեն* ճարկաւոր՝ *ըստ որոշ ձեռագրերի)։ Գ. Խաչատուրյանն այդպես էլ թարգմանել է տողը՝ «Անհարկու տանջանքով կրնանք գալիքները մակարբել», չնայած նախորդ տողում արտահայտել է և* ճարկու *բառի իմաստը («մարմինին առթած». «Նարեկ. Մատեան ողբերգութեան», էջ 177)։ Մեր ձեռագրերը* աճարկու *ընթերցվածը չեն տալիս. արդյո՞ք այն տպագրական վրիպակ չէ։*

ԲԱՆ Հ

1. Ակնարկում է մեծատան և աղքատ Ղազարոսի մասին առակը (հմմտ. Ղուկ., ԺԶ, 19—26)։

2. Հմմտ. Թիւք, ԺԵ, 32—36։

3. Հմմտ. Ելք, ԼԲ, 25—35։

4. Հմմտ. Բ Թագ., ԺԱ։

5. Տե՛ս Եզեկ., ԺԴ, 14, 16, 20։

6. Նկատի ունի Պետրոս առաքյալի թերահավատությունը և ուրացությունը (տե՛ս Մատթ., ԺԴ, 25—30. ԻԶ, 69—74։ Մարկ., ԺԴ, 68—71)։

7. Նկատի ունի Գ Թագ., ԺԳ գլուխը, ուր պատմվում է Հուդայի երկրից Հերոբովամ թագավորին Բեթելում այցելած մարգարեի մասին։ Վերջինիս Նարեկացին անվանում է ումն *մարգարե Հովաս՝ ըստ երևույթին հետևելով Եպիփանին վերագրվող «Մարգարէից պատմութիւն» (Գ Թագ., ԺԳ) նրա կոչված երկին («Նարեկլուծ», էջ 355, ծնթ. 7), չնայած բուն աղբյուրում (Գ Թագ., ԺԳ) նրա անունը չի հիշատակվում։ Ինչպես Գ. Ավետիքյանն է նշել, Սուրբ Գրքի մեկնիչների մոտ մարգարեն ներկայացված է նաև այլ անուններով՝ Ադդով (Հովսեպոս), Սեմեաս կամ Սամեաս (Տերտուլիանոս, Կղեմես Ալեքսանդրացի)։ Նարեկացին, այդպիսով, հետևել է Եպիփանին։ Ըստ ավանդության, մարգարեն խաբվում է բեթելցի սուտ մարգարեից և դրա համար պատժվում. նրան սպանում է առյուծը։ Մարգարեն, ուրեմն, «մարդկաւրէն» գայթակղվում, խաբվում է (տ. 36) բեթելցի ծեր մարգարեից, բայց առյուծը նրա մարմինը չի լափում, որը նշան էր այն բանի, թե նրա հանցանքը ներելի է եղել։ Միաժամանակ և՛ պատիժ, և՛ գթություն, որով և մարգարեի ճակատագիրը, ասում է բանաստեղծը, «մնայ յոլովից անթարգմանելի» (տ. 37). այսինքն՝ շատերի համար մնում է անըմբռնելի (հմմտ. ձեռ. 5650, էջ 410բ—411ա, «Գիրք մեկնութեան», էջ 504—505, «Նարեկլուծ», էջ 355—356, ծնթ. 7)։*

8. Սահմանափակ թվով ձեռագրեր տ. 45-ի մխիթարեն *դիմավոր բայաձևն ունեն իբրև* մխիթար են *(տե՛ս տողի տարընթերցվածները), ընդ որում* մխիթար *բաղադրյալ ստորոգյալ՝* մխիթար են *(տե՛ս տողի տարընթերցվածները), որպեսզի* են *բայը չմիացածականի վերջին վանկի վրա շեշտ կամ երկարացման նշան են դրել, որպեսզի* են *բայը չմիաց-*

վի նրան և շընկալվի որպես դիմային վերջավորություն։ Սակավաթիվ ձեռագրեր էլ տ. 46-ի վստահութեան ընթերցվածի փխ ունեն վճատութեան կամ վճատութիւն (տե՛ս տողի տարընթերցվածները)։ Ըստ ձեռագրական տվյալների էլ տպագիրներն ունեն՝ մխիթարեն... վճատութեան ($Պ_{1-3}$, Պոլսի 1782 և 1789 թթ. հրատարակությունները), կամ՝ մխիթար են ... վճատութեան ($Պ_4$, սրա վերահրատարակությունները և «Նարեկլուծ»-ի բնագիրը) և կամ՝ մխիթարեն ... վստահութեան (1840 թ. վենետիկյան տպագիրը և սրանից ծագող հետագա հրատարակությունները)։ Այդ տարբերությունների վրա առաջին անգամ ուշադրություն է դարձրել Գ. Ավետիքյանը՝ նշելով, որ թե՛ մխիթար են (մխիթարեն) ... վճատութեան, թե՛ մխիթարեն ... վստահութեան ընթերցումները բնագրում իմաստավորվում են, և որևէ մեկին նախընտրություն չի տալիս. առաջին դեպքում հասկացվում է այսպես՝ «իրենց օրինակով մխիթարիչ են հուսահատվածների վհատությանը (կամ՝ վհատ հուսահատվածներին)», իսկ երկրորդ դեպքում՝ «իրենց օրինակով հուսահատվածներին մխիթարում, ներշնչում են վստահություն»։ Ելնելով այն հանգամանքից, որ Մատյանի գրչագրերից վճատութեան ընթերցվածն ունեն հատուկենտ օրինակներ, որոնց հնությունը XIV դարից այն կողմ դրեթե չի անցնում, բնագրում դնում ենք վստահութեան ընթերցվածը, ինչպես այդ արել է Վենետիկի 1840 թ. տպագիրը՝ հետևելով Ավետիքյանի դիտումին։

9. Ձեռագրերի մեծագույն մասն ունի ոչ թե մանուանդ զի առակն, այլ՝ մանուանդ զառակն (տե՛ս տողի տարընթերցվածները), իսկ որոշ ձեռագրեր՝ մանուանդ զի զառակն։ Ըստ այդմ Մատյանի տպագիրներում հանդես են գալիս երկու կարգի ընթերցվածներ՝ մանուանդ զի զառակն ($Պ_{1-2}$) և մանուանդ զառակն ($Պ_{3-4}$ և հետագա բոլոր հրատարակությունները), որոնք երկուսն էլ, մեր կարծիքով, բնագրային լինել չեն կարող։ Տողի ձեռագրական տարբերություններին հետևելով՝ դժվար չէ նկատել, որ բնագրի նախնական պատկերը եղել է մանուանդ զի առակն, որի զի շաղկապի ձայնավորը որոշ գրչագրերում անտեսվել է և զ-ն ընկալվել իբրև առակն բառի հայցական հոլովաձևի նախդիր՝ առաջացնելով զառակն տարընթերցվածը, իսկ վերջինիս մոտ, իր հերթին, այլ գրչագրերի միջամտությամբ վերականգնվել է զի նախդիրը՝ տալով զի զառակն ընթերցվածը (օրինակ՝ BTαβδμφ գրչագրերում զի նախդիրը սրբագրված-ավելացված է)։ Ահա այդ ճանապարհով ձեռագրերում անհամեմատ ավելի տարածում է ստացել զառակն (նաև՝ զի զառակն) տարբերակները։ Ո՞րն է ճիշտը՝ զի զառակն կամ զառակն, թե՞ զի առակն,—այդ պարզելու համար կարևոր նշանակություն ունի տողի յիշեալ դերբայը։ Մեզ հետաքրքրող ընթերցվածը վերջինիս հետ շարահյուսական ի՞նչ հարաբերության մեջ է։ Ըստ Ավետիքյանի («Նարեկլուծ», էջ 356, ծնթ. 10) և բոլոր տպագիրների, այն յիշեալ դերբայի կողմնակի խնդիր-լրացումը պետք է դիտել («Մանաւանդ որ այս մաղթանքներին հաբաղատ առակն այստեղ հիշելով»), բայց այդ դեպքում խախտվում է տողի քերականական կապը հաջորդ՝ 50-րդ տողի հետ, որտեղ արդարացուցանէ բայը զառակն բառի բայ-ստորոգյալն է. անիմաստ է «զառակն ... յիշեալ / Ձվերագրելոցդ բան... արդարացուցանէ» կառուցվածքը՝ Պատկերը բոլորովին փոխվում է, երբ յիշեալ դերբայը դիտում ենք իբրև առակն ուղղական հոլովաձևով ընթերցվածի ետադաս որոշիչ լրացում («Մանավանդ որ այս մաղթանքներին հաբաղատ և այստեղ հիշվող առակը»), և այս դեպքում հաջորդ տողի հետ քերականական կապը կանոնավորվում է. արդարացուցանէ բայը դառնում է առակն ենթակայի բայ-ստորոգյալ, վերականգնվում է ենթակայի և բայ-ստորոգյալի ճիշտ կապակցությունը՝ «առակն... յիշեալ... արդարացուցանէ», որից հետո ինչպես վկայակոչվում է և առակը՝

Բարի է... ողորմութիւն նորին (տ. 51—53)։

Ըստ այդմ էլ բնագիրն ուղղել ենք՝ Մանաւանդ զի առակն...։

10. Տե՛ս Բ Թագ., ԻԴ, 13—14։

ԲԱՆ ՀԱ

1. Ա. Կորնթ., Ջ, 15, 19։

2. Մեր օգտագործած ձեռագրերի մեծ մասը, ինչպես նաև բոլոր տպագիրները, այս տողից հետո ունեն «Բանք պանծալիք նաշտեցուցիչք աստուծոյ» ենթախորագիրը՝ մասնակի տարբերություններով։ C-ն ենթախորագրի համար լուսանցքում ունի նշում. «Ջայս խորագիր գրէ» (էջ 144ա)։ Ենթախորագիրը, կարծում ենք, բնագրային չէ (տե՛ս բան ԺԲ, ծնթ. 4)։

3. Բարգիմ—միայն Բունեոս Այրեսի հրատարակությունն ունի բարղեմ ներգործական ձևով, բայց թարգմանված է ճիշտ՝ կրավորակերպ. կը բարղվիմ, որը ցույց է տալիս, որ բարղեմ ձևը տպագրական վրիպակ է և ոչ թե սրբագրություն (տե՛ս «Նարեկ. Մատեան ողբերգութեան», էջ 181)։

4. Հմմտ. Ղուկ., ԺԴ, 29։

5. Գործ զՍաուղայն—քերականորեն ճիշտ ձևով պետք է լիներ զգործ (կամ՝ զգործս) Սաուղայն, կամ թէ՝ զՍաուղայն գործ (կամ՝ գործս)։ Ձեռագրերից քերականական ճիշտ ձև ունի միայն $Ի_1$-ը՝ զՍաուղայն գործ, որը, սակայն, կարծում ենք քերականագետ գրչի միջամտության հետևանք է և ոչ թե հեղինակայինը։ Վատիկանի ձեռագիրն ունի զործովք զՍաուղայն, մեր A-ն և ձեռագրերի մեծամասնությունը ունեն գործ զՍաուղայն։ Հոգի այս անկանոնությունը բնորոշ է առհասարակ գրաբարին և, հետևելով ձեռագրերի մեծ մասին ու տպագիրներին, նախընտրում ենք գործ զՍաուղայն ընթերցվածը։

6. Հմմտ. Մատթ., ԺԳ, 25։

7. Մարմնովս արտաքուստ պճնիմ և անձամբս երփնիւ ճային ճանաչիմ—փոխաբերությունը ծագում է ճայի մասին մի հնամենի առակից։ Զևսը որոշում է ամենագեղեցիկ հավքին թռչունների թագավոր ընտրել և նշանակում է ընտրության օրն ու վայրը։ Հավաքվում են բոլոր հավքերը, լողանում աղբյուրի հստակ ջրերում, ամեն մեկն ուզում է փայլել իր բնական գեղեցկությամբ։ Հանկարծ հայտնվում է զարմանահրաշ մի թռչուն՝ շքեղ փետուրներով զարդարված։ Հավքերը մոտվի նրան են տալիս հաղթության պսակը։ Գիշերահավը, սակայն, որ ավելի խելացի էր, անծանոթ հավքի փետուրների մեջ ճանաչում է իր փետուրը, մոտենում ու պոկում է այն։ Մյուս հավքերն էլ մեկ առ մեկ ճանաչում ու պոկում են իրենց փետուրները, և անծանոթ թռչունը, որ ճայ էր, բոլորին երևում է իր բնական տգեղությամբ, մերկ ու ամոթահար։

Բացառված չէ, որ առակը Նարեկացուն հայտնի լիներ նաև բանավոր զրույցներից։ Իսկ գրավոր աղբյուրներից Նարեկացուն այն կարող էր հայտնի լինել՝ ա. Նոննոսի մեկնության հայերեն թարգմանությունից (տե՛ս Manandian A.. (Nonnos). Die Scholien zu fünf Reden des Gregor von Nazianz, Marburg, 1903, էջ 48, «Յաղագս ճային և թևոցն հաւուքմանն»), բ. Պետրոսի գրքից (տե՛ս «Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնք», Վենետիկ, 1843, էջ 581) և գ. Ոլիմպիոնոսի «Բարոյախաւս» ժողովածուից (տե՛ս Ն. Մառ, Ժողովածույք առակաց Վարդանայ, մասն Բ, Ս. Պետերբուրգ, 1894, հավելված «Բարոյախաւս», էջ 136, «Աւտարափետուր ճայ»)։

8. Հմմտ. Մատթ., Ի, 12։

9. Փոյթ խնամով ի չարիս—այս կիսատողն ունեն բոլոր տպագիրները։ Գ. Ավետիքյանին հայտնի ձեռագրերը չեն ունեցել (տե՛ս «Նարեկլուծ», էջ 364, ծնթ. 24)։ Դ-ն թեև գրել է բնագրի կարգում, բայց ունի լուսանցային նշում. «Յօրինակն կարծեօք էր. ի Գոյներանցն չկայր» (էջ 441), այսինքն՝ ընդօրինակման գաղափար օրինակներից մեկում կիսատողը թեև եղել է, բայց այն չի ունեցել Գույներիցանցի օրինակը։ Ստեփանոս Գույներիցանցը (XIII—XIV դդ.) եղել է նշանավոր գրիչ (տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Դ,

Երևան, 1948, էջ 635—636)։ α-ն կիսատողը գրել է բնագրի կարգում, ապա կասկածելով նրա բնագրային լինելուն՝ գրել համման նշան, իսկ միշտ բառը սկսել է մեծատառով։ (α—էջ 213ա)։ α-ն (ձեռ. № 3589) գրված է 1319 թ. Ակների վանքում։ Գրիչը ձեռքի տակ ունեցել է ոչ պակաս, քան հինգ գաղափար օրինակ։ Հիշատակարանում նա գրում է. «...խաւարեալ մտաւք եւ յոյժ ցաւած մարմնով գրեցի, բայց աւրինակաց անփոյթ չարարի. Թէպէտ եւ ի բազմաց վկայեալ էին աւրինակքս, այղ յերից և ի չորից, է՛ զի եւ ի հնգից աւրինակաց որչափ կարացի՝ ուղղեցի» (էջ 304բ)։ Վարդան գրիչը կիսատողը գրել և ապա համման նշան է դրել վրան։ Կարծում ենք, որ վրիպել է իր սրբագրման մեջ։ β-ն կիսատողն ունի լուսանցքում՝ սրբագրությամբ (էջ 192ա)։ μ-ի գրիչը հարկ է համարել նշելու՝ «Ի մէկ օրինակ կայր» (էջ 202բ), այսինքն՝ իր գաղափար օրինակներից մեկն ունեցել է այն։ Թեև ձեռագրերի մի մասը չունի այս կիսատողը, սակայն դա բավարար հիմք չէ այն հեղինակային չհամարելու համար, ուստի, հետևելով տպագիրներին և ձեռագրական եղած վկայությանը, մենք ևս կիսատողը թողնում ենք բնագրում։

10. Նարեկացին այստեղ զուգահեռ է տանում Կայենի և իր միջև։ Կայենն առաջին մարդու՝ Ադամի որդին էր, որը նախանձեց եղբորը՝ Աբելին, նրա առաքինության համար և սպանեց նրան՝ դատապարտվելով հավիտենական նզովքի. ինքը՝ բանաստեղծը երկնային նոր Ադամի՝ Քրիստոսի որդին է, որը փոխանակ հետևելու նրա կատարելությանը, կայենական նախանձի կուրությամբ սպանել է իր հոգին՝ հավիտենական տանջանքի մատնելով իրեն։ Կայենի մասին հմմտ. Ծննդ., Դ, 15։

11. Այս հատվածում (տ. 126—137) Նարեկացին խորացնում է իր ինքնապարսավանքը, ընդգծում մեղավորության, անքավելիության իր տարակուսանքը, քանի որ չգիտի, թե ո՞ւր կարող է փրկության ելք գտնել կամ ո՞ւմ կարող է ապավինել սրբերից ու մարգարեներից՝ Աբրահամից սկսած մինչև Պետրոս ու Պողոս առաքյալները. ինքն արժանի է նրանց հանդիմանությանը, էլ ո՞ւր մնաց թե բարեխոս լինեին իր համար։ Քանի որ Նարեկացին չի տալիս ուղղակի նրանց անունները, ուստի գրիչներից ոմանք, դյուրամատչելիության համար, հարկ են համարել, սովորաբար լուսանցքում, համապատասխան տողի դիմաց, նշել, թե ում մասին է խոսքը։ Այդպիսի նշումներ ունեն՝ S (էջ 78բ—79ա), a (էջ 134ա), b (էջ 139բ—140ա), h (բնագրի կարգում՝ կետերով անջատված, էջ 153բ), l (էջ 198բ—199ա), m (էջ 288բ), p (էջ 209ա), q (էջ 200ա—բ), x (էջ 185ա)։

Ահա այդ անունները՝ համապատասխան տողերի համար. տ. 126—127, Աբրահամ (am չիf Աբրահամ), տ. 128, Մովսէս, տ. 129, Sqx Փենէհէս (b Փենեեզ, h Փենէէզ, lm Փենեհէզ, p Փէնէհէզ), տ. 130, Յեսու (l Յեսու։ որդի)։ տ. 131, Դաւիթ (m Սամուէլ փխ Դաւիթ, q Դաւիթս), տ. 132, Եղիա (bmp Եղիայ), տ. 134—135, Յովանէ (bp Յովաննէս, mq Յովհաննէս), տ. 136, Պետրոս, տ. 137—138, Պօղոս (blmp Պաւղոս, q Պօղոսս)։

12. ...սկզբնահայրն հաւատոց—Նարեկացին նկատի ունի Աբրահամին, որը մեծարեց աղքատ Ղազարոսին՝ նրա մահից հետո և, ընդհակառակն, անարգեց մեծահարուստին, հանդիմանելով նրան, որ նա իր բարիքները վայելել է կյանքում և արժանի պատիժ է կրում մահից հետո (տե՛ս Ղուկ., ԺԶ, 19—26)։

13. Մեծն մարգարէից—ակնարկում է Մովսես մարգարեին, որը հանդիմանեց Ահարոնին ժողովրդին կռամոլության մեջ գցելու, հայրենի հավատը չպահելու համար (տե՛ս Ելք, ԼԲ, 21—29)։

14. Արին բարեփառ—նկատի ունի Եղիազարի որդի Փենեհեսին, որը գեղարդով սպանեց հրեա իշխաններից մեկին՝ մադիանացի մի կնոջ հետ պոռնկելու համար (տե՛ս Թիվք, ԻԵ, 6—8)։

15. Պատկեր ճշմարտին—ակնարկում է Հեսուին, որը քարկոծեց Աքարին՝ ակամա և ոչ թե անկեղծ խոստովանության համար (Յեսու, Է, 19—25)։

16. Աստուածարեալն վեհից—խոսքը Դավիթ արքայի մասին է. Սավուղը սպանել էր տվել գաբավոնացիներին՝ թափելով անմեղ արյուն։ Գաբավոնացիները Դավթից խնդրում են, որ նա իրենց տա Սավուղի որդիներից յոթին՝ արյունը քավելու համար։ Դավիթը բավարարում է նրանց պահանջը՝ աստծու բարկությունը Իսրայելից հեռացնելու համար (Բ Թագ., ԻԱ, 1—9)։ Զուգահեռի իմաստն այն է, որ ինքը՝ բանաստեղծը չի կարող փրկության հույս դնել Դավթի վրա, որովհետև նա արդարության համար չվարանեց թշնամու ձեռքը մատնել Սավուղի որդիներին։

17. Մարգարէածին տեսանողն—խոսքը Սամուել քահանայապետի մասին է, որը Գաղգաղայում սպանեց ամաղեկացիների գերի թագավոր Ագագին (Ա Թագ., ԺԵ, 32—33)։

18. Նախանձաւորն աստուծոյ—ակնարկում է Եղիա մարգարեին, որի խնդրանքով աստված հուր տեղաց իրեն բռնելու եկած հիսնապետի և նրա զինվորների վրա (տե՛ս Դ. Թագ., Ա, 10)։

19. Ստուերին լրումն և նորոյս սկիզբն—ակնարկում է Հովհաննես Մկրտչին, որը մի տեսակ սահմանաբաժան է համարվել Հին Օրենքի և Նորի միջև (տե՛ս Մատթ., Գ, 12—13)։

20. Պետն առաքելոց—նկատի ունի Պետրոս առաքյալին (տե՛ս Գործք, Ե, 7—10)։

21. Զարմանալին քննութեամբ Հոգւոյն—ակնարկում է Պողոս առաքյալին (հմմտ. Բ Կորնթ., Բ, 16)։ Ըստ Հ. Նալյանի՝ «Զարմանալին կոչէ զՊօղոս, քանզի փաւլոս զարմանալի թարգմանի» («Գիրք մեկնութեան», էջ 514)։

22. Արձանացո՛ զծաւալս—$Պ_4$-ը և նրանից ծագող վերահրատարակությունները, բացի 1840 թ. Վենետիկի և 1948 թ. Բուենոս Այրեսի հրատարակություններից, ունեն՝ արձանացո՛ զծարաւս։ Տարընթերցվածի տարբերությունից էլ ծագել է մեկնության տարբերությունը։ Ըստ Նալյանի՝ խոսքը ծովի ալիքների ծավալման, «մի ի վերայ միոյ ոլորմամբ» դիզվելու և կուտակվելու մասին է, ըստ Ավետիքյանի՝ ծարավը դադարեցնելու. «Դադարեցո՛, խափանեա՛ զծարաւս» («Նարեկլուծ», էջ 364, ծնթ. 35)։ Ավետիքյանը ինչ-որ նմանություն է տեսնում Նարեկացու հոգեկան դրության և Հովնան մարգարեի՝ կետ ձկան հետ պատահած անցքի միջև։ Ըստ այդմ էլ՝ Ավետիքյանը նախապատվություն է տալիս ծարաւ տարընթերցվածին։ Այդ զուգահեռը արհեստական է, Նարեկացու խոսքը սրտի հույզի ծավալման, ահագնացման մասին է, մաղթանքը՝ խաղաղեցնելու, դադարեցնելու, անշարժացնելու մասին։ Թ. Գուշակյանը տողը թարգմանել է այսպես. «Դադարեցո՛ւր խռոված սրտիս մոլեգին շարժման ծավալումները» («Նարեկ աղոթամատյան», էջ 236). Գ. Խաչատուրյանն այսպես՝ «Անշարժացո՛ւր վրդովված սրտիս ծավալումները մոլեգին հուզման» («Նարեկ. Մատեան ողբերգութեան», էջ 188), Մ. Խերանյանն այսպես՝ «Դադարեցրո՛ւ վրդովված սրտիս մոլեգին հուզման ծավալումները» («Մատյան ողբերգության», էջ 310)։ Նախընտրում ենք զծաւալս ընթերցվածը։

23. Գրեցես աղաւթս մշտամատոյցս—$Պ_4$-ը և նրանից ծագող վերահրատարակությունները, բացի Վենետիկի 1840 թ. և Բուենոս Այրեսի 1948 թ. հրատարակություններից, ունեն մշտամատոյց։ Ըստ այսմ էլ Ավետիքյանը տողը մեկնաբանում է այսպես. «Զայս գրաւորական ողբոց ձայնս՝ համարեա իբրև զաղօթս Յովնանու, զոր մտօք մատոյց ի փորոյ կիտին» («Լուծմունք», էջ 365, ծնթ. 37)։ Ըստ Հ. Նալյանի՝ «...զայս նոր մատենիս անունն՝ կոչնեցես աղօթս մշտամատոյց, որ է ողբ և կոծ վասն մեղաց» («Գիրք մեկնութեան», էջ 515)։ Եվ, իսկապես, Նարեկացու խոսքն իր մատյանի մասին է, որը մի այլ առիթով բնութագրվում է որպես հավիտենական արձան. «Եւ գրեալ դրոշմեցես յարձան յաւիտեան...» (տե՛ս Բան ՁԸ, տ. 12)։ Նախընտրում ենք մշտամատոյց ընթերցվածը։

ԲԱՆ ՀԲ

1. Տ գլխի համար ունի նշում. «Բան առ կրօնաւորսն» (էջ 204ա)։

2. Զ՚Մի՛ պարծեսցի: Ձեռագրերի մի փոքր խումբ և բոլոր տպագիրներն ունեն զի մի՛ պարծեսցի: Տարընթերցվածը ծագել է զ որոշյալ հոդի և զի շաղկապի շփոթությունից։ Նարեկացին հորդորում է կրոնավորներին՝ հիշել մարգարեական և առաքելական խրատները. «Մի՛ պարծեսցի ամենայն մարմին առաջի աստուծոյ» (Ա Կորնթ., Ա, 29) և «Ոչ գոյ արդար, և ոչ մի» (Հռովմ., Գ, 10) և այլն։ «Յիշեցէք»-ը պահանջում է հայցական հոլով, ուստի շարահյուսորեն ճիշտ և բնագրային են

> Զ՚Մի՛ պարծեսցի ամենայն մարմին առաջի աստուծոյ,
> Եւ զ՚Ոչ ոք է արդարն եւ ոչ մի,—

ընթերցվածները։ Շփոթությունը կարող էր ծագել նաև հղված աղբյուրի զի մի պարծեսցի վերականգնելու հետևանքով։ Մինչդեռ, «Եւ զ՚Ոչ ոք է արդարն եւ ոչ մի» տողում այդ կառուցվածքը պահպանվել է բնագրային տեսքով։

3. Համտ. Ղուկ., ԺԷ, 10։

4. Լուայ յումեմն է ոչ պարտաւոր եւ ոչ ծանեցայ—ակնարկում է ըստ հին լուծմունքի «ի կրօնաւոր մի» (տե՛ս ձեռ. 5650, էջ 412ա), ըստ Գ. Ավետիքյանի՝ «իմանի զայլմէ ումեմնէ բարեկրօն անձնէ առ իւրով ժամանակաւ» («Նարեկլուծ», էջ 367, ծնթ. 4), ըստ Թ. Գուշակյանի՝ «Հավանաբար իրեն ժամանակակից կամ ծանոթ անձի մը համար է խոսքը» («Նարեկ աղոթամատյան», էջ 360), որը խոստովանում է իր աղոթքում, թե «Ոչ երբեք շնացայ, ոչ պոռնկեցայ, եւ ոչ զաշխարհիս ինչ համբուրեցի ճաշակս մահու»։ Նարեկացին թեև անկեղծ ու ճշմարիտ է համարում աղոթավորի այս խոստովանությունը, սակայն ինքը դատապարտում է նրան, գտնում, որ դա հեռու չէ «յանաւրէնութենէ», քանի որ երկրածին, մարմնավոր մարդը չի կարող, էապես և ոչ թե առերևույթ, իրեն արդար համարել աստծո առաջ. «Որոյ առաջի ոչ է արդարանալ մարմնոյ երկրածնի»։ Այդպես անելով այդ աղոթավորը ավելի շատ գայթում, քան ընթանում է առաքինության շավղով («Ոչ ընթացաւ, որքան թէ գթեաց»)։ Նրա խոստովանությունը բանաստեղծին հաճելի չէ նաև այն պատճառով, որ դա հիշեցնում է ավետարանում հիշված փարիսեցու աղոթքը։ «Գոհանամ զքէն,—աղոթում էր փարիսեցին—զի ոչ եմ իբրև զայլս ի մարդկանէ, զյափշտակօղս, և զանիրաւս, և զշունս, և կամ զմաքսաւորս» (Ղուկ., ԺԸ, 10—11)։ Աղոթավորի խոստովանությունը, ահա, նույն ամբարտավանության արտահայտությունն է՝ «Որ է փարիսեցւոյն ձայնի կերպարան» (բան ՀԲ, տ. 37)։

5. Համտ. Սաղմ., ՃԽԲ, 2։

6. Համտ. Ղուկ., ԺԸ, 11—12։

7. Համտ. Մատթ., Ե, 28։

8. ...ոչ ոՖ ամաչեցեալ—այս արտահայտությունը, տպագրական վրիպակի հետևանքով, չունի միայն «Նարեկլուծի» 1827 թ. հրատարակությունը։

9. Համտ. Մատթ., ԻԳ, 7։

10. Յաւազանէ կոչեցայ Արթուն—Նարեկացու մկրտության անունը Գրիգոր է և այստեղ տալիս է իր անվան ստուգաբանությունը. Գրիգորիոս հունարեն նշանակում է արթուն. ծագում է γρηγορέω «արթուն մնալ, հսկել» բայից (տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Ա, Երևան, 1942, էջ 519)։

11. Ի փրկութեանն աւուր Հսկող յորջորջեցայ—ակնարկում է իր անվան հունարեն մեկ այլ՝ հսկող նշանակությունը (տե՛ս նախորդ ծանոթագրությունը)։

12. Հոգւոց—միայն «Նարեկլուծի» 1827 թ. հրատարակությունը, անշուշտ վրիպակով, ունի Յոգւոյս:

13. Համտ. Սաղմ., ՃԺԸ, 39։

ԲԱՆ ՀԳ

1. Գլխի համար մի շարք ձեռագրեր ունեն նշումներ. F «Վասն ողէվարին է ճառս» (էջ 89ա), Տ «Յոգէվարի» (էջ 80ա), Ծ «Հոգէվարին կարդա» (էջ 198), Ւ (ուշ գրչությամբ) «Ոգևարին աւուրն կարդայ», Բ «Վասն հոգէվարի», «Վասն յարութեան Քրիստոսի» (192ա), Σ «Ի ժամ մահու» (էջ 208ա)։ Տ «Յելն հոգւոյ ի մարմնոյ» (էջ 207ա) և

2. Համտ. Մարկ., Ե, 34։

3. Համտ. Ղուկ., Է, 50։

4. Թալկացեալ մարմին—$Պ_1$-ն ունի բօշ կացեալ, $Պ_{2-3}$-ը, Պոլսի 1782 և 1789 թթ. տպագիրները՝ բօշկացեալ: A-ն և մի խումբ ձեռագրեր, ինչպես նաև Վատիկանի ձեռագիրը, ունեն բաւշկացեալ: Г ունի բաղկացեալ (ղ-ի վրա նշան՝ բոշկացեալ, J և մի այլ խումբ ձեռագրեր՝ բաւշկացեալ: (բօշկացեալ (բոշկացեալ, բաւշկացեալ) ւ կարդալու համար)։ Հայկազյան բառարանը չունի բօշկացեալ (բոշկացեալ, բաւշկացեալ) բառահոդված։ Կա բօշ բառը («Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Ա, 824), բացատրված՝ «բոյլ և արձակ, ոչ նեղ կամ զօդեալ»: Այս իմաստը չի համապատասխանում Նարեկացու կերծ բառ է և առաջացել է բաղկաարտահայտությանը։ Բաւշկացեալ բառը, կարծում ենք, կեղծ բառ է և առաջացել է բաղկացեալ (թալկացեալ) բառի աղ (ալ) տառակապակցությունը շփոթելու և նախ՝ աւշ ընկալելու, ապա՝ ոշ սրբագրելու հետևանքով։ Թողնում ենք թալկացեալ ճիշտ ընթերցվածը՝ հետևելով $Պ_4$-ին և նրանից ծագող վերահրատարակություններին։

5. Համտ. Ա Թեսաղ., Դ, 13։

6. Համտ. Տիտոս, Բ, 13։

7. Համտ. Բ Տիմ., Բ, 12։

ԲԱՆ ՀԴ

1. Տ գլխի համար ունի նշում. «Ի ժամ հոգէվարին» (էջ 211ա)։

2. Անա անդ է ողորմելն իսկապէս—այս տողից սկսվում է հակադրությունների մի շարք, ուր բանաստեղծն այն միտքն է արտահայտում, թե ուր սպառվում, վերջանում է մարդկային կարողությունը, այնտեղ է, որ հայտնվում, երևան է գալիս աստծո ամենակարողությունը։ Ըստ Նարեկացու՝ արարչի ճշմարիտ ողորմությունը այն ժամանակ է հասնում, երբ հասնում է մարդու բարի գործի ակնկալության ամեն մի հույս, այնտեղ է երևում նրա աստվածային ձեռքի բժշկությունը, երբ մարմնի բոլոր անդամները մահացել, զրկվել են կենդանությունից, այնտեղ է օգնության հասնում նա, ուր հնարքի ոչ մի ելք չկա և այլն։

3. Յորժամ տէրն բարի՝ չարն ծառայի—այստեղից սկսած Նարեկացին դիմում է նոր հակադրությունների, այն միտքն արտահայտելով, որ օրհնության ու գովասանքի է արժանի առանձնապես այն տերը, որ բարեգործություն է անում չար, անարժան ծառային։ Եթե տասը հազար քանքարի պարտքը ներող տերը արժանացավ այնքան օրհնանքի ու մեծարանքի (տե՛ս Մատթ., ԺԸ, 27), ապա որքան օրհնությունների ու փառաբանությունների է արժանի աստ-

ված, որն իր ծառային բանից ազատելով արժանացնում է արքայական գահի, կուրացման դատապարտվածին տեսանելի է դարձնում վերին բերկրանքը, մատները ծայրատման սպառնալի մատին համարձակության մատանի է դնում, գլխատման սպառնալի գլխին՝ պայծառ պսակ։ Հատվածում հետաքրքիր են Նարեկացու թվարկած պատժի տեսակները՝ բանտարգելություն, զանահարություն, կուրացում, մատների ծայրատում, գլխատում, մահապարտություն և այլն։

4. Մինչ նուաիրեալ է ի գուբ տղմոյ—հակադրության երկրորդ անդամը՝ «նա ի բազմականս ամենապատիկս գանոյից զրգեցուցանիցէ»՝ հուշում է, որ Նարեկացին այստեղ դիմել է աստվածաշնչական զուգահեռի (հմմտ. Իմաստ. Ժ, 13—14), մինչդեռ մյուս դեպքերում նա դիմում է իրական, պատմական փաստերի. խոսքը հակադրությունների առաջին անդամների մասին է։

5. Բա՛ց, տէր, զգանձս քո բարիս—ընդունելով, որ իր աղերսանքները գրված են աստվածային ներշնչմամբ, քանի որ աստված է բանաստեղծական շնորհի աղբյուրը («ի քէն ազդեցաւ գրել ինձ զսոսին» (բան ՀԴ, տ. 54)։ Նարեկացին հիշեցնում է Սողոմոնի այն առակը, ուր աստված ինքն է խոստանում, թե «Բաշխեցից սիրելեաց իմոց զմեծութիւն, և զգանձս նոցա լցուցից բարութեամբ» (տե՛ս Առակք, Ը, 21), իմաստության գանձեր խնդրելով աստծուց։

ԲԱՆ ՀԵ

1. Սովորական վերնագրի մասին Գ. Ավետիքյանը գրում է. «Ի լաւ օրինակս և ի հին լուծմունս և յոմանս նախնի տպագիրս չիք այս մակագիր, այլ փոխան սորա դնի յաջորդն. Դարձեալ առ նմին: Եւ առաւել հարազատ թուի այս. վասն զի սկիզբն գլխոյս իբրև նախաշաւիղ է հետևեալ բանին՝ Մատուցանեմ, ընծայեմ. ուստի ոչ ունին պէտս այլ և այլ մակագրի» («Նարեկլուծ», էջ 388, ծնթ. 1)։ Իսկապես հին տպագիրներից մի քանիսը ($Պ_{2-3}$-ը, ինչպես նաև Պոլսի 1782 և 1789 թթ. տպագիրները) չունեն սովորական վերնագիրը։ Հին լուծմունքը չի անդրադարձել վերնագրին։ Ինչ վերաբերում է Ավետիքյանի ձեռքի տակ եղած այն օրինակներին, որոնք չեն ունեցել սովորական վերնագիրը, ապա դրանց թիվը պետք է խիստ փոքր լիներ, քանի որ մեր օգտագործած ձեռագրերից միայն երկու ձեռագիր՝ M և β չունեն այն։ Վատիկանի ձեռագիրը սովորական վերնագրի փոխարեն ունի «Նորին խաւսք ընդ աստուծոյ» (էջ 267ա)։ Ձեռագրերի մեծ մասը և բոլոր տպագիրները, սովորական վերնագրի փոխարեն (տե՛ս $Պ_{2-3}$-ը, Պոլսի 1782 և 1789 թթ. տպագիրները) կամ վերնագրից հետո (տե՛ս Վենետիկի 1840 թ. տպագիրը և նրանից ծագող վերահրատարակությունները), մեծ մասամբ 4-րդ տողի մատուցանեմ բառից առաջ (տե՛ս $Պ_4$-ը և նրանից ծագող վերահրատարակությունները, այդ թվում՝ «Նարեկլուծ»-ի բնագիրը), երբեմն էլ 8-րդ տողի արդ և 17-րդ տողի Եւ արդ բառերից առաջ, լուսանցքում կամ բնագրի կարգում (ձեռագրերի համար տե՛ս ենթախորագրի տողատակը), ունեն հետևյալ ենթախորագիրը. Դարձեալ առ նմին կրկնապատիկ երրորդութիւն աստուածային Հոգւոյն ազդեցեալ, որ ինչ յառաջնոյն սահմանեցաւ ուղղութիւն՝ առ ամենայն լուսաւորութիւն եկեղեցւոյ դաւանութեան՝ մեկնապէս եղեալ ստապանաւր: Եւ որ առ անշնչականս նիւթեղէն՝ ցուցանէ երանաւոր կերպաղութիւն անճառելի:

Մի խումբ ձեռագրեր (տե՛ս ենթախորագրի տողատակում) չունեն այս ենթախորագիրը՝ Թեև Ավետիքյանը գտնում է, որ ենթախորագիրը, որպես վերնագիր, «առաւել հարազատ թուի», մեզ համար, սակայն, ընդունելի չէ այդ ենթադրությունը։ Այս ենթախորագիրը ևս, ինչպես նույն բնույթի մյուս ենթախորագրերը, հեղինակային չէ (տե՛ս բան ԺԲ, ծնթ. 4)։

Եվ դա ոչ միայն այն պատճառով, որ մի խումբ ձեռագրեր չունեն այն, այլև այն պատճառով, որ ենթախորագիրն ունի բացատրական բնույթ, որը բխում է գլխի դավանաբանական ընդհանուր բովանդակությունից։

Գլխի համար լուսանցային նշումներ ունեն երկու ձեռագիր. Տ-ը՝ «Եկեղեցւոյ» (էջ 88բ) և Տ-ը՝ «Ի խորհուրդ եկեղեցւոյ» (էջ 219ա), «Ի սուրբ եկեղեցի» (էջ 220ա), «Ի սուրբ մատրանն» (էջ 222ա), «Վասն տան տեառն եւ զի եկեղեցիս հիւթաւոր երկինք է յերկրի» (էջ 222բ—223ա), «Ի ծնօղն հոգևոր մայրն լուսոյ եկեղեցի սուրբ» (էջ 223բ—224ա), «Ի տաճարն աստուծոյ» (էջ 225ա)։

Գ. Ավետիքյանը կարծում է, որ այս գլուխը պետք է գրված լիներ ԼԴ գլխից հետո, քանի որ այն նվիրված է Սուրբ Երրորդության հավատի դավանությանը՝ ըստ Նիկիական հանգանակի, իսկ այս գլուխը՝ եկեղեցու դավանության խորհրդին՝ ըստ առաքելական և Կոստանդնուպոլսի հանգանակների։ «Եւ քանզի յայնմ հանգանակի լռեաց ժողովն Նիկիոյ զմասնն ի վերայ սուրբ Եկեղեցւոյ, որ կայ ի հանգանակն առաքելոց և Կոստանդնուպօլսի ժողովոյն, նմին իրի և սուրբ վարդապետս ոչ արար անդ (այսինքն՝ ԼԴ գլխում) բացատրութիւն ի վերայ եկեղեցւոյ, զոր աստ (այսինքն՝ ՀԵ գլխում) առնէ ընդարձակ» («Նարեկլուծ», էջ 388, ծնթ. 1)։

Որ այս և գլխի մյուս ենթախորագրերը՝ «Յաւ որ ի Նիկիայն սահմանեցաւ բան, այլ իմն խորհրդածութիւն աստուածային աւանդութեանն» (տ. 38-ից հետո) և «Նորին ասացեալ ի խորհուրդ սրբոյ եկեղեցւոյ, ընդդէմ պիղծ աղանդաւորացն Թոնդրակեցւոց, նոր մանիքեցւոց» (տ. 104-ից հետո) նույնպես հեղինակային չեն, այլ արդյունք են գրչագրական միջամտության, ակներև է այն բանից, որ դրանք ևս արտածված են Նարեկացու համապատասխան արտահայտություններից։ Մասնավորապես «Նորին ասացեալ ի խորհուրդ սրբոյ եկեղեցւոյ...» ենթախորագիրը ձևակերպված է Նարեկացու «Դաւանեմք ի հաւատ ուղիղ եւ անխոտորնակ անբծութեան՝ համբուրիւ շրթանց ողջունելով զկառուցեալս խորան յանշնչական արձանաց՝ աստուածային բնակութեան եկեղեցւոյս շինուածոյ» (տ. 105—107) արտահայտությունից։ Գ. Ավետիքյանը այս ենթախորագրի մասին գրում է այսպես. «Օրինակք պէսպէս գրեն զմակագիրս. ոմն զմանիքեցիս միայն յիշելով, ոմն նաև զպօլիկեանս. և թուի եղեալ ոչ ի սրբոյ վարդապետէն, այլ յայլոց՝ առ ի ցուցանել զգիտաւորութիւն յաջորդ բանից դաւանութեանս. իբր զի գրեաց ընդդէմ Թոնդրակեցւոց, որք սակս խառնակութեան զանազան աղանդոց՝ զանազան անուանս ընկալան այսինքն մանիքեցիք, պօլիկեանք, կամ պաւլիկեանք. և այլն, որք զեկեղեցի արհամարհէին, և զամենայն որ յեկեղեցւոջ կատարի, ծաղր առնէին» («Նարեկլուծ», էջ 392, ծնթ. 39)։ Ավետիքյանն իրավացի է. ենթախորագրերը, ինչպես ասել ենք, դրել են ուրիշները՝ նյութի բովանդակությունը առավել որոշակի դարձնելու, այս կամ այն գործնական նշանակությունը ընդգծելու համար։ Թեև Ավետիքյանը հավանական է համարում, որ «Դարձեալ առ նմին» սկսվածքով ենթախորագիրը «առաւել հարազատ թուի», սակայն իրականում այդ ենթախորագիրը ևս ստեղծվել է ընդհանուր սկզբունքով՝ գլխի դավանաբանական բովանդակությունը բացատրելու նպատակով։ Ինչ վերաբերում է նրան, թե այդ գլուխը պետք է գրված լիներ ԼԴ գլխից հետո, ապա դա զուտ տրամաբանական հետևություն է և ոչ թե հիմնավոր փաստարկ։ Նարեկացին եկեղեցին համարում է Քրիստոսի մաքուր մարմինը, որը հավասարապես պետք է պաշտվի նրա գլխի՝ մարդացած աստծո բանի՝ Քրիստոսի հետ և որ այս գլուխը նա գրում է հիշատակելով նաև իր այն ճառը (բան ԼԴ), որը նվիրված է Երրորդության դավանությանը։ Եվ քանի որ եկեղեցին, ըստ Նարեկացու, յուրաքանչյուր հավատացյալի հոգևոր ծննդի ճշմարիտ ու պանծալի մայրն է, առանց որի անհնարին է մաքրվել մեղքերից և հաղորդվել սրբերին ու արժանանալ երկնային փրկագործության, ուստի ինքը իր Մատյանում անհրաժեշտ է համարում բացարձակ արտահայտելու իր դավանությունը թե՛ Սուրբ Երրորդության և թե՛ հատկապես եկեղեցու մասին։ Այլ քանզի յարգանդէն, յորում յղացայ հոգևոր երկամբք ծնիցեալ զմեզ և զերջանիկ դշխոյ անարատ ամենից կուսից իսկումն՝

զպանծալի մայրն իմ գովելի պարտ է կանոնաւ սահմանի բանի արձանագրել յայսմ մատենի. զի ծանիցի ցուցցի և այլոց ևս ապագայիցն ազգաց պատմեսցի ուրախութիւն փառաց խընկելոյն, արժանաւորապէս պաշտամամբ պատուեալ՝ իբր մաքուր մարմին ընդ գլխոյ մարդեղութեան բանին աստուծոյ, ի յիշատակ ճառիս ճաւատոյ՝ Երրորդութեանն դաւանութեան»: Ակներև է նաև, որ այս գլուխը գրված է Մատյանի համար. «...պարտ է կանոնաւ սահմանի բանի արձանագրել յայսմ մատենի»: Ուստի այն ո՛չ պետք է տանել հավելված, ինչպես արել է Գ. Խաչատրյանը («Հե գլխի բովանդակության նկատառումով հարմար դատած ենք զետեղել զայն թարգմանությանս հավելվածական մասին մեջ, պահելով մեկտեղ գլխակարգության սովորական շարքը». «Նարեկ. Մատեան ողբերգութեան», էջ 275) և ո՛չ էլ հրաժարվել թարգմանելուց՝ դավանաբանական բնույթի պատճառով գտնելով, որ «հազիվ թե հանճարեղ հեղինակի գրչին պատկանեն» («Մատյան ողբերգության», գրաբարից թարգմանեց Մ. Խերանյան, էջ XXXIV), ինչպես վարվել են Մ. Խերանյանը և Վ. Գևորգյանը:

2. Վենետիկի 1840 թ. հրատարակության մեջ 4-րդ տողի անբաւութիւնք բառով ավարտվում է առաջին պարբերությունը և մատուցանեմ բառով սկսվում է նոր պարբերությունը: Անբաւութիւնք բառից հետո այստեղ դրված է ստորակետ, իսկ մյուս հրատարակություններում, այդ թվում և «Նարեկյուծ»-ի բնագրում՝ վերջակետ: Վերջակետը սխալ է, քանի որ նախադասությունը չի ավարտվում անբաւութիւնք բառով. մատուցանեմ բառը թե՛ շարահյուսորեն և թե՛ տրամաբանորեն հանդիսանում է մտքի բնական շարունակությունը:

3. ... յաւել զտկարս ի տունն Դաւթի եւ անդուստ փոխեալ ի տունդ աստուծոյ—Նարեկացին փոխաբերաբար Դավթի տուն է կոչում եկեղեցին, աստծո տուն՝ երկնային արքայությունը (հմմտ. Զաք., ԺԲ, 8):

4. Մի՛ անճուր ողջակիզին սպանդ մոռասցի—Թեև ձեռագրերի մի մասը և տպագիրներից $Պ_{1-2}$-ը, $Պ_4$-ը և նրանից ծագող տպագիրները, այդ թվում և «Նարեկյուծի» բնագիրը, ունեն մեօցի, բայց մենք հետևելով Վենետիկի 1840 թ. հրատարակությանը և համոզիչ համարելով Գ. Ավետիքյանի բացատրությունը, թե «առաւել յարմար է ասել մոռասցի» («Նարեկյուծ», էջ 390, ծնթ. 13), նախընտրեցինք մոռասցի տարբերակը: Այսպես ունի նաև Բուենոս Այրեսի 1948 թ. տպագիրը: Խոսքն առանց հրի, առանց կրակի մատուցվող ողջակեզի՝ բանական ու անարյուն զոհաբերության մասին է: Նարեկացին այդպիսի բանական ու անարյուն զոհ է համարում իր Մատյանը և աղերսում, որ այն չմոռացվի (տե՛ս նաև՝ «Եւ ճոխոտեսցի՛ յայս ճուէր բանի՝ անարիւն զոհի՝ բազմաւր երկնի, / Եւ աւրհնեալ սրբեա՛ զտառ մատենի այսր ողբերգութեան, (Եւ գրեալ դրոշմեսցես յարձան յաւիտեան... (բան ՁԸ, տ. 11—13):

5. $Պ_3$-ը, ինչպես նաև Պոլսի 1782 և 1789 թթ. տպագիրները ունեն եւ ի ամին: Մյուս տպագիրները և մեր օգտագործած ձեռագրերից ոչ մեկը չունեն եւ: Թերևս տպագրական հավելում է:

6. Ձեռագրերի մեծ մասը և բոլոր տպագիրները, բացի Բուենոս Այրեսի 1948 թ. հրատարակությունից, այս տողից հետո (W-ում՝ Գ հատվածի դիմաց, ω-ում՝ 52-րդ տողի անձեռակերտ բառից հետո), լուսանցքում կամ բնագրի կարգում, ունեն «Յառ որ ի Նիկիայն սահմանեցաւ բան, այլ իմն խորհրդածութիւն աստուածային աւանդութեան» ենթախորագիրը: Ընդհանուր Այս ենթախորագիրը ևս հեղինակային չենք համարում (տե՛ս բան ԺԲ, ծնթ. 4): Ընդհանուր իմաստով այս ենթախորագիրը գրեթե հարասում է ԼԴ գլխի «Երրորդութիւն անայլայլական նորոգ ստեղծաբանութեան, ազդեալ յաստուծոյ, յոր ինչ ի Նիկիայն սահմանեցաւ ճաւատ» ենթախորագրին, նյութը՝ նույնպես: Թե՛ ԼԴ գլխի այդ հատվածներում և թե՛ ՀԵ գլխի Դ—Զ մասերում (տ. 39—104) Նարեկացին ընդարձակում, մանրամասնում է Նիկիայի տիեզերական ժողովի 325 թ. ընդունած հավատո հանգանակը, որն էլ հիմք է դարձել թե՛ ԼԴ և թե՛ ՀԵ գլուխների համապատասխան ենթախորագրերի համար:

7. ... ճացն կենաց եւ ճովիւն ճատից բանաւորականաց. Հաւատարիմ եղև յաշխարհի:

Նկատի ունի Հիսուսին. «Ես եմ հացն կենաց» (Յովհ., Զ, 35), «...զհովիւն հոտից... զտէր մեր Յիսուս» (Եբր., ԺԳ, 20) և «...քարոզեցաւ ի հեթանոսս, հաւատարիմ եղև յաշխարհի եւ վերացաւ փառօք» (Ա Տիմոթ., Գ, 16):

8. ...բազաւրեալ ի լոյս անմատոյց—ակնարկում է Քրիստոսին. «...որ միայն ունի զանմահութիւն՝ բնակեալ ի լոյս անմատոյց» (Ա Տիմոթ., Զ, 16):

9. ...աւրինակաւ տեսութեան ամպոյ ցուցաւ ձայնիւ Հաւր ի լերինն Թաբորական—ակնարկում է Հայր աստծուն. «...ահա ամպ լուսաւոր հովանի եղև ի վերայ նոցա, ձայն եղև յամպոյն եւ ասէ. Դա է Որդի իմ» (Մատթ., ԺԷ, 5):

10. ...ճովանի եղեւ Յակոբեան տոհմին ի յելսն Եգիպտոսի—դարձյալ խոսքը վերաբերում է Հայր աստծուն. «Եւ աստուած առաջնորդէր նոցա ցերեկ սեամբ ամպոյ ցուցանել նոցա զճանապարհն, եւ զգայգ՝ սեամբ հրոյ. լուսատու լինել նոցա ի գնալն՝ զցայգ և զցերեկ» (Ելք, ԺԳ, 21):

11. ...ճողմով սաստկութեան զփարաւոն ընկղմեաց—ակնարկում է հրեաների՝ Կարմիր ծովն անցնելու դրվագը (Ելք, ԺԴ, 28):

12. Այս տողից հետո թե՛ ձեռագրերը (տե՛ս տողատակը) և թե՛ տպագիրներն ունեն «Նորին ասացեալ ի խորճուրդ սրբոյ եկեղեցւոյ, ընդդէմ պիղծ աղանդաւորացն թոնդրակեցւոց, նոր մանիքեցւոց» ենթախորագիրը, որը, ինչպես ասել ենք, հեղինակային չէ, այլ ձևակերպված է ըստ Նարեկացու (տե՛ս այս գլխի 1 ծանոթագրությունը): Դ-ն ունի ենթախորագրի երկու տարբերակ՝ մեկը բուն աղբյուրինը, որից ընդօրինակված է Դ-ն («Ընդդէմ պիղծ աղանդաւորացն անիծեալն թոնդրակեցաց, նոր մանիքցոց», էջ 474), մյուսը մեկ այլ աղբյուրինը, որի գրիչը եղել է նշանավոր Գույներիցանցը. «Գոյներ(ոնց). Ասացեալ վասն եկեղեցւոյ ընդդէմ մանիքեց(ւոց), որ են պոլիկեանք» (էջ 475. Գույներիցանցի մասին տե՛ս բան ՀԱ, ծնթ. 9): Ենթախորագրի առթիվ Գ. Խաչատրյանը ծանոթագրել է այսպես. «Գրված է թոնդրակեցի աղանդաւորներուն դէմ» («Նարեկ. Մատեան ողբերգութեան», էջ 277): Նարեկացին թոնդրակեցիների անունը չի տալիս: Ըստ Նիկիական հանգանակի շարադրելով Սուրբ Երրորդության դավանությունը, Նարեկացին այստեղ անցնում է եկեղեցու կարգի ու խորհրդի դավանության շարադրմանը՝ պարզ ու մեկնողական, բացատրական ոճով: Հոգևոր եկեղեցի ասելով՝ Նարեկացին հասկանում է հավատացյալներին, նյութական եկեղեցի ասելով՝ եկեղեցու նյութակերտ տաճարը, որը, սակայն, պաշտելի է ոչ թե որպես նյութեղեն շինվածք, ինչ աղանդավորություն կլիներ, այլ որպես աստծո բնակարան, սրբավայր, մի դուռ, որը տանում է դեպի երկնային արքայություն:

13. ...արիւն ճզաւրին աստուծոյ բաշխեալ մատուցանի յաւէտ, քան զՀաբելին՝ մահու գուժարկու—եկեղեցու մեջ, ըստ Նարեկացու միստիկ պատկերացման, հավերժորեն մատուցվում է Քրիստոսի արյունը հանուն հոգու հավիտենական կենդանության: Դա, ըստ Նարեկացու, ավելի խորին խորհուրդ ունի, քան Աբելի՝ առաջին անմեղ զոհի արյունը, որը մահ էր գուժում: Հմմտ. «Եւ ի նորոց կտակարանաց միջնորդն Յիսուս. եւ ի հեղումն արեան նորա, որ առաւել խաւսի, քան զՀաբէլին» (Եբր., ԺԲ, 24):

14. Այս դշխոյ պաշտելի՝ անշէջական եկեղեցի տայ կեանս—եկեղեցին, ըստ Նարեկացու հոգևոր կյանք է տալիս, մկրտության և կրոնական մեկնաբանման, հաղորդության խորհրդով հոգևոր կյանք է տալիս, մկրտության և կրոնական մեկնաբանման, հաղորդության խորհրդով հերքում է մահը, ինչպես կենաց ծառը, որ անկենդան տունկ է, ապաշխարության միջոցով հերքում է մահը, ինչպես կենաց ծառը, որ անկենդան տունկ է, բայց պտուղը ճաշակողին կյանք էր տալիս:

15. ...ցուպն յաղթողական—Նարեկացին այստեղ և հետո դիմում է մի շարք համեմատությունների, օգտվելով աստվածաշնչական ավանդություններից, պանծացնելու եկեղեցին: Ըստ Նարեկացու, եկեղեցին մեծազոր է մարդուց ճիշտ այնպես, ինչպես Մովսեսի ցուպը՝ Մովսեսից: Ըստ հին լուծմունքի՝ «Ոչ թէ փայտն պատուական էր, քան զՄովսէս, այլ խառնեալ ընդ նա աստուծոյ զօրութիւնն՝ յաղթող գաւազանացն եգիպտացոց և օժանդակ Մովսէսի» (ձեռ. 5650,

էջ 418ա)։ Մովսեսի ցուպը թեև իր էր, բայց աստվածային իր ներգործությամբ օգնում էր հրաշքներ գործելու։ Եկեղեցին մեծ է մարդուց, ինչպես Մովսեսի ցուպը՝ Մովսեսից (համտ. Ելք, Դ, 1—5, 17)։

16. ...զաւազանն խոճճղական ծաղկեցեալ—*Նարեկացին շարունակում է իր համեմատությունները. եկեղեցին առավել է բանականից, մտածող էակից, ճիշտ այնպես, ինչպես Ահարոնի գավազանը, չոր փայտե մի իր, որը դրված լինելով վկայության խորանում ծաղկեց ու պտղաբերեց մի գիշերվա ընթացքում (տե՛ս Թիվ, ԺԷ, 8)։*

17. ...գետաճեռծ մաշկեակն սֆանչելաճրաշ—*նույն տրամաբանությամբ՝ եկեղեցին գերազանց է մարդուց, բանականից, ինչպես Եղիայի և Եղիսեոսի մաշկեղեն վերարկուն, որը հրաշագործորեն օգնեց նրանց անցնելու Հորդանան գետը (համտ. Դ Թագ., Բ, 8, 14)։*

18. Աւգնութիւն պարգեւէ կրկին ամենակատար սրբասնեալ ձեռաց մաւրաբար—*եկեղեցին քահանայական ձեռքը կրկնակի զորեղ է դարձնում շնորհի բաշխմամբ, քան այն ձեռքը, որ զենք է կրում։ Ըստ Գ. Ավետիքյանի՝ «Թուի ակնարկել ի վէման, որք ընդ բազկօքն Մովսէսի եդեալ, զօրացուցանէին զձեռս նորա ընդդէմ Ամաղեկայ» (տե՛ս Ելք, ԺԷ, 12)։ Այսպես եկեղեցի թեև ի վիմաց շինեալ, օգնութիւն պարգեւէ ձեռաց քահանայից՝ կրկին կատարելութեամբ, քան զոր տայր վէմն մովսիսեան» («Նարեկլուծ», էջ 396, ծնթ. 61)։*

19. ...գրեալ յաճուաճէ—*գրեալ բառը չունի Բուենոս Այրեսի 1948 թ. հրատարակությունը թե՛ բնագրում և թե՛ թարգմանության մեջ («Նարեկ. Մատյան ողբերգության», էջ 279), որը հավանաբար դուրս է մնացել վրիպակաբար։ Բառն անտեսված է նաև Թ. Գուշակյանի թարգմանության մեջ («Նարեկ աղոթամատյան», էջ 254—255)։*

20. ...ոչ բողացուցանէ երկիցս մատչել յըմբռնումն ոտից կենդանատուաց—*ինչպես Հիսուսը թույլ չտվեց Մարիամ Մագդաղինացուն երկրորդ անգամ իր ոտքը համբուրելու, քանի որ նա ցանկանում էր շոշափել այն՝ աներկբայորեն հավատալու համար (տե՛ս Մատթ., ԻԸ, 9 և Հովհ., Ի, 17), այնպես էլ եկեղեցին արգելում է մեկ օրվա մեջ երկու անգամ սուրբ հաղորդություն ընդունելու, քանի որ պետք է հավատալ մեկ և աներկբա հավատով։*

21. ...փախչի ի նենգութենէ—*եկեղեցին, Սուրբ Հոգու նման, որպես նրա աշակերտ, փախչում է նենգությունից, համտ. «Զի Սուրբ Հոգին իմաստութեան փախիցէ ի նենգութենէ» (Իմաստ., Ա., 5)։*

22. ...ո՛չ Մովսէս ընդ Բեսելիէլ—*ըստ Աստվածաշնչի՝ Բեսելիելը վկայության խորանի ճարտարապետն էր (տե՛ս Ելք, ԼԱ, 1—11)։ Նարեկացու մատուցմամբ՝ եկեղեցին ոչ թե մարդկային պարգևներով է հանդերձավորված վկայության խորանի նման, որը կերտել է Բեսելիելը և զարդարել Մովսեսը, այլ նա զարդարված է Սուրբ Հոգու և Քրիստոսի շնորհներով։*

23. ...զտապանակն անխաւս—*ուխտի տապանակ էր կոչվում ոսկեպատ այն արկղը, որի մեջ, ըստ Աստվածաշնչի, պահվում էին Սինա լեռան վրա Մովսեսի ստացած աստվածագիր տախտակները (տե՛ս Ելք, ԻԵ, 22, ԼԴ, 29)։ Ուխտի տապանակը, լուսեղեն ամպի ձևով, առաջնորդում էր հրեաներին (տե՛ս Հեսու, Գ, 3) դեպի ավետյաց երկիրը, եկեղեցին էլ այդպես հավատացյալներին է առաջնորդում դեպի երկնային երանություն։*

24. Ընդ Ոզիէլի անդուստ սատակէ—*Ոզիել (Սուրբ Գրքում՝ Ոզա) անվան ձևը վկայված է փոքր մարգարեությունների նախադրության մեջ. «Ոզիէլ առ Յովսաբատաւ» (տե՛ս «Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանաց», Վենետիկ, 1805, էջ 526), որին և, հավանաբար, հետևել է Նարեկացին։ Ուխտի տապանակը հրեաները տեղափոխում էին սայլով (տե՛ս Ա Թագ., Զ, 10—11)։ Եվ ահա, մի անգամ, տեղափոխելու ժամանակ, այն թեքվում է, իսկ Ոզիելը, երկմտելով, որ կարող է ընկնել, փորձում է ուղղել։ Անսուրբ ձեռքերով ուխտի տապանակին դիպչելու հանդգնության և երկմտանքի համար աստված պատժում է Ոզիելին, և նա «մեռաւ անդէն առ տապանակին տեառն առաջի աստուծոյ» (Բ Թագ., Զ, 7)։ Եկեղեցին, ըստ*

Նարեկացու, պատժում է բոլոր նրանց, ովքեր Ոզիելի նման սրբությամբ ու հավատով չեն մոտենում նրան։

25. Ո՛չ լեզուաւ մարմնոց, այլ բանիւ ճրեշտակաց խաւսի—*Նարեկացին դիմում է հակադրությունների՝ եկեղեցու միստիկ խորհուրդը փառաբանելու համար։ Եկեղեցին ոչ թե մարդկային, մարմնական, նյութեղեն լեզվով է խոսում, այլ հրեշտակների միջոցով, նրանց աննյութեղեն լեզվով։ Եկեղեցին նյութեղեն ականջ չունի, բայց լսում է մարդկային պաղատանքը, հողաբաշխ ձայն չունի, բայց Հիսուսի գործերն ու պատգամներն է բարեհռչակում, թրթռուն շնչափող չունի, բայց ներգործում է աստվածային կենդանի շնչով, ջիղ ու ոսկորներից չէ կազմված, բայց ինչպես ուխտի տապանակը, որին երկու հազար կանգուն հեռավորությունից էին հետևում հրեաները անապատում (տե՛ս Յեսու, Գ, 4), այնպես էլ եկեղեցին իրենից հեռու է վանում մեղքի ախտերով բռնվածներին։*

26. Նոյն իսկ էութիւնն աստուծոյ մարմին եղելոյ—*ակնարկում է Քրիստոսին, որը, ըստ Պողոս առաքյալի, կոչվում է վէմ (տե՛ս Ա Կորնթ., Ժ, 4)։ Նարեկացին վեմ արտահայտությունը եզր է դարձնում Քրիստոսի կողից, խաչափայտի վրա, բխած արյունը և Մովսեսի գավազանով Քորեբ լեռան վրա քարից բխած աղբյուրի հետ համեմատելու համար։ Հավատացյալներն իրենց հոգու փրկության ծարավը հագեցնելու են Քրիստոսի կողից բխած արյան խորհրդով։*

27. Ոչ Սողոմոն կամ Զօրաբաբէլ—*ըստ Նարեկացու միստիկ ըմբռնման, Քրիստոսի եկեղեցին ոչ թե մահկանացու մարդկանց կողմից է մտահղացվել ու նախագծվել, ինչպես Սողոմոնի (տե՛ս Գ Թագ., Ե, 5) կամ Զորաբաբելի (տե՛ս Եզր., Գ, 8 և Զաք., Դ, 9) կառուցած տաճարները՝ աստծո տները, այլ աստծո կողմից։ Ուստի եկեղեցու խորհուրդն առավել է, քան հին տաճարներինը։*

28. Ոչ աննուիրական, ճաստրականաշակ իւղով—*աստվածաշնչական ավանդության համաձայն, Հակոբ նահապետը սովորական յուղով օծում է մի վեմ և կոչում աստծո տուն (համտ. Ծննդ., ԻԸ, 19), մինչդեռ եկեղեցին աննվիրական, սովորական այդ յուղով չէ օծվում, այլ, պատարագի խորհրդով, Քրիստոսի արյամբ և որ եկեղեցին ոչ թե երկրային նյութից կերտված տուն է սոսկ, այլ աստվածային լույսից բաղկացած երկնային մարմին, որ առաջնորդում է հավատացյալին դեպի երկնային արքայություն։*

29. ...մոռացումն առնէ—*եկեղեցու խորհուրդը, ըստ Նարեկացու, այլ է, տաճարինը՝ այլ։ Այնտեղ կուռք էին պաշտում, այստեղ՝ ամենակալ աստծուն։ Քրիստոնեական աստվածապաշտությունը խորտակեց կռամոլության պաշտամունքը, նրանց բազմաստվածությանը հակադրեց Սուրբ Երրորդության հավատը։ Նարեկացին այստեղ հակադրվում է աղանդավորական պավլիկյան և թոնդրակյան այն հայացքներին, ըստ որոնց եկեղեցին այլ բան չէ, քան հեթանոսական տաճարի կամ մեհյանի փոխակերպություն։ Այս խորհրդածությունները մասամբ արձագանքում են Հովհան Օձնեցու՝ պավլիկյանների դեմ գրած գործին։ Հատկապես համեմատելի է հետևյալ արտահայտությունը. «Այլ ոչ եթէ ընդ ձեռն այնոցիկ և համապաշտօն հեթանոսացն. զի նոցա մեհեանքն կոոցն ընդունարանք Հինեալ լինէին, իսկ եկեղեցիք բարեպաշտացն տաճարք աղօթից և խնդրուածոց, և ժողովարանք որոց առ աստուած մերձենալ կամիցին» («Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 39—40)։*

30. ...ո՛չ ունի տեղի գլխոյն ճանգստեան տէրն բոլորից—*(համտ. Մատթ. Ը, 20)։*

31. *Այստեղ կա քերականական անհամաձայնություն.* որով *հարաբերականը եզակի է,* առհասարակ *հարաբերյալը՝ հոգնակի։ Անհամաձայնության այս դեպքերը հատուկ են* առհասարակ *գրաբարին (համտ. «Ապա Տիրիթն... բազում վարձէր իւր օգնականս և սատարս, որով* [illegible] *Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1888, էջ 119, Դպրութիւն Դ, Գլ. ԺԵ)։*

32. ...փայլականն առակ—ըստ Մատթեոս ավետարանչի՝ Հիսուս Քրիստոսը գալու է արևելքից՝ փայլակի նման (հմմտ. Մատթ., Ը, 20), դրա համար էլ հավատացյալները երկրպագում և աղոթում են նրան՝ երեսները դեպի արևելք։

33. $Պ_3$-ը, ինչպես նաև Պոլսի 1782 և 1789 թթ. տպագրերն ունեն և զիտ: Մեր օգտագործած ձեռագրերից և ոչ մեկը և չունի։ Հավանաբար հրատարակիչների հավելումն է։

34. Ակնարկութիւն—$Պ_4$-ը և նրանից ծագող տպագրերն ունեն ակնկալութիւն: Տարընթերցվածը հին տպագրերից հայտնի է եղել Գ. Ավետիքյանին (տե՛ս «Նարեկլուծ», էջ 402, ծնթ. 98)։ Մեր օգտագործած ձեռագրերից միայն Ս-ն ունի ակնկալութիւն: Վերականգնում ենք ակնարկութիւն ընթերցվածը, որն այստեղ գործածված է ազդումն նշանակությամբ։

35. ...դուռն Երկնից—տե՛ս Ծննդ., ԻԸ, 17։

36. ...քաղաք աստուծոյ կենդանւոյ—տե՛ս Եբր., ԺԲ, 22։

37. ...մայր կենդանեաց, ազատ ի պարտեաց—հմմտ. Գաղ., Դ, 26։

38. ...Երեւակիս—միայն Բուենոս Այրեսի 1948 թ. հրատարակությունն ունի և Երեւակիս: Եւ-ը թերևս տպագրական վրիպակ է։ Ոչ մի ձեռագիր չի տալիս այդ ընթերցվածը։

39. Այն իմ հաւատ յԵրրորդութիւնն—այս գլուխն ունի դավանաբանական բովանդակություն. առաջին մասը (տ. 1—104) նվիրված է Սուրբ Երրորդությանը, երկրորդ մասը (տ. 105—282)՝ եկեղեցու խորհրդին։

Գ. Ավետիքյանը գտնում է, որ այն ասելով Նարեկացին նկատի ունի գլխի առաջին մասը, այս ասելով՝ երկրորդ մասը («Նարեկլուծ», էջ 403, ծնթ. 99)։

ԲԱՆ ՀԶ

1. Գլխի համար Ծ ունի լուսանցային նշում. «Հիւանդի է» (էջ 215բ)։

2. ...Քո է հատուցանել պտուղ քաղցրութեան: Թվում է՝ Նարեկացին ակնարկում է ավետարանական «Մի՛ կալ հակառակ չարին» (Մատթ., Ե, 39) պատվիրանը, որը համարում է կյանքի նորոգ և զարմանալի կանոն («Նորոգ եւ զարմանաւոր կանոնաց կենաց») և ոչ թե հարասում է «...չգիտիցե՞ս զի քաղցրութիւնն աստուծոյ զքեզ յապաշխարութիւն ածէ» (տե՛ս Հռովմ., Բ, 4) արտահայտությունը, ինչպես կարծում է Հ. Նալյանը (տե՛ս «Գիրք մեկնութեան» էջ 548, ԼԳ, ԼԶ գլխի մեկնությունը)։

3. ...Բարի առնելն ատելեացն եւ աղօթս ի վերայ հալածչին—Նարեկացին հարասում է Քրիստոսի պատվիրանը՝ ըստ Մատթեոսի. «...Սիրեցէ՛ք զթշնամիս ձեր, օրհնեցէ՛ք զանիծիչս ձեր, բարի արարէ՛ք ատելեաց ձերոց, և աղօթս ի վերայ այնոցիկ, որ լլկեն զձեզ և հալածեն» (Մատթ., Ե, 44)։

4. Հմմտ. Ողբք Երեմ., Դ, 20։

5. Հմմտ. Սաղմ., ԻԹ, 8։

6. Հմմտ. Իմաստ., Ա, 13։

7. Հմմտ. Եզեկ., ԺԸ, 32։

8. Այս ընթերցվածի փոխարեն $Պ_4$-ը գլխավոր տարընթերցվածների ցանկում ունի «երէ և կակղեսցես զկարծր բնութեան» տարընթերցվածը, որը չեն տալիս ո՛չ մյուս տպագրերը և ո՛չ էլ մեր օգտագործած ձեռագրերը։

ԲԱՆ ՀԷ

1. Գլխի համար որոշ ձեռագրեր ունեն լուսանցային նշումներ. «Աղաւթք երկրորդ Մեծի ուրբաթին. առաջին աղաւթքն յ. ԼԶ. է» (I—էջ 354), «Աղաւթք երկրորդ Մեծի ուրբաթին. առաջին յ. ԼԶ. է»(ա—էջ 239բ, դ—էջ 499, ս— էջ 151բ), «Աղաւթք Մեծի ուրբաթին» (T-էջ 220ա), «Մեծի ուրբաթին. միւսն յ. ԼԶ. է, գիտ» (ծ—էջ 217բ), «Աղաւթք երկրորդ Մեծի ուրբաթին» էջատակին՝ «Մեծի ուրբաթին» (γ—էջ 183ա), «Եւ ի խորհուրդ Ուրբաթի մեծի» (L—էջ 235բ), «ի խորհուրդ Մեծի ուրբաթին» (P—էջ 159բ), «ի խորհուրդս Ուրբաթուն մեծի» (I— էջ 107բ), «Աւաք ուրբաթին» (S—էջ 87ա), «Վասն Աւագ ուրբաթին», էջատակին՝ «յԱւագ ուրբաթն» (s—էջ 229ա)։ Լուսանցային այս նշումների մեջ ընդհանուր է այն, որ գլուխը նվիրված է Մեծ կամ Ավագ ուրբաթի՝ Հիսուսի խաչելության օրվա խորհրդին։ Նույն նյութին է նվիրված նաև ԼԶ գլուխը։ Լուսանցագրությունները հիմնականում արտածված են Նարեկացու այստեղ ասված այն խոսքից, որ ինքը «զայս նուագ ձայնի նեծութեան» գլուխը գրել է «սարսափելի ուրբաթու Մեծի պասեքիս» (տ. 6)։

2. ...կրկնակի քացախ՝ զանգեալ ընդ լեղւոյ—ըստ Մատթեոսի՝ խաչելուց առաջ Հիսուսին լեղիի հետ խառնած գինի են տալիս ըմպելու (տե՛ս Մատթ., ԻԷ, 34), ըստ Մարկոսի՝ զմուռսով խառնած գինի (տե՛ս Մարկ., ԺԵ, 23), ըստ Հովհաննեսի՝ քացախ (տե՛ս Յովհ., ԺԹ, 29), իսկ խաչափայտի վրա՝ սպունգով ծծված քացախ։ Նարեկացին երկու դեպքի համար էլ քացախ է ասում։

3. Խաչելության տեսարանի այս դրվագները Նարեկացին տալիս է ըստ ավետարանիչների՝ անուղղակի հարասությամբ (հմմտ. Մատթ., ԻԷ, 27—31, Մարկ. ԺԵ, 24—32, Ղուկ., ԻԳ, 35—39, Յովհ., ԺԹ, 23—30)։

4. Հմմտ. Ծննդ., ԻԲ, 13։

5. ...զկատարումն մարգարէից՝ իբր զհամառօտիչ գրեցելոցն—Քրիստոսը ըստ ավետարանիչների, եկել էր ոչ թե մերժելու մարգարեներին, այլ համառոտելու և լրացնելու ավետարանական իր ճշմարտությունները (հմմտ. Մատթ., Ե, 17։ Հռովմ., Թ, 28)։

6. Հմմտ. Եբր., Ա, 3։

7. Հմմտ. Գաղ., Գ, 13։

8. Հմմտ. Ես., ԾԳ, 5։

9. Հմմտ. Ա Տիմոթ., Գ, 16։

ԲԱՆ ՀԸ

1. Ըստ ավետարանական ավանդության, մատնության գիշերը Հիսուսի մարմնից հոսում են քրտինքի և արյան խառն կաթիլներ՝ մահվան ու չարչարանքների նախազգացման երկյուղից (տե՛ս Ղուկ., ԻԲ, 43—44)։ Այս ավանդությունը դավանաբանական գրականության մեջ Քրիստոսի մարդեղության խորհրդի, նրա բնության մարդկային և աստվածային էության, նրա մարմնի ապականության և անապականության և այլ հարցերի բուռն վեճեր է հարուցել։ Նրա մարմնի ապականության և անապականության և այլ հարցերի մասին։ Հայ իրականության մեջ այդ խնդիրն առանձնապես հուզել է Հովհան Մայրագոմեցուն։ Նա գտնում էր, որ Քրիստոսը մի անձն և մի բնություն ուներ, որ նրա մարմինը մարդկային մարմնի նմանություն ուներ միայն, որ նա «թէպէտև յապականութենէ մարդկան զգեցաւ մարմին, ինքն միշտ անապական ասի, ապականացու և ոչ երբէք», որ «...կատարեալ աստուած և կատարեալ մարդ իմանամք Քրիստոս, բայց երկու անձինս և երկու բնութիւնս ոչ ասեմք», որ, հետևաբար, «...արենաքիրտն լինել արտաքոյ է ամենայն բնութեանց. ո՞ մարթի հաւատալ. քանզի աստուած և մարդ եթէ գիտեմք զՔրիստոս» (տե՛ս «Կնիք հաւատոյ», էջ-

*միածին, 1914, համապատասխանաբար՝ էջ 144, 145, 328)։ Ելնելով Քրիստոսի մարդեղու-
թյան իր ըմբռնումից, Մայրագոմեցին չի ընդունում Ղուկասի ավետարանի այդ վկայությանը
բնագրային վավերականությունը։ Նարեկացին, սակայն, մեկ անգամ չէ, որ վկայակոչում է
ավետարանական ավանդությունը՝ Քրիստոսի կրած մարդկային տառապանքներն ընդգծելու
համար (տե՛ս նաև բան ԿԶ, տ. 103—104)։*

2. Եւէ զկանոն նամաձեւութեան ատրինին փոխեցեր—*ըստ Գ. Ավետիքյանի՝ համաձև
կանոն ասելով Նարեկացին նկատի ունի «զկանոն օրինացն, որ յառաջ յանցանացն շափէր
զպատիժն, ասելով. Ակն ընդական. կամ հրամայէր. Անձն որ մեղիցէ՝ նոյն և մեռցի» և կամ
այն բնական կանոնը, թե՝ «ի մեռանիլ մարդոյ՝ հարկ է եղծանիլ անձինն» (տե՛ս «Նարեկ-
յուծ», էջ 413, ծնթ. 6)։ Ավելի պատշաճ է երկրորդ բացատրությունը. Քրիստոսը մահը փոխեց
կյանքի։ Նա մեռավ մարդկային բնությամբ՝ կենդանի մնալով աստվածային էությամբ։ Նա
անմահ էր, բայց մահկանացու մարմին զգեցավ՝ իր մահվամբ մահկանացու բնությունը ան-
մահ դարձնելու՝ աստվածացնելու համար։ Եթե Քրիստոսը փոխեց մահվան ու կյանքի հա-
մաձևության կանոնը, ապա որքան դյուրին է մեղքերից քավել բանաստեղծին,—ահա Նարե-
կացու հիմնական միտքը։*

3. Մի՛ գրեր ի դպրութեան կենաց մատենիդ—*կենաց մատյանի, կյանքի գրքի հավատքը
գալիս է նախաքրիստոնեական հին դարերի այլաբանական պատկերացումներից։ Այդ հա-
վատքի համաձայն՝ աստված մատյանի մեջ գրում է մարդկանց անունները, նրանց չար ու
բարի գործերը, նրանց ճակատագիրը։ Այդ արտահայտությունը կա սաղմոսում. «Ջնջեսցին
նոքա ի դպրութենէ քումմէ կենաց և ընդ արդարս քո մի՛ գրեսցին» (Սաղմ., ԿԸ, 28)։ Քրիս-
տոնեական կրոնը որդեգրեց այդ պատկերացումը՝ նոր երանգավորմամբ։ Վերին դպրության
այդ գրքում գրվում են արդարների և մեղավորների անուններն ու արարքները՝ վերջին դա-
տաստանի օրը նրանց «ըստ գործոց իւրեանց» (տե՛ս Յայտ. Յովհ., Ի, 12) դատելու համար։
Այդ արտահայտությունները Նարեկացին օգտագործում է մի քանի անգամ. «Եւ անուանս
գիր՝ ի կենաց մատենէն եղծեալ» (բան ԻԳ, տ. 57), «Մի՛ գրեսցես աջովդ աւրհնութեան ի
մատենիդ կենաց զմուրհակ պարտուց իմոցս անիծից» (բան ՀԴ, տ. 64—65), «...եւ դուք եղիջիք
գրեալ ի մատեանս կենաց վերին դպրութեանն» («Յիշատակարան», տ. 27—28)։*

4. ...Նոր նաստատեսցի գոյութիւն բնութեանս—*մարդու բարոյական վերափոխության իր
հայացքներով Նարեկացին հարում է նոր պլատոնականության գաղափարներին։ Մարդկային
բնությունը կարող է վերափոխվել ու նորոգվել մարմնավորի փոխարեն հոգևորի նախընտրու-
թյամբ, չարիքների փոխարեն հոգում բարիքներ սերմանելով, զգայությունները մտքին և
միտքը աստվածային էությանը ստորադասելու միջոցով։ Կատարյալ մարդու այս ըմբռնումը
Նարեկացին առավել ցայտունությամբ արտահայտել է իր Երգ երգոցի մեկնության մեջ.
«Այս է ստուգապէս գեղեցկութիւն մարդոյ, որ զամենայն զգայութիւնս աստուծոյ ծա-
ռայեցուցանէ և աստուածացուցանէ զնոսա՝ յաստուած մերձենալով, աստուածային
գործոցն հաղորդեալ» («Մատենագրութիւնք», էջ 345)։ Մարմնի ցանկություններից, կրքերից
զգացմունքներից հրաժարվելով և մեղքերի քավությամբ աստվածային էությանը մերձենալն
է այն ուղին, որով կարող է մարդը վերածնվել և միանալ ու ձուլվել աստվածային էությանը՝
հավիտենական երանության ու երջանկության հասնելու համար։ Նարեկացին մեկ անգամ չէ,
որ պաշտպանում է նոր պլատոնականության այս գաղափարը. մարդն իր հոգեկան և մտավոր
գործունեությամբ պետք է ձգտի նմանվել և մերձենալ աստծուն՝ նրա հետ հավիտենապես
ձուլվելու «աստուած իսկ» դառնալու համար։ Նոր պլատոնականության այս գաղափարը Նարե-
կացին կարող էր վերցնել Դավիթ Անհաղթից։ «Եւ պարտ է գիտել,—գրել է Դավիթ Ան-
հաղթը,—թէ վասն այսորիկ է իմաստասիրութիւն. վասն զարդարելոյ և պաճուճելոյ զմարդկա-
յին հոգիս, և փոփոխելոյ զնա ի նիւթային և ի մառախղուտ կենցաղոյս յաստուածային և
յաննիւթացն» («Սահմանք իմաստասիրութեան», Երևան, 1960, էջ 156)։*

ԲԱՆ ՀԹ

1. *Գլխի համար մի խումբ ձեռագրեր ունեն լուսանցային նշումներ. «Դատաստանի է»
(Տ—էջ 88բ), «Վասն հանդերձեալ դատաստանին»(Շ—էջ 187բ), «Դատաստանի է» (Ծ—էջ
222բ), «Սոյն գլուխ ասելն միշտ օգուտ է» (Ւ—էջ 215բ), «Ի յօրն վերջին», «Ի դատաստանն
ահագին», «Ի հատուցումն գործոց» (Ց—համապատասխանաբար՝ էջ 234ա, 235ա, 236ա)։*

2. ...վրիպանաց—*միայն Բուենոս Այրեսի 1948 թ. հրատարակությունն ունի վրիպակա-
նաց։ Մեր օգտագործած ձեռագրերից ոչ մեկը չի տալիս այդ տարընթերցվածը։ Հավանաբար
տպագրական վրիպակ է։*

3. ...զորդիս զենենին—*հմմտ. Մատթ., ԻԳ, 15։*

4. *Սկսած Պ₄-ից Մատյանի հետագա բոլոր հրատարակությունները, բացի Պոլսի 1782 և
1789 թթ. տպագիրներից,* բառն ունեն զամօրոյս *ձևով։ Մեր ձեռագրերից ոչ մեկը չի տալիս
այդ տարընթերցվածը։*

5. Սարսափելի *մակդիրը կա նաև տ. 29-ում՝* կշտամբանքն սարսափելի: *Այսպիսի կրկնու-
թյունը հատուկ չէ Նարեկացուն։ Տողերից մեկում, ավելի հավանական է տ. 34-ում, սպասելի
էր, որ լիներ այլ մակդիր։ Գ. Խաչատուրյանը կրկնաբանությունից խուսափելով՝ այս դեպքում
թարգմանել է* անեծքն զարնուրելի *(«Նարեկ. Մատեան ողբերգութեան», էջ 198)։*

6. Որ ընդ գալարելն երկնի—*ահեղ դատաստանի օրվա պատկերը Նարեկացին գծում է
մասամբ հարասելով Հովհաննես ավետարանչի տեսիլքը (տե՛ս Յայտն. Յովհ., Զ, 12—14)։
Այդ օրը, ըստ Նարեկացու, նորոգվելու են բոլոր տարրերն ու գոյացությունները՝ ստանալով
նոր ու անեղծ կերպարանք, հալվելով ու մաքրվելով հրում։*

7. *Այս տողում* ծովու *բառի փոխարեն* H *ունի* ճատվու *տարընթերցվածը։ Կեղծ այդ բառը
ակներևորեն առաջացել է գրչի անուշադրության հետևանքով. տ. 37-ի* ճատակիս *բառի* ճատ
վանկը միացվել է տ. 38-ի ծովու *բառի* վու *վանկի հետ՝ կազմելով անիմաստ տարընթերցված։*

8. ... ճարպէ զլերինս—*հմմտ.* «...զլերինս ճարպեցից» *(Ես., ԽԵ, 2)։* Հալէ *ընթերցվածի
փոխարեն մի շարք ձեռագրեր ունեն* ճալէ *(տե՛ս տողի տարընթերցվածները)։* Հալէ *տար-
ընթերցվածը կարող էր ծագել* զլերինս ճալէ *(բան ԺԵ, տ. 68) արտահայտության ազդեցու-
թյամբ (տե՛ս բան ԺԵ, ծնթ. 6)։ Հիշողության հետևանքով առաջացած այդպիսի տարընթերց-
ված է մեր AO ձեռագրերի տ. 78-ի* երեւեցուցանեն *փոխանակ* մատուցանեն *տարընթերցվածը։
Նախորդ՝ 77-րդ տողի* երեւեցուցանեն *բառը գրիչները հիշողությամբ գրել են, անտեսելով
ճիշտ՝* մատուցանեն *ընթերցվածը։*

9. ...եւ ճալեալ հրդենին բնութիւնք վիմաց—*հմմտ. Բ Պետր., Գ, 12։*

10. Որ զանբաւութիւնս բուոց պարագրէ—*յոթ թիվը, ի թիվս խորհրդապաշտական այլ
թվերի, հին ու միջին դարերում ուներ նաև անբավության, անսահմանության, հավի-
տենականության իմաստ (տե՛ս բան ԼԱ, ծնթ. 3)։*

11. *Նկատի ունի Ամովս մարգարեին։*

12. *Հմմտ. Ա Կորնթ., ԺԵ, 54—55։*

13. *Հմմտ. Մատթ., ԻԵ, 11—13։ Ղուկ., ԺԳ, 25։*

14. *Հմմտ. Ա Կորնթ., Գ, 13։*

15. *Հմմտ. Բ Կորնթ., Թ, 6։*

16. *Ըստ Նարեկացու՝ վերջին դատաստանի օրը հառնելու է Նոյի տապանը՝ դատապար-
տելու համար առաջին հանցապարտներին, որոնք մեղանչեցին բնական օրենքի դեմ։ Հառ-
նելու է նաև կտակարանը՝ մովսիսական օրենքների քարե տախտակները, մեղադրելու համար
ամստվածանարգ հին հրեաներին, որոնք խաչեցին Քրիստոսին։ Եվ, վերջապես, հառնելու է
խաչը՝ ներկա («այժմուցս») քրիստոնյաներին դատելու համար։ Այդ երեքն էլ միասին ամ-
բաստանելու են բանաստեղծին որպես մարդկության մեղքերը կրողի։ Նույը հանդիմանելու է*

նրան հայրենի ուխտը՝ բնական օրենքը դրժելու, Մովսեսը՝ վկայության խորանն անարգելու և խաչը՝ Քրիստոսի փրկագործ արյունը հոգու կյանքի նպատակ չդարձնելու համար: Հավիտենապես դատապարտված լինելու այդ մռայլ տրամադրությունը այստեղ հասել է իր բարձրակետին. Զիա՞րդ մխիթարեցայց նամառատեալս յուսոյ:

ԲԱՆ Ձ

1. Այս գլխի համար մի խումբ ձեռագրեր ունեն լուսանցային նշումներ. «Աստուածածնին» (Տ—էջ 90ա, Տ—էջ 226ա), «Մաղթանք ի սուրբ Աստուածածինն» և «Յովհաննէս կրաւնաւորն է. աղաչէ զԱստուածածինն» (Դ—էջ 513, Աստվածամորը և Հովհաննես գրչին պատկերող մանրանկարի տակ), «Բան յԱստուածածինն» (Ք—էջ 239ա) «Ի սուրբ Աստուածածինն» (Տ—էջ 237ա և էջ 238ա): Գլուխը, ինչպես նվիրված է Աստվածամորը: Նշումների համար հիմք է հանդիսացել Նարեկացու իր իսկ արտահայտությունը. «Աղաչեմ զՔեզ, սուրբ Աստուածածին» (տ. 5): Նախորդ գլխում գծելով ահեղ դատաստանի պատկերը, բանաստեղծը մատնվում է խորին հուսահատության: Այստեղ, սակայն, նա վերստին փարվում է փրկության հույսին՝ ապավինելով Աստվածամոր բարեխոսությանը:

2. Հրեշտակ ի մարդկանէ, մարմնատեսիլ Քերոբէ—Նարեկացին մեկ անգամ չէ, որ իր ստեղծագործության մեջ անդրադարձել է Աստվածամոր կերպարին: Ձգտելով նրան ներկայացնել ամեն անգամ նոր մակդիրներով ու փոխաբերություններով, Նարեկացին, սակայն, երբեմն օգտագործում է առանձին արտահայտություններ, որոնք մասամբ կրկնում են իրենց: Ահա, օրինակ, մի հատված Աստվածամորը նվիրված Նարեկացու ներբողյանից.

Ի մարդկային զարմէ հրեշտակ երկնային,
Յեղծականաց սեռից անմահ սերովբէ,
Ի հողային նիւթոյ ոսկի սափերայ,
Ի ծովային բերմանց շնորհալոյս մարգարիտ,
Ի յեսսեանն բուսոյ քաղցրապտուղ ծաղիկ,
Ի յաւուրց նախնեաց հին օրհնութեան,
Յօղոյն հանդարտի ամպ անձրեւածիր,
Արեւուն ծագման ակն արփիափայլ,
Մերկացելոյ այգոյն աստղ առաւօտի...

(տե՛ս Գրիգոր Նարեկացի, «Մատենագրութիւնք», Վենետիկ, 1840, էջ 414—415):

3. Համտ. Ծննդ., Դ, 24:

4. ...Զքանն իմ նախնի մեծիդ ներբողի—խոսքը «Գումարք խմբից» սկսվածքով ներբողի մասին է՝ նվիրված Աստվածամորը (տե՛ս Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, էջ 412—420): Այդ ներբողյանը Նարեկացին գրել է Ապարանից խաչի պատմությունից (983 թ.) հետո և «Մատյան ողբերգության» երկից (1002 թ.) առաջ, բայց ե՞րբ, հայտնի չէ ստույգ: Գ. Ավետիքյանը հավանական է համարում, որ այն «իբր ի թուականին ՆԼԴ [985] կամ ՆԼԶ [987] գրեալ իցէ» (տե՛ս «Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկացւոյ երկրորդ մատեան ճառից», Վենետիկ, 1827, էջ 8) և կամ «իբր 18 կամ 20 ամօք յառաջ արարեալ քան զաղօթն (այսինքն՝ «Մատյան ողբերգության» երկը), որ կատարեցան ի թուին ՆԾԱ [1002] կամ ՆԾԲ [1003]» (տե՛ս «Նարեկլուծ», էջ 424, ծնթ. 7): Գ. Խաչատուրյանը պարզապես նշում է, որ այդ ներբողյանը «նախքան Նարեկը խմբագրած է ի պատիվ Աստվածածնին՝ Վանա լճի Առտեր կղզին մեջ իր ունեցած մեկ տեսիլեն ներշնչված, ըստ ավանդության» (տե՛ս «Նարեկ. Մատեան ողբերգութեան» էջ 276): Այս ավանդության մասին տե՛ս ԻԷ գլխի 14-րդ ծանոթագրությունը: Թեև Նարեկացին չի գրել իր ներբողյանի թվականը, սակայն հենց այն հանգամանքը, որ Ապարանից խաչի պատմությունը Նարեկացին գրել է Մոկաց Ստեփանոս եպիսկոպոսի խնդրանքով և ապա դրան կցել թե՛ խաչի և թե՛ Աստվածածնի ներբողները («Ի սոյն կարգ դասեալ իբր միաշար խորհրդոյ տեսակ՝ ընդ ներբողինի խաչիս խորհրդոյ և զգովեստ երգարանութեան Տիրուհւոյդ»), ցույց է տալիս, որ դրանք ևս պետք է գրված լինեին նույն՝ 983 թվականին:

ԲԱՆ ՁԱ

1. Գլխի բովանդակության համար որոշ ձեռագրեր վերնագրի դիմաց կամ տողատակին ունեն լուսանցային նշումներ՝ «Հրեշտակաց»(Տ—էջ 90բ, Թ—էջ 226ա), «Հրեշտակապ[ետաց]» (Ծ— էջ 228ա), «Ի հրեշտակսն աստուծոյ», «Առ սուրբ հրեշտակսն», «Առ հրեշտակսն լուսոյ» (Տ—էջ 239ա, 240ա, 241ա):

2. Որք եւ պտղակորոյս տնկոյ թզենոյն՝ եռամեանն դատարկութեամբ—ակնարկվում է այն թզենին, որը, ըստ ավետարանական ավանդության, Քրիստոսի անեծքով հավիտենապես չորացել է (տե՛ս Մատթ., ԻԱ, 18—20: Մարկ., ԺԱ, 12—14, 20—21): Թզենու համեմատություն-պատկերը կա նաև Թ գլխի 18—21 և 30—33 տողերում: Եռամեանն դատարկութեամբ կապակցության նշանակությունը պարզաբանում են հաջորդ տողերը՝ «Որ զբնաւ յաւիտեանս պարունակէ ժամանակն՝ / Զանցեալն ընդ ներկայիս եւ ընդ ապառնոյն» (տ. 13—14), այսինքն՝ դա հավիտենությունն է՝ անցյալով, ներկայով և ապառնիով:

3. Միայն Բուենոս Այրեսի տպագիրը յերկարաձգելոյ բառի փոխ ունի յերկրաձգելոյ («Նարեկ. Մատեան ողբերգութեան», էջ 203): Սակայն դա տպագրական վրիպակ է, քանի որ հանդիպադիր թարգմանության մեջ գրված է երկարաձիգ բառը (նույն տեղում):

4. Բոլոր տպագիրները և մեկուկես տասնյակ ձեռագրեր սոսկալիք որոշիչն ունեն եզակի՝ սոսկալի, որի պատճառով այն ընկալվում է իբրև հաջորդ՝ դատաստանին գոյականի լրացում, այսպես՝ սոսկալի դատաստանին: Մինչդեռ ձեռագրերի մեծագույն մասը, ի թիվս որոնց և A-ն, ունի սոսկալիք, որով և այդ բառը դիտելի է վկայք գոյականի հետ՝ վկայք սոսկալիք (նկատի ունի հրեշտակներին): Այս կապակցության ճշտությունն ապացուցվում է Մատյանում առկա հետևյալ օրինակով, որտեղ հրեշտակները բնութագրվում են անողորմ բառով՝ Անողորմ են հրեշտակքն (Ը, տ. 6): Իսկ սույն՝ ՁԱ գլխի տ. 31-ում հրեշտակներն անվանվում են ճշմարտաբան դատախազք: Ճշմարտաբան, սոսկալի, անողորմ—սրանք բոլորն էլ իմաստային առումով նույն կարգի ածականներ են: Այդպիսին են, ըստ հին ըմբռնման և ըստ Նարեկացու, հրեշտակները անզղջների նկատմամբ, իսկ զղջացողների հանդեպ՝ բարեխոս (հմմտ. «Նարեկլուծ», էջ 429, ծնթ. 8):

5. Տողը Տ ձեռագրում խազագրված է (էջ 240ա): Հ. Նալյանը նշել է, որ սույն տողն առնված է ինչ-որ հեղինակից («մասամբ ինչ կցեալ յումեմնէ». տե՛ս «Գիրք մեկնութեան», էջ 620), իսկ ըստ Մատյանի ֆրանսերեն թարգմանիչ Ս. Քեչիշյանի, փոխառված է հայկական ծիսարանի՝ հրեշտակներին նվիրված տոնի կարգից (տե՛ս Grégoire de Narek, Le livre de Prières, Փարիզ, 1961, էջ 434, ծնթ. 2): Բայց արդյո՞ք այն մեջբերում է. մեզ չհաջողվեց գտնել աղբյուրը: Տողը հեռավոր կերպով հիշեցնում է Զաք., Ա, 12-ը, այն է՝ «Տէր ամենակալ, մինչև ցե՞րբ ոչ ողորմեսցիս ի վերայ Երուսաղեմի...»:

ԲԱՆ ՁԲ

1. Վերնագրի դիմաց կամ տողատակին որոշ ձեռագրեր գլխի բովանդակության համար ունեն լուսանցային նշումներ՝ «Առաքելոց» (Տ, էջ 91ա), «Առաքելոցն է» (Ծ, էջ 230բ), «Յառաքեալսն Քրիստոսի» (Տ, էջ 242ա)։

2. Ակնարկում է Քրիստոսի օրհնելն իր աշակերտներին (հմմտ. Ղուկ., ԻԴ, 50)։

3. Տե՛ս Գործք, Բ, 4։

4. Նկատի ունի իր «Ներբողեան գովեստի, ասացեալ ի համօրէն գունդս առաքելոցն երկոտասանիցն՝ նախապատիւ պետութեանցն գլխաւորաց և եւթանասուն և երկուցն սրբազան աշակերտացն Քրիստոսի» (Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, էջ 424—438) ստեղծագործությունը, որը, ինչպես ՁԲ գլուխն է վկայում, Նարեկացին գրել է նախքան իր Մատյանը, բայց որքա՞ն ժամանակ առաջ և որոշակի ո՞ր թվականին՝ հայտնի չէ։ Գ. Ավետիքյանը Առաքյալների ներբողյանի սկզբի հետևյալ տողերից՝ «Քանզի առ ձեզ և յաղագս ձեր ի դադարմանէ լռութեան շարժեալ կարգ բանիս՝ ի գովեստ փառաց մեծութեան վեհին համօրէն թեան...» (նույն տեղում, էջ 424) եզրակացրել է, որ տվյալ դեպքում հավանաբար ակնարկվում են Ապարանից խաչի պատմությունը, խաչի և Աստվածածնի եռագրություն-ներբողյանները, գրված 980-ական թթ. վերջերին կամ 990-ական թթ. սկզբներին. հետևապես Առաքյալների ներբողյանը Նարեկացին հորինել է հետագայում, որոշ ընդմիջում տալուց հետո նորից գրել վերցնելով («ի դադարմանէ լռութեան շարժեալ կարգ բանիս»), բայց մինչև 1001—1003 թթ., Մատյանն ստեղծվելուց առաջ (հմմտ. «Նարեկլուծ», էջ 434, ծնթ. 2)։

5. Միայն Ա ձեռագիրը գետոցն ընթերցվածի փխ ունի ղէտոցն քերականորեն սխալ ձևը (ղէտ բառի հոգնակի համապատասխան հոլովաձևը պետք է լինի ղիտաց)։ Տողում, «գետոցն բանականաց» կապակցության մեջ, գետ բառն, անշուշտ, գործածված է փոխաբերական իմաստով՝ «հոսանք, խումբ, բույլ» նշանակությամբ։ Թարգմանիչներից միայն Թ. Գուշակյանը, հատ ղանորեն ենթադրաբար, գետոցն բառն ուղղել-թարգմանել է ղէտեր («Նարեկ աղոթամատյան», էջ 279), որն, ինչպես տեսնում ենք, արդարացվում է Ա ձեռագրով, բայց որը, սակայն, եպիսկոպոսի իմաստ ունի և հազիվ թե բնագրին հարազատ լինի։

6. Ընդ աշակերտաց... /Եւ մարտիրոսացն ընտրելոց նահատակութեամբ—գործիականով գրված այս կապակցությունները քերականորեն առնչվում են տ. 37—39-ին. նրանց լրացյալը տ. 39-ի ընկա՛լ բայ-ստորոգյալն է, ընդ որում տ. 37-ի ոռոց հարաբերական դերանվան համար իբրև հարաբերյալ հանդես է գալիս տ. 23-ի մարտիրոսացն գոյականը (հմմտ. «Նարեկլուծ», էջ 435, ծնթ. 6)։ Այդպիսով, տ. 23-ի և 37-ի միջև ընկել են մարտիրոսացն գոյականի միտքը լրացնող և բնույթով որոշիչ երկրորդական երկու ընդարձակ նախադասություններ (տ. 24—36), որոնք նախադասության հիմնական մասի երկու ծայրերը հեռացրել են իրարից։

7. Տողը, ինչպես Գ. Ավետիքյանն է նշել, կարելի է ընկալել երկու առումով. առաջին՝ «արիարար ելան երկրից, ինչպես մարգարեն է ասել». ըստ այդմ Նարեկացին հավանաբար նկատի է ունեցել Սաղմ., ՁԴ, 6—7-ը («...ելս եդ ի մտի իւրում ի հովտէս արտմութեան»). այս դեպքում նկատի է ունեցել կա՛մ երկրորդ՝ «արիարար ելան երկրից, ինչպես մարգարեն». Եղիային (տե՛ս Դ Թագ., Բ, 11), Սամուել մարգարեին (տե՛ս Ա Թագ., ԻԸ, 13—14) և կա՛մ Եղիային (տե՛ս Դ Թագ., Բ, 11), որոնք, ըստ ավանդության, համբարձել են երկինք (հմմտ. «Նարեկլուծ», էջ 435, ծնթ. 8)։

8. Գ. Ավետիքյանի օգտագործած ձեռագրերից մեկը ճեզ տրականի փխ ունեցել է ճեր գործիական հոլովաձևը («Նարեկլուծ», էջ 435, ծնթ. 14)։ Մեր գրչագրերը չեն տալիս այդ տարընթերցվածը։

9. C ձեռագրում տ. 78—109-ի համար լուսանցքում նշված է. «Ոչ-երն գլխագիր» (էջ 174ա)։ Ուրեմն, լուսանցագրողը գիտակցել է, որ այդ տողերը չափածո են, և ընդօրինակելիս նրանց սկսվածքի Ո-ն պետք է գրել մեծատառով։

10. Հմմտ. Հռովմ., Ը, 19։

11. Հմմտ. Յոբ, ԺԲ, 10։

ԲԱՆ ՁԳ

1. Որոշ ձեռագրեր գլխի բովանդակության վերաբերյալ վերնագրի դիմաց կամ տողատակին ունեն լուսանցային նշումներ՝ «Թշնամեացն աղօթէ» (Տ, էջ 92բ), «Վասն թշնամեաց մաղթանք», «Վասն ատելեաց և սիրելեաց» (Տ, էջ 246ա, 249ա)։ Այս բնութագրումները կատարելիս լուսանցագրողները նկատի են ունեցել Նարեկացու՝ ներողամտությամբ լի դիմումները՝ բարությամբ հիշել իր թշնամիներին (տ. 11—12), չբարկանալ իրեն կշտամբողների և նախատողների վրա՝ իբրև սրբեր բամբասողների (տ. 14—18) և այլն։ Բանաստեղծը գերադասում է աղերսել թշնամիների համար, քան բարիք խնդրել իր երախտավորների համար (տ. 88—89, 99—101), որովհետև բարեգործների համար բարիք խնդրելը բնական օրենք է՝ հատուկ բոլոր մարդկանց, իսկ թշնամիների համար բարություն հայցելն այն գերագույն վեհանձնությունն է, որը, ըստ նրա, մարդուն նմանակից է դարձնում աստծուն («Աստուածականիդ է նմանութիւն». տ. 98)։

2. Հմմտ. Զաք., Բ, 15, ուր ցանկ բոցոյ արտահայտությանը համապատասխանում է «պարիսպ հրեղէն շուրջանակի» կապակցությունը։

3. Մատյանի Բունոս Այրեսի տպագիրը ռրպէս բառի փխ ունի իբրև («Նարեկ. Մատեան ողբերգութեան», էջ 209)։ Մեր ձեռագրերից ոչ մեկը և մյուս տպագիրները չունեն այդ այլընթերցվածը։ Հավանաբար տպագրական վրիպակ է, առաջացած հանդիպագիր արևմտահայ թարգմանության ազդեցությամբ։

4. Այստեղից սկսած մինչև տ. 45-ը ներառյալ Նարեկացին, անշուշտ ոչ պատահականորեն, այլ ակնհայտ նպատակադրումով, ստեղծել է ներքին հանգավորում՝ լոյս-յոյս (տ. 32), խաւար-յիմար (33), բարի-գովելի (34), չար-ապիկար (35), շնչոյս-ճոգոյս (37), բարձրեալ-զաեալ (38), տաժանաւր-վտանգաւոր (39), անարգութեան-զարշութեան (41), յափտեանբարձրութեան (42), ճորին-բանին (43), մրուրին-ճենգութին (44), իցեմ-պանիցեմ (45)։ Ներքին հանգավորման այդ շրջանակում բացառություն են կազմում թերևս 36 և 40-րդ տողերը, բայց վերջին տողի զկիրս և երկրիս բառերը հնչումով գրեթե ներդաշնակվում են, իսկ տ. 36-ի ստորիցս բառը a գրչագիրն ունի առանց հոդի՝ ստորից, որով և այս տողում ևս առաջանում է հանգավորում՝ ստորից-երկնից։ Սակայն ստորից տարընթերցվածը, ինչպես տեսանք, միայն մեկ ձեռագիր ունի (1319 թ. գրչություն) և այն հազիվ թե բնագրի նախնական ընթերցվածը լինի։ 32—45-րդ տողերից յուրաքանչյուրում միմյանց հետ հանգավորված են տողավարտի բառը և նրան նախորդող բառերից մեկնումեկը։

5. Հմմտ. Սաղմ., Թ, 7. ՃԽԱ, 27—28։

6. Հմմտ. Սաղմ., ՃԽԱ, 8։

7. Հմմտ. Ղուկ., ԺԳ, 16։

8. Հմմտ. Ովսէէ, Ե, 12։

9. Հմմտ. Յոբ, ԼԱ, 40։ ... որ երէցն է, ճան զաւեռխն—այսինքն՝ որն ավելի հին է, քան որոմի մասին ավետարանական առակը։ Տ. 64—67-ը հմմտ. նաև Մատթ., ԺԳ, 25։

10. Հմմտ. Ես., Ե, 6։

11. Տե՛ս Ովսէէ, Ժ, 12։

12. Հմմտ. Եզեկ., ԻԳ, 3։

13. Հմմտ. Եսա., ԾԷ, 8։

14. Ակնարկում է Ովսե մարգարեի ամուսնությունը պոռնկուհու հետ (տե՛ս Ովսէէ, Ա)։

15. Հմմտ. Մատթ., Ե, 46—48։ Ղուկ., Զ, 33—35։

16. Հմմտ. Մատթ., Ժ, 41։

17. Մատյանի վենետիկյան հրատարակությունները և նրանցից ծագող հետագա տպագրությունները, նաև Գ. Ավետիքյանի «Նարեկլուծ»-ի բնագիրը և Բուենոս Այրեսի հրատարակությունը տողի անխաբելի բառն ունեն նախդիրով՝ յանխաբելի, որը գրչագրերը և նախորդ տպագրությունները չեն տալիս։ Ինչպես նախորդ տողի անամփոփելի բառը, այնպես էլ անխաբելի ածականը վերաբերում է զպատժաւորս հայցական հոլովաձևով բառին, նրա եռադաս որոշիչն է։ Իսկ յանխաբելի վրիպակ ձևը նախդիրի պատճառով ընկալվում է իբրև կչռութեանց գոյականի լրացում, ինչպես հասկացել և թարգմանել է Գ. Խաչատուրյանը («...անխաբելի ուղիղ կշիռներ». տե՛ս «Նարեկ. Մատեան ողբերգութեան», էջ 211)։ Բայց գրչագրերն ընթերցվածը տալիս են միայն և միայն այսպես՝ «անխաբելի» (հավանաբար վենետիկյան տպագիրներում յանխաբելի ձևն առաջացել է առանց ձեռագրական հիմքի և ապա մուտք գործել այլ հրատարակություններ)։ Ըստ այդմ 111—116 տողերի միտքը պետք է ընկալել հետևյալ կերպ՝ «Քաղցր ու անսահման գթությամբ մերձենալով ինձ՝ մաքրի՛ր քո տեսությունից անթաքչելի և [քո] ուղիղ քննությունից (կշռադատությունից) անզերծանելի պատժապարտիս՝ անխայտառակելի պահելով ինձ տիեզերական դատաստանի մեջ»։

18. Միայն Բուենոս Այրեսի հրատարակությունն անխայտառակելի բառն ունի յանխայտառակելի ձևով («Նարեկ. Մատեան ողբերգութեան», էջ 211), որը հավանաբար տպագրական վրիպակ է։ Մեր ձեռագրերը, ինչպես և մյուս տպագիրները, չեն տալիս այդ տարընթերցվածը։

19. Հմմտ. Ա Պետր., Ե, 4։ Ա Կորնթ., Թ, 25։

20. Հմմտ. Սաղմ., ԻԲ, 2։

ԲԱՆ ԶԴ

1. Վերնագրից հետո կամ լուսանցքներում որոշ ձեռագրեր գլխի բովանդակության համար ունեն նշումներ՝ «Ժամու առաւաւտուն» (J, էջ 415, Դ, էջ 200բ), «Երեկոյի և առաւաւտի» (Տ, էջ 93բ), «Առաւաւտու» (Ճa), «Ի ժամ առաւօտու» (Տ, էջ 250ա և 251ա)։ Նկատի ունենալով այս գլխի առանձին տողեր, հատկապես տ. 31-ը («Ընդ սկզբան բերմանս լուսոյ՝ զողորմութի՛ւն քո ծագեա»)՝ Գ. Ավետիքյանը նույնպես արտահայտել է այն միտքը, որ Նարեկացին «...այս աղօթք արարեալ է վասն առաւօտեան ժամուն, վասն որոյ հայցէ ընդ ծագման լուսոյ՝ լուսաւորել և զմիտսն» («Նարեկլուծ», էջ 446, ծնթ. 8)։ Անշուշտ, «առավոտյան աղոթք» անվանումը հազիվ թե համարժեք սույն գլխի բովանդակությանը, սակայն դա ցույց է տալիս, որ միջնադարում և ավելի ուշ փորձ են արել Նարեկացու Մատյանի տարբեր գլուխների տալ կիրառական նշանակություն՝ դրանով իսկ նեղացնելով նրանց բովանդակային ընդգրկման սահմանները։ ԶԴ գլուխը փոքր-ինչ նմանություն ունի ԺԲ գլխի Գ—Դ հատվածներին, ուր բանաստեղծը խոր գիշերվա մահահանգույն նիրհի մեջ բերկրալի հանգիստ է երազում, ձգտում է ազատվել խուլական ցնորքներից, վերստին սթափվել, արթնանալ ծանր նինջից։ ԺԲ գլխի այդ հատվածները, ինչպես գիտենք, ձեռագրերում վերնագրված են «Մաղթանք զաւրաւորք արհաւրաց գիշերայնոյ» (տե՛ս ԺԲ գլխի տ. 45-ի տարընթերցվածները)։ Ըստ երևույթին նրանց և ԶԴ գլխի հարազատությունը նկատելով է, որ Տ ձեռագրի գրիչը վերջինս անվանել է «Երեկոյի և առաւաւտի» աղոթք։

ԲԱՆ ԶԵ

1. Թերե՛ս կացո զաշխատութեանս այս սկիզբն—այս և հաջորդ 13—14-րդ տողերից չպետք է եզրակացնել, թե Նարեկացին նկատի ունի այն, որ, իբր, Մատյանը նոր է սկսում գրել (չէ՞ որ քիչ հետո՝ ԶԷ բանի սկզբում նա նշում է, որ «Սակաւամասնեայ կտակի այսր ողբերգութեանս» կատարմանն է հասնում),—ուրեմն և՝ ԶԴ գլուխն ավելի վաղ է հորինել, քան նախընթաց ութ տասնյակից ավելի գլուխները։ Բանաստեղծը «զաշխատութեանս այս սկիզբն» (տ. 12) կամ «զյառաջադրեալ ձեռակերտս» (տ. 13) ասելով ակնարկում է ոչ թե ստեղծագործական աշխատանքի սկիզբը իր գլխավոր երկի վրա, այլ այդ երկը դիտում է իբրև զղջման կտակ (հմմտ. ԶԷ գլխի տող 2-ի հետ), իբրև նախասկիզբ՝ իր մեծ հույսի իրականացման ճանապարհին, այսինքն՝ Մատյանը, թեկուզև ավարտված վիճակում, այն նախաքայլն ու սկիզբն է համարվում, որով նա ցանկանում է հասնել «ի նաւահանգիստն խաղաղութեան» (տ. 46), արժանանալ խորհրդապաշտի իր երազին, մաքրագործվել ու միանալ աստծուն.

Զստուաքերս այս ստուարութիւն պարտուցս լծեալ,
Բառնիդ առակաւ, ի քեզ, տէր, անկայց՝
Միացեալ խպառ անբաժանելի... (տ. 49—51)։

Գ. Ավետիքյանը, որ ինչպես նախընթաց, այնպես էլ այս գլուխը դիտել է որպես առավոտյան աղոթք, այն կարծիքն է հայտնել, որ Նարեկացին ըստ այդմ նկատի է ունեցել առհասարակ յուրաքանչյուր օրվա ընթացքում մարդու կատարելիք գործը, որ հաջողությամբ ավարտի հասցվի. «...զի և այս աղօթք վասն առաւօտեան ժամուն ասացեալ է, ուստի հայցէ յաջողումն ամենայն գործոց, զոր յաւուրն առնելոց է իւրաքանչիւր ոք ըստ իւրում վիճակի և պաշտաման,—խնդրելով, զի յաւարտ հասուցէ աստուած զիւրաքանչիւր գործս ըստ իւրոց հաճոյից...» («Նարեկլուծ», էջ 448, ծնթ. 2)։

2. Տող 20-ում եւ՛ հանդիպում է անձկութիւն բառը։ Երկու դեպքում էլ ձեռագրերը չեն տալիս մեկ այլ ընթերցված։ Միևնույն բառի գործածությունը գրեթե հարևան տողերում խիստ հազվադեպ երևույթ է Մատյանում։ Արդյո՞ք նրանցից մեկնումեկը գրչական սխալի արդյունք չէ։ Թերևս այդ կրկնությունն արդարացվի բառի իմաստային տարբեր առումներով. 20-րդ տողում այն արտահայտում է ավելի հոգեկան վիճակ՝ տագնապ, տառապանք, հոգու նեղություն (Զձայն քո լուռ՛ ի յանձկութեանն պահու, այսինքն՝ քո ձայնն ինձ լսելի դարձրու, երբ տագնապի մեջ լինեմ), իսկ տ. 22-ում՝ տարածքային իմաստով նեղություն, մանավանդ որ նրա կողքին հանդես է գալիս դարձյալ տարածք շեշտող սահման բառը (Մատամբ քո ազդեա՛ ի սահմանին անձկութեան, այսինքն՝ օգնի՛ր քո մատով, երբ նեղվածության մեջ լինեմ)։ Նշենք նաև, որ Գ. Ավետիքյանը եւ ի սահմանին անձկութեան կապակցությունը հասկացել է ոչ թե հոգեկան, այլ ավելի տարածքային առումով, դժվարության իմաստով՝ տողը բացատրելով այսպես. «ի ժամու դժուարութեան գործոյն՝ մատամբ քո օգնեա՛» («Նարեկլուծ», էջ 448, ծնթ. 6)։

3. Հմմտ. Դան., ԺԴ, 33—35։

4. Միայն Բուենոս Այրեսի տպագիրը աստի ճոսեալ բառերի փխ ունի աստխեալ աղավաղ ընթերցվածը, որն, անշուշտ, տպագրական վրիպակ է և թարգմանության մեջ չի արտահայտվել (տե՛ս «Նարեկ. Մատեան ողբերգութեան», էջ 214)։

5. Տ. 38—44-ում ակնարկվում է Հին կտակարանի ավանդությունը ջրհեղեղի մասին, երբ մնացած մարդկությունը կործանվում է (հմմտ. Ծննդ., Զ—Ը)։ Նոյն իր գերդաստանով փրկվում է՝ ապավինած լաստանավին, մինչդեռ

6. Բանից առակս—Ավետիքյանի կարծիքով՝ Նարեկացին նկատի ունի դարձյալ ավանդությունը Նոյի մասին, որը, ջրհեղեղից փրկվելով, սուրբ կենդանիներ է զոհաբերել աստծուն։ Նա բանաստեղծի որոշ արտահայտություններ փորձել է բացատրել Նոյի պատմությամբ. եթե Նարեկացին ասում է՝ «Վարձս ի քոյոցդ ընդ իս բերելով» (տ. 48), ուրեմն, ըստ նրա, պետք է հասկանալ ու հեռավոր նմանություն տեսնել այն զոհաբերության հետ, որով Նոյը վարձահատույց է եղել աստծուն, կամ՝ երբ Նարեկացին գրում է՝ «Ջատորաբերս այս սատարութիւն պարտուցս լքեալ» (տ. 49), ուրեմն, նկատում է նա, այդ պատկերը հիշեցնում է Նոյին, որը ջրհեղեղը դադարելուց հետո թողել է «զստուար կազմութիւն տապանին» և դուրս եկել ցամաք (հմմտ. «Նարեկլուծ», էջ 449, ծնթ. 10)։ Սակայն Ավետիքյանի բերած այս զուգահեռներն անհամոզիչ են։ Ավելի ճիշտ կլինի բանից առակս արտահայտությունն ընկալել իբրև ակնարկ պարտապանի մասին ավետարանական առակի վերաբերյալ (հմմտ. Մատթ., ԺԸ, 24—28), որը մատնանշել է Նալյանը («Գիրք մեկնութեան», էջ 645)։ Այդ հղումն ունի նաև Մատյանի Բուենոս Այրեսի տպագիրը («Նարեկ. Մատեան ողբերգութեան», էջ 215 և 276)։

ԲԱՆ ՁԶ

1. Ակնարկում է իմաստուն և հիմար կույսերի մասին առակը (հմմտ. Մատթ., ԻԵ, 1—13)։

2. Ինչպես 11—16, այնպես էլ 27—35 տողերում Նարեկացին նկատի ունի չորս տարրերի մասին ուսմունքը (տե՛ս ԻԶ գլխի 16 ծնթ.)։

3. Մատյանի $Պ_1$ և $Պ_4$ տպագիրները, ինչպես և վերջինիս հետագա վերահրատարակությունները և Ավետիքյանի «Նարեկլուծ»-ի բնագիրը դատման բառի փխ ունեն դարման, որը տալիս են մեր օգտագործած ձեռագրերից միայն չորսը (տե՛ս տողի տարընթերցվածները)։ Անշուշտ, այդ ընթերցվածներից մեկնումեկը բնագրային չէ և առաջացել է տ և ր տառերի շփոթության հետևանքով։ Ըստ Ավետիքյանի, երկու ընթերցվածն էլ տվյալ կապակցության մեջ իմաստավորվում են (տե՛ս «Նարեկլուծ», էջ 452, ծնթ. 5)։ Վենետիկի 1840 թ. հրատարակությունը բնագրում վերականգնել է դատման ընթերցվածը (Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, էջ 227)։ Հետագա տպագիրները գերազանցապես հետևել են նրան։ Այդ ուղղումն ընդունելի է թե՛ նրանով, որ մեր ձեռագրերի մեծագույն մասը տալիս է ոչ թե դարման, այլ դատման և թե՛ հետևյալ հանգամանքով. 17-րդ տողի դատման բառը նույնահունչ է 19-րդ տողի դիտման բառի հետ։ Նարեկացին ներդաշնակության համար դիտման բառի հետ, իհարկե, կընտրեր ոչ թե դարման, այլ դատման բառը, որի շնորհիվ և երկու տողերում ստացվել են արտահայտչական առումով ներդաշն կապակցություններ՝ Եւ յայժմ ի դատման—առ կաւճ դիտման։

4. Բուենոս Այրեսի հրատարակությունն ունի յաոիցիմ, որը, անշուշտ, տպագրական վրիպակ է, մանավանդ որ հանդիպադիր արևմտահայ թարգմանության մեջ բառը հոգնակի է («Նարեկ. Մատեան ողբերգութեան», էջ 216)։ Մեր օգտագործած բոլոր ձեռագրերը և մյուս տպագիրներն ունեն ճիշտ՝ յաոիցիմf։

5. Մարդու «բազմահատուած էութիւն»-ը (բան ԻԶ, տ. 72) կազմող չորս տարրերից (ջուր, հուր, հող, օդ) հողը Նարեկացին անվանում է «անդրանիկ նիւթ», քանի որ, ըստ Հին կտակարանի ավանդության, աստված նախամարդ Ադամի մարմինն ստեղծել է հողից (հմմտ. Ծննդ., Բ, 7)։

6. Հմմտ. Իմաստ., Թ, 5։

ԲԱՆ ՁԷ

1. Այս գլխի բովանդակության համար Տ ձեռագիրը վերնագրի դիմաց, սոորին լուսանցքում ունի հետևյալ նշումը. «Ի ծերութիւնն մարդոյ» (էջ 256ա)։ Լուսանցագրելիս՝ միջնադարյան գրիչը ելակետ է ունեցել հատկապես Գ հատվածի սկզբի տողերը՝

Եւ երէ ճասից յամս ծերութեան՝
Քեւ առաջնորդեալ արժանիս մաճու,
Մի՛ թողցես զտկարութիւնս,
Մի՛ անարգեր զալիսն... (տ. 47—50)։

Նալյանը նույնպես սույն գլխում ի թիվս այլ հարցադրումների, կարևոր է համարել նույն թեման՝ «եթէ ի ծերութիւն ժամանիցեմ, խնդրեմ ոչ թողուլ ի ձեռաց» («Գիրք մեկնութեան», էջ 647)։

2 Հմմտ. Յովհ., Զ, 39։

3. Հմմտ. Բ Կորնթ., Ա, 3։

4. Հմմտ. Ելք, ԻԳ, 5 (նաև՝ Բ Օրին., ԻԲ, 4)։ Ինչպես նկատել են Մատյանի մեկնիչները, հակառակ իր աղբյուրի՝ Աստվածաշնչի հայ թարգմանության, Նարեկացին տ. 29-ում դնում է զգրաստ բշնամւոյն, մինչդեռ Ելք, ԻԳ 5-ում այսպես է՝ զգրաստ ընկերի քո։ Հետաքրքիր է, որ Ս. Գրքի եբրայական բնագրում և նրա հունարեն, ասորերեն ու լատիներեն թարգմանություններում ևս խնդրո առարկա տեղում հանդես է գալիս ոչ թե ընկեր, այլ ատելի (այսինքն՝ բշնամի) բառը, հետևապես եբրայեցերեն բնագրից ու մյուս լեզուներով նրա թարգմանություններից ոչ թե Նարեկացին է շեղվում, այլ Ելից գրքի մեզ հասած հայերեն թարգմանությունը։ Նկատելով Նարեկացու տողի հարազատությունը Ս. Գրքի լատիներեն թարգմանության հետ՝ Նալյանը գրել է. «Սուրբս Գրիգոր, համեմատ լաթինացւոց թարգմանութեան, ոչ ասէ զգրաստ ընկերի, այլ՝ զգրաստ բշնամւոյ» («Գիրք մեկնութեան», էջ 647)։

Ավետիքյանը ևս, այս առիթով Աստվածաշնչի եբրայեցերեն բնագիրը և նրա այլալեզու թարգմանությունները համեմատելով հայերենի հետ, ուշադրություն է հրավիրում այն բանի վրա, որ «... ի մեր բնագրի (իմա՝ Ելից, ԻԳ, 5-ի հայ թարգմանության մեջ—Պ. Խ.) դնի զգրաստ ընկերի, բայց այլ թարգմանութիւնք՝ եբրայականն, քաղդէացին, յոյնն և լատինն դնեն բշնամւոյ...» («Նարեկլուծ», էջ 455, ծնթ. 5)։ Երևի սա լավագույն հիմքերից մեկն է ենթադրելու, որ Նարեկացու տողն այս դեպքում Ս. Գրքի հայերեն բնագրից շեղվում և, ընդհակառակն, հարազատ է դառնում եբրայեցերենին և մյուս թարգմանություններին, որովհետև, ըստ երևույթին, այդտեղ նա օգտվել է կա՛մ դրանցից որևէ մեկից, հավանորեն՝ հունարեն բնագրից, կա՛մ հայերեն մի այնպիսի թարգմանությունից, որտեղ եղել է եբրայական բնագրին համապատասխան բշնամի բառը, բայց որը մեր ձեռքը չի հասել։ Իրավացիորեն այս վերջին մտքին է հակվել Մատյանի թարգմանիչ Գ. Խաչատուրյանը. «...Թե՛ եբրայական բնագրին և թե՛ հունական Յոթանասնից թարգմանության մեջ գործածված բառը կը նշանակե «ատելի», ինչ որ կարդարացնե Նարեկացիին «թշնամի» բառը. և ասի կրնա խորհիլ տալ, թե մեր բանաստեղծը թերևս տարբեր ձեռագիր մ'ունեցեր իր առջև»,—գրել է նա («Նարեկ. Մատեան ողբերգութեան», էջ 276—277)։ Սակայն այս ենթադրությանը հակառակ է խոսում, ճիշտ է՝ ոչ այնքան զորավոր, մի փաստ. Ելից գրքի ԻԳ գլխի նույն 5-րդ համարին նախորդող տան մեջ կա եգին բշնամւոյ քոյ կապակցությունը. Նարեկացին գուցե նրա ազդեցությամբ զգրաստ ընկերի քոյ ասելու փխ գրել է զգրաստ բշնամւոյն։ Բայց այս կռվանը, ինչպես ասացինք, թույլ է և վճռական լինել չի կարող։ Առաջին ենթադրություններն ավելի հավանական են և ընդունելի։

Ի վերջո, անհրաժեշտ է ասել, որ այս խնդրի պարզաբանմանը կարող է նպաստել Ելից գրքի գրաբար բնագրի գիտահամեմատական հրատարակությունը:

5. Համե. Ես., Զ, 3: Յայտ., Ե, 11—12:

6. Բժշկեա՛ (տ. 41) բայի ուղիղ խնդիր լրացումներն ունեն անկանոն ձևեր՝ զախտքն. *Նրանց ուղղականի* «ք» *վերջավորությունը հայցականում ոչ թե փոխվել է* «ս»-ի. *այլ պահպանվել է, մինչդեռ մյուս համադաս անդամն ունի կանոնավոր ձև՝* զխարանս: *Այդ անկանոնությունը եզակի երևույթ չէ ո՛չ Նարեկացու երկում և ո՛չ էլ հայ մատենագրության մեջ առհասարակ: Հիշենք Քերթողահոր ավանդած վիպական երգի հայտնի տողերը՝ իբրև դրա պերճախոս օրինակ.*

...Ընկէց ի մէջ օրիորդին Ալանաց,
Եւ շատ ցաւեցոյց զմէջ փափուկ օրիորդին...

(«Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», աշխատությամբ Մ. Աբեղյան և Ս. Հարությունյան, Տփղիս, 1913, էջ 179): Այստեղ ևս նախդրիվ տրականը (ի մէջ) *և ուղիղ խնդիրը* (զմէջ) *պահպանել են ուղղականի վերջավորությունը, չնայած պետք է լինեին հայցականաձև* (ի մէջս, զմէջս): *Տե՛ս նաև Թ գլխի 6-րդ ծնթ.:*

7. Եւ երէ ճաշից յամս ծերութեան—*սա Մատյանի այն հազվադեպ տողերից է, որոնցում բանաստեղծն անդրադառնում է իր կյանքին, իր ապրած տարիներին, և, անշուշտ, ոչ որոշակի, բայց կարևոր կռվան է ենթադրելու, թե իր գլխավոր երկն ստեղծելիս նա մոտավորապես ի՛նչ տարիքում է եղել: Հիշենք ԶԳ բանի 59—60 տողերը՝*

Անա բարդեցան, կուտեցան շրջանակք ամացս ընդունայնութեան,
Յորմէ հետէ յայտնեցեալ ցուցայ՝ յոչ պէտս Երեւալ...

Այստեղ թափանցիկ ակնարկ կա բանաստեղծի՝ «ընդունայնորեն» ապրած բազմակուտակ տարիների մասին. ուրեմն՝ նա այնքան էլ երիտասարդ չէր, ավելի ճիշտ՝ այն տարիքում էր, երբ ավելի հասուն շրջան թևակոխած՝ տագնապով ետ է նայում և գիտակցում, որ պատանության ու երիտասարդության ժամանակներն անցել-գնացել են, տարիքն իրեն զգացնել է տալիս, երբ մարդ ոչ թե մանկաբար ուրախանում է մեկ տարով մեծանալու համար, այլ տխրում է մեկ տարով մեծանալու և ծերության շեմին կանգնելու համար: Եվ ԶԷ բանի 47-րդ տողը փոքր-ինչ հստակում է բանաստեղծի խոստովանությունն իր տարիքի մասին՝ «Եւ երէ ճաշից յամս ծերութեան...»: *Ուրեմն, Նարեկացին իր երկը և հատկապես այս գլուխը գրելիս դեռ ծեր չէր. «Զի չէր ծեր, յորժամ ասէր զայս և աղօթէր վասն հասանել ծերութեանն»,—բացատրել է միջնադարյան մեկնիչը (ձեռ. 5650, էջ 427բ):*

Մատյանի հիշատակարանի տվյալները վկայում են, որ Նարեկացին իր երկն ստեղծել է 1001—1003 թթ. («ի յաւարտումն կատարման իններեակ յոբելինին, ի սկիզբն պսակելոյ մետասնեկին յարեթական տոհմիս տումարի, յետ երից ամաց անցելոց, որ զկնի գալստեան յաղթող եւ մեծ կայսերն Հոռոմոց Բասլի...»): Արդ, այդ թվերին նա քանի՞ տարեկան կլիներ, այլ կերպ՝ ե՞րբ է ծնվել նա:

2. Նալյանն Ապարանից խաչի պատմության մեկնության մեջ, առանց որևէ կռվանի, սխալմամբ ենթադրել է, թե Նարեկացին ծնվել է 971 թ. և մահացել 1004 թ., հետևապես ապրել է ընդամենը 33 տարի («Գիրք մեկնութեան», էջ 742): Հետագայում, Մ. Չամչյանից սկսած, բանաստեղծի ծննդյան տարին համարվել է 951 (հայոց Ն) թվականը, որի հիմքը միջնադարյան գրչագրերում (մասնավորապես «Հայսմավուրք» ժողովածուներում) պահպանված ոչ հավաստի տվյալն է (համե. «Նարեկլուծ», էջ 543—544):

Նարեկացու ծննդյան թվականի որոնման հարցում վճռական նշանակություն ունեն մատենագրական հետևյալ վավերագրերը՝ բանաստեղծի մի հիշատակարանը, գրված հոր՝ Խոսրով Անձևացյաց եպիսկոպոսի «Մեկնութիւն խորհրդոյ սրբոյ պատարագին» աշխատության մի ընդօրինակության առթիվ, և Անանիա Մոկացի կաթողիկոսի թղթերը, որոնց մեջ քննադատվում ու բանադրվում է Խոսրով Անձևացին: Հիշատակարանին առաջինն ուշադրություն է դարձրել Գ. Ավետիքյանը՝ ցույց տալով, որ Պատարագի մեկնությունը Խոսրով Անձևացին գրել է 950 թ., նույն տարում էլ նրա ավագ որդին՝ Սահակը, առաջին անգամ գաղափարել է այդ երկը, հետևապես 950-ին նա եպիսկոպոս էր, իսկ նրա որդիները՝ Սահակը, Հովհաննեսն ու Գրիգորը, արդեն ծնված էին: Ուրեմն, Գրիգորի ծնունդն ընկնում է ոչ թե 951 թ., այլ ավելի վաղ, 940-ական թթ. մեջ, ամենաուշը 949-ին: Ավետիքյանը հաշվի է առնում նաև այն հանգամանքը, որ Նարեկացին 977 թ. այնքան անվանի էր, «վարդապետական աստիճանաւ գերապատուեալ», որ Արծրունյաց Գուրգեն թագավորը նրան պատվիրում է գրել Երգ երգոցի մեկնությունը: Այդ իրողությունը ևս ստիպում է նրա ծնունդը տանել քիչ այն կողմ. «...ի ՆԻԶ (977) թուականին, յորում մեկնեաց ինքն զԵրգս երգոց, լինէր նա երեսնամեայ և աւելի ևս» («Նարեկլուծ», էջ 543—544. համե. նաև Գ. Տեր-Մկրտչյան, *Անանիա Մոկացի, «Արարատ», 1897, էջ 93):*

Ինչպես ասացինք, կարևոր արժեք են ներկայացնում նաև Անանիա Մոկացու (941—965 թթ. հայոց կաթողիկոս) երեք թղթերը, որոնք ի հայտ է բերել, հրատարակել ու արժեքավորել բանասեր Գ. Տեր-Մկրտչյանը (տե՛ս «Արարատ», 1897, էջ 91—96, 275—288): Դրանցով պարզվում է, որ Խոսրովին եպիսկոպոս է ձեռնադրել և տվել Անձևացյաց թեմը Անանիա Մոկացին, իսկ դա կարող էր լինել 941 թվականից հետո (Անանիայի կաթողիկոսության առաջին տարին), բայց 950-ից առաջ (երբ Խոսրովն, արդեն եպիսկոպոս, գրել է Ժամագրքի և Պատարագի մեկնությունները): Գ. Տեր-Մկրտչյանի հաշվումներով, 954 թ. Խոսրովն ապստամբել է Մոկացու դեմ, ապա բանադրվել, իսկ 965 թ. առաջ վախճանվել: Անանիայի Բ թղթում Խոսրովը մեռած է համարվում: Այսպիսով, եթե ընդունենք, որ Խոսրովն Անանիայից եպիսկոպոս է կարգվել ամենաուշը 950 թ., ուրեմն մինչ այդ Նարեկացու մայրը մահացած պիտի լիներ, և Գրիգորը չէր կարող ծնվել 949-ից հետո, քանի որ «Անհնարին է տասներորդ դարում կանամբի եպիսկոպոս ենթադրել Հայաստանում» (նույն տեղում, էջ 93):

Այս ամենից հետո դարձյալ հարց է առաջանում՝ ո՞րն է Նարեկացու ծննդյան մոտավոր թվականը. անշուշտ, ո՛չ 951-ը կամ 950-ը, այլ նախորդ մերձակա տարիներից մեկը: Կարծում ենք, Ավետիքյանը մի փոքր ծայրահեղության մեջ է ընկնում՝ եզրակացնելով, որ Մատյանը գրելիս (ըստ նրա՝ 1002—1003 թթ.) բանաստեղծը վաթսուն տարին անց պետք է լիներ. «... լինել նմա անցեալ զվաթսնամենիւք» («Նարեկլուծ», էջ 544): Այս հետևությունն անընդունելի է, մանավանդ, նրա համար, որ վաթսունն անց բանաստեղծը հազիվ թե իր մասին գրեր՝ Եւ երէ ճաշից յամս ծերութեան: *Վաթսուն տարին, իհարկե, խորին ծերություն չէ, բայց ծերություն է, իսկ այստեղ, հակառակ Ավետիքյանի, խոսքն առհասարակ ծերության մասին է և ոչ թե խորին ծերության («Նարեկլուծ», էջ 456, ծնթ. 9): Մնում է ընդունել, որ Գրիգոր Նարեկացին ծնվել է, ամենայն հավանականությամբ, 940-ական թթ. երկրորդ կեսին, 946—949 թթ. մեջ (համե.* Մ. Աբեղյան, *Հայոց հին գրականության պատմություն, գիրք Ա. տե՛ս «Երկեր», Գ, Երևան, 1968, էջ 576): Այս հաշվով 1001—1003 թթ. նա կլիներ մոտավորապես 52—56 տարեկան, ոչ ավելի. նրա ծերությունը դեռ առջևում էր:*

Այս կապակցությամբ կենսագրական նշանակություն են ձեռք բերում և իբրև օժանդակ փաստ կարող են ծառայել ՄԱ գլխի հետևյալ տողերը: Բանաստեղծը, բացի «աւրհնեալ ի բարձունս» աստծուց, էլ ո՞ւմ կարող էր դիմել ու պաղատել՝ թագակիր արքաների՞ն, «որք զմահացուցանելն միշտ արուեստաւորեն, քան զկենագործելն» (ՄԱ, տ. 16), իրենց փառքի հետ անցավոր իշխաններին, երկրածին մարդո՞ւն, հարազատ եղբո՞րը... Անհույս թվարկումների այս շարքի մեջ նա հիշատակում է նաև հորն ու մորը.

Առ հա՞յրն իմ երկրաւոր,
Երէ պակասեալ են խնամականքն ընդ ատուրց նուազութեանն,
Առ մա՞յրն իմ, որ երկնեաց,
Երէ կասեցան գթութիւնքն ընդ նահանջել կենդանութեանն... *(տ. 11—14)։*

Այստեղ հոր մասին ասվածը՝ «պակասեալ են խնամականքն ընդ ատուրց նուազութեանն», չպետք է ընկալել այնպես, թե հոր օրերը (իմա՝ կյանքի ժամանակը) նվազելու հետ իր նկատմամբ նրա խնամքն էլ պակասած է եղել։ Գրաբարում պակասիմ *կրավորաձև բայն ունեցել է և դադարելու, վերջանալու, մեռնելու նշանակություն, ինչպես այն գործածված ենք գտնում, օրինակ, Ծննդ., ԻԵ, 8-ում. «...և պակասեալ Աբրահամու մեռաւ ի բարւոք ծերութեան» (Աստվածաշնչի ռուսերեն թարգմանությունը նույնն ունի այսպես՝* «И скончался Авраам, и умер», *այսինքն՝* պակասեալ *բայի դիմաց ռուսերենը տալիս է* скончался*)։ Եվ կամ սաղմոսի հետևյալ կապակցության մեջ այն հանդես է գալիս իբրև համանիշ* սատակիմ *և* կորնչիմ *բայերին. «... սատակեցան, պակասեցան, կորեան վասն անօրէնութեան իւրեանց» (Սաղմ., ՀԲ, 19)։ Տողի* նուազութիւն *բառը ևս այս դեպքում ունի սպառվելու, վերջանալու իմաստ։ Ուրեմն ամբողջ տողը՝ «Եթէ պակասեալ են խնամականքն ընդ ատուրց նուազութեանն», կարող ենք ընկալել այսպես՝ «Եթե կյանքի օրերը սպառվելու հետ դադարել են և խնամքները», այսինքն՝ Նարեկացին հոր մասին պատկերավոր կերպով խոսում է իբրև մեռածի։*

Իսկ նա ե՞րբ էր զգալու հոր խնամքի կարիքը. անշուշտ ոչ Մատյանը գրելիս, 1001—1003 թթ., այլ հատկապես մանուկ և պատանի հասակում։ Դարձյալ հիշենք Անանիա Մոկացու թղթերը։ Կաթողիկոսից բանադրված հայրը՝ Անձևացյաց Խոսրով եպիսկոպոսը, 954 թ. հետո, բայց 965 թ. գուցե տարիներ առաջ, երբ Նարեկացին շատ փոքր կլիներ, ով գիտե՝ ինչպիսի հալածանքի պայմաններում վախճանվել է՝ հայրական խնամքի կարոտ թողնելով, մանավանդ կրտսեր որդուն։

ԾԱ գլխից վկայակոչված հաջորդ երկու տողը որոշակի ակնարկ են այն մասին, որ Գրիգորը, հորից ավելի վաղ, զրկվել է իր մորից՝ չտեսած նրա գութն ու գորովը («կասեցան գթութիւնքն ընդ նահանջել կենդանութեանն»)։ Եթե նա ծնվել է 946—949 թթ. մեջ, հետևապես 950-ին արդեն զրկված է եղել մորից, քանի որ նույն տարում հայրը հանդես է գալիս որպես եպիսկոպոս։

8. Հմմտ. Սաղմ., Հ, 9։

9. Տե՛ս Սաղմ., Կ, 3. ԻԲ, 3։

10. Ակնարկում է Դավիթ մարգարեին (հմմտ. Սաղմ., Հ, 20)։

ԲԱՆ ՁԸ

1. Ըստ ավանդության, Սամուել Արիմաթացին ջուր է հեղել՝ ի նշան աստծու նկատմամբ Իսրայելի ժողովրդի հնազանդության ու խոնարհության (տե՛ս Ա Թագ., Է, 6)։

2. Տ. 54—62-ում ակնարկվում է, այսպես կոչված, Վերջին կամ Ահեղ դատաստանը (հմմ. Ես, ԻԶ, 19։ Եզեկ., ԼԷ։ Յոբ, ԺԴ, 7—12)։

ԲԱՆ ՁԹ

1. Սույն բանը, ի թիվս Մատյանի այլ գլուխների, հրատարակվել է Եփրեմ Ասորու աղոթքների հետ այսպիսի վերնագրով. «Աղօթք զօրաւոր սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ» (տե՛ս «Գիրք աղօթից, ասացեալ սրբոյն Եփրեմի խուրին Ասորւոյ», Երուսաղեմ, 1848, էջ 113—114)։

Եփրեմի աղոթագրքում տեղ գտած մյուս գլուխները ևս դիտված են որպես աղոթք և ներկայացված թեմատիկ սկզբունքով. Ղճ գլուխը խորագրված է՝ «Աղօթք զօրաւոր սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ հրեշտակական վարդապետի վասն արեանն տեառն» (էջ 110—113), ԾԷ, ՁԱ, Հ, ՁԲ, ՀԷ, ԽԷ գլուխները՝ սովորական «Ի խորոց սրտից խօսք ընդ աստուծոյ» (էջ 118—123, 133—138, 148—154, 181—191, 206—211, 222—225), իսկ Ջ գլուխը՝ «Ի խորոց սրտից խօսք ընդ տիրուհւոյ» վերնագրերով (էջ 166—171) և բաշխված են շաբաթվա օրերի վրա։ Այդ գրքի 6-րդ տպագրության մեջ ավելացված են նաև ԺԲ գլխի Գ—Դ հատվածները՝ «Մաղթանք զօրաւորք արհաւրաց գիշերայնոյ, ասացեալ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ» և ԽԱ գլուխը՝ «Աղօթք նորին սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ» վերնագրերով, իբրև «Հանգստեան ժամու» աղոթքներ (տե՛ս «Գիրք աղօթից, ասացեալ սրբոյն Եփրեմի խուրին Ասորւոյ», Երուսաղեմ, 1933, էջ 462—468), բայց ունեն նաև գլուխների սովորական վերնագիրը («Ի խորոց սրտից խօսք ընդ աստուծոյ»)։

2. Հմմտ. Մատթ., ԺԶ, 16։

ԲԱՆ Ղ

1. Սույն գլխի Ա հատվածում Նարեկացին թվարկում է աստծու 29 մականուն, որոնցից ամենավերջինին («խաղաղութիւն ծփանաց»*—տ. 13) միայն հետևում է երկրորդական նախադասությամբ արտահայտված բացատրությունը (տ. 14—15)։ Բ հատվածը գրեթե ամբողջությամբ կառուցված է այդ վերջին սկզբունքով. բանաստեղծը նախ՝ տալիս է ստորոգելին և ապա՝ ստորադաս նախադասությամբ ներկայացնում նրա բանաստեղծական մեկնությունը։ Հատվածի այդ յուրահատկությունը նկատել է Հ. Նալյանը, որը տ. 21-ը* (Ճանապարհ կենաց) *ծանոթագրելիս նշել է.* «Աստի մինչև ...Հայեա՛ց, տէր յերկնից *և այլն (տ. 55) իւրաքանչիւրոց մականուանցն Քրիստոսի ինքն տայ զմեկնութիւն...» («Գիրք մեկնութեան», էջ 636)։ Հաշվի առնելով Բ հատվածի կառուցվածքային այդ առանձնահատկությունը՝ յուրաքանչյուր մականուն-ստորոգելի ու նրան հարող երկրորդական նախադասություն հաջորդից անջատել ենք վերջակետով։*

2. Հմմտ. Յովհ., ԺԱ, 39—44։

3. Հմմտ. Բ Օրին., ԻԸ, 7։

4. Հմմտ. Սաղմ. Է, 16։

5. Հմմտ. Յոբ, Խ, 20։

ԲԱՆ ՂԱ

1. Այս գլխի համար Ճ ունի լուսանցային նշում. «Հանկատեան է» (էջ 250ա)։

2. ...քինաւոր ամաղեկացիքն*—Սուրբ Գրքում հիշված ժողովուրդ, բնակվում էր Պաղեստինի հարավում՝ Մեռյալ և Կարմիր ծովերի միջև ընկած տարածքում։ Կարմիր ծովն անցնելուց հետո հրեաների այն մասը, որ երթից հոգնած ետ էր մնացել ընդհանուր բազմությունից, ենթարկվեց ամաղեկացիների հանկարծակի ու տմարդի հարձակմանը՝ Ռափիդիմի անապատում և դաժանորեն ոչնչացվեց (տե՛ս Ելք, ԺԷ, 8)։ Մովսես մարգարեի հրամանով Հեսու զորավարը վրեժխնդիր եղավ ամաղեկացիներից, ջարդեց նրանց (տե՛ս Ելք, ԺԷ, 9—10)։ Նարեկացին ամաղեկացիներին հիշատակում է փոխաբերաբար՝ որպես չարի գործակիցների։*

3. Համա. Ա Տիմոթ., Զ, 16։

4. Համա. Ելք, ԺԲ, 7։

5. ...մտածութիւնս—այսպես ունի միայն Վատիկանի ձեռագիրը։ Ընթերցվածն այդպես է վկայակոչում նաև՝ Հ. Նալյանը (տե՛ս «Գիրք մեկնութեան», էջ 668)։ Մեր օգտագործած մյուս բոլոր ձեռագրերը, $Պ_{1-4}$-ը, ինչպես նաև Պոլսի 1782 և 1789 թթ. տպագիրներն ունեն մտածութիւն, իսկ Գ. Ավետիքյանի «Լուծմունք»-ի բնագիրը, Վենետիկի 1840 թ. հրատարակությունն ու նրանից ծագող վերահրատարակությունները, ինչպես նաև Բուենոս Այրեսի 1948 թ. հրատարակությունն ունեն մտածութիւնն։ Քանի որ այս հատվածում (տ. 73—78) բոլոր թվարկումները տրված են հոգնակի թվով, ուստի նախընտրեցինք մտածութիւնս ընթերցվածը, որն ավելի հարազատ է ընդհանուր ոճին։

6. Համա. Բ Կորնթ., Է, 9—10։

7. Այս տողից հետո m-ի գրիչը բնագրի կարգում ընդմիջարկել է «Քաւեա՛յ զմեղս Սարգիս գրչին» հիշատակագրությունը, ապա վրան դրել համձան նշան (էջ 353ա)։

ԲԱՆ ՂԲ

1. Այս վերնագիրը, կարծում ենք, Նարեկացունն է, սովորական վերնագիրը («Վերստին յաւելուած... խաւսք ընդ աստուծոյ»)՝ գրչական հավելում։ Գ. Ավետիքյանը ևս վերնագիրը («Ի փայտն երջանիկ...») վերագրում է Նարեկացուն. «Այս մակագիր թուի եղեալ ի սրբոյ վարդապետէն, որպէս և ոճն ցուցանէ» («Նարեկլուծ», էջ 481, ծնթ. 1)։

ՂԱ գլուխն ավարտելուց հետո m-ի գրիչը չի ընդօրինակել ՂԲ և ՂԴ գլուխները և էջատակին արել է նշում. «Յայսմ տեղւոջ միջակի թողի զճառ պատմութեան ժամահարին և զմեռոնին» (էջ 353ա)։ G-ի գրիչն այս և հաջորդ գլուխն ընդօրինակել է հատվածաբար (տե՛ս հաջորդ՝ 3-րդ ծանոթագրությունը)։

Մի խումբ ձեռագրեր գլխի համար ունեն լուսանցային նշումներ. «Ի փայտն երջանիկ ժամահարին» (Z—էջ 241բ), «Ի ժամահարն» (Դ—էջ 676), «Ի փայտն երջանիկ ժամահարին» (S—էջ 268ա), «Ի փայտն ժամահարին» (S—էջ 269ա, 270ա), «Ի ժամահարն» (S—էջ 272ա, 274ա), «Յերջանիկ ժամահարն» (S—էջ 273ա), «Յերջանիկ փայտն ժամահարին» (S—էջ 275ա)։

Այս գլուխը միշտ չէ, որ ձեռագրերում հաջորդում է ՂԱ գլխին (տե՛ս վերնագրի տողատակը)։ Գլուխների տարբեր հաջորդականությունն իր արտահայտությունն է գտել նաև տպագիրներում. $Պ_{1-3}$-ում, ինչպես նաև Կ. Պոլսի 1782 և 1789 թթ. հրատարակություններում, ՂԱ գլխին հաջորդում են ՂԴ և ՂԵ գլուխները՝ ՂԲ և ՂԳ համարակալմամբ, որոնց էլ հաջորդում են ՂԳ և ՂԲ գլուխները՝ ՂԴ և ՂԵ համարակալմամբ։ Հ. Նալյանն իր մեկնության մեջ հետևել է $Պ_{1-2}$-ի գլուխների այս հաջորդականությանը։ Գլուխների այս հաջորդականությանն է հետևել նաև Թ. Գուշակյանը իր թարգմանության մեջ։ $Պ_4$-ի հրատարակիչները վերանայել են գլուխների հաջորդականության կարգը։ Հիմք ընդունելով հնագույն ձեռագրերի գլխակարգը, մենք ևս անփոփոխ ենք թողել այդ հաջորդականությունը։ Գ. Խաչատուրյանը ՂԲ և ՂԳ գլուխները դրել է հավելված՝ առանց սակայն փոփոխելու գլուխների կարգը։

ՂԲ և ՂԳ գլուխները, ՀԵ գլխի հետ միասին (տե՛ս բան ԼԳ, ծնթ. 5, բան ՀԵ, ծնթ. 1) հարուցել են տարաբնույթ վեճեր ու կասկածներ։ Հ. Նալյանը կարծում է, որ կոչնակին նվիրված այս ճառը Նարեկացին գրել է ընդդեմ թոնդրակեցիների. «Նախ թուի ինձ, թէ սուրբ վարդապետս ընդդէմ պիղծ թոնդրակեցւոց արտադրեալ է զճառս, զի նոքա որպէս զեկեղեցի, այսպէս և զժամահարի զփայտն իբրև զաւելորդապաշտութիւն քամահէին»։ Ըստ նրա, Նարեկացին ձգտել է բավարարել այն կրոնավոր անձանց հետաքրքրությունը, որոնք խնդրել են

նրան գրել ինչպես իր Մատյանն առհասարակ, այնպես էլ կոչնակի խորհրդի բացատրությունը. «Որպէս զամենայն աղօթական բանս ի խնդրոյ ճգնաւոր եղբարց շարագրեաց, զանձին խոնարհեցուցանելոյ զեղանակս ուսուցանելով ի յաղօթելն, այսպէս և ի նոցանէ ստիպեցաւ զպատճառ կոչնակին հարման թարգմանօրէն յայտածել» («Գիրք մեկնութեան», էջ 711)։

Գ. Ավետիքյանը ևս կարծում է, որ թե՛ այս և թե՛ ՂԳ (ինչպես նաև ՀԵ) գլուխները Նարեկացին գրել է ընդդեմ թոնդրակեցիների. «Այս ինչ յայտնի երևի, զի զերկոսին զայսոսիկ բանս արար սուրբ վարդապետն ընդդէմ բարբանջանաց թոնդրակեցւոց», որովհետև «թոնդրակեցիք արհամարհէին զսովորութիւն ժամահարին»։ Չկասկածելով, որ այդ գլուխների հեղինակը Նարեկացին է, Ավետիքյանը շարունակում է. «Իսկ թէ արդեօք ի՞նքն եդ զայս ճառ ի կարգ աղօթիցս, թէ յայլոց եդաւ, չէ յայտնի. զի մեր ընտիր օրինակն ի յիշատակարանի անդ՝ թուէ ՂԴ աղօթս, և ընդ թիւ նոցա սաէ՝ յաւելան բանքն որ վասն ժամահարին, և վասն սրբարար մեռոնին» («Նարեկլուծ», էջ 481, ծնթ. 1)։ Ավետիքյանի հղած ընտիր ձեռագրի հիշատակարանը հայտնի չէ մեզ։ Թերևս խոսքը Նարեկացու վարքի մասին է, որի մեջ հայտնի ամենահին տարբերակում ասված է, թե Նարեկացին «Սկիզբն արար եւ խաւսեցաւ զգիրս աղաւթից՝ ըստ հայցման խնդրոյ կրաւնաւոր եղբարց՝ բանս ՂԵ» և «ընդ թիւք աղաւթից գրոցս բանն, որ վասն ժամահարին և սրբոյ միւռոնին» (ձեռ. 1568, էջ 119բ), ուր պարզ է ասված, թե Մատյանը բաղկացած է 95 գլխից և որ այդ գլուխների թվում են ժամահարի և սուրբ մյուռոնի մասին բացատրական ճառերը։

Ինչպես ԼԳ և ՀԵ, այնպես էլ ՂԲ և ՂԳ գլուխների հեղինակային պատկանելության և Մատյանի կազմում լինելու հարցերին ավելի մանրամասն անդրադարձել է պրոֆ. Մ. Մկրյանը։ Ելնելով այն հանգամանքից, որ Մատյանի առաջին տպագիրներում ՂԲ և ՂԳ գլուխները զետեղված են վերջում՝ իբրև ՂԴ և ՂԵ գլուխներ, և հենվելով Մատենադարանի 3929 ձեռագրին (մեր K ձեռագիրն է. պրոֆ. Մ. Մկրյանի գրքում ձեռագրի համարը նշված է սխալ՝ 2929, սխալ է նշված նաև գրչության տարեթիվը՝ 1257 թ.), որտեղ բնագիրը 95 գլխի փոխարեն բաժանված է 100 գլխի՝ նույն նյութի տարբեր համարակալմամբ, իսկ ՀԵ գլխի մի հատվածը (տ. 105—282) ներկայացված է իբրև առանձին՝ վերջին գլուխ, պրոֆ. Մ. Մկրյանը գտնում է, որ «Այս բոլորից հետո պետք է եզրակացնել, որ Նարեկացին ՂԲ և ՂԳ ոչ բանաստեղծական գլուխները, ինչպես և ՀԵ ու մի քանի այլ գլուխների վերջին հատվածները կա՛մ բոլորովին ինքը չի գրել, կա՛մ եթե երբևէ ինքն է գրել, ապա դրանք հորինել է անկախ իր պոեմից, այլ նպատակներով, որոնք սակայն հետագայում գրիչների կողմից ինչ-ինչ նկատառումներով խառնվել են բուն պոեմի տեքստին» (Մ. Մկրյան, Գրիգոր Նարեկացի, էջ 177)։ Ենթադրվել է նաև, որ ՂԲ—ՂԳ գլուխները թարգմանություն են այլ լեզվից, մեզ անհայտ աղբյուրներից (տե՛ս «Բազմավեպ», Վենետիկ, 1900, էջ 443)։

Նախ՝ թարգմանության մասին։ Թարգմանութիւն բառն այստեղ նշանակում է մեկնութիւն կամ բացատրութիւն։ Այսպես են հասկացել թե՛ Հ. Նալյանը («թարգմանօրէն բառս աստէն իմանի մեկնողօրէն», «Գիրք մեկնութեան», էջ 678), թե՛ Գ. Ավետիքյանը («ընդ կերպարանս թարգմանութեանն, հանդերձ տեսութեամբ մեկնութեանն կամ ըստ օրինակի բացայայտութեան», «Նարեկլուծ», էջ 481, ծնթ. 1), կամ՝ «աղօթք թարգմանօրէն, այսինքն՝ մեկնաբանականք» («Նարեկլուծ», էջ 510, ծնթ. 2)։ Ակներև է, որ այստեղ խոսք չի կարող լինել որևէ լեզվից Նարեկացու կատարած թարգմանության մասին։

Երկրորդ, Նարեկացին է արդյո՞ք այդ գլուխների հեղինակը, թե՞ ուրիշը։ Կարո՞ղ էր արդյոք դրանք գրած լինել նրա Հովհաննես եղբայրը։ Ձեռագրերը ոչ մի հիմք չեն տալիս դրանք ուրիշին վերագրելու համար։ Այդ գլուխների հեղինակը Նարեկացին է։ Եղբոր գործակցության մասին բանաստեղծի հիշատակությունը, կարծում ենք, վերաբերում է ոչ թե ստեղծագործական, այլ գրչական կամ խմբագրական բնույթի օգնությանը՝ Հովհաննեսի կողմից (տե՛ս «Յիշատակարան», ծնթ. 7)։ Նարեկացին ոչ մի ակնարկ չունի այդ գլուխներից որևէ մեկը

խնքը գրած չլինելու մասին։ Նա դիմում է իր անունից. «զայս աղաւթեցի» (բան ԼԿ, տ. 97),
«զայս վարդապետեցի» (բան ԼԴ, տ. 34), «Գովեստ ներբողից բուռմամբ խնկոց վերառաքեմ
քեզ, ամենախնամ» (բան ՂԲ, տ. 33), «Լո՛ւր ողորմութեամբ, տէր, պաղատանացս խնդրուա-
ծոց առ քեզ կարդալոյս։ Շնորհատրեալ այսու պարգեւաւ՝ գոհաբանութիւն քեզ վերընծայեմ.
հզաւր» (բան ՂԴ, տ. 200—202)։

Երրորդ, այն ենթադրությունը, թե այդ գլուխները հետագայում ուրիշների կողմից են
միացվել, որոնց իբրև ամենահավանական հեղինակ նշվում է Գրիգոր Սկևռացին (տե՛ս
Մ. Մկրյան, Գրիգոր Նարեկացի, էջ 174), ապա պետք է ասել, որ այդ ենթադրության համար
ևս չկան լուրջ կռվաններ։ Ճիշտ է, Գ. Ավետիքյանը ՂԴ գլխի համար ասում է, թե «Եւ թերևս
յօրինակողաց մուծեալ իցէ. քանզի և օրինակք ոչ սակաւք չունին ի կարգի աղօթիցս զրանս,
որ վասն Մեռոնի» («Նարեկլուծ», էջ 510, ծնթ. 1), սակայն նա ոչ մի ակնարկ չի անում, թե
այդ ընդօրինակողը կարող էր լինել Գրիգոր Սկևռացին։ Սկևռացու մասին խոսում է Հ. Նալ-
յանը, բայց նա նկատի ունի միմիայն Մատյանի ընդարձակ խորագիրը։ Նալյանը գտնում է,
որ այդ ընդարձակ խորագրից հեղինակային է միայն «ի խորոց սրտից խաւսք ընդ աստու-
ծոյ» արտահայտությունը, իսկ մնացածը վերագրում է Գրիգոր Սկևռացուն (տե՛ս «Գիրք
մեկնութեան», էջ 17)։ Նալյանի այս դիտողության մեջ կա մասնակի ճշմարտություն, որը
վերաբերում է Նարեկացուն տրված գովասանական մակդիրներին՝ խորագրի վերջում (տե՛ս
խորագրի վերաբերյալ ծանոթագրությունը)։ Նալյանը, այսպիսով, խոսք չունի այն մասին,
թե Հե, ՂԲ և ՂԴ գլուխները Մատյան է մուծել Գրիգոր Սկևռացին։ Որ այդ գլուխները եղել
են Մատյանում Սկևռացուց առաջ և նրանից անկախ, կարելի է համոզվել հետևյալ փաստից.
Սկևռացու ընդօրինակությունը պատկանում է ձեռագրերի այն խմբին, որոնք չունեն Մատյանի
նորահայտ մի քանի հատվածները (բան Զ, տ. 25—29, բան Ժ, տ. 33—40), մինչդեռ այս
հատվածներն ունեցող ձեռագրերը ևս ունեն դավանաբանական-մեկնաբանական այդ գլուխ-
ները՝ նույն հաջորդականությամբ։ Նշանակում է, որ այդ գլուխները եղել են Մատյանում
սկզբից։ Այլ հարց է, որ այդ գլուխները Նարեկացին կարող էր գրած լինել իր եղբոր՝ Հով-
հաննես Նարեկացու խորհրդով և նրա կողմից էլ դրված լինել Մատյանում։ Բայց այս ենթա-
դրության համար էլ դեռևս չկան ձեռագրական կամ մատենագրական հիմնավոր փաստարկ-
ներ։

Չորրորդ, այն փաստը, որ Մատենադարանի 3929 ձեռագրում (K), ինչպես նաև Վատի-
կանի ձեռագրում, Մատյանը բաժանված է 100 գլուխների և Հե գլխի մի հատվածը դրված է
վերջում՝ իբրև ավարտական գլուխ, դրանից չպետք է բանասիրական լուրջ եզրակացություն-
ներ անել։ Ձեռագրի այդ յուրահատկությունը պարզապես գրչի վերաբերմունքի հետևանք է.
նա չի հետևել ընդունված համարակալմանը։ Չի բացառված նաև, որ դա առաջանար պարզ
շփոթությունից։

Ասենք նաև, որ կառուցվածքորեն սպասելի էր, որ ՂԲ և ՂԴ գլուխները իսկապես լինեին
վերջում՝ ՂԴ և ՂԵ գլուխներից հետո։ Թերևս տեղաշարժն առաջացել է այն մտավախությունից,
որ գրիչները կարող էին չընդօրինակել դրանք Մատյանում, ուստի ՂԵ գլուխն են դրել ավարտ՝
դավանաբանական ՂԲ և ՂԴ գլուխները անպայման Մատյանի կազմում պահպանելու մտա-
դրությամբ։ Հետևելով հնագույն և լավագույն ձեռագրերին, ՂԲ և ՂԴ գլուխները թողնում ենք
Մատյանում՝ իրենց իսկ հաջորդականությամբ։
2. ...կոչեցեր զպակասամիտս ի գինիդ ուրախութեան—Համմտ. «Եկա՛յք կերա՛յք ի հացէ
իմմէ, և արբէք զգինի իմ, զոր խառնեցի ձեզ» (Առակք, Թ, 5)։
3. G-ի գրիչը այս տողի ամենախնամ բառով ընդհատել է ընդօրինակությունը՝ կցելով
«Սուրբ Երրորդութիւն եւ մի աստուածութիւն յաւիտեանս, ամէն» վերջվածքը՝ իբրև ավարտ։
թե՛ ՂԲ և թե՛ ՂԴ գլուխները գրիչն ընդօրինակել է հատվածաբար, սկզբից, որի մասին էլ

արել է նշում. «Ո՛վ ընթերցող, աղաչեմ անմեղադիր լեր, զի զժամանարին եւ զՄեռոնին
աղաւթքս սակաւ մի գրեցի, եւ զայլն՝ լիով» (ձեռ. 5098, էջ 253բ—254ա)։
4. Տան—այս ընթերցվածի փոխարեն Ավետիքյանն առավել հարմար է համարում տուն
ընթերցվածը, գտնելով, որ Նարեկացին «ակնարկէ յաւձանն, զոր եօծ Յակոբ ի տեղւոջ տես-
լեանն և զտեղին կոչեաց Բեթէլ, այսինքն՝ տուն աստուծոյ (Ծննդ., ԻԸ, 18—19, ԼԵ, 7)»
(տե՛ս «Նարեկլուծ», էջ 483, ծնթ. 14)։ $Պ_1$-ն ունի տունկ. այդպես ունի և մեր f_1 ձեռագիրը։
$Պ_2$-ից սկսած տպագրերն ունեն տան, իսկ Վենետիկի 1840 թ. և Բուենոս Այրեսի 1948 թ.
հրատարակությունները՝ տուն։ Քանի որ բնաստեղծն ակնարկում է կոչնակը և այն բնութա-
գրում որպես հավաքման ազդարար, այս առումով էլ նրա խորհուրդը կարող էր համարվել
հնուց ավանդված տուն («տան իմն աստուածաւանդ կրթութեան կարգեալ ի ծեռուստ»,
(տ. 44), որը հրավիրում է մարդկանց ուրախության հանդեսի (տե՛ս «Նոր. բառգիրք հայ-
կազեան լեզուի», Բ, էջ 901, տան բառի բացատրությունը)։ Ըստ այսմ էլ նախընտրեցինք
տան ընթերցվածը։
5. Ի մեծ ազդմանէ այսր աղաղակի.... Ծանդեալ վերայցէ դրանդն ամրութեան...—Համմտ.
«Աղաղակէին մի առ մի և ասէին. սուրբ, սուրբ, սուրբ. Տէր զօրութեանց, լի է ամենայն եր-
կիր փառօք նորա։ Եւ վերացաւ դրանդն ի ձայնէն, զոր աղաղակէին...» (Ես., Զ, 3—4)։
6. Հարաւ անա փող աւագափող—Համմտ. «Հարցեն փող աւագափող» (Ես., ԻԷ, 13)։
7. ...ջրոյն առակաւ—Նարեկացին կոչնակի միստիկ խորհուրդը տեսնում է հավատացյալ-
ներին հոգևոր բարեպաշտություն շնորհելու և, ընդհակառակն, խաչի ու եկեղեցու թշնամի-
ներին հալածելու, ցրելու, երկյուղ պատճառելու մեջ՝ որպես դատաստանի օրվա փողի
խորհրդանիշի։ Այստեղ ակնարկում է Մովսես մարգարեի հրաշագործությունը. նա գավազա-
նով ճեղքեց Կարմիր ծովը և հրեաներն անցան ջրից (տե՛ս Ելք, ԺԴ, 15—31), այդպես էլ, ջրի
նման, կոչնակի ձայնից, ըստ բանաստեղծի, ցնդում ու ցրվում են խաչի ու եկեղեցու թշնա-
միները։
8. ...տանեցաւ նիւթս այս խորհրդական կենաց—ակնարկում է կենաց փայտը (Համմտ.
Առակք, Գ, 18)։
9. ...անարգեցաւ երկաթ ի պէտս պատերազմի—երկաթը, որից սուր են պատրաստում
պատերազմի համար, չարիքի մայր է, իսկ եթե խոփ կամ մանգաղ՝ բարիքի։ Ըստ Նարե-
կացու՝ կոչնակի խորհուրդը վնասակարը օգտակարի, սուրը՝ խոփի, պատերազմը՝ խաղաղու-
թյան, հոգևոր քունը արթնության փոխարկելու մեջ է։
10. ...իբր զարթութիւն տեառն՝ ի սանձս երիվարին—Համմտ. «...որ ի սանձս ձիոյն՝ իցէ
սրբութիւն տեառն» (Զաք., ԺԴ, 20)։
11. Ոչ գծեաց ի քար տաճարին մուրճ ինչ գործողի—Համմտ. «...ի շինել տանն....և մուրճ
և ամենայն ինչ երկաթի ոչ հնչեաց ի շինել նորա» (Գ Թագ., Զ, 7)։
12. Ոչ ի գլուխս ամսոցն եւ կամ յեւթնիցս եւթներորդ յոբելինիցն՝ ի յանկեան ուրեք
խափանմամբ փողէ—կոչնակի հնչման խորհուրդը Նարեկացին հակադրում է հին հրեաների
տոնական փողերի ազդեցությանը, որոնք հնչում էին միայն ամեն ամսվա սկզբին և մեկ էլ
յոթ անգամ յոթ տարի հետո՝ ազդարարելու հոբելյանական 50-րդ տոնական տարին (տե՛ս
«Նարեկլուծ», էջ 486—487, ծնթ. 37)։
13. Կոտորեցան սուսերք... փոխանեալ ի խոփս եւ ի մանգաղս—Համմտ. «Եւ ձուլեսցեն
զսուսերս իւրեանց ի խոփս, և զտիգս իւրեանց՝ ի մանգաղս» (Ես., Բ, 4)։
14. ...ըստ իմաստակի ումեմն ասարի—Հ. Նալյանը կարծում է, որ խոսքը Հոմերոսի
մասին է. «զի Հոմերոս զձայնն վիրաւորութիւն օդոյ սահմանեաց» («Գիրք մեկնութեան»,
էջ 716)։
15. ...զոր առակողին բան՝ ճառն կոչմամբ այսու տեսակաւ զայն տպաւորեաց—Նարե-

կացին կոչնակի ձայնը նմանեցնում է հրեշտակի ձայնին, հիշեցնելով, որ Սողոմոնն էլ այն նմանեցրել է թռչունի ձայնի (տե՛ս Ժողով. ԺԲ, 4)։

16. ...զարթուցիչ Հոգւոյն առ մեզ, ճառ ....եղիւէին—Համտ. Դ Թագ., Գ, 15։

17. Եւ արդ—Բուենոս Այրեսի 1948 թ. տպագիրը չունի Եւ. իսկ 142 տողի անաղանդ բառի փոխարեն ունի անաղարտ («Նարեկ. Մատյան ողբերգության», էջ 24)։ Երկուսն էլ, կարծում ենք, տպագրական վրիպակներ են։

18. Մտցէ ձայնդ.... ընդ պատուաստ յաւիցս շաղկապութեան—Համտ. Եբր. Դ, 12։

19. Բուենոս Այրեսի 1948 թ. հրատարակությունը ճողմ բառի փոխարեն ունի ճով («Նարեկ. Մատյան ողբերգության», էջ 247), Տարընթերցվածը բացահայտ վրիպակ է, բնագիր է մուծվել թարգմանությունից։

20. Վենետիկի 1840 թ. տպագիրը և նրանից ծագող վերահրատարակությունները, ինչպես նաև Բուենոս Այրեսի 1948 թ. հրատարակությունը խարդախութեանց բառի փոխարեն ունեն խարդախութեան տարընթերցվածը, որը, կարծում ենք, վրիպակ է և առաջացել է տպագրական սխալից։

21. Միայն Բուենոս Այրեսի 1948 թ. հրատարակությունը, թերևս վրիպակաբար, ունի ձայն փոխանակ ձայնէ։

22. ...զայս ծառ Սաբեկայ—բանաստեղծը կոչնակի խորհուրդը զուգահեռում է Սաբեկ ծառի խորհրդի հետ։ Այդ ծառի ճյուղից աստված կախեց այն խոյը, որն Աբրահամը, ըստ աստվածաշնչական ավանդության, զոհաբերեց իր Իսահակ որդու փոխարեն (տե՛ս Ծննդ., ԻԲ, 13), մինչդեռ կոչնակի խաչանշան փայտը պարգևում է հոգու փրկություն։

23. Տ. 168—169-ում կա քերականական անհամաձայնություն. վանեսցի եզակի թվով բայը դրված է ինքնաստեղծութիւնք հոգնակի թվով ենթակայի հետ։ Տարահյուսական այսպիսի անկանոնությունը բնորոշ է Նարեկացուն։ Այդ անկանոնությունը սրբագրված է միայն Բուենոս Այրեսի 1948 թ. հրատարակության մեջ՝ Գ. Խաչատուրյանի կողմից։

24. Տ. 170-ի յումեմն բառից մինչև տ. 171-ի ապականողաց բառը ներառյալ վրիպակաբար դուրս է մնացել Գ. Ավետիքյանի «Նարեկլուծի» 1827 թ. հրատարակության բնագրից («Նարեկլուծ», էջ 480)։

25. ...որպէս զՊաւղոսն եւ զՄատթէոսն—Թե՛ Պողոսը և թե՛ Մատթեոսը, ավետարանական ավանդության համաձայն, հեթանոսներ էին, որոնք լսելով տիրոջ կոչը՝ հետևեցին նրան և դարձան քրիստոնյաներ (տե՛ս Գործք, Թ, 1—9, Մատթ., Թ, 9), այդպես էլ կոչնակի ձայնն է արթնացնում հավատացյալներին հոգևոր մահատիպ քնից՝ հետևելու աստվածային պատվիրաններին՝ հոգով վերափոխվելու համար։

26. ...պանծալի լծակաւ ամբառնալեաց նոր տապանակիդ—Համտ. Ելք, ԻԵ, 14։

27. Լուիցեն.... ականջք խլից—Համտ. Ես., ԼԵ, 15։

28. Պարզեսցին.... լեզուք ճամրացելոց—Համտ. Ես., 6։

29. ...կամուրջ ցանկալի—փոխաբերաբար այսպես է կոչում կոչնակը, կամուրջ, որով կարող են՝ անցնել արդար հոգիները երկրից երկինք՝ հանդերձյալ կյանքում աստծուն ձուլվելու համար («...միանալ ի ճեզ անընդմիջելի»)։

ԲԱՆ ՂԳ

1. Ձեռագրերի մի ստվար խումբ ունի սովորական («Վերստին յաւելուած.... խաւսք ընդ աստուծոյ») վերնագիրը (տե՛ս վերնագրի տողատակը), որը, կարծում ենք, գրչական հավելում է։ Այս գլուխը ևս, ՀԵ և ՂԲ գլուխների նման, դարձել է բանասիրական վեճերի առարկա (տե՛ս բան ԼԳ, ծնթ. 5 և բան ՂԲ, ծնթ. 1)։

Գլխի համար ունեն նշումներ. Բ «Սուրբ մեռոնին չկայր» (էջ 256ա, գաղափար օրինակը չի ունեցել ՂԳ գլուխը), Հ... «ի սուրբ մեռոնին», Տ՝ «ի լուսաբուղխ սուրբ մեռոնն» (էջ 280ա, 284ա, 287ա), «ի սուրբ մեռոնն» (էջ 281ա, 282ա, 292ա), «ի լուսափայլ մեռոնն» (էջ 285ա), «ի հրափայլ սուրբ մեռոնն» (էջ 295ա)։

2. Փառաւորութիւն—$Պ_{1-3}$-ը, ինչպես նաև 1782 և 1789 թթ. Պոլսի տպագիրներն ունեն փառաւորութիւն։ «Նարեկլուծի» 1827 թ. հրատարակությունն ունի փառաւորելի։ $Պ_4$-ը, ինչպես նաև Վենետիկի 1840 թ. և Բուենոս Այրեսի 1948 թ. հրատարակություններն ունեն փառաւորութիւն, ինչպես մեր օգտագործած ձեռագրերի լավագույն մասը, որը և համարում ենք նախընտրելի։

3. ...արեգակն անաշառասփիռ—Համտ. «...զարեգակն իւր ծագէ ի վերայ չարաց և բարեաց» (Մատթ., Ե, 45)։

4. ...ճրագ ոտից եւ լոյս ճանապարհաց—Համտ. «Ճրագ է բան քո ոտից իմոց, և լոյս շաւղաց իմոց» (Սաղմ., ՃԺԸ, 105)։

5. $Պ_3$-ը, ինչպես նաև 1782 և 1789 թթ. Պոլսի տպագիրները, անշուշտ, վրիպակաբար, չունեն՝ բանիս այս յարմարութեան՝ տանեմք պարերգութեամբ։

6. ...նայրն իմ սկզբնաստեղծ—ակնարկում է նախաստեղծ մարդուն՝ Ադամին։

7. ...ճանզի որք զիւղոյն կրեցին աւգտութիւն—ակնարկում է ավետարանական առակի իմաստուն կույսերին (տե՛ս Մատթ., ԻԵ, 1—10)։ Նրանք իրենց ճրագների համար յուղ էին վերցրել և արժանացան Քրիստոսի ողորմածությանը։ Ուստի Նարեկացին իւղ և ողորմութիւն բառերը նույնացնում է՝ յուղը ողորմության օրինակ դիտելով։ Եվ որովհետև ըստ քրիստոնեական հայացքի՝ աստված ոչ միայն սեր է, այլև ողորմություն, ուստի Նարեկացին նախ յուղը նույնացնում է ողորմության, ապա՝ աստծո պատկերի հետ։ «Իւղ՝ ողորմութիւն կոչի»,—գրում է Նարեկացին Երգ երգոցի մեկնության մեջ (տե՛ս «Մատենագրութիւնք», Վենետիկ, 1840, էջ 290)։ Նարեկացին այստեղ դիմում է ստուգաբանության՝ ելնելով հունարեն ἔλαιον (ձեթ, յուղ) և ἔλεος (ողորմություն, կարեկցանք, գթասրտություն) բառերի հնչյունական նմանությունից։

8. ...ճանզի որպէս սիրոյն անուան կցորդես ստուած—Համտ. Ա. Յովհ., Դ, 8։

9. ...զի որպէս սոյն մասն ի կենդանւոյն ոչ ի կերակուր նուամայիր—Հին օրենքը զոհի ճարպը արգելում էր ուտել, այն նվիրվում էր աստծուն (տե՛ս Ղևտ., Է, 22—25)։ Այդպես էլ օրհնված յուղը ուտելու համար չէ, այլ աստծուն նվիրելու։

10. Յակոբ զփառն պատկեր վիմին, ի խորճուրդ երկար՝ խորանին ընտրութեան—Հակոբ նահապետը, ըստ աստվածաշնչական ավանդության, Միջագետքի ճանապարհին յուղով օծեց այն քարը, որ իբրև սնար դրել էր գլխի տակ, ինչ և դարձավ խորանի խորհրդանիշ (տե՛ս Ծննդ., ԼԵ, 14)։

11. ...տեսութեամբ սանդղոցն յարմարութեան, եւ զիս ի վեր տանելոյն—Համտ. Ծննդ., ԻԸ, 12։

12. ...զարձանն իւղեալ կառոյց նպատակ—Համտ. Ծննդ., ԻԸ, 18։

13. ...զերափառ իւղոյն զարմանազան կենդանագրութիւն—Ահարոնի քահանայական օծման նկարագրությունը Նարեկացին համարում է նախաստեղծ Ադամի փառքի վերստին ստացման օրինակ, աստծո շնորհի հեղում մարդու վրա՝ օծման յուղի ձևով, ինչը և օրհներգել է Դավիթ արքան (տե՛ս Սաղմ., ՃԼԳ, 2)։

14. ...երէ ոչ եղջերբ իւղոյն աւրճնութեան ձեռնադրեալ—Համտ. Ա Թագ., ԺԶ, 13։ Առանց օծման՝ թագավորի իշխանությունն անգամ օրինավոր չէր։

15. Պճնութեան—այս բառի փոխարեն $Պ_{1-3}$-ը, ինչպես նաև Պոլսի 1782 և 1789 թթ. տպագիրներն ունեն պերճութեան ընթերցվածը, որը մեր օգտագործած ձեռագրերը չեն տալիս։

16. Եւ զիա՞րդ զնախնին վենից մոռացայ, զծառայն մեծիդ—ի տարբերություն Սուրբ

Գրքի, ուր Մելքիսեդեկի մասին ասված է միայն, թե նա արքա և «քահանայ էր աստուծոյ բարձրելոյ» (Ծննդ., ԺԴ, 18), և ոչ մի խոսք չկա այն մասին, թե ո՞ւր և կամ ո՞ւմ կողմից էր օծվել, Նարեկացին նշում է նրա օծման վայրը՝ Ձիթենյաց լեռը («ի Ձիթաստանեաց լերինն, ուր յետոյ ոտք մարմնացելոյն աստուծոյ զետեղեալ կացին») և որ նրան օծել են հրեշտակները («ի վերնոց անտի հրեշտակաց ի պտղոց տեղւոյն իւղեցաւ»)։ Նարեկացու աղբյուրի մասին Գ. Ավետիքյանը գրում է. «Առեալ է այս յերկար պատմութենէ ինչ յունաց, որ կայ թարգմանեալ Յայսմաւուրսն, մարտի 25» («Նարեկլուծ», էջ 515, ծնթ. 34)։ Ավետիքյանը նկատի ունի մի գրվածք («Յիշատակ Մելքիսեդեկի քահանային»), ուր նշված է, որ Մելքիսեդեկը ճգնել է Ձիթենյաց լեռներում (տե՛ս «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ ՆԿՁ)։

17. ...ուստի շիրմի սկզբնահաւրն պաշտպան—հրեական ավանդության համաձայն, Նոյը Ադամի գանգը թաղել է Գողգոթա լեռան վրա։ Դրանից էլ՝ Գողգոթա նշանակում է «գանգի տեղ», «տեղի գագաթան» («Բառարան Սուրբ Գրոց», էջ 122)։ Ըստ այդմ էլ՝ այնտեղ է գտնվում Ադամի շիրիմը, և Մելքիսեդեկը համարվում է նրա առաջին պահապանը (տե՛ս «Նարեկլուծ», էջ 515, ծնթ. 35. «Նարեկ. Մատեան ողբերգության», էջ 278, ծնթ. 15)։

18. Կենագործութեանդ—այս բառի փոխարեն $Պ_1$-ը և «Նարեկլուծի» 1827 թ. հրատարակությունն ունեն կենդանագործութեանդ։ Մեր օգտագործած ձեռագրերը չեն տալիս այդ ընթերցվածը։

19. Մատո՛, տէր Յիսուս, վիրացս աներեւութից զայս ձէթ լուսանիւթ—Նարեկացին այստեղ դիմում է զուգահեռի՝ իր և Ավետարանում հիշված այն ուղևորի միջև, որին կողոպտել էին ավազակները և որին օգնություն է ցույց տալիս բարի սամարացին (տե՛ս Ղուկ., Ժ, 30—34)։ Սամարացին նրա վերքերին որպես սպեղանի ձեթ և գինի էր հեղել, բանաստեղծն էլ ցանկանում է, որ Հիսուսը սիրո իր անապական գինու հետ («անապակ գինեաւ սիրոյդ») օրհնված ու փրկարար յուղի կաթիլներ լցնի («զկաթուածս աւրհնութեան իւղոյդ փրկութեան») իր հոգու մահացու խոցի խարաններին՝ բուժելու համար։

20. Ի վերայ Դաւթի Հոգի քո—Համմտ. Ա Թագ., ԺԶ, 13։

21. Սաւուղ.... յորժամ ածումն ժամանեցաւ զագարան նորին—Համմտ. Ա Թագ., Ժ, 1—6։

22. Կայսերս ոմանս նշանաւորս—ըստ հին լուծմունքի՝ խոսքը հեթանոսության շրջանի կայսրերին է վերաբերում. «զԿիւրոս ասէ, որ անուամբ երկնաւորին օրհնեալ անուանեաց զնա. սոյնպէս և Դարեհ, որ օգնական եղև ի դարձն ժողովրդեանն և ի շինութիւն տաճարին» (Ձեռ. 5650, էջ 433ա)։ Ավելի համոզիչ է թվում Գ. Ավետիքյանի բացատրությունը. խոսքն այն կայսրերի ու թագավորների մասին է, որոնք հրաժարվելով հեթանոսությունից՝ ընդունեցին քրիստոնեություն «որպէս զԿոստանդիանոս ի լատինացւոց, զՏրդատ ի հայոց» և ուրիշներ (տե՛ս «Նարեկլուծ», էջ 516, ծնթ. 40)։

23. Բանն, որ առ Կիւրոս—պարսից արքա Կյուրոս Մեծը (558—528 թթ. մ. թ. ա.) Բաբելոնը նվաճելուց հետո թույլ տվեց հրեաներին բաբելոնական գերությունից վերադառնալ Հրեաստան և շինել Երուսաղեմի տաճարը։ Մեծարելով Կյուրոսին, մարգարեն նրան կոչում է «աստծո օծյալ» (տե՛ս Ես., ԽԵ, 1), որը Նարեկացին համարում է նրա մեծության իսկական պատճառը («զածեալն ձայն նմին մեծ վարկաւ»)։

24. Առ Հեղիաս.... զածելութիւնն ի Քորէբ ազգեաց Յէուայ եւ Ազայելի—ըստ Ս. Գրքի՝ աստված Եղիա (Նարեկացու մոտ՝ Հեղիաս։ Տե՛ս բան ԼԴ, ծնթ. 14) մարգարեին առաքեց Յէուին Իսրայելի, Ազայելին Ասորեստանի թագավորներ օծելու (տե՛ս Գ Թագ., ԺԹ, 15—16), որպես նշան այն բանի, որ այդ ժողովուրդներին հանելու է կռապաշտությունից։

25. Իւղ թափեալ անուն փեսայիդ—Համմտ. Երգ երգոց, Ա, 3։ «Նարեկլուծի» 1827 թ. հրատարակությունը Իւղ բառի փոխարեն ունի Իսկ («Նարեկլուծ», էջ 495), որը, անկասկած, տպագրական վրիպակ է։

26. Հոգի—այսպես ունեն $Պ_3$-ը, ինչպես նաև 1782 և 1789 թթ. Պոլսի հրատարակություն-

ները։ Սկսած «Նարեկլուծի» 1801 թ. հրատարակությունից, մյուս բոլոր հետագա տպագիրներն ունեն հոգին՝ որոշյալ առումով։ Ձեռագրերը տալիս են հոգի՝ անորոշ առումով, որը և դնում ենք բնագրում՝ իբրև ճիշտ ձև։

27. ...ի յածմանէ անտի սկսար քարոզել զԱւետարանն արքայութեան—Համմտ. Ղուկ., Դ, 18։

28. ...ածեալ եւ զառն աստուծոյ, բարձող մեղաց աշխարհի—Համմտ. «Ահաւասիկ գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի» (Յովհ., Ա, 29)։

29. ...ածեալն կոչմամբ ի հրեշտակացդ փառաւորողաց արարածոց երկրի ծանուցար—Համմտ. Ղուկ., Բ, 11։

30. ...զփչումն կենդանութեան ի դէմս մեր... ազդեցեր—Համմտ. Ծննդ., Բ, 7։

31. ...իմաստութիւն ումեմն երջանկի—ակնարկում է Սիրաքի որդի Հեսուին։ ...ասելով առ ումն։ Նկատի ունի Սամուել մարգարեին (տե՛ս Σοφία Σειραχ, XLVI, 16—22)։ Սիրաքի գրքի հայերեն ամբողջական թարգմանությունը չի հասել մեզ (տե՛ս Արգարյան Գ., Սիրաքի գրքի հընագույն թարգմանության նորահայտ հատվածներ, «Էջմիածին», 1966, ԺԱ—ԺԲ, էջ 59—70)։ Նարեկացին օգտվել է այդ գրքի ամբողջական թարգմանությունից։

32. ...իւղեփեցական գինի—(Համմտ. Երգ երգոց, Ա, 3), ... զմուռս առաքինութեան—(Համմտ. Երգ երգոց, Դ, 6), ...զմուռս եւ կնդրուկ մաքրութեան վառուց—(Համմտ. Երգ երգոց, Դ, 14)։

33. ...վկայեաց յայտնի, թէ զկնի վաթսուն եւ ինն եւթներորդաց սպանցի ածեալն—ակնարկում է Քրիստոսի խաչելությունը՝ ըստ Դանիել մարգարեի տեսիլքի (տե՛ս Դան., Թ, 25—26), ուր յոթնյակների թիվը բաժանված է յոթ յոթնյակի՝ մինչև Քրիստոսի օծումը և վաթսուներկու յոթնյակի՝ մինչև խաչելությունը։ Նարեկացին տալիս է ընդհանուր գումարը՝ վաթսունինն։

34. ...Զաքարիայ Ադդովայ, որ ի Բարեքեայ.... ի մասունս եւրանց առաջադրութեանց զնիւցն վառեալ... զերաբնապէս նախազեկուցեր—Համմտ. Զաք., Ա, 1, 7։ 148-րդ տողում միայն Բուենոս Այրեսի 1948 թ. տպագիրը որ ի Բարեքեայ ընթերցվածի փոխարեն ունի որդի Բարեքեայ։ Զաքարիա մարգարեն Բարեքիայի որդին էր, Ադդովի թոռը (տե՛ս «Բառարան Սուրբ Գրոց», էջ 198)։ Որդի տարընթերցվածը հայտնի է եղել Գ. Ավետիքյանին («Նարեկլուծ», էջ 519, ծնթ. 55)։ Մեր օգտագործած ձեռագրերից մի քանիսը ևս ունեն այդ տարընթերցվածը։ Գ. Խաչատուրյանը ըստ երևույթին ունեցել է ձեռագիր աղբյուր՝ որդի տարընթերցվածը նախընտրելու համար։ $Պ_3$-ը, ինչպես նաև Պոլսի 1782 և 1789 թթ. տպագիրներն ունեն նախազեկուցեալ, Բուենոս Այրեսի 1948 թ. հրատարակությունը՝ նախազեկուցանէր, մյուս բոլոր տպագիրները՝ նախազեկուցեր (սահմ. եղ., անց. կատ., 2-րդ դեմք)։

35. Զոր ըստ աւրինին.... մատուցեալ լինէր, պանք բաղարջընծայք եւ նաշիհք իւղովք խառնեցեալք (տե՛ս Ելք, ԻԹ, 2, Ղևտ., Բ, 2—3), եւ զուարակք եզանց իւղարկեալք (տե՛ս Ելք, ԻԹ, 10), ...եւ հաւուց ոմանց քաքաւմամբ յազգակից ճարպին ի յարիւն (տե՛ս Ղևտ., ԺԴ, 5—7)։

36. ...եւ ոչ ճաշակել զքեզ, քաղցրութիւն—Համմտ. Սաղմ., ԼԳ, 9։

37. ...ըստ սաղմոսողին, զուարթ գործեցես—Համմտ. Սաղմ., ՃԳ, 15։

38. ...զմոխրոյն բշուառ տեսութիւնն. ...փոխարկեսցուք ի պայծառութիւն յաւէժ ուրախութեան—Համմտ. «...փոխանակ մոխրոյն՝ օծումն ուրախութեան, և զգաւորացն հանդերձ փառաց՝ փոխանակ ոգւոցն վհատութեան» (Ես., ԿԱ, 3)։

39. ... անուամբ քո փրկեալ՝ յոգի զաւրութեան Հաւր անուանեսցուք—(Համմտ. Ես., ԺԱ, 2)։ ...որոյ ծերութիւնն առակի ի ձէր պարարտութեան—Համմտ. Սաղմ., ՂԱ, 11։

40. ...կամ ածանելն իւղով զգլխոյն վերամբարձութիւն—Համմտ. Սաղմ., ԻԲ, 5։

41. ...զի՞նչ ճրագին լուսաւորելոյ շնորհակալութիւն—Համմտ. «Դու լուսաւոր առնես ճրագ իմ, տէր. աստուած իմ, լոյս արա ինձ ի խաւարի» (Սաղմ., ԺԷ, 29)։ Գ. Ավետիքյանը

գտնում է, որ «Մարթ է լուսաւորելոյ ընթեռնուլ զատ. լուսատր ելոյ, *քանզի և ի մի օրինակ դնի՝* լուսատր եղելոյ» *(«Նարեկյուծ», էջ 520, ծնթ. 60)։*

42. Հաստատեցէ՛ք զիս իւղով եւ գեղեցկազարդ խնձորով յարկեալ ծածկեցէք *(Հմմտ. Երգ երգոց, Բ, 5)*, եւ ի պարտէզ իւղենեաց տածեալ զրգեցէ՛ք *(Հմմտ. Երգ երգոց, Ե, 1, Զ, 1)։*

43. ...զծածուկս զաղտնեացդ անտեսից իմաստութեամբ քո յայտնի արարեր—*Հմմտ. «Դու, Տէր, զճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս եւ զծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ» (Սաղմ., Ծ, 8)։*

44. ...զՀոգի անմահից փչման սովաւ եւ ի սոյն արդիւնաւորեցեր—*Նարեկացին զուգահեռ է տանում Սուրբ Հոգու և մյուռոնի միջև. առաքյալները զորացան Սուրբ Հոգու փչմամբ (տե՛ս Յովհ., Ի, 22), հավատացյալները Հոգու շնորհ և ներքին զորություն են գտնում մյուռոնի օծմամբ։*

45. ...նստելոցս յերկրի խաւարի ըստ նմանութեան քո, տէր, ծագեցեր—*Հմմտ. Ես., Թ, 2։*

46. ...ոչ յոլովից խառնից.... զանազան ծաղկանց.... զայս իւղ աւծութեան—*Մովսիսական օրենքով օծման յուղը պատրաստվում էր զանազան ծաղիկների և անուշահոտ խեժերի խառնուրդից (տե՛ս Ելք, Լ, 22—25), մինչդեռ քրիստոնեական կրոնական ըմբռնման համաձայն, մյուռոնը տարբերվում է օծության այդ յուղից, որովհետև նրան խառնված է Քրիստոսը՝ զորությամբ և ոչ թե նյութապես (տե՛ս նաև «Նարեկյուծ», էջ 523, ծնթ. 72)։*

47. Ընդ ողոմնի.... երզեմ.... փեսայիդ.... համբուրեալ ի յիղձս մտաց զհոտ իւղոց քոց, քան զամենայն խունկս *(Հմմտ. Երգ երգոց, Ա, 2)*, եւ իբր զբանս կենաց յաւիտենականաց ունողի, ըստ.... աւետարանչին *(Հմմտ. Յով., Զ, 69)*, զհետ քո ի հոտ իւղոց քոց ընթացուք *(Հմմտ. Երգ երգոց, Ա, 3)։*

48. Իւղ—*այս բառի փոխարեն Պ$_4$-ը գլխավոր տարընթերցվածների ցանկում ունի* խունկ։ *Տարընթերցվածը հայտնի չէ այլուստ։*

49. Սոյն իւղ.... զհրեայն եւ զխուժն, զհնդիկն եւ զբարբարոսն, զսկիւթացին եւ զելլենացին... զտէրն ազատ եւ զստրուկն ծառայածին քրիստոսեան արարեալ—*Հմմտ. «...Մերկացարուք զհին մարդն գործովքն իւրովք, և զգեցարուք զնորն նորոգեալ ի գիտութիւն, ըստ պատկերի արարչին իւրոյ, ուր ոչ է հրեայ եւ ոչ հեթանոս, թլփատութիւն և անթլփատութիւն, խուժ, դուժ, սկիւթացի, ծառայ, ազատ, այլ ամենայն և յամենայնի Քրիստոս» (Կողոս., Գ, 10—11)։ Հմմտ. նաև՝ Գաղ., Գ, 26—28։*

50. ...զի թէ անէծք սաղմոսողին ձիթոյ առակաւ ընդ ոսկերս չարին համայնիւ բաշխի—*տե՛ս Սաղմ., ՃԸ, 18։*

51. *Տ. 302—303—Հմմտ. Եզ., ԻԸ, 13—16։*

52. ...որ Աւետարանաւն կենաց խնկիս յարակայ—*Հմմտ. Ղուկ., Բ, 11։*

53. Դո՞ւ ես աւծեալն՝ որդի աւրհնելոյն—*Հմմտ. «Դո՞ւ ես Քրիստոս որդի աստուծոյ աւրհնելոյն» (Մարկ., ԺԴ, 61)։ Հմմտ. նաև՝ Մատթ., ԻԶ, 63։*

54. Աւծեալ միայն՝ Որդի աստուծոյ կենդանւոյ—*Հմմտ. «Դու ես Քրիստոս որդի աստուծոյ կենդանւոյ» (Մատթ., ԺԶ, 16)։*

55. Դո՞ւ ես աւծեալն, ասեն, ասա՛ մեզ համարձակ—*Հմմտ. «...եթէ դու ես Քրիստոսն՝ ասա՛ համարձակ» (Յովհ., Ժ, 24)։*

56. Հերովդէս յառաջ, քան զոյն, զաւծեալդ անուն յայտնապէս հարցեալ—*տե՛ս Մատթ., Բ, 4։*

57. ...եւ զիա՞րդ գրեն... զաւծեալն աստուծոյ զտէրն Դաւթի զանսկիզբն Որդի՝ ժամանակաւ որդի—*Հմմտ. Մատթ., ԻԲ, 42—45։*

58. ...ջուրք զՀոգին հրաւիրողին—*Նկատի ունի Հովհաննես Մկրտչին. «Ես մկրտեմ զձեզ ջրով յապաշխարութիւն» (Մատթ., Գ, 11)։*

59. ...Քանզի չեմ ես.... աւծեալն—*Հմմտ. «Խոստովան եղև եթէ ես ոչ եմ Քրիստոսն» (Յովհ., Ա, 20)։*

60. Սովաւ շրջէին.... առաքելականացն լծակցութիւնք—*Հմմտ. Մարկ., Զ, 7։*

61. ...այս դեղ փրկութեան մատուցեալ տուաւ—*օծմանը Նարեկացին տալիս է փրկության դեղի նշանակություն. ձեթը փրկության դեղ է դարձել ավազակներից խոցված ուղևորի համար (տե՛ս Ղուկ., Ժ, 30—34), ուղևորը խորհրդանշում է մարդուն, ձեթը որպես սպեղանի է հիշատակում մարգարեն՝ Իսրայելի վերքերի մասին խոսելիս (տե՛ս Ես., Ա, 6)։*

62. Այս իւղոյ փափագեալ Դաւթի՝ իբր ձիթենի պտղալից ի տան աստուծոյ յուսով յարակայի—*Հմմտ. «Այլ ես որպէս ձիթենի պտղալից ի տան աստուծոյ յուսացայ յողորմութիւն աստուծոյ յաւիտեան. և յաւիտեանս յաւիտենից» (Սաղմ., ԾԱ, 10)։*

63. ...եւ զաշակերտացն դաս լոյս անուանեցեր—*Հմմտ. «Դուք էք լոյս աշխարհի» (Մատթ., Ե, 14)։*

64. Ընկալար զիւղն անուշութեան յումեմնէ ի յոտս—*ակնարկում է Մարիամ Մագդաղինացուն (տե՛ս Յովհ., ԺԲ, 3)։*

65. ...եւ միւսմէ պռնկէ՝ ի գլուխ—*ակնարկում է Ավետարանում հիշված մեղավոր կնոջը (տե՛ս Ղուկ., Է, 37—46)։*

66. ...քոյինահրաման պատուէրս կենաց ընդ համաւրէն յաշխարհ քարոզել զսակաւաձեռն իւղոյն յարգաւորութիւն—*տե՛ս Մատթ., ԻԶ., 12—13։*

67. Դուք աւծութիւն ունիք զսրբոյն—*Հմմտ. «Եւ դուք օծութիւն ունիք առ ի սրբոյն» (Ա Յովհ., Բ, 20)։*

68. ... Հոգւով եւ ճշմարտութեամբ Հաւրդ երկնաւորի երկրպագեսցուք—*Հմմտ. «...ճշմարիտքն երկրպագուք երկիր պագանիցեն Հօր՝ հոգւով և ճշմարտութեամբ» (Յովհ., Դ, 23)։*

69. ...թէ եւ յազգայնոյն սպանաւ Սաւուղ—*ըստ Ս. Գրքի՝ Սավուղին իր խնդրանքով սպանել է ամաղեկացի մի պատանի։ Դավիթ արքան պատանուց լսելով այդ մասին, հրամայում է նրան սպանել՝ օծյալ արքայի վրա ձեռք բարձրացնելու համար (տե՛ս Բ Թագ., Ա, 1—18)։*

70. Նայեա՛ եւ տե՛ս յերեսս աւծելոյ քոյ *(Հմմտ. Սաղմ., ՁԳ, 9)*, եւ արա ողորմութիւն ընդ աւծելոյ քոյ *(Հմմտ. Սաղմ., ԺԷ, 51)։*

71. Ձեռին—*այսպես ունեն Պ$_{1-3}$-ը, Պոլսի 1782 և 1789 թթ. տպագիրները, ինչպես նաև Վենետիկի 1840 և Բուենոս Այրեսի 1948 թթ. հրատարակությունները։ Պ$_4$-ը և նրանից ծագող տպագիրները, ինչպես նաև 1827 թ. «Նարեկյուծ»-ի բնագիրն ունեն* ձեռին։ *Մեր օգտագործած ձեռագրերը չունեն այս տարընթերցվածը, ուստի նախընտրում ենք* ձեռին *ընթերցվածը։*

72. Որոյ—*միայն Բուենոս Այրեսի 1948 թ. հրատարակությունն ունի հոգնակի թվով՝* որոց *(«Նարեկ. Մատյան ողբերգության», էջ 262)։ Թարգմանության մեջ, սակայն, եզակի թվով է, որը հիմք է տալիս տարընթերցվածը համարելու տպագրական բացահայտ վրիպակ։*

73. ... եւ կամ խրախոյս բառնալ յանուն աստուծոյ Յակոբայ—*Հմմտ. Ես., ԽԴ, 5։*

74. Կմայեկաց—*այս բառի փոխարեն բոլոր տպագիրներն ունեն* հմայեկաց։ *Կարծում ենք, որ վերջինս արդյունք է գրչական սխալ ընկալման կամ սրբագրման։* Կմայեկաց *անծանոթ բառը կարող էր հեշտությամբ փոխարինվել* հմայեկաց *ծանոթ բառով, մանավանդ որ այդ իմաստով ընկալմանը նպաստում է* քակտիչ *մակդիրը։ Ըստ Հայկազյան բառարանի՝* կմայեակ *կամ* կմայեկ *նշանակում է* սուտ զարդ, պաճուճանք, բիծ, սպի, արատ։ *Բառը հայ մատենագրության մեջ վկայված է Փիլոն Եբրայեցուց կատարված թարգմանության մեջ։ Այդ երկի միջնադարյան մեկնության մեջ* առանց կմայեկաց *արտահայտությունը բացատրված է* առանց պաճուճանաց։ *Հայկազյան բառարանը վկայակոչում է նաև հին մի բառգրքի բացատրությունը՝* կմայեակք. հմայականք, խտրանք *(տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Ա, էջ 1103)։ Ըստ Հր. Աճառյանի՝* կմայեակ *նշանակում է* արատ, բիծ *(տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Բ, Երևան, 1973, էջ 606)։ «Բառգիրք հայոցն» ունի* կմայականօք բա-

ռահոզվածը՝ գործիականօք, կամ՝ խտրանօք բացատրությամբ (տե՛ս «Բառգիրք հայոց», քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Մ. Ամալյանի, Երևան, 1975, էջ 168): Հ. Ամալյանը առանձին բառահոդվածով չի տվել կմայեակ բառը, որն իր օգտագործած ձեռագրերում վկայված է կմակաց (մեկ ձեռագիր՝ կամակաց) ձևով (նույն տեղում, էջ 168, տողատակ): Նարեկացին կմայեակք բառն օգտագործել է պանուանք, խտրանք, նմայականք, կեղծիք իմաստով, որոնց տակ պետք է հասկանալ սնոտիապաշտ կարգերը, հմայիլները, գիր անելը: Հետևելով հնագույն և լավագույն ձեռագրերին՝ նախընտրում ենք կմայեկաց ընթերցվածը:

75. 429-րդ տողից հետո մի շարք ձեռագրեր ունեն ենթախորագիր (տե՛ս տողատակը) և լուսանցային նշումներ. C «Ի կարգն գրէ» (էջ 210ա), Y «Աւգնեայ, Հոգիդ աստուծոյ», 7 «Բան ի սուրբ միւռոնն», b «Աստ գրէ» (խոսքը վերաբերում է ենթախորագրին, որը գրված է բնագրի կարգում, մինչդեռ պետք էր գրել լուսանցքում, էջ 200բ), s «Մեռոնս յորս թարգմանի» (էջ 297ա), նույնը՝ «Ի զօրութիւն սուրբ միւռոնի» (էջ 299ա), նույնը՝ «Ի սուրբ միւռոնն» (էջ 301ա):

76. ...զոր մարգարէն կանխաւ լոյս աչաց զրեբէ զայն աղերսեալ խնդրէր—ակնարկում է Դավիթ մարգարեին: Հմմտ. Սաղմ., ԺԲ, 4:

77. ...ըստ քերթուեանն բառի, որ ըստ խտրութեանն նմերոնի—մյուռոնի միստիկ խորհուրդը Նարեկացին փորձում է բացատրել նաև ստուգաբանորեն՝ քերականորեն («ըստ քերթուեանն բառի») և բանաստեղծորեն-փոխաբերաբար («ըստ խտրութեանն նմերոնի»): Նա մյուռոն բառը նախ ստուգաբանում է «ինձ մայր», ըստ Գ. Ավետիքյանի՝ ենթեալով «ի յոյն դերանունէս մի, այսինքն՝ ինձ, և ի բայէն ռօ, հոսեմ, և որ «ասելն մի ռօն, նշանակէ՝ ինձ բխող, կամ հոսող. զոր սուրբ վարդապետս ըստ ծնողութեան իմանալով՝ դնէ ինձ մայր» («Նարեկլուծ», էջ 531—532, ծնթ. 123): Ըստ մի այլ բացատրության՝ մյուռոն նշանակում է «մթին» (տ. 437): Ավետիքյանը ենթադրում է, որ այդ բառը «թուի լինել յունականս մաւրօ, այսինքն սեաւ, մթին» («Նարեկլուծ», էջ 532, ծնթ. 124): Եվ, վերջապես, ըստ երրորդ ստուգաբանության՝ «մեռայ, որ է դառնութիւն», «որ եւ միւռոն ստուգաբանեալ մեկնապէս ըստ մեզ՝ մեռելութեան պզգականութիւն» (տ. 460—462): Ըստ Գ. Ավետիքյանի՝ «Մեռայ. կամ մառա, յեբրայականն դառնութիւն նշանակէ, և ի հայումս՝ զմեռելութիւն» («Նարեկլուծ», էջ 533, ծնթ. 128): Նարեկացու ստուգաբանությունները, անշուշտ, գիտական չեն, Գ. Ավետիքյանի մեկնությունները կարևոր են բնագիրը բացատրելու տեսանկյունից: Ըստ Հր. Աճառյանի, մյուռոն ծագում է «հունարեն μύρον բառից, որ նշանակում է «հեղուկ անուշահոտութիւն, հոտաւէտ իւղ», հետևաբար «իւղ օծութեան, միւռոն». ծագում է ոչ թե «ծորիլ, կաթիլ-կաթիլ հոսիլ», այլ հնխ. smer «քսել, օծել» արմատից» (Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Գ, Երևան, 1977, էջ 326): Նարեկացուն ոչ թե հետաքրքրում է բառի նախնական, արմատական, ստույգ իմաստը, այլ անվան և իրի զուգորդությունը՝ այլիմաստ բառերի նմանության հիմքի վրա՝ աստվածաբանական, կրոնական, հոգևոր իր մտքերն ու զգացումներն արտահայտելու համար: Մյուռոն, մայր, մթին, մեռայ, դառնություն, մեռելություն բառերը ստուգաբանորեն ոչ մի կապ չունեն իրար հետ: Սակայն դիմառնաբար, փոխաբերաբար, այլաբանորեն Նարեկացին այդ բառերն այնպես է զուգադրում իրար, որ արտահայտի իր մտքերը՝ մյուռոնի միստիկ խորհուրդը պանծացնելու համար:

78. Վայրագութիւն—Գ. Խաչատուրյանը ենթադրում է, որ սա, թերևս, սխալ ընթերցված է և առաջարկում է նոր ընթերցված՝ վայրեկութիւն (տե՛ս «Նարեկ. Մատյան ողբերգության», էջ 278, ծնթ. 79): Մեր օգտագործած աղբյուրներից ոչ մեկը չի տալիս այդ տարընթերցվածը և, կարծում ենք, ոչ մի հիմք չկա այն ճիշտ համարելու:

79. Իսկ մառնամուտ.... այսինքն է՝ մթին—տե՛ս նախընթաց ծնթ. 77:

80. ... ատուած իսկ եւ իսկ ի լոյս անմատոյց ասի—հմմտ. Ա Տիմոթ., Զ, 16:

81. ...ի խաւար անգնին ծածկեալ—հմմտ. Ելք, ԺԵ, 23:

82. Քանզի մեռայ, որ է դառնութիւն—տե՛ս նախընթաց ծնթ. 77:

83. Նշանակ—այս ընթերցվածի փոխարեն միայն Բուենոս Այրեսի 1948 թ. հրատարակությունն ունի նշանակիչ: Տարընթերցվածը հայտնի չէ այլուստ:

84. Թուլադաշնակեալ—Դ$_4$-ը գլխավոր տարընթերցվածների ցանկում ունի դուլադաշնակեալ, որն այլուստ հայտնի չէ մեզ: Բառը կարող էր ծագել սխալագրության հետևանքով:

85. ...մկրտեալ ի մահ կենդանւոյդ՝ անվախճան կենացդ սովաւ հաղորդիմք—հմմտ. Հռովմ., Զ, 3—4:

86. Փայտ անուանի իւղոյ աւրհնութեան—հմմտ. Ես., ԽԱ, 19: Անգէ, Բ, 20:

87. Քանզի յութսներորդէ անտի գրոյ ի չորեքհարիւրն փոխաբերեալ առուգաբանաւրէն քննութեամբ ընդ ձիթոյն անուան նիթ նշմարտագրի—այս հատվածում Նարեկացին մյուռոնի միստիկ խորհուրդը փորձում է մեկնաբանել նաև հայոց այբուբենի տառերի թվային արժեքներով: Ձ-ի թվային արժեքն է ութսուն, Ն-ինը՝ չորս հարյուր: Եթե ձիթ բառի ձ-ն փոխարինենք ն-ով՝ ձիթի փոխարեն կունենանք նիթ («ընդ ձիթոյն անուան նիւթ»), Նարեկացին ձիթ և ձէթ բառերը կապում է իրար հետ («առուգաբանաւրէն քննութեամբ») և կրոնական հայեցակետից ձեթին վերագրում այլևայլ հատկանիշներ (տե՛ս նաև «Նարեկլուծ», էջ 534, ծնթ. 136):

88. ...որ է կերպարան արղեան խմորոյ.... զամենայն առ ինքն վերաբերեալ անեցուն առնէ—հմմտ. Մատթ., ԺԳ, 33: Ղուկ., ԺԳ, 21:

89. ...ոչ զպահեալսն չարին մատնել—հմմտ. Յուդա, 21:

90. Այս վերջվածքը, ըստ Գ. Ավետիքյանի, վերաբերում է ՂԲ և ՂԳ գլուխներին. այն՝ իմ ձեռնարկութիւն ասելով Նարեկացին նկատի ունի ժամահարի մասին ներբողը, եւ այս՝ արձանագրութիւն ասելով՝ մյուռոնին նվիրված բացատրական ճառը (տե՛ս «Նարեկլուծ», էջ 536, ծնթ. 151):

549—550-րդ տողերի համար C-ի գրիչն ունի լուսանցային նշում. «Հանց գրէ» (էջ 214ա), այսինքն՝ այսպես գրիր. նոր տողից, կարմիր սկզբնատառերով, բնագրից անջատ, ընդգծված: Z ունի «Մեղա՜յ տեառն և աստուծոյն իմոյ»:

ԲԱՆ ՂԴ

1. Այս գլուխը ձեռագրերում միշտ չէ, որ հաջորդում է ՂԳ գլխին (տե՛ս վերնագրի տողատակը): Մի խումբ ձեռագրեր վերնագրից հետո, գլխի համար, ունեն նշումներ. «Գիշերի ժամուն» (Z α), «Գիշերային ժամուն» (Tգս), «Հանկրստեան է» (ծ):

2. Որում կրկնի ծունր երկրպագութեան.... երկրաւորաց եւ սանդարամետականաց—հմմտ. Փիլիպ., Բ, 10:

3. Յիսուս Քրիստոս—միայն Բուենոս Այրեսի 1948 թ. հրատարակությունն այս ընթերցվածի փոխարեն ունի տէր Յիսուս Քրիստոս («Նարեկ. Մատյան ողբերգության», էջ 230): Տարընթերցվածը հայտնի չէ այլուստ:

4. Որ զխտես զամենայն, յառաջ, քան զլինել նոցա—հմմտ. Երեմ., Ա, 5:

5. Եւ անուն քո կոչեցեալ է ի վերայ ծառայից քոց—հմմտ. Ամովս, Թ, 12: Գործք., ԺԵ, 17:

ԲԱՆ ՂԵ

1. Այս գլուխը ձեռագրերում միշտ չէ, որ հաջորդում է ՂԴ գլխին և ունի ՂԵ համարակալում (տե՛ս վերնագրի տողատակը): Գլխի համար ծ-ն ունի լուսանցային նշում՝ «Պատարագի» (էջ 254ա), իսկ h-ը վերնագրի դիմաց «ՂԵ» գլխահամարից վերև ունի «փ». հավանաբար՝ «փոխ» (էջ 221ա):

2. Որ վասն իմ ի փորձ եկիր անիծից—Համմտ. Գաղ., Գ, 13։ Եբր. Բ, 18։
3. ...յանձն առեր մեռանիլ վասն իմ—Համմտ. Գաղ., Բ, 20։
4. Վառնեսցի հուրն սաստկութեան—Համմտ. Մարկ., Թ, 47։
5. Ի յարութեանն արդարոց, Հաւր քում աւրհնեցեալ—Համմտ. Մատթ., ԻԵ, 34։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. Վերնագրի համար ունենք լուսանցային նշումներ «Յիշատակարան մատենիս» (Z), «Յիշատակարան» (W), «Յիշատակարան սուրբ մատենիս» (S)։

2. Ի չափս դարուց—այս ընթերցվածի փոխարեն միայն Բուենոս Այրեսի 1948 թ. հրատարակությունն ունի ի դարս չափուց, որը, հավանաբար, տպագրական վրիպակ է։

3. ...ի յաւարտումն կատարման իններեակ յոբելինին—իննյակ հոբելյանի, այսինքն՝ ինն հիսնամյակի կատարման ավարտին, որը համապատասխանում է հայոց 450 (9×50) և փրկչական 1001 թվականին (450+551)։

4. ...ի սկիզբն պսակելոյ մտի տասնեկին—տասներորդ հոբելյանի, այսինքն՝ հիսնամյակի առաջին տարվա վերջին, որը համապատասխանում է հայոց 451 և ներկա 1002 թվականին (451+551)։ Նարեկացին նշում է Մատյանի ավարտման ստույգ տարեթիվը՝ 1002 թիվ։

5. ...յետ երից ամաց անցելոց, որ զկնի գալստեան... յաղթող եւ մեծ կայսերն հոռոմոց Բասլի—Մատյանի ավարտման տարեթիվը Նարեկացին նշում է նաև ժամանակի կարևոր իրադարձության հիշատակմամբ. բյուզանդացիների («հոռոմոց» Վասիլ («Բասիլ») կայսեր Հայաստան գալուց երեք տարի անց։ Բյուզանդիայի Վասիլ Երկրորդ կայսրը (976—1025 թթ.) Հայաստանի հյուսիսարևելյան կողմերը, ավելի ստույգ՝ Տայք է եկել 1000 թվականին՝ Դավիթ Կյուրապաղատի մահից անմիջապես հետո, վերջինիս կտակով Տայոց աշխարհը Բյուզանդիային միացնելու համար (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հտ. 3, Երևան, 1976, էջ 111)։ Ըստ Ստեփանոս Տարոնացու՝ Վասիլ կայսրը Տայք է եկել Հայոց ՆԽԹ (449) թվականին (տե՛ս «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 275), իսկ ըստ Արիստակես Լաստիվերտցու՝ «Ի քսան և հինգերորդ ամի թագաւորութեան իւրոյ» (տե՛ս «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ», Երևան, 1963, էջ 22—23), այսինքն՝ նույն 1000 թվականին (տե՛ս նաև «Նարեկլուծ», էջ 541, ծնթ. 4)։

6. ...ի ստուարակարկատ—Պ$_{1-3}$-ը, ինչպես նաև Պոլսի 1782 և 1789 թթ. տպագիրները չունեն ի նախդիրը, որը, թերևս, տպագրական վրիպակ է։ Մեր օգտագործած բոլոր ձեռագրերն ունեն նախդիրը։

7. ...գործակցութեամբ եղբաւր իմոյ ընտրելոյ՝ Յովհաննէս կոչեցելոյ—Հովհաննես Նարեկացու աշխատակցությունը Մատյանի ստեղծմանը կարող էր միայն գործնական բնույթ ունենալ և ոչ թե ստեղծագործական։ Նարեկացին հստակ է ասում. «...ստացեալ հիմնեցի, կառուցի, կարգեցի, կուտեցի, արձանացուցի, դիզի, բարդեցի, կացուցի, ցուցի հաստատելով ի հրաշակերտութիւն միագոյ իրի՝ բազմատեղեան դրուագս դրութեան այսմ սոփերի արգասաւորի»։ Այս առթիվ Գ. Ավետիքյանը նկատում է, որ «գործակցութեամբ եղբօր իմոյ Յովհաննու՝ իմանալի է ըստ օգնականութեան ինչ ի քննել զտեղիս Սուրբ Գրոց, կամ ըստ խորհրդակցութեան, կամ ըստ գաղափարելոյ զգրեալսն։ Այսպիսի փոքր գործակցութիւն բաւական էր առ խոնարհութիւն երանելւոյս անուանել զնա վաստակակից իւր՝ յիշելոյ արժանի» («Նարեկլուծ», էջ 543, ծնթ. 7)։

8. Կենցաղակցելով բառի փխ Պ$_4$-ից սկսած Մատյանի բոլոր հրատարակությունները, բացի Պոլսի 1782 և 1789 թթ. տպագիրներից, ունեն կենցաղավարելով։ Մեր ձեռագրերը չեն տալիս այս տարընթերցվածը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ 5
ԱՌԱՋԱԲԱՆ 7
Ա. Ձեռագրեր 14
Ձեռագրական խմբեր (16). Ա ձեռագրախումբ (24). Բ ձեռագրախումբ (61). Գ ձեռագրախումբ (85). Այլ ձեռագրեր (126). Հատվածներ պարունակող ձեռագրեր (144). Այլ հավաքածուներում պահպանված ձեռագրեր (155). Նարեկի ցանկերը (157). Նարեկացու վարքը (169).
Բ. Բնագրագիտական դիտողություններ 174
Գ. Տպագիրներ 197
Դ. «Մատեան ողբերգութեան» երկի թարգմանությունները 225
Ե. Բնագրի պատրաստման սկզբունքները 228
Զ. Ցուցակ գործածված տառանիշերի և համառոտագրությունների 242
ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑ ՎԱՆԻՑ ՎԱՆԱԿԱՆԻ ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ 243
ՏԱՐԸՆԹԵՐՑՎԱԾՆԵՐ 643
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 971

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

Հրատ. խմբագիր Լ. Ս. ՍԱՐԱՖՅԱՆ

Նկարչական ձևավորումը Կ. Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆԻ

Գեղ. խմբագիր Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆ

Տեխ. խմբագիր Հ. Մ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Սրբագրիչ Է. Գ. ՎԱՍԻԼՅԱՆ

ИБ № 954

Հանձնված է շարվածքի 1.11.1982 թ.: Ստորագրված է տպագրության 1.04.1985 թ.: ՎՖ 04619, չափը 70×90 1/16, թուղթ № 1: Տառատեսակ «Գրքի սովորական» բարձր տպագրություն: Պայմ. 89,67 մամ., տպագր. 71,25+8 թ. գուն.+6 թ. սև նկար մամուլ: Ներկ. մամուլ 89,67: Հրատ.-հաշվարկ. 78,8 մամուլ: Տպաքանակ 13000: Հրատ. № 5891: Պատվեր № 828: Գինը 7 ռ. 45 կոպ., ոսկեր շապիկով՝ 7 ռ. 50 կոպ.:

ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչության տպարան, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24գ:

Издательство АН АрмССР. 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24 г.

ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչության տպարան, 378310, ք. Էջմիածին:

Типография Издательства АН АрмССР, 378310, г. Эчмиадзин.